

KANTSASAR/ANNUAL SPECIAL

ԱՆՁԱՄԱՐ

ԲԵՐԻՈՅ ԶԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ



ԲԱՅԱՌԻԿ
2024



KANTSASAR/ANNUAL SPECIAL

ԱՆՉԱՍԱՐ

ԲԱՅԱՌԻԿ
2024

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
ԿԱԶՄ**

ԽՄԲԱԳԻՐ`

ԶԱՐՄԻԿ ԶԻԼԱԲՕՇԵԱՆ - ՊՕՂԻԿԵԱՆ

ԷԶԱԴՐՈՂ ԵՒ ԶԵԻԱԴՐՈՂ`

ՅՈՎՍԷՓ ԶԱԼՕՂԼԵԱՆ

ԳՐԱՇԱՐ`

ԱՆԻ ԹՈՓԱԼԵԱՆ - ՍԱՐՈՒԽԱՆ

ՍՐԲԱԳՐԻՉ`

ՆՈՒՇԻԿ ՍՈՂՈՅԵԱՆ-ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԿԱՅՔԵԶԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ`

ԱԻՑ ՊՕՂՈՍԵԱՆ

ՀԱՇՈՒԱՊԱՀ`

ՅՈՎԻԿ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

ՃՐՈՒԻՉ`

ԶՈՀՐԱՊ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ


021 2110 958

www.kantsasar.com

kantsasarweekly@hotmail.com

www.facebook.com/kantsasar

Telegram /KANTSASAR



ՆՈՐԻՆ ՎՍԵՄՈՒԹԻՒՆ ՆԱԽԱԳԱՆ
ՊԱՇՇԱՐ ԱԼ ԱՍԱՏ



ԳԵՐՇ. Տ. ՄԱԿԱՐ ՍՐԲ. ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ
ԱՌԱԶՆՈՐԴ ՆԱՅՈՑ ԲԵՐԻՈՅ ԹԵՄԻՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՏԻԿԻՆ ՌԻԹԱ ԵԱԳՈՒՊԵԱՆ-ԳԱՐԱԿԻԻԼԵԱՆ

ստանձնելով «Գանձասար» Բացառիկ 2024-ի
հրատարակութեան մեկենասութիւնը,

«Գանձասար»-ին կը նուիրէ 10.000.000 ա.ն.:

«Գանձասար»-ի վարչութիւնն ու խմբագրութիւնը
շնորհակալութիւն կը յայտնեն տիկին Ռիթային՝ հայ
մամուլին նեցուկ կանգնելուն համար:

ԽՕՄՔ ՇՆՈՐՀԱԲՈՐԱՆՔԻ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ «ԳՎՆՉԱՄԱՐ»-Ի 30-ՍՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ



*Մակար Եպս. Ազգաբեան
Առաջնորդ Բերիոյ Հայոց Թեմին*

Երեւոյթներու, դէպքերու կամ դէմքերու առնչուած տարեդարձներն ու ամեակները նշելը բարի ապացոյցն է անոնց նկատմամբ մարդկային ընկերութեան ունեցած հետաքրքրութեան եւ ուրախութեան եւ միաժամանակ թէ՛ նեղ իմաստով մարդոց կեանքին մէջ, եւ թէ՛ լայն իմաստով հաւաքակա՛նութեան կեանքին մէջ, անոնց ունեցած դրական ազդեցութեան, բարիքին, օգտաշատութեան եւ մանաւանդ կառուցողական, լուսաբանական եւ դաստիարակչական հասկացողութեամբ դերակատարութեան ի տես, մարդոց յարգանքին, գնահատանքին, արժեւորումի զգացողութեան, երախտագիտութեան եւ շնորհակալ կեցուածքին կենդանի եւ անկեղծ արտայայտութիւնն է:

Բերիոյ Հայոց Թեմի «Գանձասար» պաշտօնաթերթը այսօր 30 տարեկան է: Փա՛ռք եւ գոհութիւն կը յայտնենք Աստուծոյ, որ երեք տասնամեակներ առաջ, սփիւռքեան տարածքին, Սուրիոյ ասպնջական հողին վրայ, Հալէպ նահանգին մէջ, ուր հայ կեանքը իր բոլոր տարածքներով՝ եկեղեցական ու կրօնական, հոգեւոր ու ազգային, մշակութային, կրթական ու ընկերային, միութենական ու մարզական, առեւտուրի, արհեստի ու արուեստի մարզերէն ներս ծաղկուն, եռուն ու բեղուն շրջանը կ'ապրէր,

գտնուեցան մարդիկ, որոնք հայու եւ հայկական արժեքներու նկատմամբ նախանձախնդրութեամբ լեցուած՝ ուզեցին նուիրական աշխատանք մը տանիլ, հայ մամուլը օգտագործելով որպէս ազդու անօթ: Անոնք ենթահողը պատրաստ գտնելով՝ նետուեցան արդիւնաբեր աշխատանքի դաշտ: Աշխատանք մը, որ հայ ընթերցողը մամուլի ճամբով իր արժեքներուն ու գանձերուն աւելիով պիտի մօտեցնէր եւ ամենօրեայ դրութեամբ գայն իրագէլ դարձնէր թէ՛ աշխարհը եւ թէ՛ ալ հայ կեանքը յուզող երեւոյթներուն, դէպքերուն ու անցուդարձերուն, ինչպէս նաեւ պիտի ընդարձակէր անոր մտահորիզոնը՝ գանազան սիրբերու շուրջ գրախօսականներու, յօդուածներու, վերլուծումներու, ուսումնասիրութիւններու եւ հարուստ տեղեկութեանց փոխանցումով: Նախ, որպէսզի հաղորդ պահէր իր ընթերցողը տուեալ իրականութեանց եւ եղելութեանց եւ ապա ուղղակի թէ անուղղակիօրէն խթան հանդիսանար անոր մէջ արթնցնելու գանազան մարզերու նկատմամբ հետաքրքրութիւն եւ լուրջ մօտեցում ինչպէս նաեւ հարստացնէր անոր հոգեմտաւոր անդաստանը, մատակարարելով անոր անհրաժեշտ եւ բազմաբնոյթ տեղեկութիւններ:

Երեսուն տարիներ տողանցեցին

«Գանձասար»-ի կեանքի բեմահարթակին վրայէն, իրենց մէջ սեղմելով պատմական ժամանակահատուած մը, գրեթէ իր բոլոր երեսներով, ուրախութեան թէ տխրութեան, յաջողութեան թէ ձախողութեան, յաղթանակի թէ պարտութեան, ձեռքբերումի թէ կորուստի, արդիւնաբերութեան թէ ամլութեան, վերելքի թէ վայրէջքի, յառաջդիմութեան թէ նահանջի, սուգի թէ կաքաւելու, շէնութեան թէ կործանումի, մահուան թէ կեանքի, պաշտպանումի թէ լքումի, տկարութեան թէ զօրութեան, յուսախաբութեան թէ յուսադրութեան, տրտունջքի թէ գոհաբանութեան եւ շարքը երկար է:

Երեսուն տարիներ շարունակ «Գանձասար»-ի բերքը իմացական անդաստաններէն քաղուելով՝ գրաշարուեցաւ, խմբագրուեցաւ, սրբագրուեցաւ, տպուեցաւ ու ցրուեցաւ՝ ընթերցողին սեփականութիւնը ըլլալու, անոր մատներու հպման առարկան դառնալու եւ աչքերու նայուածքին տակ ներառուելու եւ էջերու յաջորդական դարձուածքով՝ իմացապէս ճաշակուելով լուսաբանեց, լուսաւորեց եւ յագեցուց տեղեկութեան եւ գիտութեան անօթի եւ պապակ մտքերն ու սրտերը:

Երեսուն տարիներու ընթացքին քանի՞ քանի՞ խմբագիրներ, գրաշարներ, սրբագրիչներ, վերանայողներ, էջադրողներ, ձեւաւորողներ, յօդուածագիրներ ու աշխատակազմի անդամներ, բարերարներ, մեկենասներ ու տպագրողներ տիւ եւ գիշեր մեղուաշան աշխատեցան, տքնեցան, անքուն հսկեցին, տագնապեցան, զրկուեցան ու ճնշուեցան, գրեցին, երկնեցին, նախանձախնդրութեամբ հետապնդեցին եւ հաւատարիմ մնալով իրենց ծառայական առաքելութեան, անկաս եւ աննահանջ կատարեցին իրենց ճիտին դրուած եւ իրենց վստահուած այդքան նուիրական պարտականութիւնը, շատ յաճախ՝ «ապերախտ» աշխատանքը, երբ մարդիկ չեն գիտեր եւ նոյնիսկ գաղափար չունին, թէ ինչպիսի՞ հսկայ եւ սպառնիչ աշխատանք է որ կը կատարուի եւ որքա՞ն մարդուժի եւ նիւթական կարելիութիւններու կը կարօտի:

Երեսուն տարիներ արդէն սահեր ու անցեր են, բայց ցարդ «Գանձասար»-ը կայ

եւ շատ աւելի աշխուժ եւ կազմակերպ կը գործէ, արդի պայմաններուն համահունչ, ան ո՛չ միայն տպագրուած վիճակով, այլեւ առ ցանց ելեկտրոնային միջոցներով կը տարածուի ու կը հասնի բազմահազար հայորդիներու, աշխարհի չորս կողմերը:

Այս տարի երեսուն ամեակն է որ կը նշենք: Եւ այս դէպքին նշումը Սփիւռքի մէջ, Սփիւռքի տարուան նուիրուած, սուրիահայ համայնքին համար բնականաբար կրկնակի նշանակութիւն ունի եւ մեր բոլորին սըրտերը ուրախութեամբ ու հպարտութեամբ կը լեցնէ: Հակառակ վերջին տասնամեայ պատերազմին ու անոր թողած բազմակողմանի դժուարութիւններուն, նեղութիւններուն ու տագնապներուն ինչպէս նաեւ այս տարուան Փետրուար ամսուն հիւսիսային Սուրիան ցնցող ահաւոր երկրաշարժին եւ անոր պատճառած աննկարագրելի կործանարար հետեւանքներուն, տակաւին սուրիահայութիւնը կը մնայ պատնէշի վրայ, կառչած է իր կրօնական, եկեղեցական, ազգային ու մշակութային ամանդութիւններուն ու արժէքներուն եւ հաւատարիմ է իր հայրենիքին, ծննդավայրին, հողին, ինքնութեան, առաքելութեան ու իր կոչումին: Եւ հակառակ աննկարագրելի եւ անտանելի կեցողային, տնտեսական ու ընկերային դառն պայմաններուն, ան կը շարունակէ իր գոյութենական պայքարը եւ կեանքի աշխուժութիւնը իր բոլոր խաւերով ու կառույցներով, մարմիններով ու միութիւններով եւ յոյսով առլցուն կը նայի դէպի պայծառ ապագայ: Եւ «Գանձասար»-ը իր երեսուն ամեակի յաղթական նշումով այս վկայութիւնն է որ կու տայ ու կը բարձրաձայնէ:

Տիրող իրավիճակները իրենց նեղութիւններով ու դժուարութիւններով կաղապարի նման ոլորապտոյտ քաշուելով ու սեղմուելով շարունակ ճնշեցին մեր վրայ, բայց չկրցան փշրել կամ կոտորտել կեանքին կառչելու մեր յոյսը, ապրելու մեր ներուժը եւ ստեղծագործելու, վերաշինելու, վերականգնելու եւ վերակազմակերպուելու կամքն ու պատրաստակամութիւնը: Սուրիահայութիւնը իր նկարագրով, խառնուածքով ու ծինային նկարագրով աշխատող, աշ-



խատասեր ու աշխատունակ է: Ան բնաւ ծուլութիւն չէ խառնած իր բազուկի զօրութեան, այլ ապաւինելով աստուածատուր քանքարներուն, ամենայն գիտակցութեամբ եւ պատասխանատուութեամբ զանոնք ի գործ դրած է թէ՛ իր, թէ՛ շրջապատին եւ թէ երկրի զարգացման, բարգաւաճման ու բարօրութեան: Նոյնպէս ալ այսօր, նոր բացուող 2024 տարւոյն հետ, կը հրաւիրուինք առաւել քան երբեք յոյսով նայելու ապագային եւ աստուածային խոստումներուն ապաւինած՝ կենդանի հաւատքով մեր ուժերը պրկելու եւ միասնական ճիգերով մեր առողջ, կանգուն եւ կազմակերպ ապագային համար ծրագրելու եւ աշխատելու բոլոր տարածքներու վրայ, մեր ունեցած զօրեղ ու երիտասարդ մարդուժի լայն կարողականութիւններն ու կարելիութիւնները ներառելով եւ օգտագործելով: Եւ այդ ատեն կը յաջողինք ու պիտի յաջողինք: Եւ պատճառ չկայ չյաջողելու:

Ուստի չվիատինք, որովհետեւ նեղութիւններն ու դժուարութիւնները միշտ ալ եղած են ու վստահաբար դեռ պիտի շարունակուին: Բայց մենք աստուածային խոստումը ունինք, որպէս քրիստոնեաներ, յաղթահարելու ամեն դժուարութիւն եւ խոչընդոտ: Մեր Տէրը՝ Զրիստոս, իր ամենազօրեղ եւ գօտեպնդիչ հաստատումը կատարեց, երբ քաջաւերեց իր աշակերտները, որ չվախնան գալիք հալածանքներէն, սպառնալիքներէն, դժուարութիւններէն ու ամեն տեսակի նեղութենէ, այլ իրմով խաղաղութիւն ունենան, ըսելով. *«Աշխարհի վրայ ներդրութիւն պիտի ունենաք, բայց քաջաւերուեցէ՛ք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին»*: Ուստի, կարելորդ մեր հաւատքին մէջ կասկած եւ մեր քաջութեան մէջ վախ չխառնենք, այլ ապաւինինք Աստուծոյ եւ մեզմէ իւրաքանչիւրը իր պարտաւորութեան, պարտականութեան եւ պատասխանատուութեան գիտակից, սիրով եւ յօժարակամութեամբ իր աշխատանքը կատարելու ու իր ծառայութիւնը մատուցելու: Եւ վստահ ըլլանք, որ Աստուած պիտի օրհնէ մեր կեանքը, պիտի վերականգնէ մեր ընկերութիւնն ու երկիրը, յաջողութիւն պիտի պարգեւէ մեր աշխատանքներուն ու ծրագիրներուն, պիտի բժշկէ մեր հիւան-

դութիւնները, պիտի բարձրացնէ մեզ, բարիքներով պիտի վերալիացնէ եւ ի բարին առաջնորդէ:

Յետեւաբար երեսուն ամեակի նշումը մեզ կը մղէ շնորհակալութեամբ եւ երախտագիտութեամբ խոնարհելու այն մարդոց մեծ վաստակին ու գործին դիմաց, որոնք անցնող երեսուն տարիներուն «Գանձասար»-ը կենդանի, շնչող ու արձագանգող պահելու նուիրական, ծառայական աշխատանքին իրենց անսակարկ ներդրումը բերին:

Երեսուն ամեակի նշումը մեզ կը հրաւիրէ ինքնաքննութեան եւ հաշուեյարդարի, որպէսզի անելի գիտակից պատասխանատուութեամբ ու նախանձախնդրութեամբ դիտենք երեւոյթներն ու կատարուածները եւ տուեալները իրականութիւն դարձնելու հրսկայ ճիգն ու զոհողութիւնը ճշմարտապէս գնահատել ու արժեւորել սորվինք եւ բնաւ անտարբերութիւն եւ ծուլութիւն չխառնենք մեր պարտաւորութեանց մէջ:

Երեսուն ամեակի նշումը որպէս մեծ ձեռքբերում ու նուաճում, զօրեղ մարտահրաւեր մըն է, շատ անելի հաստատակամութեամբ, ուժերու պրկումով եւ խանդավառութեամբ աշխատանքը շարունակելու, որպէսզի մամուլի ճամբով առաւել թիւով հայորդիներու հասնինք եւ զանոնք ալ հաղորդակից ու մասնակից դարձնենք մեր իրականութեան ու կեանքին:

Ի վերջոյ, աստուածային օրհնութեամբ եւ հայրական ջերմ սիրով կ'ողջունենք ու կը շնորհաւորենք «Գանձասար»-ի երեսուն ամեակը, մաղթելով անկաշկանդ երթ ու բեղուն եւ արդիւնաբեր նոր ամեակներ, ինչպէս նաեւ կը շնորհաւորեմ ու մեծապէս կը գնահատեմ «Գանձասար»-ի գլխաւոր խմբագիր տիկ. Չարմիկ Պօղիկեանը, եւ աշխատակազմի բոլոր անդամները, ինչպէս նաեւ յօդուածագիրներն ու մեկենասները, ընթերցողներն ու բարեկամները եւ բոլոր այն մարդիկ, որոնք զանազան միջոցներով կը սատարեն «Գանձասար»-ի յաջողութեան եւ անարգել գոյերթին:

Կրկին անգամ երեսուն ամեակդ շնորհաւոր ըլլայ, «Գանձասար», եւ ամենայն բարիք:



ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՅՈՅՍ



**Պետրոս Արք. Միրիաթեան
Առաջնորդ Բերիոյ Թեմի Կաթողիկէ Հայոց**

Նոր տարուան սեմին կը հասնինք՝ ծանրաբեռնուած տխուր եւ ցաւալի յիշատակներով...

Հալէայի երկրաշարժը, Արցախի կորուստը, ու Հայ ժողովուրդին վիշտը, Սուրիոյ տնտեսական պաշարումը, Պաղեստինի աղետը եւ Կազգայի ցեղասպանութիւնը, գաղթելու մարմաջը եւ ընտանիքներու քայքայումը...

Թեւ ունեցանք ուրախալի եւ մխիթարական պահեր, սակայն ընդհանուր պատկերը կը մնայ վշտալից ու մռայլ:

Սաղմոսերգունին հետ կ'ըսենք. «Տէր, հասիր մեր օգնութեան եւ մտիկ ըրէ մեր աղօթքին» (Սղ 61.1):

Այս նոր տարուան առիթով իմ մաղթանքը կը համառօտեմ երկու բառերով՝ ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՅՈՅՍ:

Համբերութիւնը աստուածային առաքիտութիւն է:

Պօղոս առաքեալ մեզ կը խրատէ ըսելով. «Նեղութեան համբերեցէ՛ք, եւ յարատեւ աղօթեցէ՛ք» (Յռ 12.12): Համբերութիւնը նաեւ Սուրբ Հոգիի պտուղներէն մին է (Գղ 5.22):

Համբերել կը նշանակէ տոկալ, հաստատ մնալ, չընկճուիլ դժուարութիւններուն առջեւ:

Քաջութիւնը պիտի ունենանք տանելու ցաւը, նեղութիւնը, զրկանքը որովհետեւ համբերութեամբ միայն կրնանք յաղթահարել կեանքի դաժանութիւնը, ինչպէս խոստացաւ Տէրն մեր Յիսուս Զրիստոս. «Բայց ով որ մինչեւ վերջ համբերէ՝ ան պիտի փրկուի» (Մտ 24.13):

Իսկ յոյսը՝ մեր երկրորդ մաղթանքն է:

Յոյսը այն լոյսն է, որ կը ծագի խաւարին մէջ եւ ամբողջ կեանքդ կը լուսաւորէ: Կրնաս ամէն ինչ կորսնցնել կեանքիդ մէջ, բայց ո՛չ յոյսը: Պետրոս Առաքեալ մեզ կը յորդորէ ըսելով. «Միշտ պատրաստ եղէ՛ք պատասխանելու անոր՝ որ պատճառը կը խնդրէ ձեր մէջ եղող յոյսին» (Ա.Պտ 3.15):

Յոյսով ապրիլ կը նշանակէ վստահութիւն ունենալ Աստուծոյ վրայ «2հ Աստուած ընդ մեզ է»:

Յոյսով ապրիլ՝ կը նշանակէ նաեւ վախ չունենալ, որովհետեւ Յիսուս ինք ըսաւ. «Վստահութիւն ունեցէ՛ք, ես եմ, մի՛ վախնաք» (Մտ 14.27): «Եւ տեսաւ սիկ ես ձեզի հետ եմ ամէն օր՝ մինչեւ աշխարհի կատարածը» (Մտ 28.20):

Յոյսով ապրիլ կը նշանակէ վերջապէս լաւատես ըլլալ: Ինչ իմաստալից են աշուղական երգին բառերը. «Ձախորդ օրերը ձմրան նման կու գան ու կ'երթան, վհատելու չէ, վերջ կ'ունենան, կու գան ու կ'երթան»: Բայց մենք աշուղին չէ որ կը հետեւինք, այլ մենք կը հաւատանք Աստուծոյ շնորհքին, որ մեզ կ'առաջնորդէ ու կը պահէ՝ ներշնչելով վստահութիւն եւ լաւատեսութիւն. «Տէրը իմ

հովիւս է, ինձի ոչինչ կը պակսի... Նոյնիսկ եթէ քալեմ մահուան խաւարամած ձորին մէջ, չարէն չեմ վախնար, որովհետեւ Դուն ինձի հետ ես» (Սղ 23.14):

Այս է իմ մաղթանքը հալեպահայութեան, համբերեցէ՛ք եւ մի՛ յուսահատիք: Տառապանքի օրերը պիտի անցնին եւ լուսաշող Աստղը պիտի շողայ:

Նոյն մաղթանքը կ'ուղղեմ նաեւ Հայաստանի եւ Արցախի հայութեան, ինչպէս նաեւ ի սփիւռս աշխարհի տարածուած հայ ժողովուրդին:

Հակառակ ամէն բանի՝ մենք յուսադրիչ ցնծութեամբ պիտի ողջունենք Նոր տարին՝ աղօթելով Ներսէս Շնորհալիին հետ.

«Աղաչեա՛ր վասն մեր գառ ի քէն գմարմնացեալն Աստուած, որ խոնարհեցաւ ի հայրական ծոցոյ, Էառ Մարմին ըստ մարդկային բնութեանս, առնել խաղաղութիւն յերկիսս եւ յերկրի... զի լռեսցին պատերազմուք, դադարեցին յարձակմուք թշնամեաց, տնկեսցի սեր եւ արդարութիւն ի յերկրի. Աղաչեմք:

Մայր Սուրբ բարեխօսեա՛ր»:



ՀԱՅԿԱԿԱՆ ՄՓԻՒՌ-ՔԸ ԵՒ ԱՆՈՐ ՕՐՀԱՄԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐՆԵՐԸ



*Վեր. դոկտ. Յարութին Սեյիմեան
Համայնքապետ Սուրիոյ Հայ
Աւետարանական Համայնքին*

Սուրիոյ հաւաքականութիւններու կառուցուածքին մէջ սուրիահայութիւնը կը ներկայանայ որպէս դիմացկուն բաղադրիչ, հիւսուած՝ հակամարտութիւններու, գաղթի եւ տնտեսական մարտահրաւերներու բարդութիւններով: Նպատակասլաց եւ ճկուն կերպով դիմակայելու համար մեր մէջ ներխուժող քայքայիչ հոսանքները, սուրիահայոց վերակազմակերպումը ազդեցիկ կոչի նման կը հնչէ հայկական Սփիւռքի օրակարգին վրայ:

Արձագանգելով անցնող տարիներուն Սուրիոյ կրած տագնապին, հակամարտութիւններուն, զանգուածային գաղթին եւ տնտեսական անկումին, Սուրիոյ մէջ հայկական Սփիւռքը վերակազմաւորելու եւ աշխուժացնելու հրամայականը հանդէս կու գայ իբրեւ հրատապ կոչ: Վերափոխութիւնը պարզապէս պահանջք չէ. հապա՝ էութենական պարտադիր վերամշակման եւ վերակազմակերպման անհրաժեշտութիւն, որմով համայնքը պիտի ընթանայ դէպի նպատակասլաց եւ արդի-

նաբեր փուլ:

Պատերազմի հետեւանքով ոչ միայն ընտանիքներ տեղահանուեցան, այլեւ փլուզումի մատնուեցաւ համայնքին բուն կառուցային եւ էութենական դրուածքը՝ իր հետ բերելով կրթութեան ճգնաժամային վիճակ, աշխատանքի հնարաւորութիւններու կրճատում եւ ընդհանուր անորոշութեան մթնոլորտ՝ կեանքի զանազան բնագաւառներու մէջ:

Հակառակ այս մարտահրաւերներուն, Սփիւռքը կանչուած է վերամշակուելու եւ վերակազմակերպելու իր ընթացքը՝ նպատակ ունենալով ներքին վերաորակաւորումը: Եւ ասիկա կարելի պիտի ըլլայ նախ կարգաւորելով կրթութեան ոլորտը, վերիմաստաւորելով ներքին որակի բարելաման խարիսխը, վերաշխուժացնելով հաւաքական ներուժի գործօնները եւ նորարարութեան մշակոյթը հաշտեցնելով Սփիւռքի բաղադրիչ մասերուն:

Վերամշակման այս գործընթացը ունենալու է առանցքային նշանակութիւն՝

իբրեւ երիտասարդ սերունդի հզօրացման ուղի, որպէսզի տեղւոյն կրթական եւ մասնագիտական ծրագիրները ոչ միայն գինեւ մեր տղաքն ու աղջիկները գիտելիքներով, այլեւ խրախուսեն անոնց նախաձեռնելու ոգին, որպէսզի անոնք ծաւալեն յետ-պատերազմեան եւ յետ-գաղթի իրատես պահանջներուն հետ համահունչ կեանք ու գործունէութիւն:

Բնականաբար վերել յիշուած մօտեցումէն անմասն չի մնար տնտեսական վերականգնումը, որ ինչ-որ տեղ կը դառնայ այս վերակազմակերպումին առանցքը: Հայկական Սփիւռքի մէջ վերակազմակերպումի փորձը, ռազմավարական առումով, պէտք է ունենայ շարունակական աճի եւ զարգացման հարթակ՝ յենելով տրնտեսական հիմքերու վրայ: Ատիկա կ'իրականանայ ձեռնարկատիրութեամբ, մնալուն ներդրումներով եւ համագործակցային մասնագիտական պատրաստութեամբ եւ աշխատանքային նիւթական նեցուկի համալրուած ծրագիրներու նախաձեռնութիւններով: Ինչ-որ տեղ՝ այս ամէնը զարկ կու տայ երիտասարդներու մօտ տնտեսական վերակազմակերպման եւ ինքնահաստատման մեկնարկի ուղիին:

Այս առումով, համայնքին մէջ տարուող աշխատանքներուն մէջ եկեղեցական եւ ազգային առաջնորդութիւնը ստանձնելու է յանձնառութեան պատասխանատուութիւնը: Անիկա պէտք է խթանէ յառաջընթաց զարգացումները՝ ապահովելով համապատասխան գիտելիքներու փոխանակման հարթակներ ներկայ երիտասարդ սերունդին:

Մարտահրաւերներու այս ալիքին մէջ ճկունութիւնը եւ տիրող պայմաններուն յարմարիլը ոչ միայն առաքիլութիւններ են, այլեւ անփոխարինելի հմտութիւններ՝ աշխուժութիւն արձանագրող Սփիւռքի մը

համար:

Հետեւաբար, Սուրիոյ մէջ հայկական Սփիւռքը որոշիչ դերակատարութիւն ունեցող պահու մը ամօքե կը գտնուի, որ կ'ենթադրէ ստոյգ վերամշակում իր ներքին կառոյցը բովանդակող բաղադրիչներուն մէջ: Վերել յիշուած վերամշակումի եւ վերակազմակերպումի ռազմավարութիւնը ոչ միայն գոյատեւելու մասին է, այլ անելի ուժեղ, անելի դիմացկուն եւ պատրաստ ըլլալու մասին է՝ պատերազմի, գաղթի եւ տնտեսական անկումներու փորձութիւններուն դէմ: Ուսումնակրթական ամբողջական ծրագրի, մասնագիտական, արհեստավարժական եւ տնտեսական նախաձեռնութիւններու միջոցով, ինչպէս նաեւ հայ լեզուի ու մշակոյթի հանդէպ փափաք, խանդավառութիւն եւ ծրագիր ունենալով, Սփիւռքը կրնայ ստեղծել ճամբայ մը, ուր մարտահրաւերները կը դառնան աննախադէպ աճի եւ բարգաւաճման հանգրուաններ:

Որպէս սփիւռքահայեր, կեանքի սրընթաց իրականութիւններուն դէմ առաջնային կը համարենք մեր նորօրեայ պատմութեան ճակատագրական իրադարձութիւնները ու անոնց մէջ յառաջացած ելեւելներն ու կորութիւնները պէտք է տողերուն ընդմէջէն ընթերցել, հասկնալ ու խոհեմաբար ընկալել, միշտ կառչած մնալով մեր հոգեւոր ժառանգութեան, քրիստոնէական անխախտ եւ անվիճելի հաւատքին, հայրենիքի նկատմամբ անվերապահ նուիրումին:

Պահը օրհասական է, իսկ Սփիւռքը իր հոգեւոր եւ ազգային ներուժով իբրեւ մեկ ամբողջութիւն՝ անխուսափելիօրէն ինքզինք պէտք է վերամշակէ եւ վերակազմակերպէ գալիք օրերու հեռատես ակնկալութեամբ:



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ



ԻՆՉՊԷՄ ԱՆՑՆԻԼ ԻՆՔՆԱՔՆՆՈՒԹԵՆԷ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Չարմիկ Պողիկեան

2023 թուականը ալեկոծ տարի մը եղաւ սուրիահայութեան համար: Երկրի տնտեսական ծանր պայմաններուն, արտագաղթի շարունակուող ընթացքին մէջ անգամ վերակազմակերպման որոշ աշխատանքներ սկիզբ առած կամ ծրագրուած էին արդէն՝ կառուցներու վերանորոգութեամբ, միութիւններու եւ կրթական հաստատութիւններու աշխատելաճոճի մասնակի փոփոխութեամբ, այս նիւթերուն շուրջ խորհրդածողովներու կազմակերպման մեկնարկով, կազմակերպչական որոշ աշխատանքներու խտացումով եւ այլն, երբ 6 Փետրուարի աղետալի երկրաշարժը ահագնապէս ցնցեց սուրիահայութիւնը, առաւելաբար Յալէպի, Լաթաքիոյ եւ Զեսապի հայութիւնը:

Մարդկային եւ նիւթական վնասներուն կողքին հոգեկան ծանր վիճակի մէջ յայտնուեցաւ այս նահանգներուն մէջ ապրող հայութիւնը: Տակաւին հազիւ պատերազմի թոհուրոհէն դուրս եկած, տնտեսական ծանր պայմաններու տակ կաշկանդուած էր ան, երբ այս անգամ ալ երկրաշարժը շուռ տուաւ անոր իրագործելի ծրագիրները եւ տնտեսական նոր բեռի տակ դրաւ զինք:

Բերիոյ Յայոց Թեմը իր առաջնորդին գլխաւորութեամբ անմիջապէս գործի լծուեցաւ ու փութաց աղետահար ժողովուրդի օգնութեան: Յայ կաթողիկէ եւ անտարանական համայնքներու պետերը եւս նոյն աշխատանքին լծուեցան:

Սփիւռքահայութիւնը, Յայաստանը, Յայաստան Յամահայկական Յիմնադրամն ու անգամ Ատրպէյճանի շրջափակման հետե-

ւանքով տագնապի մէջ յայտնուած Արցախը օգնութեան ձեռք երկարեցին սուրիահայութեան: ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսը ժամանեց Յալէպ, ուր իր թեմերուն եւ միաբաններուն անունով զօրակցութիւն յայտնեց սուրիահայութեան եւ կոչ ուղղեց որչ հայութեան թիկունք կանգնելու սուրիահայ իրենց քոյրերուն եւ եղբայրներուն, իսկ միջազգային ընտանիքին կոչ ուղղեց ամէն ջանք ի գործ դնելու չեղեալ համարելու Սուրիոյ շրջափակումը՝ նկատի ունենալով երկրաշարժին հետեւանքով ստեղծուած մարդկային ողբերգութիւնը:

Յայաստանէն Յալէպ ժամանեց ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան որոնողափրկարար խումբ մը, փլատակներուն տակէն մարդիկ փրկելու, յատկապէս արաբական շրջաններուն մէջ, ուր փուլ եկած շէնքերը թիւով անհամեմատօրէն անելի մեծ էին:

Յայութիւնը ունեցաւ երկու զոհ եւ երկու տասնեակի հասնող վիրաւոր: Յալէպահայութեան եւ Լաթաքիոյ հայութեան բնակարաններուն մեծամասնութիւնը վնասուեցաւ, կարգ մը բնակարաններ անբնակելի դարձան:

Բարեբախտաբար մեր եկեղեցիները, ակումբները իրենց դռները բաց ձգեցին ժողովուրդին դիմաց՝ առանց խտրութիւն դնելու հայուն եւ տեղացի արաբին միջեւ: Ժողովուրդը օրեր շարունակ գիշերեց մեր կեդրոններուն մէջ, որովհետեւ յետցնցումները կը շարունակուէին:

Ակումբի հայ տղաքը կեդրոններու եւ



եկեղեցիներու մէջ ապաստան գտած ժողովուրդին գիշերելու, սնունդի եւ առողջապահական բոլոր կարիքները հոգացին: Շուրջ մէկ ամիս ժողովուրդը վախի մէջ կ'ապրէր, յետցնցումները կը շարունակուէին՝ խուճապի մթնոլորտ ստեղծելով յատկապէս մանուկներուն եւ տարեցներուն մօտ:

Յաջորդող ամիսներուն աստիճանաբար հանդարտութիւն տիրեց, Բերիոյ Յայոց Թեմի Նպաստից Մարմինը, Սուրիահայ Օգնութեան Խաչը եւ բարեսիրական բոլոր միութիւնները լծուեցան աղետահար ժողովուրդին օգնութեան աշխատանքին:

ՅՅԴ Բիւրօն կոչ ուղղեց Սփիւռքի իր բոլոր կառոյցներուն եւ ՅՕՄ-ին լծուելու դրամահաւաքի եւ դեղորայքի ապահովման աշխատանքին: Սփիւռքի տարբեր շրջաններուն մէջ կազմակերպուեցան դրամահաւաքներ՝ յանուն սուրիահայութեան: ՅՕՄ-ը յատկապէս լարուած աշխատանք տանելով իր տարբեր մասնաճիւղերը գործի լծեց եւ օժանդակեց սուրիահայութեան: Զրիստոնէական բարեսիրական հաստատութիւններ՝ Նոյնպէս: Հալէպի մէջ կազմուեցաւ միջեկեղեցական կեդրոնական խորհուրդ մը, որպէսզի համադրէ քրիստոնէութեան հասած օժանդակութեան աշխատանքները՝ բնակարաններու նորոգութենէն մինչեւ սնունդի եւ առաջին անհրաժեշտութեան իրերու մատակարարում:

Բերիոյ Յայոց Թեմը եւս արտակարգ երեսփոխանական ժողով մը գումարելով տագնապի յաղթահարման առաջնահերթութիւններ ճշդեց եւ յառաջացուց երկրաշարժի արտակարգ իրավիճակի մարմին մը, որ իր կարգին յառաջացուց համապատասխան յանձնախումբեր՝ մարդասիրական եւ կառոյցներու վերանորոգման գործը յառաջ տանելու եւ ցանկազրելու համայնքին կրած վնասները:

Վնասներու ցանկագրման դիմումներ ընդունեց Նաեւ Հայ Բարեգործական Ընդհ. Միութիւնը:

ՅՅԴ Բիւրոյի անդամներու Հալէպ այցելութիւնը եւս գօտեպնդիչ ազդակ հանդիսացաւ: Անոնք այցելեցին փուլ եկած կառոյցներ ու հաստատութիւններ, հանդիպումներ ունեցան ազգային մարմիններու հետ եւ յատկապէս Հալէպի, Լաթաքիոյ եւ Զեսապի ուսանող երիտասարդ տարրը գօտեպնդե-

ցին՝ նիւթապէս օժանդակելով անոր, որպէսզի կարենայ յաղթահարել ծանր օրերն ու շարունակել ուսման իր ընթացքը:

Հայաստանէն Սուրիա հասան մարդասիրական օժանդակութիւններով բեռնաւորուած չորս օդանաւեր՝ որպէս օժանդակութիւն Սուրիոյ ժողովուրդին:

Սուրիահայութիւնը աստիճանաբար յաղթահարեց երկրաշարժի աղետը, ժամանակի ընթացքին մեծաթիւ բնակարաններ նորոգուեցան ու վախի եւ անապահովութեան մթնոլորտը ժամանակի ընթացքին փառատեցաւ:

Սուրիահայութիւնը վերագտաւ իր աշխուժութիւնն ու ընթացք առին ձեռնարկները, բացուեցան վարժարաններուն դռները: Տարուան երկրորդ կիսուն կեանքը իր բնականոն հունին մտաւ, սակայն երկրի տնտեսական անկայուն վիճակը շարունակեց իր ծանր թաթը պահել ժողովուրդի ուսին:

«Գանձասար»-ը այս պայմաններուն մէջ շարունակեց անխափան գործել, թէեւ երկրաշարժի յաջորդող քանի մը շաբաթներուն խմբագրատունէն դուրս՝ Արամ Մանուկեան ժողովուրդային Տան մէջ ընթացաւ թերթի խմբագրութեան աշխատանքը, նկատի ունենալով խմբագրատան 5-րդ յարկի վրայ գտնուիլն ու յետցնցումներու վտանգը:

Թերթը այս տարի բոլորեց իր 30-ամեակը, ինչ որ առիթ համարուեցաւ այս ոլորտին մէջ եւս կեանքի կոչելու Վեհափառ Հօր Սփիւռքի տարուան նուիրուած՝ Ինքնաքննութենէ Վերակազմակերպում կոչը:

Այս բոլորին լոյսին տակ, սուրիահայ համայնքը թէեւ նօսրացաւ քանակով, մասամբ տկարացաւ որակով, սակայն տակաւին ունի վերակազմակերպուելու ամուր ենթահող մը, որուն վրայ հիմնուելով եւ համապատասխան ծրագիրներու մշակումով եւ իրագործումով, կը հաւատանք, կարելի կ'ըլլայ վերականգնել անոր Էական դերը արեւմտահայ մշակութային ժառանգութեան պահպանման, հայապահպանումի աշխատանքին իր զգայի նպաստին ու սփիւռքահայ համայնքներուն մարդուժ հայթայթելու առաքելութեան մէջ:

Հարկ է, սակայն, կառոյցներու նորոգութենէն ետք վերստին թափ տալ մարդակերտումի աշխատանքին, տարբեր ոլորտներու



մէջ վերականգնել մասնագիտական աշխատանքի որակը, վերապատրաստել ուսուցիչներ, թերթի աշխատակիցներ, համայնքի կրթական, տնտեսական, մշակութային կեանքը վերաթարմացնող, վերաորակաւորող մարդուժ: Այս իմաստով կարելի է օգտուիլ սփիւռքի տարբեր համայնքներու հետ գործակցութենէն, փորձառութիւններու փոխանակումէն, ինչպէս նաեւ արտագաղթած, յատկապէս Յայաստան տեղափոխուած սուրիահայերու հետ գործակցութեան կարելիութիւններէն:

Միւս կողմէ, համայնքի տնտեսական կեանքի բարելաւման համար անհրաժեշտ է համահայկական զօրակցութեան կողքին տեղական ազգային կառոյցներու շահարկումն ու տնտեսական փոքր ծրագիրներու ստեղծումը, որպէսզի թէ՛ մեր կառոյցներու նիւթական հարցերը լուծուին, թէ՛ երիտասարդ մարդուժին գործ հայթայթելու կարելիութիւն ստեղծուի, եւ թէ մասնագիտացած մարդուժը՝ հայերէնաւանդ ուսուցիչներ, դասախօսներ, մշակութային ոլորտի մէջ գործող մասնագետներ լաւապէս վարձատրուին ու իրենց ասպարեզին մէջ նորարարութիւն մուծեն, սերունդներու պատրաստութեան մէջ իրենց աշխատանքը կրկնապատկելով:

Անհրաժեշտ է արեւմտահայերէնի պահպանման ուղղուած ջանքերը եւս կրկնապատկել՝ մեր վարժարաններու հայերէնի ււանդման ծրագիրները վերամշակելով, համապատասխան ուսուցիչներ, մամուլի ծառայողներ ու միութիւններու դաստիարակչական ծրագիրները ի գործ դնող երիտասարդ մարդուժ պատրաստելով, որպէսզի անոնք նոր ոճ ու եղանակ օգտագործելով, դաստիարակչական աշխատանքը հաճելի ու մատչելի դարձնեն ու պարտաւորութեան մը սահմանին մէջ չխեղդեն զայն:

Մեր ակումբներն ու վարժարանները կարելի է օժտել այնպիսի արդիական ծրագիրներով, սարքերով եւ մարդկային պաշարով, որոնք ամբողջութիւն մը կազմելով կըրնան ճամբայ բանալ անոնց գործունեութեան արդիականացման՝ ոճի եւ բովանդակութեան առումով:

Կազմակերպչական ծիրին մէջ, սակայն, հարկ է աշխատանքները խտացնել, իրարանման գործերը միացնել, վարչական

մարմինները գործունեայ բջիջներու վերածել՝ գործերու ապակեդրոնացեալ բաշխում կատարելով, որպէսզի անհատներ մէկէ աւելի աշխատանքներով չծանրաբեռնուին ու աշխատանք ստանձնողը կարենայ ժամանակ տրամադրել գործի յառաջընթացին առնչուող ծրագիրներ մշակելու, ոչ թէ միայն ընթացիկ աշխատանքներ տանելու:

Թեւ Երկրի ծանր պայմանները, Արցախի կորուստը յուսահատական տրամադրութիւններ յառաջացուցին շատերու մօտ, սակայն յուսահատական վիճակները կարելի է յաղթահարել քննական մտածելակերպով, մեր խոցելի կողմերը տեսնելով ու զանոնք բարելաւելով, առողջ քննադատութիւնը, առողջ մրցակցութիւնը պահելով մէկտեղ միասնականութիւն դրսեւորելով մեր տեսլականներու իրականացման ճամբուն վրայ:

«Գանձասար»-ի 30-ամեակը կը բոլորենք մեր կիզակետին մէջ ունենալով հետեւեալ հիմնական նպատակները.

- Ա) «Գանձասար»-ի թուայնացում,
- Բ) Երիտասարդ գրողներու պատրաստութիւն՝ սփիւռքահայ եւ հայրենի մտաւորականներու հետ գործակցաբար,
- Գ) Թերթի բովանդակութեան հարստացում,
- Դ) Սփիւռքահայ եւ հայրենի մամուլին հետ գործակցութեան աշխուժացում,
- Ե) Յայերէնի անադարտ պահպանման համար համապատասխան դասընթացներու կազմակերպում,

Չ) Թերթի գաղափարական գոյնի շեշտադրում՝ հայկական մեր իրաւունքներու վերատիրացման անշեղ ուղիէն չթեքելու հաստատականութեամբ:

«Գանձասար»-ի այս տարուան Բացառիկը կը նուիրենք սուրիահայ համայնքին, լուսարձակի տակ առնելով իւրաքանչիւր շրջան՝ ոչ թէ գիտական ուսումնասիրութիւններ կատարած ըլլալու յաւակնութեամբ, այլ՝ փորձագրական էջերով իւրաքանչիւր շրջանի դժուարութիւնները եւ անոնց յաղթահարման անհրաժեշտ քայլերը պարզելու եւ հաւաքական աշխատանքով, գործակցաբար լուծումներու մասին խորհելու:

Թող 2024-ը ըլլայ յոյսի եւ բեղուն աշխատանքի տարի, իսկ դժուարութիւնները ծառայեն մեր դիմադրողականութեան ուժեղացման՝ յանուն նոր ձեռքբերումներու:



ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ



**ՄԻԱՄԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ԲԵՐԻՈՅ ՆԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
1 ՅՈՒՆՈՒԱՐ 2023 - 31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023**

Հովանաւորութեամբ Թեմիս Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Վարչութիւնը անցնող միամեայ ժամանակաշրջանին գործեց յանձնառութեամբ ու նուիրումով, Սուրիոյ յետ-պատերազմեան հետքերուն ընդառաջ, երկրիս ապահովական, առողջապահական եւ քաղաքական ծանր պայմաններուն ու տնտեսական անհամեմատ անկումներուն մէջ: Համայն աշխարհը տազնապեցնող տնտեսական դժուար պայմանները առաւել ազդեցին տասը տարի պատերազմ ապրող Սուրիոյ ժողովուրդին վրայ: Այս դժուար իրավիճակին յաջորդեց 6 Փետրուարի քանդիչ, աղետալի երկրաշարժը ու անոր յառաջացուցած հոգեկան, նիւթական, կենցաղային ու այլ ընկերատնտեսական ահաւոր դժուարութիւնները:

Արցախի յուզիչ իրավիճակը եւ արցախահայութեան բռնի տեղահանութիւնն ու մեծաթիւ Նահատակները մեծապէս ազդեցին համայն հայութեան վրայ: Հայաստան-Արցախ-Սփիւռք միասնութեամբ, հայ ժողովուրդի գոյերթը ապահովող աշխատանքներ տանելով կառչած կը մնանք մեր ազգային արժէքներուն:

Գլխաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, Ազգային Վարչութիւնը, հոգեւորական դասուն, ազգային մարմիններուն եւ աշխարհական նուիրեալ ազգայիններուն ճիգերով միամեայ աշխոյժ գործունէութիւն տանելով իրագործեց գանազան ծրագիրներ, որոնց համառօտ պատկերը կը ներկայացնենք ստորեւ.

- 1-ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՆ**
-Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Երեսփոխա-

նական ժողովի 169-րդ նիստին յառաջացած Ազգային Վարչութեան անդամներն են՝

- Մեթր Սունպուլ Սունպուլեան, ատենապետ
- Երկրչփի. Մարալ Գալայճեան-Սեմերճեան, ատենադպիր
- Երկրչփի. Յարութ Աւընեան
- Գուրգէն Գալուստեան
- Մանօ Տեր Մանուէլեան
- Արմէն Գասպարեան
- Փիեռ Մուսալլի



Ազգ. Վարչութեան ընտրութիւնը վաւերացուեցաւ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին թիւ 17/22, 17 Յունուար 2022 թուակիր պաշտօնագիրով:

- Վարչութիւնս նկատի ունենալով ներկայիս տիրող տնտեսական ծանր իրավիճակը եւ պատերազմէն ետք սուրիահայութեան դիմագրաւած դժուարութիւններն ու նոր մարտահրաւերները, Նախագահութեամբ թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, վերոյիշեալ ժամանակաշրջանին յարմարելով ստեղծուած բոլոր դժուարին պայմաններուն իրագործեց իրեն վստահուած աշխատանքները ամենայն բժախնդրութեամբ:

2-ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՏԿԵՐ

Սուրիոյ մէջ տիրող տնտեսական ծանր պայմաններուն եւ սուրիական լիբային անհամեմատ անկումին ներքոյ, ակտիւ երկրաշարժի հետեւանքները մեղմացնելու եւ վերաշինութեան աշխատանքներով, թեմական, Ազգային կեանքի եւ ժողովուրդի այլաբնոյթ կարիքներու բաւարարման առաջադրութեամբ, Ազգային Վարչութիւնը վեհափառ հայրապետին «Սփիւռքի Տարի Բ. Ինքնաքննութենէ Վերակազմակերպում» Հայրապետական Հռչակագիրին եւ Ազգային Երեսփոխանական ժողովներու բանաձեւերու լոյսին տակ, որդեգրեց աշխատանքային ներկայ ուրուագիծը եւ իրեն վստահուած գործունեութիւնները ծրագրեց հիմնական հետեւեալ վերնագրումներով՝ Ազգ. Առաջնորդարան, Ազգային Մարմիններ, Վարչական, Ուսումնակրթական, Ընկերային, Մարդասիրական, Կալուածային-Շինարարական, Թեմական եւ Վերաշինութիւն:

3- ԱԶԳ. ՄԱՐՄԻՆՆԵՐ

Ազգ. Վարչութիւնը ձեռնարկեց Ազգ. մարմիններու յառաջացման, նկատի առնելով թեմի բազմատեսակ կարիքները եւ Ազգ. Վարչութիւն-թեմական ժողովուրդ փոխադարձ ակնկալութիւններն ու գործակցութեան ընդհանուր շրջագիծը: Ազգ. Վարչութեան կողմէ յառաջացած նոր կազմերուն կողքին, ըստ կարիքի, տեղի ունեցան նաեւ շարք մը մարմիններու համալրումը կամ յատուկ յանձնախումբերու յառաջացումը: Յառաջացան զանազան Ազգային մարմիններ (խորհուրդներ, հոգաբարձութիւններ, ինսամակալութիւններ, յանձնախումբեր եւ այլն), թեմի Ազգային ծառայութեան մէջ կամաւոր կերպով գործեցին մեծ թիւով Ազգայիններ:

4- ԺՈՂՈՎԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Վարչութիւնը իր հերթական նիստերով ու բոլոր մակարդակներու վրայ, յաճախակի ներքին ու արտաքին հանդիպումներով հետեւեցաւ հայ կեանքին աղերսուած հարցերուն եւ Ազգային մօտեցումներուն: Թեմական պատասխանատուութեամբ քննարկուած նիւթերը ու անոնց հետեւանքով առնուած որոշումները հիմնուած էին թեմի անհրաժեշտ կարիքներուն եւ ընդհանրական շահերուն վրայ:

Ազգ. Վարչութիւնը իր հերթական եւ արտահերթ նիստերուն, Ազգային մարմիններու եւ ներկայացուցիչներու հետ յատուկ օրակարգերով հանդիպեցաւ, ինչպէս նաեւ ընդունեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկո-

սութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան՝ Քաղաքական ժողովի անդամ Հրաչ Յակոբեանը եւ Ազգային Երեսփոխանական ժողովի ատենապետ եւ Սուրիոյ Խորհրդարանի անդամ Ժիրայր Ռէիսեանը:

- Ազգ. Վարչութեան պաշտօնավարութեան ընթացքին յառաջացած բոլոր Ազգ. մարմինները եւ յանձնախումբերը իրենց վըստահուած աշխատանքները յառաջ տարին համաձայն իրենց ուղեցոյցին, եւ իրենց գործունեութեան տեղեկագիրները փոխանցեցին վարչութեանս:

5- ԱԶԳ. ԵՐԵՍՓՈՒԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Միամեայ այս շրջանին գումարուեցաւ Ազգ. Երեսփոխանական 173 թուակիր նիստը, 6 Փետրուարի աղետալի երկրաշարժին օրակարգով, Ազգային առաջնորդարանի դահլիճէն ներս, Ուրբաթ, 10 Փետրուար 2023-ին:

6- ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ

6-1- ԿԱԹՈՂԻԿՈՍՍՈՒՐԻՈՅ ՊԵՏՈՒԹԻՒՆ

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ ՅԱՅՏԵՑ ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՅ ՊԱՇՏՄԱՐ ԱԼ-ԱՍԱՏԻՆ

ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը Սուրիոյ Հանրապետութեան նախագահ Պաշար ալ-Ասատին ցաւակցագիր յղեց, ուր յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, իր խորագգաց վշտակցութիւնը յայտնեց Սուրիան հարուածած ծանր երկրաշարժին հետեւանքով ինկած զոհերուն, ինչպէս նաեւ զօրակցութիւն՝ վերապրողներուն:

Վեհափառ հայրապետը գրած էր, որ կըսկիծով կը հետեւի աղետին պատճառած ահաւոր ակտիւն եւ պատրաստակամութիւն յայտնած՝ օժանդակութեան ձեռք երկարելու Սուրիոյ ժողովուրդին (Շաբաթ, 6 Փետրուար 2023):

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅԱՄԱԿՑԱԳԻՐ ՅՐԵՑ ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՅԻՆ՝ ՀՈՍՍԻ ՄԷՋ ԻՆԿԱԾ ՉՈՅԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ցաւակցագիր յղեց Սուրիոյ վստահաշուք նախագահ տոքթ. Պաշար ալ-Ասատին՝ դատապարտելով Հոմսի սպայից վարժարանին վրայ գործուած ահաբեկչական յարձակումը եւ յայտնեց իր խորագգաց ցաւակցութիւնները Սուրիոյ պետութեան ու ժողովուրդին: Հայրապետը նամակին մէջ իր զօրակցութիւնն ու կարեկցանքը յայտնեց զո-



հերու ընտանիքներուն եւ աղօթք բարձրացուց առ Աստուած Սուրիական Հայրենիքի անսասանութեան ու հզօրութեան համար եւ շուտափոյոթ ապաքինում մաղթեց բոլոր վիրաւորներուն (Ուրբաթ, 6 Յոկտեմբեր 2023):

6-2 ՀՈՎՈՒՊԴԵՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՈՒՊԴԵՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՀԱԼԵՊԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ

Սուրիոյ մէջ տեղի ունեցած աղետալի երկրաշարժէն ետք, Հինգշաբթի, 16 Փետրուար 2023-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետ հովուապետական զօրակցական այցելութեամբ, շքախումբով ժամանեց Հալէպ՝ գօտեպնդելու սուրիահայութիւնը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան զօրակցութիւնը յայտնելու սուրիահայութեան:

Նորին Սրբութիւնը դիմաւորուեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր, քոյր յարանուանութիւններու համայնքապետներուն, Հալէպի Գլխաւոր Հիւպատոսութեան Խորհրդական-Հիւպատոսին, ՀՀ մարդասիրական առաքելութեան խումբի պատասխանատուին, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխանին, Ազգային Երեսփոխանական Ժողովի եւ Ազգային Վարչութեան անդամներուն, հալէպահայ երեք կազմակերպութիւններու, հալէպահայ մշակութային, մարզական եւ բարեսիրական միութիւններու ներկայացուցիչներուն եւ հոծ ժողովուրդին կողմէ:



Վեհափառ հայրապետին շքախումբին մաս կը կազմէին «Կիլիկիա» Մատենադարանի տնօրէն եւ Բերիոյ Հայոց Թեմի նախկին Առաջնորդ Գերշ. Տ. Շահան Սրբ. Արք. Սարգիսեան, գաւազանակիր Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան, Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան, Հոգշ. Տ. Չաւեն Վրդ. Նաճարեան, Լիբանանի ՀՅԴ Կ.Կոմիտէի ներկայացուցիչ, Լիբանանի խորհրդարանի երեսփոխան Յակոբ Բագրատունի եւ Մեծի

Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդրոնական Վարչութեան աւագ ատենապետ Ստեփան Տէր Պետրոսեան:

Վեհափառ Հայրապետը հանդիսապետեց Սրբ. Վարդանանց Չօրավարաց տօնին նուիրուած Սուրբ եւ Ամմահ Պատարագին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Աշգարեան հոգեւորականաց դասուն, Ազգ. Իշխանութեան, միութիւններուն եւ հալէպահայութեան անունով ողջունեց վեհափառ հայրապետը եւ փառք տուաւ Աստուծոյ, որ երկրաշարժէն փրկուած Հալէպահայութիւնը արժանի դարձաւ Հայրապետին զօրակցական այցելութեան, եւ հրաւիրեց ՆՍ Օծութիւնը իր հայրական պատգամը ուղղելու հալէպահայութեան:



Արամ վեհափառ ժողովուրդին ուղղեց իր պատգամը ու հաստատեց, թէ «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր թեմերով, կառոյցներով, մարմիններով իր բոլոր կարելիութիւններով հալէպահայութեան հետ է»: Հայրապետը վշտակից դարձաւ մեզի մեր ունեցած վնասներուն ու զոհերուն, նաեւ նախկին Կիլիկեան աշխարհի՝ Մալաթիոյ, Մարաշի եւ Իսկէստերունի զոհերուն:



Նորին սրբութիւնը կոչ ուղղեց մեր ժողովուրդի գաւակներուն, շեշտելով որ մեզի համար սրբազան պարտաւորութիւն է օգնել Սուրիոյ հայերուն, մասնաւորաբար Յալթայի հայերուն:

Պատարագէն ետք, վեհափառ հայրապետը լրատուամիջոցներուն դիմաց կոչ ուղղեց միջազգային ընտանիքին՝ չեղեալ համարելու Սուրիոյ վրայ սահմանուած պատժամիջոցները եւ փութալու աղետահար ժողովուրդի օգնութեան: Աւարտին եկեղեցւոյ ներքնասրահը աջահամբոյր տեղի ունեցաւ:



Արամ կաթողիկոս այս առիթով շնորհաւորեց Մակար Սրբ. Եպս. Աջգարեանը՝ Բերիոյ Յայոց Թեմի Առաջնորդ ընտրուելուն առիթով եւ գնահատեց ընտրութեան առաջին իսկ օրէն իր բերած ծառայութիւնը, յատկապէս աղետալի երկրաշարժի օրերուն, երբ ժողովուրդի կողքին կենալով գօտեակոչեց զայն: Վեհափառ Յայրապետը գնահատանքով անդրադարձաւ նաեւ Սուրիոյ պատերազմի տարիներուն Բերիոյ Յայոց Թեմի նախկին Առաջնորդ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանի ծառայութեան: Նորին սրբութիւնը գնահատեց Ազգային Երեսփոխանական Ժողովը, Ազգային Վարչութիւնը, Կրօնական Ժողովը եւ բոլոր կազմակերպութիւններուն եւ միութիւններուն ազգանուեր գործունէութիւնը, յայտնելով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գորակցութիւնը եւ յորդորեց որ յառաջիկայ օրերուն բոլորը միասնաբար աշխատին հալթայահայութեան կեանքը վերականգնելու ի խնդիր:



6-3- ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՀԵՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Յայրապետի եւ Ազգ. Կեդրոնական Վարչութեան հրաւերով, թեմակալ առաջնորդն ու թեմի պատասխանատուները՝ պարբերաբար հանդիպումներ ունեցան Անթիլիասի մէջ, թեմին, սուրիահայութեան վերականգնումին եւ Սուրիոյ իրավիճակին առնչութեամբ:

Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Աջգարեան, որպէս Ազգ. Կեդրոնական Վարչութեան Կրօնական Ժողովի անդամ, Անթիլիասի մէջ մասնակցեցաւ Ազգ. Կեդրոնական Վարչութեան Կրօնական Ժողովի նիստերուն եւ լիակատար նիստերուն, ուր բանաւոր եւ գրաւոր զեկոյցներ ներկայացուց Յալթայի սուր ճգնաժամին, քաղաքական ու տնտեսական ծանր իրավիճակին, երկրաշարժին ձգած հետեւանքներուն ու առնչակից աշխատանքներու մասին: Տիար Հրաչ Յակոբեան որպէս Ազգ. Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովի անդամ, իր կարգին Անթիլիասի մէջ մասնակցեցաւ Ազգ. Կեդրոնական Վարչութեան լիակատար եւ աշխատանքային նիստերուն:

6-4- ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒՆ:

Վեհափառ հայրապետին հրաւերով, թեմակալ առաջնորդ սրբազան հայրը ու Բե-

րիոյ Հայոց Թեմի Ազգ. Իշխանութիւնը իրենց մասնակցութիւնը բերին կաթողիկոսութեան զանազան նախաձեռնութիւններուն: Հալէպ փոխանցուեցան վեհափառ հայրապետին պատգամները, հայրապետական գիրերը, նամակները, շրջաբերականները եւ լրատուական հաղորդագրութիւնները, որոնք քննարկուեցան եւ համապատասխան որոշումներ առնուեցան:

- Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետի եւ Ազգային Կեդրոնական Վարչութեան լիակատար նիստին (28 Յուլիս 2023-ին) առցանց իրենց մասնակցութիւնը բերին առաջնորդ սրբազան հայրը եւ Ազգային Վարչութեան ատենապետ մեթր Սունայուլ Սունայուլեանը, որոնք բերանացի եւ գրաւոր գեկոյց փոխանցեցին:

7-ԹԵՄԱԿԱՆ

Առաջնորդ սրբազան հօր հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ տեղի ունեցան հետեւեալ գլխաւոր նախաձեռնութիւնները.-

- Կիրակի, 8 Յունուար 2023-ին, թեմիս բոլոր եկեղեցիներէն ներս ընթերցուեցաւ ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. -ի «Սփիւռքի Տարի Բ. Ինքնաքննութենէ Վերակազմակերպում» հայրապետական հռչակագիրը:

- Թեմիս բոլոր եկեղեցիներէն ներս նշուեցան եկեղեցական եւ ազգային տօները, որոնք կարգին եր՝

- Կիրակի, 28 Մայիս 2023-ին, Հանրապետական Մաղթանքի արարողակարգ եւ Հայաստանի Ա. Հանրապետութեան եռագոյն դրօշի օրհնութիւն, ՀՀ Ա. Անկախութեան 105-ամեակին առիթով, ինչպէս նաեւ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին անուանակոչութեան տօնը յիշատակուեցաւ, Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Արամ Վեհափառ ձեռնադրուած է Հայաստանի Ա. Հանրապետութեան հիմնադրութեան յիսնամեակին առիթով եւ ստացած է Արամ անունը:

- Կիրակի, 2 Յուլիս 2023-ին, Հայրապետական Մաղթանքի արարողակարգ կատարուեցաւ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Գահակալ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին կաթողիկոսական ընտրութեան եւ օծման 28-ամեակին առիթով:

- Կիրակի, 24 Սեպտեմբեր 2023-ին, Հանրապետական մաղթանքի արարողակարգ եւ եռագոյն դրօշի օրհնութիւն կատարուե-

ցաւ, ՀՀ վերանկախութեան 32-ամեակին առիթով:



- Կիրակի, 8 Հոկտեմբեր 2023-ին, Հոգեհանգստեան արարողութիւն կատարուեցաւ՝ Արցախի 44-օրեայ պատերազմի Բ. տարելիցին, Շուշիի մէջ նահատակուած հալէպահայ հերոսներուն, Սուրբիոյ պատերազմին հայկական թաղամասերը պաշտպանող մեր խիզախ երիտասարդներուն՝ նահատակներ Ռաֆֆի Պչաքճեանի, Իրամանատար Յարութ Բանոյեանի, Յակոբ Ասթարճեանի եւ Մոսիկ Սեքլեմեանի հոգիներուն խաղաղութեան համար: Սրբազան



հայրը նախագահեց Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ մատուցուած Սուրբ եւ Ամմահ Պատարագին, ներկայութեամբ՝ Բերիոյ Թեմի Կաթողիկէ Հայոց Առաջնորդի ներկայացուցիչին եւ Սուրբիոյ Հայ Աւետարանական Համայնքի Պետին: Այնուհետեւ, ԱՄԺ Տան «Լեւոն Շանթ» սրահէն ներս ցաւակցութիւններ ընդունուեցան:

Առաջնորդ սրբազան հայրը Նոյն օրը ցաւակցական խօսք ուղղեց Սուրբիոյ Վսեմաշուք Նախագահ տոքթ. Պաշար ալ-Ասատին, Հոմսի մէջ Ուրբաթ, 6 Հոկտեմբեր 2023-ին տեղի ունեցած անմարդկային ոճիրին տխուր առիթով:

8- ԵՐԿՐԱՇԱՐԺ՝ 6 ՓԵՏՐՈՒՄ 2023

- Երկուշաբթի, 6 Փետրուար 2023-ին, վաղ առաւօտեան ժամը 4:15-ին, երկուսհաւոր երկրաշարժներ ցնցեցին Սուրիան,

ի մասնաւորի Յալէպ, Լաթաքիա, Բեսապ եւ Իտլիպ նահանգները: Շուրջ երկու վայրկեաններու վրայ երկարող երկրաշարժները 7,8 եւ 6,4 միլիթրը ուժգնութեամբ սարսափեցուցին ժողովուրդը եւ մարդկային ու նիւթական վնասներ արձանագրեցին: Երկրաշարժներու յետնցումները կը շարունակուին Սուրիոյ տարածքին ցայսօր:

Թեմս անմիջապէս ձեռնարկեց ժողովուրդի ծով կարիքներու բաւարարման աշխատանքին, տրամադրեց ապաստանարաններ եւ օժտեց զանոնք կենցաղային բոլոր յարմարութիւններով:

Նախագահութեամբ առաջնորդ սրբազան հօր, Ազգ. Վարչութիւնը 7 Փետրուար 2023-ին յառաջացուց Բերիոյ Յայոց Թեմի երկրաշարժի արտակարգ իրավիճակի մարմին, որուն պարտականութիւնն էր երկրաշարժի հետեւանքով մեր ժողովուրդի կարիքներուն ապահովման համապատասխան աշխատանք ծաւալել, լուծումներ առաջադրել ու անոնց ֆինանսաւորող կողմերը ապահովել: Ինչպէս նաեւ երկրաշարժի արդիւնք վնասուած բնակարաններու վնասները ուսումնասիրող ու արձանագրութիւն պահող յանձնախումբ մը յառաջացուց՝ բաղկացած մասնագետ հինգ երկրաչափերէ:

Մարմինը աշխատանքը ծաւալեց ամենայն բժախնդրութեամբ, ձեռնարկեց եւ ի գործ դրաւ զանազան ծրագիրներ՝ եկեղեցիներու եւ բնակարաններու վնասներու ցանկագրում, ստուգում եւ վերաշինութիւն, զանազան օժանդակութեան ծրագիրներ՝ սննդակողովներ, մաքրողական անհրաժեշտ պէտքեր, փոքրիկներու եւ երեցներու կենցաղային կարիքներ:

Ծրագիրները իրագործուեցան համագործակցաբար բարեսիրական զանազան կողմերու եւ արտերկրի հայ ազգային գաւակներու բարերարութեամբ:

- Մարմինը ձեռնարկեց նաեւ աղետալի երկրաշարժի արդիւնք հայ ազգի զաւակներու կարիքներու գնահատման համար մարդահամարի կարելոր աշխատանքին: Յալէպաբնակ ընտանիքներու արձանագրութիւններ կատարուեցան, Երկուշաբթի, 27 Փետրուար 2023-էն օրական դրութեամբ, Յալէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահը:

- Մարմինը օժանդակութիւններ տրամադրեց աղետալի շրջաններու մեր ժողովուրդի զաւակներուն:



Յետ երկրաշարժին, ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչները զօրակցական այցելութեամբ գօտեակոչեցին սուրիահայութիւնը: Ինչպէս նաեւ ՀՕՄ-ը օժանդակութիւններ տրամադրեց սուրիահայութեան:



Եւրոպայի Հայ Կաթողիկոսական Երեւանի Եպիսկոպոսը շնորհակալութիւններ արտայայտեց իր օժանդակութեամբ իրականացուած աշխատանքներուն համար:



Բերիոյ Յայոց Թեմի Երկրաշարժի Արտակարգ Իրավիճակի Կեդրոնական Մարմին

Նախագահութեամբ Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, յառաջացաւ Արտակարգ Իրավիճակի Մարմին՝ կազմուած ներկայացուցչական անդամներէ, հետեւեալ պատկերով.

- Ազգ. Վարչութեան՝
- Գորգէն Գալուստեան
- Մանօ Տէր Մանուէլեան
- Ազգային Երեսփոխանական Ժողովէն՝
- Մակի Պերպերեան
- Յարութ Յայրապետեան
- Կալուածոց Հոգաբարձութեան՝
- Երկրչփի. Սիլվա Փախանեան-Նազարեան

ՍՕ ԽաչԷՆ՝

- Լենա ԷլԷյճեան

ՅԵՄ-ԷՆ՝

- Յովան ՊիլԷմճեան:

Բերիոյ Յայոց Թեմի Երկրաշարժի Արտակարգ Իրավիճակի Գործադիր Մարմին Եւ Երկրաչափական Խմբակ

Յառաջացաւ Արտակարգ Իրավիճակի Գործադիր Մարմինը Եւ Երկրաչափական Խմբակը կազմուած ներկայացուցչական անդամներէ, հետեւեալ պատկերով.-

Ազգ. Վարչութենէ՝

- Երկրչփի. Մարալ Գալայճեան-Սեմերճեան

Կալուածոց Յոգաբարձութենէ՝

- Երկրչփի. Սիլվա Փախանեան-Նազարեան

Ազգայիններէ՝

- Երկրչփ. Յակոբ Ղազարեան

- Գօգօ Գարամանուկեան:

Վերոյիշեալ Գործադիր Մարմինի խմբակին միացաւ Կառոյցներու Ստուգման Յանձնախումբ մը բաղկացած երկրաչափական ճիւղի համալսարանական աւարտական կարգի հետեւեալ երիտասարդներէն.

- Յակոբ Խաչոյեան

- Կարէն Թիւթիւնճեան

- Մովսէս Ատուրեան

- Ստեֆանի Սահակեան

- Լուսինէ Յամամճեան

- Ալիս Գոլյումճեան

Երկրաչափական կազմը գործեց երկրչփի. Սիլվա Նազարեանի հսկողութեամբ Եւ համադրումով:



ՅՅԴ ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵՂՐ. ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱՁԵՆՆՈՒԹԵԱՄԲ ՅԱԼԷՊ ՅԱՍՄԼԻԲԱՆԱՆԱՅԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

- Կիրակի, 12 Մարտ 2023-ին, ՅՅԴ պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ Լիբանանի Կեղր. Կոմիտէի ներկայացուցիչ, Լիբանանի հայկական երեսփոխանական պլո-

քի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունիի, լիբանանահայութեան կողմէ առաքուած մարդասիրական օժանդակութիւնը հասցուց Յալէպի Ս. Աստուածածին եկեղեցի:



ԱՄՏՐԱԼԻԱՅԷՆ ԺԱՄԱՆԱԾ ԶՐԻՍՏՈՆԵԱՅ ՅՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐՈՒ ԶՕՐԱԿՑԱԿԱՆ ԱՅՅԵՆՈՒԹԻՒՆ ՄՐԲ. ԶԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

- Շաբաթ, 1 Յուլիս 2023-ին, Աւստրալիայէն ժամանած քրիստոնեայ հոգեւոր պետեր Բերիոյ Թեմի Կաթողիկէ Յայոց Առաջնորդ Արիի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեանի գլխաւորութեամբ այցելեցին Սրբոց Զառասկից Մանկանց Մայր եկեղեցի, ուր ջեր-



մապէս դիմաւորուեցան առաջնորդ սրբազան հօր, Ազգային Երեսփոխանական Ժողովի, Ազգային Վարչութեան Եւ Ազգային Կրօնական Ժողովի անդամներու Եւ եկեղեցւոյ Թաղական Խորհուրդին կողմէ:

Աւստրալիայէն ժամանած պատուիրակութեան մաս կը կազմէին Ղպտի եկեղեցւոյ առաջնորդ Անպա Տանիէլ, Աւստրալիոյ Եւ Նոր Զելանտայի Յայ Առաքելական եկեղեցւոյ առաջնորդ Գերշ. Տ. Յայկազուն Արք. Նաճարեան, Յայ Կաթողիկէ եկեղեցւոյ առաջնորդ Մոնսինիոր Պասիլ Սասունեան Եւ Յոյն Կաթողիկէ եկեղեցւոյ առաջնորդ Ռոպեր Ռապաթ, որոնք եկած էին իրազէլ դառնալու աղետալի երկրաշարժի թողած հետեւանքներուն, քրիստոնեայ համայնքներուն

դիմագրաւած մարտահրաւերներուն եւ բարոյական օժանդակութեամբ աղօթակից եւ զօրակից դառնալու համայնքներուն:



Պատուիրակութիւնը շրջեցաւ Սրբոց Քառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ, ծանօթացաւ եկեղեցւոյ պատմութեան եւ սրբապատկերներուն, ապա ուղղուեցաւ Ազգային պատասպարան, ուր շերմապէս դիմաւորուեցան ՍՕ Խաչի Շրջ. Վարչութեան անդամներուն եւ Ազգային Պատասպարանի յանձնախումբի անդամներուն եւ սասերուն կողմէ:

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԹԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԵՒ ՍՐԲ. ԶԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

- Չորեքշաբթի, 30 Օգոստոս 2023-ին, Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տ. Ռաֆայէլ Պետրոս ԻԱ. Մինասեան Պատրիարք Հայրը Հալէպ կատարած հովուապետական իր այցելութեան ընթացքին մասնաւոր այցելութիւն



տուաւ Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Առաջնորդարան եւ Սրբ. Քառասնից Մանկանց Մայր եկեղեցի, ընկերակցութեամբ՝ Բերիոյ Թեմի Կաթողիկէ հայոց առաջնորդին: Պատրիարք Հայրը շերմապէս դիմաւորուեցաւ թեմիս բարեջան առաջնորդին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամին, Ազգ. Երեսփո-

խանական ժողովի ատենապետին եւ անդամներուն, Ազգային Վարչութեան, կրօնական դասուն եւ դիւանապետին կողմէ: Պաշտօնական ընդունելութենէ ետք, անոնք այցելեցին Սրբ. Քառասնից Մանկանց Մայր եկեղեցի, ապա՝ Ազգային առաջնորդարան:

«CARITAS POLAND» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՅՅԵԼԵՑ ՍՐԲ. ԶԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

- Երկուշաբթի, 2 Հոկտեմբեր 2023-ին, «Caritas Poland» Բարեսիրական հաստատութենէն պատուիրակութիւն մը, որ կը բաղկանար շուրջ երեսուն հոգիներէ եւ 26 տարբեր քաղաքներէ եկած պատասխանա-



տուներէ, գլխաւորութեամբ՝ հաստատութեան տնօրէն Մարչըն Էգեսկիի, Սուրիոյ եկեղեցիներու եւ հնավայրերու այցելութեան ծիրէն ներս ժամանեց Սրբոց Քառասնից Մանկանց Մայր եկեղեցի, մօտէն ծանօթանալու սրբապատկերներուն, եկեղեցւոյ պատմական արժէքին եւ վերադառնալով զեկոյց ներկայացնելու՝ առաւել գործնական քայլերով օժանդակելու Սուրիոյ քրիստոնեայ համայնքներուն:

9- ՀՈՎՈՒՄԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Թեմական առաջնորդին գլխաւորութեամբ, ընկերակցութեամբ Ազգային Վարչութեան անդամներուն եւ ազգայիններու, հովուական ու աշխատանքային այցելութիւններ տրուեցան թեմի Լաթաքիոյ, Քեսապի, Ճեզիրէի, Դամասկոսի, Ղնեմիէի, Արամոյի հայ համայնքին՝ զանոնք աշխուժացնելու եւ վերակազմակերպելու հեռանկարով: Ինչպէս նաեւ յետ երկրաշարժի զօրակցական այցելութիւններ տեղի ունեցան թեմիս Լաթաքիա, Քեսապ, Արամօ, Ղնեմիէ շրջանները: Հանդիպումներ տեղի ունեցան նաեւ շրջաններու վարժարաններու աշակերտութեան, ուսուցչական կազմերուն, հոգաբարձութեանց եւ եկեղեցիներու թաղականութեանց, ինչպէս նաեւ միութիւններու վարչական կազմերուն հետ:

Առաջնորդ սրբազան հայրը իր հանդիպումներուն ընթացքին շեշտեց հայեցի դաստիարակութեան անհրաժեշտութիւնը, հայկական ինքնութիւնը պահող հայ դպրոցը վերակազմակերպելու եւ հայ հոգեւոր



ինքնութեան պաշտպան հայ առաքելական եկեղեցւոյ պայծառացման անհրաժեշտութիւնը եւ իր հայրական օրհնութիւնները փոխանցելով գօտեպնդեց համայնքի զաւակները:

10- ՊԵՏԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թեմակալ առաջնորդ սրբազան հօր գլխաւորութեամբ, ընկերակցութեամբ՝ Ազգային Կրօնական Ժողովի, Ազգ. Վարչութեան ներկայացուցիչներուն, Ազգ. Երեսփոխանական Ժողովի ատենապետ եւ Սուրիոյ խորհրդարանի անդամ Ժիրայր Րէիսեանի, Յարաբերական Մարմինի ներկայացուցիչներուն եւ ազգայիններուն՝ շնորհակալական,



քաղաքավարական, շնորհաւորական, պաշտօնական, զօրակցական, աշխատանքային եւ շարք մը յատուկ հարցերու հետապնդման օրակարգերով յարգալիիր յարաբերութիւն մշակուեցաւ Զալէպի, մայրաքաղաք Դա-

մասկոսի եւ շրջաններու պետական ամազակին եւ պաշտօնատարներուն հետ: Թեմի տարբեր շրջանները կատարուած այցելութիւններուն ընթացքին, տեղւոյն պետական-կառավարական բարձրաստիճան պատասխանատուներուն հետ տեղի ունեցան հանդիպումներ: Պետական շրջանակին հետ կատարուած այս հանդիպումները հիմնական ու առաջնային կերպով ընթացան թեմիս առաքելութեան կապուած հարցերու եւ անոնց դրական նպաստը մեր ծրագիրներու իրագործման ու մեր թեմի բարելա-



ման ու ծաղկման, ինչպէս նաեւ կայացած կարգ մը դժուարութիւններու շուրջ եւ օրէնքի ընձեռնած հնարաւորութիւններով ազգային ծրագիրներուն նպաստելու: Սրբազան հօր գրասենեակէն ներս, զանազան առիթներով խորհրդակցական, շնորհաւորական, զօրակցական եւ աշխատանքային բնոյթի այցելութիւններ ընդունուեցան բարձրաստիճան եկեղեցականներու, պետական կառավարական պաշտօնատարներու, դիւանագիտական ներկայացուցիչներու եւ համայնքային պատասխանատուներու:

10-1- ԲԵՐԻՈՅ ԶԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋ-ՆՈՐԴ ԳԵՐՇ. Տ. ՄԱԿԱՐ ՍՐԲ. ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ ՅԱՐԱԿՅԱԳԻՐ ՅՐԵՑ ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՅԻՆ՝ ԶՈՄՍԻ ՄԵՋ ԻՆԿԱՇ ՉՈՅՐՈՒՆ ԶԱՍԱՐ

Ուրբաթ, 6 Յոկտեմբեր 2023-ին, Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Աշգարեան, հեռագիր-ցաւակցագիր ուղարկեց Սուրիոյ վսեմաշուք նախագահ Պաշշար ալ-Ասատին, որուն բովանդակութեամբ դատապարտեց Զոմսի Սպայից վարժարանի վրայ գործուած ահաբեկչական անմարդկային յարձակումն ու ոճիրը, անձամբ ու թեմիս ժողովուրդին եւ ժողովրդականութեան անունով ցաւակցութիւն յայտնեց Սուրիոյ պետութեան ու ժողովուրդին, զոհերու ընտանիքներուն եւ շուտափոյթ ապաքինում մաղթեց բոլոր վիրաւորներուն:

10-2-ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋ-ՆՈՐԴ ԳԵՐԸ. Տ. ՄԱԿԱՐ ՍՐԲ. ԵՊՍ. ԱԾԳԱՐԵԱՆ ԶՕՐԱԿՑԱԿԱՆ ՆԱՄԱԿ ՅՂԵՑ ՊԱՂԵՍՏԻՆԻ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ

Երեքշաբթի, 17 Յոկտեմբեր 2023-ին, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Աջգարեան Ազգային Առաջնորդարանի անունով զօրակցական նամակ ուղարկեց Պաղեստինի ժողովուրդին, դատապարտելով Կազգայի մէջ ծայր առած անմարդկային ոճիրը:

10-3- ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋ-ՆՈՐԴ ԳԵՐԸ. Տ. ՄԱԿԱՐ ՍՐԲ. ԵՊՍ. ԱԾԳԱՐԵԱՆԻ ՀՈՎԱՆԱԴՐՈՒԹԵԱՄԲ ԶՕՐԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱՔ ՊԱՂԵՍՏԻՆԻ ԵՒ ԱՐՑԱՆԻ

Կիրակի, 29 Յոկտեմբեր 2023-ին, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Աջգարեանի հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ, Սուրիոյ Հայ Դա-



տի Կեդր. Մարմինին կազմակերպութեամբ տեղի ունեցաւ Արցախի ու Կազգայի զօրակցական հաւաք՝ ցեղասպանութեան եւ բռնի տեղահանութեան դէմ, մասնակցութեամբ սուրիական, պաղեստինեան եւ հայկական կազմակերպութիւններու, իսլամ եւ քրիստոնէայ հոգեւոր պետերու, Սուրիոյ խորհրդ-



դարանի անդամներու եւ երիտասարդութեան, «Գ. Եսայեան» սրահէն ներս, ներկայութեամբ քրիստոնէայ եւ իսլամ կրօնապետներու, սուրիական կուսակցութիւններու, պաղեստինեան «Քուտս» գումարտակի, պաղեստինեան ապստամբութեան

«Ֆաթի» շարժումի պատասխանատուներու, Հալէպի մէջ Իրանի հիւլապատոսին խորհրդականին, Սուրիոյ խորհրդարանի անդամներու, Հալէպահայ կազմակերպու-



թիւններու, միութիւններու եւ ազգային իշխանութեան ներկայացուցիչներու, Հալէպի կրօնական կալուածներու տնօրէնի, Արաբ Գրողներու Միութեան նախագահին, բարեսիրական միութիւններու ներկայացուցիչներուն, դատախազներու, Հալէպի պետական համալսարանի դասախօսներու եւ հոծ բազմութեան:

ԱՐՑԱՆԻ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ

Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդութեան անունով դիմատետրին մէջ տեղադրուեցաւ Բերիոյ Հայոց Թեմի ժողովականութեան ու ժողովուրդի անունով դատապարտման գիր, հետեւեալ բովանդակութեամբ.-

Բերիոյ Հայոց Թեմի ժողովականութիւնն ու ժողովուրդը խստիւ կը դատապարտեն 19 Սեպտեմբեր 2023-ին Ատրպէյճանի կողմէ Արցախի խաղաղ ժողովուրդին դէմ սանձազերծուած պատերազմն ու զինուորական գործողութիւնները, որոնց պատճառով արցախահայութիւնը ապրելով իր պատմական հողին վրայ ունեցաւ նահատակներ եւ վիրաւորներ, որոնց կարգին նաեւ երեխաներ:

Ինը ամիսներէ ի վեր շրջափակուած Արցախի ժողովուրդը կեանքի կենսական պէտքերէն զրկուեցաւ եւ Ատրպէյճանի կողմէ ի գործ դրուած ցեղասպանութեան ու Արցախի հայաթափման սպառնալիքին ենթարկուեցաւ ողջ աշխարհի աչքին առջեւ:

19 Սեպտեմբերին Ատրպէյճան Արցախը բռնագրաւելու եւ իրեն ենթարկելու համար լայնածաւալ յարձակում գործեց խաղաղասեր արցախահայութեան ու անոր ենթակառոյցներուն վրայ, խախտելով մարդկային իրաւունքներն ու միջազգային օրէնքները:

Արդ, կոչ կ'ուղղենք միջազգային ընտանիքին, գերպետութիւններուն եւ միջազգա-

յին կազմակերպություններուն, անմիջապէս միջամտելու եւ կասեցնելու Ատրաբեյճանի ուժային արարքները: Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդին՝ կարելի բոլոր միջոցներով սատարելու Արցախի մեր հայրենակիցներու օժանդակութեան (Հալէպ, 21 Սեպտեմբեր 2023):

- Կիրակի, 3 Սեպտեմբեր 2023-ին, Թեմակալ առաջնորդ սրբազան հայրը հովանաւորեց եւ ներկայ գտնուեցաւ Գամիշլիի ազգային փոխանորդարանի շրջափակէն ներս տեղի ունեցած Արցախի մէջ շրջափակուած բնակչութեան զօրակցական հա-



ւաքին, «Սուրիահայրութիւնը Արցախի հետ, Արցախի համար» խորագիրով, կազմակերպութեամբ Սուրիոյ Հայ Դատի Գամիշլիի են-




թայանձնախումբին: Ժողովրդական հաւաքին ներկայ գտնուեցան Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդ Հոգ. Տ. ԼԵՆՈՆ Վրդ. Եղիայեան, Գամիշլիի քրիստոնեայ համայնքներու հոգեւոր հայրեր, «Պաաս» կուսակցութեան Գամիշլիի գրասենեակի պատասխանատու ներկայացուցիչներ, արաբ Շամար եւ Թայ ու քիւրտ աշիրապետներ, ազգային եւ միութենական կազմերու անդամներ եւ հոծ բազմութիւն:

11- ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՍ- ՀՀ ԴԻՎԱԿ-ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Սրբազան հօր գլխաւորութեամբ, Ազգ.

Վարչութիւնը պաշտօնական եւ յարգալիր յարաբերութեան մէջ եղաւ՝ ՀՀ Դամասկոսի Դեսպանութեան եւ Հալէպի Գլխաւոր Հիւպատոսութեան հետ: ՀՀ Դիւանագիտական ներկայացուցչութիւնները Հայաստան-Սփիւռք շրջագիծին մէջ կազմակերպուած հանդիպումներուն, ձեռնարկներուն, համագումարներուն առիթներով համապատասխան տեղեկանք փոխանցեցին Ազգ. Վարչութեան յատուկ պաշտօնագրերով: Փոխադարձաբար հրաւերներ ուղղուեցան անոնց Ազգ. Իշխանութեան կողմէ կազմակերպուած բոլոր նախաձեռնութիւններուն:

- Չորեքշաբթի, 8 Մարտ 2023-ին, Ազգային առաջնորդարանի դահլիճէն ներս, Ազգ. Վարչութիւնը ընդունեց զօրակցական այցելութիւնը ՀՀ Սփիւռքի Գործերու Յանձնակատար Չարեհ Սինանեանի ու իրեն ընկերակցող պատուիրակութեան, ՀՀ Սուրիոյ դեսպան Տիգրան Գեորգեանի եւ ՀՀ Հալէպի գլխաւոր հիւպատոսութեան խորհրդական-հիւպատոս Բաբգէն Պատալեանի: Հանդիպման ներկայ գտնուեցան Ազգային Վարչութեան



եան ատենապետ մեր Սունայուլ Սունայուլեան եւ Մանօ Տեր Մանուելեան, թեմիս Երկրաշարժի Արտակարգ Իրավիճակի Մարմինի անդամ Յարութ Հայրապետեան եւ դիւանապետ Սիիրան Վարդապետեան: Պատուիրակութիւնը այցելեց նաեւ Պատմական Սրբոց Զառասնից Մանկանց Մայր եկեղեցի:

- Առաջնորդ սրբազան հայրը ընդառաջելով ՀՀ Սփիւռքի Գործերու Յանձնակատար Չարեհ Սինանեանի ու իրեն ընկերակցող պատուիրակութեան, ՀՀ Սուրիոյ դեսպան Տիգրան Գեորգեանի եւ ՀՀ Հալէպի գլխաւոր հիւպատոսութեան խորհրդական-հիւպատոս Բաբգէն Պատալեանի հրաւերին, ներկայ գտնուեցաւ ՀՀ Հիւպատոսարանէն ներս տեղի ունեցած հանդիպման՝ հայերեք համայնքապետներուն, երեք կուսակցութիւններու ղեկավար կազմի ներկայա-

ցուցիչներուն, ՍՕ Խաչի, ԶԲԸՄ-ի ատենապետներու եւ ճինիշեան յիշատակի ձեռնարկի տնօրէնուհիին հետ: Զանդիպման Գլխաւոր Յանձնակատարը ծանօթացաւ յետ երկրաշարժի Զալէպի հայ համայնքին դէմ ծառայած հիմնախնդիրներուն, նաեւ տեղի ունեցաւ մտքերու փոխանակում Զայրենիք-Սփինոք կապերու ամրապնդման եւ համագործակցութեան հեռանկարներու վերաբերեալ:

12- ԶՅ ՄԱՐՂԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ ԶԱԼԷՊ

Թեմակալ Առաջնորդին գլխաւորութեամբ, թեմն սերտ յարաբերութիւն մշակեց Սուրիոյ ազատագրուած հողատարածքներու ակնազերծումը կատարող եւ Սուրիահայ Օգնութեան Խաչի Ընկերաբժշկական Կեդրոնի դարմանատան ճամբով սուրիացի



ժողովուրդին բժշկական ծառայութիւն մատուցող ԶՅ Մարդասիրական Առաքելութեան Խումբի զինուորներուն հետ, կրօնական եւ ազգային տօներուն յաճախակի այ-



ցելութիւններ տալով եւ հանդիպումներ ունենալով:

Չորեքշաբթի, 8 Փետրուարին Զալէպի միջազգային օդակայան հասաւ Զայաստա-



նի Զանրապետութեան փրկարարական ազգ. կեդրոնի փրկարար խումբը: Խումբին մաս կը կազմէին 29 մասնագետներ եւ Զայաստանի Արտաքին Գործոց Նախարարութեան ներկայացուցիչը, որոնք ձեռնարկեցին որոնողական ծառայողական աշխատանքին Զալէպի «Շաար» շրջանին եւ այլ շրջաններու մէջ փուլ եկած շէնքերու փլատակներուն տակէն մարդկային կեանքեր փրկելով:

Շաբաթ, 11 Փետրուարին, փրկարար խումբը այցելեց Սրբ. Քառասնից Մանկանց Մայր եկեղեցի եւ ստացաւ առաջնորդ սրբազան հօր օրհնութիւնը: Նոյն օրը, փրկարար խումբը ժողովրդային հանդիպում-դասախօսութիւն կատարեց «Ինչպէս Պաշտպանուի Երկրաշարժէն եւ անոր հետեւանքներէն» խորագիրով:

13- ՅԱՐԱՆՈՒՄՆԱԿԱՆ

Բերիոյ հայոց թեմի թեմակալ առաջնորդ սրբազան հայրը եւ Ազգ. Վարչութիւնը պաշտօնական յարաբերութիւն մշակեցին քոյր համայնքներու համայնքապետներուն հետ, ինչպէս նաեւ քրիստոնեայ համայնքներուն եւ իսլամ հոգեւոր պետերուն հետ՝ խորհըր-



դակցելու Սուրիոյ ժողովուրդի զաւակներուն կեանքը վերականգնելու եւ յետ երկրաշարժին օգնութեան ձեռք երկարելու անոնց:

14-ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Թեմակալ առաջնորդը հետեւողականօրէն մասնակցութիւն բերաւ ամսական հերթականութեամբ գումարուած Զալէպի քրիստոնեայ համայնքներու հոգեւոր առաջնորդներու ժողովներուն, ինչպէս նաեւ միջեկեղեցական, միջհամայնքային եւ միջկրօնական հանդիպումներուն:

15- ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԵԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԵՒ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶԵՏ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

Առաջնորդ սրբազան հոր գլխաւորութեամբ, թեմս սերտ յարաբերութիւն մշակեց բարեսիրական գանազան կողմերու հետ, հետամուտ եղաւ կարգ մը ծրագիրներու իրագործման՝ համագործակցաբար բարեսիրական կողմերուն հետ:

- 15 Յոկտեմբեր 2023-ին, առաջնորդ սրբազան հայրը յատուկ հրաւերով Դամասկոսի մէջ իր մասնակցութիւնը բերաւ «SOS christien d’Orient» մարդասիրական կազմակերպութեան հիմնադրութեան տասնամեակին նուիրուած Սուրբ եւ Ամմահ Պատարագին, ապա նաեւ ընդունելութեան երեկոյին:

- 21-27 Նոյեմբեր 2023-ին, առաջնորդ սրբազան հայրը, որպէս պատուոյ հիւր, իր մասնակցութիւնը բերաւ Գերմանիոյ գանազան քաղաքներուն մէջ ACN-ի կազմակերպած «Red Wednesday Event» զօրակցական ձեռնարկներուն: Ան մասնակցութիւն բերաւ Սուրբ եւ Ամմահ պատարագներուն եւ փոխան քարոզի իր խօսքը արտասանեց, մասնակցեցաւ գանազան աղօթքներու, ինչպէս նաեւ հարցազրոյցներ եւ հարց-պատասխան հանդիպումներ ունեցաւ: Սրբազան հայրը իր զրոյցներուն մէջ յատուկ կերպով անդրադարձաւ Միջին Արեւելքի, յատկապէս Սուրիոյ եւ Լիբանանի տագնապին: Անդրադառնալով Սուրիոյ 12 տարուան պատերազմին եւ Փետրուարին հիւսիսային Սուրիան ցնցած ահաւոր երկրաշարժին պատճառած աւերներուն եւ ծանր հետեւանքներուն, ներկայացուց երկրին ենթարկուած շրջափակման եւ պատժամիջոցներուն հետեւանքով յառաջացած տնտեսական, ընկերային եւ կենցաղային անկարագրելի դժուարին պայմաններուն, ժողովուրդին ապրած տագնապներուն եւ ամենօրեայ պայքարին: Սրբազան հայրը իր խօսքին մէջ նաեւ կոչ ուղղեց միջազգային ընտանիքին եւ պատասխանատու մարմիններուն, որպէսզի հարկ եղած արագութեամբ հնարաւորինս աշխատանք տանին վերացնելու շրջափակումը եւ պատժամիջոցները Սուրիոյ վրայէն եւ դադրեցնելու բնական աղբիւրներու եւ հարստութեան յափշտակումն ու անօրէն կերպով իւրացումը եւ ապա օգնելու նաեւ ապահովութեան եւ խաղաղութեան հաստատումին, ինչպէս նաեւ կենցաղային բնական պայմաններու վերահաստատումին:

Սրբազան հայրը իր ելոյթներուն մէջ անդրադարձաւ նաեւ Հայոց Ցեղասպանութեան եւ Արցախի հարցին, հայ խաղաղ բնակչութեան դեմ Ատրպէյճանի անմարդկային ոճիրին, անիրաւ ու անարդար պատերազմին, յարձակումներուն, վերջին շրջանին շուրջ մէկ տարի տեւած շրջափակման եւ ցեղային բնաջնջումի ենթարկելու ծրագիրին: Ան յիշեցուց, թէ ինչպէ՛ս Ատրպէյճանի պետութիւնը քանի մը ամիս առաջ 120.000 հաշուող հայ ժողովուրդը իր դարաւոր եւ պատմական բնօրրանէն բռնի կերպով արմատախիլ ըրաւ եւ ապա կանոնաւոր կերպով աշխատանք կը տանի անոր կրօնական եւ մշակութային ժառանգը ոչնչացնելու եւ անհետացնելու:

Մակար սրբազան յանուն Սուրիոյ ժողովուրդին, մասնաւորաբար քրիստոնէայ համայնքներուն եւ Բերիոյ Հայոց Թեմին, իր երախտագիտութիւնը յայտնեց բոլոր բարեսիրական, մարդասիրական եւ բարեգործական կազմակերպութիւններուն եւ հաստատութիւններուն, որոնք առանց խտրութեան անցնող տարիներուն օգնութեան ձեռք երկարեցին, զօրակցեցան եւ սիրաբարոյսպէս օժանդակեցին Սուրիոյ տառապող եւ կարիքաւոր ժողովուրդին, գանազան մարզերու մէջ եւ մակարդակներու վրայ:

- 30 Նոյեմբեր 2023-ին, սրբազան հայրը Դամասկոսի մէջ իր մասնակցութիւնը բերաւ «Hope Center»-ին կազմակերպած սուրիացի քրիստոնէայ երիտասարդներու դեկավարներուն նուիրուած առաջին համագումարին, որուն հովանաւորն էր Ասորի Ուղղափառ եկեղեցւոյ Պատրիարքութիւնը, համագործակցութեամբ՝ Սուրիոյ Լատին եկեղեցւոյ առաջնորդարանին: Համագումարին նպատակն էր երիտասարդներուն կարիքներն ու յոյզերը լուսարձակի տակ առնել եւ անոնց դիմագրաւած դժուարութիւններուն եւ խնդիրներուն յարմար լուծումներ որոնել:

16- ՆԵՐՔԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Ազգ. Մարմիններու, յանձնախումբերու



վստահուած աշխատանքներուն ընթացքին եւ դիմագրուած դժուարութիւններուն վերահասու դառնալու, միասնաբար զանոնք քննարկելու, տարուած աշխատանքներուն մղում տալու եւ յետ երկրաշարժի վերաշինութեան աշխատանքներ կազմակերպելու համար, գլխաւորութեամբ առաջնորդ սըրբազան հօր, Ազգ. Վարչութիւնը աշխատանքային հանդիպումներ ունեցաւ լրիւ կազմերուն (նստավայր եւ շրջաններ), դիւաններուն եւ ներկայացուցիչներուն հետ:

Սրբազան հայրը անցնող շրջանին յաճախակիօրէն այցելեց ազգային եւ հայկական վարժարաններ, Հայ Ծերանոց, ՀՀ մարդասիրական Առաքելութեան Կեդրոն, Ազգային Պատասպարան, հայկական կառոյցներ, Հալէպի եւ շրջաններու մէջ գործող մշակութային, բարեսիրական եւ մարզական միութիւններուն եւ կազմակերպութիւններուն, ինչպէս նաեւ ընդունեց անոնց այցելութիւնները:

Հովուական, զօրակցական, աշխատանքային եւ տօնական այցելութիւններ կատարեց Բերիոյ Հայոց Թեմի շրջանները՝ Զեսապ, Լաթաքիա, Գամիշլի, Հասիչէ եւ Դամասկոս:

**17- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ-ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
17-1- ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐ**

Թեմի պատմական հարստութիւններուն կարեւոր բաժիններէն կը հանդիսանայ յատկապէս ՍԶՄ Եկեղեցւոյ սրբապատկերներու հաւաքածոն: Ազգային Վարչութիւնը, թեմի հոգեւոր-ազգային արժէքներու եւ հարստութիւններու պահպանման հետամուտ ըլլալով եւ արժեւորելով, ՍԶՄ Եկեղեցւոյ Զահանայից սենեակէն ներս գըտնուող Աստուածամօր եւ Յիսուս Մանուկի մեծարժէք պատմական սրբապատկերի կարեւորութիւնը (պատրաստուած՝ յատուկ Հալէպի համար 17-րդ դարուն), մասնագիտական նորոգութեան ձեռնարկեց:

17-2- ԱԶԳ. ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Աշգարեանի գլխաւորութեամբ, Ազգային Վարչութեան որոշումով յառաջացաւ Ազգ. Կեդրոնական Գրադարանի գիրքերուն դասաւորումը կատարող յանձնախումբ մը, բաղկացած՝ օր. Շաքէ Սելեանէ, տիկ. Արփի Սանոսեան-Չէյթեանէ եւ տիկ. Մարինա Զիլմբօշեան-Պօղիկեանէ, հսկողութեամբ Ազգային Վարչութեան ատենապետ մեթր Սունպուլ Սունպուլեանի եւ Ազգային առաջնորդարանի դիւանապետին:

Գործադրութեան դրուեցաւ Ազգ. Վարչութեանս որոշումը՝ ստանձնելու ազգապատկան «Գեղարդ» շէնքի Բ. յարկի յարկաբաժինէն ներս տեղադրուած գիրքերը եւ բնակարանի բանալիները:

17-3- «ԳԱՆՁԱՍԱՐ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Առաջնորդարանի պաշտօնաթերթ՝ «Գանձասար» շաբաթաթերթը, շարունակեց անխափան լոյս տեսնել, արտացոլացնելով թեմական կեանքին եւ յատկապէս հալէպահայութեան առօրեան: «Գանձասար»-ը ունի իր յատուկ կայքէջը՝ (www.kantsasar.com) եւ դիմատետրի էջը:

«Գանձասար»-ի մէջ լոյս տեսան նաեւ Ազգ. Վարչութեան գործունեութիւններուն յատուկ հաղորդագրութիւնները, յայտարարութիւնները, թղթակցութիւնները եւ միամեայ տեղեկագիրները: Թեմի լուրերը հաղորդուեցան նաեւ «Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդութիւն» դիմատետրի էջով:

17-4- «ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՇԱՐԱԹ»

Աւանդութիւն դարձած «Հայ Մշակոյթի Շաբաթ»-ը այս տարի եւս ընթացք առաւ Կիրակի, 22 Հոկտեմբեր 2023-ին, հովանաւորութեամբ՝ Սուրիական Արաբական Պաաս Կուսակցութեան Հալէպի Համալսարանի



Մասնաճիւղի Ընդհանուր Զարտուղար դոկտ. Իպրահիմ Հատիտի, օրհնութեամբ՝ թեմակալ առաջնորդ սրբազան հօր, կազմակերպութեամբ ՀԵՄ-ի, Հալէպի Համալսարանէն ներս, չորս իրարայաջորդ օրերու տե-



րանէն ներս, չորս իրարայաջորդ օրերու տե-

ւողութեամբ:

Բոլոր ձեռնարկներուն, պաշտօնական հրաւիրեալներուն կողքին ներկայ գտնուեցան թեմակալ առաջնորդը, Ազգ. Վարչութեան կազմը կամ ներկայացուցիչները:

17-5-ՅՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Առաջնորդ սրբազան հօր հովանաւորութեամբ եւ յանձնախումբի հետեւողական աշխատանքով, «Օշական» կրօնական լրատուն երկրորդ տարին ըլլալով անխափան կերպով հրատարակուեցաւ ամսական դրութեամբ:

18- ՈՒՍՈՒՄՆԱԿՐԹԱԿԱՆ

Կրթական մարզը շարունակեց մնալ տիրական՝ թեմիս աշխատանքներուն մէջ: Հայակերտումի ու մարդակերտումի առաքելութիւնը հայ դպրոցի եւ յարակից նախաձեռնութիւններու միջոցաւ առաջնահերթ տեղ գրաւեց թեմական գործունեութեան մէջ, եկեղեցւոյ կողքին ինչպէս միշտ հայ դպրոցը կենսական ազգակերտումի եւ հայեցի կրթութեան դարբնոց նկատուեցաւ:

18-1- ԱԶԳ. ՔԱՐԷՆ ԵՓԻԷ ԾԵՄԱՐԱՆ

Ազգ. Քարեն Եփիէ Ծեմարանը դարձաւ թեմակալ առաջնորդին, եւ Ազգ. վարչութեան ուշադրութեան կիզակետը, որպէս կրթադաստիարակչական դարբնոց եւ նորահաս սերունդներու կերտման միջնաբերդ: Սրբազան հայրը եւ Ազգ. Վարչութիւնը խորհրդակցաբար ինսամակալութեան հետ, ջանացին իրենց աջակցութիւնը բերել Ծեմարանի վարչական ներքին վերակազմակերպման եւ ուսումնակրթական մակարդակի բարձրացման: Ինսամակալութեան եւ տնօրէնութեան հետ տեղի ունեցան խորհրդակցական ու աշխատանքային հանդիպումներ, տրուեցան յաճախակի այցելութիւններ, մօտէն հետեւելու Ծեմարանի ուսումնակրթական, դաստիարակչական, կարգապահական եւ վարչական ներքին կեանքին, ինչպէս նաեւ անվերապահ կերպով զօրակցելու Ծեմարանի վերելքին սատարող բոլոր նախաձեռնութիւններուն:

Ազգային Քարեն Եփիէ Ծեմարանի տնօրէնութեան պաշտօնը վստահուեցաւ Չեփիւռ Էքմէքճեան-Րէիսեանի:

Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի հովանաւորութեամբ եւ հանդիսապետութեամբ Շաբաթ, 14 Հոկտեմբեր 2023-ին, Ազգային Քարեն Եփիէ Ծեմարանի շրջափակէն ներս Սուրբ եւ Ամմահ Պատարագ մատուցուեցաւ Սրբոց Թարգմանչաց տօնին

առիթով, ներկայութեամբ՝ թեմիս կրօնական դասուն, վարչութեանս անդամներ՝ երկրչփ. Յարութ Աւրնեանի եւ Արմէն Գասպարեանի, Ծեմարանի Ինսամակալութեան, Տնօրէնութեան, ուսուցչական կազմին եւ աշակերտութեան: Պատարագէն ետք, Հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ, ի յիշատակ Ազգ. Քարեն Եփիէ Ծեմարանի հիմնադիրներուն՝ երջանկայիշատակ Չարեհ Ա. Կաթողիկոսին եւ օրդ. Քարեն Եփիէին: Աւարտին ներկաները ուղղուեցան Ազգային Գերեզմանատուն, ուր ծաղկեպսակներ գետեղեցին օրդ. Քարեն Եփիէի եւ Յակոբ Օշականի շիրիմներուն վրայ:

18-2- Ազգային Վարժարաններ

2023 տարեշրջանին թեմիս տարածքին իրականացաւ Ազգային վարժարաններու իւրայատուկ կարգ մը միջոցառումներ յիշարժան է նշել որ.

- Հալէպի Ազգային Միացեալ վարժարանի (Ազգային Կիւլպէնկեան վարժարանի կառոյց) այս տարեշրջանին ընթացք առած յետ նորոգութեան աշխատանքները ամբողջացան, Ուրբաթ, 6 Հոկտեմբեր 2023-ին, Առաջնորդ սրբազան հօր գլխաւորութեամբ եւ ներկայութեամբ, ինչպէս նաեւ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդին (MECC) եւ Հոլանտական Եկեղեցիներու Խորհուրդի (KIA) պատուիրակութեան ներկայութեան, որուն մաս կը կազմէին Հոլանտական Եկեղեցիներու Խորհուրդի ընդհանուր պատասխանատու պարոն Տիք, Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի (MECC) Դամասկոսի երկրաչափական աշխատանքներու պատասխանատու երկրչփ. Նըմըր Հատտատ եւ Հալէպի գրասենեակի պատասխանատու՝ օրդ. Լամիս Խուրի, տեղի ունեցաւ Ազգային Միացեալ վարժարանի վերանորոգուած կառոյցին յուշաքարի հան-



դիսաւոր բացումը: Առաջնորդ սրբազան հօր ընկերակցեցան առաջնորդի օգնական Հոգշ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեան, Մե-

ծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Հալէպ ժամանած միաբաններէն Հոգ. Տ. Արմէն Աթ. Գալաճեան, Ազգային Վարչութեան անդամք՝ երկրչփ. Յարութ Արմէնեան եւ Արմէն Գասպարեան, շինարարական աշխատանքներու լիազօր երկրչփ. Տիգրան Պետրոսեան, ներկայ էին նաեւ վարժարանի Հոգաբարձական կազմը, վարժարանի տնօրէնուհի տիկ. Նայիրի Քօչկերեան-Բանոյեան եւ ուսուցչական կազմը:

Նշենք, որ Ազգային Կիւլայէնկեան վարժարանի կառոյցի վերանորոգութիւնը իրականացաւ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդին (MECC), Հոլանտական Եկեղեցիներու Խորհուրդին (KIA) եւ Ազգային Առաջնորդարանի համագործակցութեամբ:

- Լաթաքիոյ Ազգային Նահատակաց վարժարանի 100-ամեակի Յոբելէական հանդիսութիւնը տեղի ունեցաւ 12 Մայիս 2023-ին, բարձր հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեչան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մակար Ս. Եպս. Ազգարեանի, մեծարգոյ հիւրերու, Ազգ. երեսփոխաններու, Ազգային Վարչութեան եւ հոծ բազմութեան: Նախքան հանդիսութիւնը, «Գանձասար» սրահէն ներս տեղի ունեցաւ արխիւային ցուցահանդէսի բացում, որմէ ետք ներկաները բարձրացան «Արարատ» սրահ, ուր տեղի ունեցաւ Յոբելէական Հանդիսութիւնը: Շքեղ յայտագիրով պատրաստուած հանդիսութեան աւարտին, ընթերցուեցաւ ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսին կողմէ այս առթիւ վարժարանին առաքուած Հայրապետական կոնդակը: Պարգեւատրուեցաւ վարժարանի տնօրէնուհին եւ կատարուեցաւ Յուշամատենի գինեձօն:

- Գամիշլիի Ազգային Միացեալ վարժարանի աւարտական 9-րդ կարգի եւ 12-րդ կարգի աշակերտներուն անդրանիկ երկրորդական կարգի հունձքին վկայականաց բաշխման հանդիսութիւնը կատարուեցաւ, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, Շաբաթ, 2 Սեպտեմբեր 2023-ին, «Կիւլայէնկեան» սրահէն ներս, ներկայութեամբ ճեգիրէի առաջնորդական փոխանորդ Հոգ. Տ. Լեւոն Վրդ. Եղիայեանի, Հասիչէի կրթական տնօրէնուհիին, հոգեւոր հայրերու, ազգայիններու եւ աշակերտներու ծնողներուն: Շրջանաւարտ հունձքը անուանուեցաւ լուսահոգի «Աշոտ Աւագ քահանայ Փափագեան»-ի անունով:

Նշենք, որ թեմիս բարեչան առաջնորդ սրբազան հայրը հովանաւորեց եւ ներկայ գտնուեցաւ Ազգային բոլոր վարժարաններու եւ նստավայրի հայ վարժարաններու աւարտական կարգերու հանդէսներուն եւ վկայականաց բաշխման, ընկերակցութեամբ Ազգային Վարչութեան անդամներուն:

19- ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ 19-1- ՆՊԱՍՏԻՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Նպաստից Յանձնախումբը բծախնդիր եւ հետեւողական աշխատանքով շարունակեց իր առաքելութիւնը, Հայ Առաքելական Եկեղեցւոյ ընտանիքներուն՝ դպրոցականներուն ու համալսարանականներուն, նորածիններուն ու տարեցներուն ծրագիրներու օժանդակութեամբ, զանազան կերպերով եւ զանազան մարզերու մէջ, ինչպէս կրթական, առողջապահական, սննդամթերքի, նիւթական աջակցութեան եւ բնակարանային կարգաւորումով, համագործակցութեամբ քաղաքիս մէջ գործող բարեսիրական շրջանակներու:

19-2- ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

Թեմիս Ընկերային Ծառայութեան Խորհուրդը շարունակեց իրեն վստահուած առաքելութիւնը: Յաճախակի յարաբերութեան մէջ մնաց նստավայրի զանազան բարեսիրական կողմերու հետ եւ առաւելագոյն օժանդակութիւններ ապահովեց ժողովուրդի զաւակներու զանազան կարիքներուն՝ կրթական, առողջապահական եւ այլն, ինչպէս նաեւ բծախնդրօրէն ստանձնեց թեմիս կտակարար ազգայիններու հոգատարութիւնը:

Այս շրջանին ձեռնարկեց «Յոյս» ծրագրի նախաձեռնութեան, երկրէն դուրս կայք հաստատած հալէպահայ բարերարի նիւթական օժանդակութեան շնորհիւ փոքրիկներու եւ տարեցներու կենցաղային կարիքները ապահովելով: 17 Մայիս 2023-էն սկսեալ սոյն ծրագիրը շարունակուեցաւ «Հռիփսիմէ» անուամբ, առաւել եւս նիւթական օժանդակութիւն տրամադրելով կարգ մը պարագաներու: Յիշեալ ծրագրի ֆոնտի կանոնադրութեան պատրաստութիւնը ընթացքի մէջ է:

20- ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄ-ՀԻՄՆԱՐԿՆԵՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

20-1- «Գ. ԿԻԼՊԵՆԿԵԱՆ» ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

- Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի գլխաւո-



րութեամբ, «Գ. Կիւլպենկեան» հիմնարկութեան հայկական բաժանմունքին հետ փոխ-յարաբերութիւնները շարունակուեցան, կապ հաստատուեցաւ վարիչ տնօրէն դոկտ. Ռազմիկ Փանոսեանի հետ, յատկապէս սուրիական տագնապի շրջագիծէն ներս: Հայ տորահաս սերունդներու հայեցի դաստիարակութեան սատարելու համար, բաժանմունքը շարունակեց Սուրիոյ Հայկական վարժարաններու տարեշրջաններու կրթանպաստի իր օժանդակութիւնները եւ երկրաշարժէն վնասուած կարգ մը բնակարաններու նորոգութիւնը:

20-2- ԾԻՆԻՇԵԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՁԵՆՆԱՐԿ

Թեմի ժողովուրդին այլազան կարիքներուն բաւարարման ի խնդիր, ՃՅ Ձեռնարկը՝ սրբազան հօր ճամբով համախոհ գործակցութեան մէջ եղաւ:

Ձեռնարկի տնօրէնութիւնը յարգալիր յարաբերութեան մէջ եղաւ թեմի Ազգ. իշխանութեան հետ:

Թեմակալ առաջնորդը Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական համայնքապետներուն հետ՝ յաջս պետութեան շարունակեց հովանաւորել Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկը:

20-3- ԱՐՏԱՄԱՉԴ ՏՆԿԻԿԵԱՆ ՖՈՆՏ

Բարեսիրական-մարդասիրական բնագաւառէն ներս ֆոնտը շարունակեց գործնական ներդրում ունենալ, համաձայն Ֆոնտի յատուկ կանոնագրութեան տրամադրութիւններուն: Նախագահութեամբ՝ թեմակալ առաջնորդին, տարեկան հերթականութեամբ Հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Արտաւազդ Տնկիկեան Ֆոնտի հիմնադիրին եւ իր մօր՝ Բենեւոբ Տնկիկեանի յիշատակին:

21- ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

21-1- ՀԱՅ ԾԵՐԱՆՈՑ

Հայ Ծերանոցը ուղղակի հովանաւորուած Հալէպի Հայ երեք Համայնքապետներով, եւ ղեկավարուած՝ միջհամայնքային խնամակալութեամբ, տնօրէնութեամբ եւ պաշտօնէութեամբ, այս տարեշրջանին շարունակեց իր խնամատարական գործը որակական եւ կազմակերպչական իմաստով հնարաւոր բժախնդրութեամբ:

Ծերանոցի խնամատարական գործը՝ մեր ժողովուրդին բարեսիրութեամբ կ'ընթանար, սակայն այսօրուայ նիւթական տագնապին պատճառով Հայ Ծերանոցի անհրաժեշտ եւ անյապաղ օժանդակութեան

հարցը կը մնայ մեր հիմնական հարցերէն մին:

Այժմ կայք հաստատուած կեդրոնը, ենթարկուած է պարպումի վտանգին ի դէմ մրջտական ներկայացուած բողոքներու, պաշ-



տօնական դատի յարուցմամբ: Այսօր թեմը ահագանգ կը հնչեցնէ հայ մամիկներու ու պապիկներու կարեւորագոյն հոգատարութեան ապաստանի եւ կենցաղային կարիքները ապահովելու ի խնդիր:

21-2- ՄՏԵՈՎ ԹԵՐԱՃ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ «ԱՐԵՒԻԿ» ԿԵԴՐՈՆ

Հակառակ «Արեւիկ» կեդրոնի պատերազմի արդիւնքով քանդումին, մտքով թերաճ հայ մանուկներու գործունէութիւնը շարունակուեցաւ շաբաթական դրութեամբ, Ազգ. Կիւլպենկեան այժմ Միացեալ վարժարանի կառոյցէն ներս, ղեկավարութեամբ միջհամայնքային խնամակալութեան:

22- ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այսօր, որդիաբար պարտք կը զգանք շնորհակալութիւն յայտնելու ՆՍՕՏՏ Արամ



Ա. Վեհափառ Հայրապետին, թեմակալ առաջնորդին, թեմէն ներս անձնուիրաբար ծառայած ազգայիններուն, ինչպէս նաեւ արտերկրի մէջ կայք հաստատած հայ ազգի բարերարներուն եւ նուիրատուներուն, թեմիս հետ գործակցող բարեսիրական կողմերուն, որոնք իրենց ներդրումը բերին ժողովուրդի զանազան կարիքներուն բաւարարման:



ՍՈՒՐԻԱՏԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽԱՉԸ՝ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԽՈՐՏՐԴԱՆԻՇ

ՍՕ Խաչը, որպես ՅՕՄ-ի մեկ շառաւիղ, դար մը ամբողջ շարունակ հայ ժողովուրդի սիրտը ներկայացնող՝ Սուրիոյ հայ իրականութեան մէջ տեւաբար եւ մայրաբար գործող, չի սահմանափակուիր ծառայելու որպէս՝ լոկ մարդասիրական եւ բարեսիրական միութիւն, այլ՝ հաստատ համոզումով կը շարունակէ ազգապահպանման ծանր, սակայն սրբազան առաքելութեան վսեմ գործը: Որպէս իր իտեալը, տակաւին եղած է ու կը մնայ հայ կնոջ նկարագրի, բարոյական կազմաւորման, հայուհիի արժանիքները ի յայտ բերող հոգեմտաւոր զարգացման դարբնոցը, ուր հայ կինը շատ բան ունի սորվելիք, ապա որպէս խաչուհի շատ բան ունի տալիք:

Այս նպատակով ՍՕ Խաչի Շրջանային Վարչութեան պաշտօնական յարաբերութիւնները շարունակուեցան նոյն ընթացքով, ներքին կազմակերպական ՅՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան եւ Պետական Ընկերային Ծառայութեան եւ Աշխատանքի Տնօրէնութեան, տեղական թէ օտար կազմակերպութիւններու եւ հաստատութիւններու հետ եւ օրուան պահանջքէն մղուած թափ առաւ նոր բարեսիրական կազմակերպութիւններու հետ համագործակցութիւնը, որ աւելի ուշագրաւ դարձաւ Սուրիոյ երկրաշարժի աղէտի օրերուն:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

ՍՕ Խաչը իր տասը մասնաճիւղերով եւ 14 Շրջանային յանձնախումբերով, համագործակցութեամբ ու նուիրուածութեամբ պահեց իր կազմակերպական ներքին աշխուժութիւնը: Կազմակերպական գետնի վրայ՝

-28 եւ 29 Յունիս 2023-ին գումարեց իր 41-րդ Շրջանային Պատգամաւորական Ժողովը, որ առաջադրեց նոր ծրագիրներ յառաջիկայ գործունեութեան համար եւ ընտրեց Շրջ.վարչութեան նոր կազմ:

-Աւելի ուշ մասնաճիւղերու վարչութիւնները Օգոստոս ամսուան ընթացքին գումարեցին իր



րեցին իրենց անդամական ընդհանուր ժողովները եւ ընտրեցին նոր կազմեր:

-16-21 Յուլիտեմբեր 2023-ին ՍՕ Խաչը հինգ պատգամաւորներով մասնակցեցաւ Հայաստանի մէջ գումարուած ՅՕՄ-ի 73-րդ Համահայկական Պագմ.Ժողովին, որուն աւարտին ՅՕՄ-ի Կեդր. Վարչութեան մէջ Սուրիոյ շրջանը ունեցաւ իր անդամը՝ յանձին Սիրան Ամպարճեանի, որ դարձաւ Միջին Արեւելքի ներկայացուցիչ:

Մասնաճիւղերը իրենց մնայուն ծրագիրներու շարքին (դասախօսութիւն, ձեռնարկ, դասընթացք, մշակոյթի օր եւ այլն.) յատուկ տեղ տուած են Հայ Ծերանոցի եւ Ազգ. Պատասպարանի սաներուն այցելութեան, ճաշով հիւրասիրութեան, նաեւ առողջապահական եւ խնամատարական ներդրումներ:

րով:

Իսկ ՍՕ Խաչ-Ազգ. Պատասպարան, «Փեթթակ» խոհանոց, Դաստիարակչական, Աշխատանոց, Ձեռարուեստ, Խնամատարական, Առողջապահական, Մանկամտուր, Հրատարակչական, Արխիւային, Շուկայավարման, Հնատիպ ձեռագործներու արժեւորման եւ Պաշարի Շրջանային Յանձնախումբերը շուրջ 44 պաշտօնեաներով շարունակած են գործել նոյն թափով, աշխուժօրէն եւ նուիրումով, բարոյական եւ նիւթական մեծ վարկ ապահովելով միութեան:

ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ - ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ

Ընկերաբժշկական կեդրոնէն ներս տեղակայուած դարմանատունն ու մարծումի կեդրոնը ցարդ կը մնան այն առողջապահա-



կան կեդրոնները, որոնք 22 մասնագիտական բաժիններով իրենց ծառայութիւնը կը մատուցեն շրջանի հայ թէ օտար բնակչութեան, յարմարագոյն սակերով, միաժամանակ տրամադրելով տնային հիւանդներու անհրաժեշտ սարքեր:

Իսկ կուրծքի քաղցկեղի կանխարգիւման ամսուան առթիւ դարմանատունը ձեռնարկած է echo եւ mammographic քննութեան փափաքող տիկիներուն անվճար քըննութեան, Հոկտեմբեր ամսուան ընթացքին, պետական կեդրոններէն ներս:

Ատամնաբուժարանը օժտուեցաւ ատամնաբուժական արդիական նոր աթոռով եւ իր յարակից գործիքներով, տրամադրուած SALT կազմակերպութեան կողմէ, Բերիոյ Հայոց Թեմի Նպաստից Յանձնախումբին ջանքերով:

ՍՕ ԽԱՉ-ԱԶԳ. ՊԱՏՍՊԱՐԱՆ

ՍՕ Խաչ-Ազգ. Պատասպարանի սաներու խնամատարութեան եւ կենցաղային պահանջներու ապահովումն ու հետապնդու-

մը ցարդ կը շարունակուին Շրջանային Յանձնախումբի ընկերուհիներուն անվերապահ աջակցութեամբ: Յանձնախումբը սաներու ուսումնառութեան բնականոն ընթացքի եւ բազմակողմանի կայուն զարգացման ի խնդիր, ամէն հնարաւորութիւն ստեղծած է ինքնաբաւ, յաջողակ դառնալու ընկերութեան մէջ:

Փորձած է առաւելագոյնս գոհացնել սաները, առօրեայի ընթացիկ մթնոլորտէն դուրս՝ շրջապատոյտով, բանակումով եւ այլ հրաւերներով:

Տնտեսական ծանր պայմաններու պարտադրանքով, օժանդակութիւն ապահովելու մտահոգութեամբ շարունակած է բարեսի-



րական տարբեր կազմակերպութեանց հետ յարաբերութիւնները եւ փորձած է ընդլայնել գործակցութեան իր շրջանակը: Միաժամանակ ընդունած է պաշտօնական այցելութիւններ եւ հրաւերներ քրիստոնեայ թէ իսլամ բարեսիրական կազմակերպութիւններու, կիրակնօրեաներու, քոյր միութիւններու, վարժարաններու, համայնքային մարմիններու, ՀՀ Մարդասիրական Խումբի ներկայացուցիչներու եւ անհատներու:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

ՍՕ Խաչը բարեսիրական եւ դաստիարակչական աշխատանքներու կողքին, ընկերային կեանքը բարելաւելու հեռանկարով, յատուկ բժախնդրութեամբ հետամուտ եղած է Սուրիոյ մէջ ՀՅԸ-ի ծրագիրներու եւ մարդասիրական օժանդակութիւններու անխափան շարունակականութեան, իրականացնելով:-

*ՀՅԸ-ի «Պնակ մը Տաք ճաշ» ծրագիրը «Փեթթակ» խոհանոցէն ներս, Խնամատարական Յանձնախումբի մատակարարումով եւ հսկողութեամբ 472 հոգիի:

*ՀՅԸ-ի Բանատայի Միաւորի ներդրու-

մով 2023 Դեկտեմբերին՝ «Տաքուկ Չգեսուներ»-ու ծրագիրը պատրաստութեամբ աշխատանոցին եւ բաշխումը Ազգ. Միացեալ Մանկապարտեզի եւ Նախակրթարանի աշակերտութեանց:

* ԶՕՄ-ի ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՖՈՆՏԵՆ 2022-2023 ուսումնական տարեշրջանի նպաստ՝ Զալեայի Պետական համալսարանի երկու ուսանողներու:

* ԶՕՄ-ի Ամերիկայի արեւելեան շրջանի միաւորի ներդրումով 2023-ին «Տաքուկ Բնակարան» ծրագիրը:

Ասոնց կողքին, իրականացուցած է. -

* ԶՕՄ-ի օրուան առթիւ հոգեհանգըստեան արարողութիւն՝ ԶՕՄ-ի, ՍՕԽ-ի եւ Ազգ. Պատսպարանի բարերար ննջեցեալներուն հոգիներուն համար, նստավայրին թէ շըրջաններուն մէջ: Նաեւ հոգեհանգստեան արարողութիւն եւ պատշաճ յայտագիր յանուն ՍՕ Խաչի, կեանք մը ամբողջ նուիրաբերած վաստակաշատ ընկի.Արփի Սապունճեանի մահուան տխուր առիթով:

* Արաբական Ռամատանի տօնին առիթով այցելած է եւ հիւրասիրած՝ բարեսիրական կեդրոնի մը Թերաճ Որբերու Բարեսիրական Միութեան սաներուն:

* Իր արտադրութիւններով մասնակցած է Christmas Village փառատօնին, Զին Զալեայի «Ալ-Զաթապ» հրապարակէն ներս:

* Մասնակցած է Զալեայի Առեւտրական Գրասենեակին կազմակերպած ցուցահանդէս-վաճառքին «Յասմիկի եւ Կաղնիի» փառատօն անունով, Ձեռարուեստի, Աշխատանոցի եւ «Փեթակ» Խոհանոցի արտադրութիւններով՝ որպէս քարոզչութիւն միութեանս արտադրութիւններուն:

* Մասնակցած է Միջին Արեւելքի Եկեղեցիներու Միութեան Սէյտնայայի մէջ կազմակերպուած եռօրեայ դասախօսական ծրագրին:

* Դամասկոսի մէջ Diplomatic Womens Club-ի նախաձեռնած ցուցահանդէս-վաճառքին, հայկական ասեղնագործութեամբ եւ քաղցրաւենիներու տեսականիով, որոնք մեծ ընդունելութիւն գտած են եւ բարձրօրէն գնահատուած հայկական ասեղնագործութիւնն ու միութեանս արտադրութիւնները:

* Ընդառաջելով Զայ Օգնութեան Միութեան կոչին, Զալեայի մէջ կազմակերպած է ցուցահանդէս-վաճառք Ձեռարուեստի, Աշխատանոցի, «Փեթակ» Խոհանոցի, Մանկամտորի, Շիրակ վաճառատան ինչպէս նաեւ նստավայրի՝ «Նայիրի», «Սեւան»

«Անի» շրջաններու՝ «Մեղրի» եւ «Գետաշէն» մասնաճիւղերու վարչութիւններու մասնակցութեամբ, առ ի գօրակցութիւն Արցախի Զանրապետութեան տարեդարձին առիթով եւ Ատրայէյճանի կողմէ կիրարկուող անմարդկային ոճիրները կանխելու նպատակով:

* Նոր Տարուան տօնավաճառ՝ Ձեռարուեստի, Աշխատանոցի, «Փեթակ» Խոհանոցի, Մանկամտորի, Շիրակ վաճառատան ինչպէս նաեւ նստավայրի՝ «Նայիրի», «Սեւան», «Անի» շրջաններու՝ «Մեղրի» եւ «Գետաշէն» մասնաճիւղերու վարչութիւններու մասնակցութեամբ:

Զայ կնոջ միտքի զարգացման եւ ընկերային կեանքի յարափոփոխ ընթացքին հետքայլ պահելու անհրաժեշտութենէն մղուած կազմակերպած է Դասախօսութիւններ՝

* «Ոսկրային Փխրութիւն».

* «Մեծ Պահք»-ի դասախօսաշարք՝ «Պահեցողութիւնը Զրաւեր Ապաշխարութեան» եւ «Սուրբ Գրային Դէմքեր» դասախօս՝ Գերշ. Տ. Մակար Ս. Եպս. Ազգարեան.

* Մանկամտորի փոքրիկներու ամավերջի հանդէս յատուկ յայտագրով եւ ծնողներու ներկայութեամբ:

* Զայ կնոջ դիմագրաւած մարտահրաւերներու նիւթով գրոյց՝ Գերշ.Տ.Մակար Ս.Եպս.Ազգարեանի հետ:

* Առողջ ապրելակերպի գործնական գիտելիքներ:

* Սուրիոյ երկրաշարժին ՍՕ Խաչի ծաւալած մարդասիրական եւ բարեսիրական գործունեութեան շուրջ ընդհանուր հաւաք:

* Զարց-պատասխանի մրցում մասնաճիւղերու եւ Շրջանային յանձնախումբերու:

* «Ձերբազատիլ Ներկայ Տագնապալի Վիճակներէն»:

Իսկ Շրջանային Յանձնախումբերը կազմակերպած են Դասընթացքներ. -

* Ձեռարուեստ՝ գաւառներու ասեղնագործութիւն:

* Առողջապահական՝ շտապ օգնութեան դասընթացք Զալեայի երկրաշարժին յաջորդող շաբաթներուն ՍՕ Խաչին եւ խտացեալ դասընթացք Ազգ. վարժարանի ուսուցիչներուն, ՍԵՄ-ականներուն, Զալեպահայ եւ Ֆրանսաբնակ փրկարար Փիեռ Պազարճիի ղեկավարութեամբ: Աւարտին առաջին բաժնի մասնակիցները ստացած են համապատասխան վկայագիրներ:



* Դաստիարակչական՝ արաբախօս մայրերու հայերէն լեզուի դասընթացը շաբաթական 2 օրուան դրութեամբ:

* Դաստիարակչական՝ Գրաշարութեան եւ համակարգչային ծրարներու պատրաստութիւն -6- դասապահով, յատուկ՝ ՍՕԽ-ի մասնաճիւղերու եւ յանձնախումբերու անդամներուն:

* Շրջանային Վարչութեան՝ Մոզայիքի դասընթացը:

* Հրատարակչական՝ լրագրական դասընթացը:

Շրջանային Վարչութիւնը իրականացուց նաեւ այլ ծրագիրներ.-

* ՍՕ Խաչի իրերայաջորդ Շրջ. Վարչութիւններու երկարատեւ, բժախնդիր եւ հետեւողական աշխատանքի իբր արդիւնք, 2023-ի կիսուն իրականացաւ Շրջ. Վարչութեան երկար տարիներու փափաքը եւ Դարմանատունը ունեցաւ պետական օրինական արտօնագիր Դամասկոսի առողջապահական նախարարութեան կողմէ վաւերացուած:

* Յունիս 2023-ին կեդրոնը օժտուեցաւ արեգակնային համակարգով ՀՕՄ-ի Կեդր. Վարչութեան օժանդակութեամբ խնայելու համար վառելանիւթի մեծագումար ծախսերը:

* «Գերազանց ուսանողներու ծրագիր»-ի շարունակումով, Նիւթական պարգեւներով գնահատեց 2023-ին Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանի Միջնակարգի եւ Երկրորդականի պետական քննութեանց առաջին երեք դիրքերը գրուած հայ աշակերտները:

* 2023-ին, Ազգ.Զարէն Եփփէ Ճեմարանի եւ Միացեալ Նախակրթարանի ու մանկապարտեզի աշակերտութեան նուիրեց հայերէն լեզուի եւ կրօնի դասագիրքեր:

* Հեռակայ նպատակ ունենալով ընդարձակել Դարմանատան տարածքը, ՀՕՄ-ի Կեդր. Վարչութեան օժանդակութեամբ, գնեց Դարմանատան պատկից բնակարանը, պետական համապատասխան թղթածրարի պատրաստութեամբ:

* Խնամատարական եւ առողջապահական ծիրէն ներս Շրջ. Վարչութիւնը բարոյապէս եւ Նիւթապէս օժանդակեց առողջապահական գնահատան խնդիրներ դիմագրուած հայորդիներու, Պետական բարեսիրական միութիւններու կոչին ընդառաջելով, Պետական հիւանդանոցի դեղորայքի, մարզական, Երիտասարդական, պատանեկան

եւ ԱԶԵ Ճեմարանի Շրջանաւարտից միութիւններու տարեկան բանակումներուն, Համագգայինի հայագիտական հիմնարկին, Հայ Ծերանոցին եւ այլ կարիքներու:

* Նիւթական եւ բարոյական աջակցութեամբ, մասնակցութիւն բերաւ գաղութէն ներս կայացած մարզական, բարեսիրական, մշակութային, երիտասարդական եւ ուսանողական միութիւններու, ազգային հաստատութիւններու, Հայոց Յեղասպանութեան, Մայիսեան անկախութեան, Շուշիի Նահատակ շրջանէս 3 ընկերներու հոգեհանգստեան արարողութեան, ՀՀԴ 133 ամեակի տօնակատարութեան, Հայ Դատի Արցախի եւ Պաղեստինի զօրահաւաքին եւ ընդհանրապէս բոլոր միջոցառումներուն:

ՔԱՐՈՉՉԱԿԱՆ - ՀՐԱՏԱՐԱՎԿՉԱԿԱՆ

ՍՕ Խաչի դիմատետրի էջը՝ «Souriahay Oknoutian Khach - Շրջանային Վարչութիւն» անունով, շարունակեց գործել եւ նպաստել միութեանս գործունեութեան տարածման:

Բոլոր մասնաճիւղերն ու Շրջանային յանձնախումբերը ունին առանձին դիմատետրի էջեր, ուր կը տեղադրուին իրենց յայտարարութիւններն ու գործունեութիւնները: Իսկ ձեռնարկներու թղթակցութիւնները լոյս կը տեսնեն «Գանձասար» շաբաթաթերթին մէջ:

«Նարօտ» վաճառանիշի դիմատետրի էջով սկիզբ առած ՍՕ Խաչի արտադրութիւններուն ծանօթացման աշխատանքը, մեծ



արձագանգ գտաւ եւ ապահովեց գնորդներ արտերկրի, Հայաստանի թէ արաբական տարբեր երկիրներու տարածքին:

Քարոզչական իմաստով.-

* Զանաւորայի «Հայ Հորիզոն» հեռուստակայանի տեղւոյն հաղորդավարուիին Սեպտեմբեր ամսուան ընթացքին այցելած է առողջապահական կեդրոն եւ արձանագ-

րած բժշկական կեդրոնն են ներս մատուցում բազմաբնույթ ծառայութիւնները:

* Որպէս եկամտաբեր մնայուն աղբիւր, ՍՕԽաչի արտադրանքները կը վաճառուին «Նախշատուն»-էն եւ «Նարօտ» վաճառատուներէն ներս, Ձեռարուեստի եւ Աշխատանոցի յանձնախումբերու ընկերուհիներու աշխոյժ մասնակցութեամբ:

Իսկ Զեսապի Կազդուրման կայանի պարտեզէն, որ յատուկ խնամքի յանձնուած է, կ'ապահովուի բաւականաչափ ձիթապտուղի ձէթ, որ կը տրամադրուի Ազգ. Պատսպարանին եւ «Փեթակ» խոհանոցին:

Արտահերթ իրավիճակ - Երկրաշարժ.

6 Փետրուարին, 7,6 բալ ուժգնութեամբ Յալէպը ցնցած երկրաշարժը իր ետին ձգեց հարիւրաւոր փլատակ բնակարաններ, հազարաւոր անօթեւան ժողովուրդ, մեծ թիւով վիրաւորներ ու զոհեր: Այս իսկ պատճառով ՍՕ Խաչի աշխատանքները կեդրոնացան երկրաշարժի շտապ աշխատանքներու ծիրէն ներս ընդհանրապէս:

ՀՕՄ-ը իր աշխարհասփիւռ մասնաճիւղերով, նոյնիսկ աղետի առաջին վայրկեաններէն փութաց իր նիւթական օժանդակու-



թիւնը հասցնելու Սուրիահայ Օգնութեան Խաչին: Այս ծիրէն ներս Բերիոյ Հայոց Թեմի Երկրաշարժի Արտակարգ Մարմինի մէջ միութիւնս ունեցաւ իր ներկայացուցիչը: Իսկ Շրջ.Վարչութիւնը յառաջացուց երկրաշարժի Շտապ Յանձնախումբ մը եւ իրականացուց բարեսիրական եւ մարդասիրական հետեւեալ ծրագիրները.

- Երկրաշարժի յաջորդող ժամերէն սկսեալ Դարմանատունը բաց պահեց շտապ առողջապահական պարագաներ ընդունելով եւ հիւանդներուն քննութիւնը անվճար կատարելով, ինչպէս նաեւ անհրաժեշտ դե-

ղորայք տրամադրելով անոնց: Իսկ Դարմանատան մնայուն բժիշկն ու բուժքոյրերը այցելութիւն տուին կեդրոնները՝ անհրաժեշտ բժշկական ծառայութիւն մատուցելով:

- Պատրաստուեցան Զրոնիկ հիւանդութիւններ ունեցողներու ցանկերը եւ դարմանատան դեղորայքը տրամադրուեցաւ բոլորին անխտիր:

- «Փեթակ» խոհանոցէն ներս պատրաստուեցան ճաշեր, ակրատներ եւ սննդեղէններ, որոնք բաժնուեցան Երկրաշարժի փրկարար խմբակներուն:

- Միութիւնս անսալով Պետական Ընկերային Ծառայութեան երկրաշարժէն տուածներու օժանդակութեան կոչին՝ իր զօրակցութիւնը յայտնեց եւ անօթեւան արաբ ժողովուրդին տրամադրեց փոքրիկներու կաթ, թէյ եւ շաքար:

- Հայկական կեդրոններէն ներս տեղակայուած հայորդիներուն տրամադրուեցան մօտաւոր 2000 հոգիի կարկանդակի տեսականի, փոքրիկներուն՝ կաթ:

- Նոյն օրերուն Միութիւնս Ազգ. Պատրաստարանի կեդրոնը տրամադրեց SOS-ի օժանդակութեան խմբակին, որոնք պատրաստեցին թիւով 3000 ակրատ, զանոնք բաժնելու հայկական կեդրոններու ապաստանեալներուն:

- Վարչութիւնս գործակցեցաւ Ֆրանսայի Ծերմակ Խաչի անդամ, Նախկին հալէպահայ եւ մասնագիտութեամբ փրկարար ընկ. Փիեռ Պազըրճիին հետ, որ Յալէպ գործուղուած էր օժանդակելու տեղւոյն ժողովուրդին յաղթահարելու յետ երկրաշարժի հոգեբանական բարդութիւնները:

- Շրջ. Վարչութիւնը եւ Երկրաշարժի Շտապ Յանձնախումբի ընկերուհիները մարդասիրական առաքելութեամբ այցելեցին երկրաշարժի հետեւանքով տնազուրկ դարձած եւ վրաններու տակ ապաստանած արաբ ժողովուրդին ու անոնց տրամադրուեցաւ ակրատ եւ կնոջական ծրարներ:

- Նիւթական օժանդակութիւն տրուեցաւ կարիքաւոր աւելի քան 500 ընտանիքի:

- Ըստ կարիքի բաժնուեցան փոքրիկներու կաթ եւ շոր, թէ՛ նորածիններու եւ թէ տարեցներու:

- ՍՕ Խաչի անդամուհիներուն տրամադրուեցաւ նիւթական օժանդակութիւն եւ սննդակողովներ:

- Հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Ս. Եպս. Աշ-



գարեանի, Շրջ. Վարչութիւնը այցելեց Պետական Համալսարանի հիւանդանոցի մանկական բաժանմունքի քաղցկեղով տառապող փոքրիկներուն, անոնց նուիրելով գրեական պիտոյք եւ Աշխատանոցէն ներս պատրաստուած տաքուկ ծածկոյթներ:

- Այցելեց նաեւ Սուրիական Կարմիր Մահիկի Մանկական Հիւանդանոցը այնտեղ գըտնուող հիւանդ մանուկներուն եւս տրամադրելով խաղալիքներ եւ բուրդէ ծածկոյթներ:

- ՍՕ Խաչի Պետական Վարչութեան ջանքերով, միութիւնս Կարմիր Մահիկի Տնօրէնութենէն ստացաւ մեծ քանակով դեղորայք, փոքրիկներու՝ կաթ եւ սննդեղէն, որոնք առաքուած էին Հայաստանի Հանրապետութեան կողմէ, որոնցմէ մաս մը սնընդեղէններ տրամադրուեցան Ազգ. Միացեալ վարժարանի եւ Մանկապարտեզի փոքրիկներուն:

- ՍՕ Խաչի Կեդրոնի «Գ. Համալեան» սրահէն ներս տեղի ունեցաւ հանդերձաբաշխման աշխատանք: Ծրագիրէն օգտուեցաւ անօթեան դարձած ժողովուրդը՝ հայեր թէ արաբներ անխտիր:

- Զուէթի Ազգ. Վարժարանի տնօրէնութեան եւ աշակերտութեան կողմէ առաքուած գումարը բաժնուեցաւ հայ համալսարանականներուն:

- ՀՕՄ-ի Կիպրոսի մեկուսի «Սօսէ» մասնաճիւղի եւ Զուէթի Մեկուսիէն շրջանիս կատարուած օժանդակութեամբ 100 հատ մարտկոցով հովահար տրամադրեց երեցներու եւ անկողնի դատապարտուած հիւանդներու ընտանիքներուն:

- Ֆրեզնոյի հայ համայնքին կողմէ կատարուած դեղորայքի եւ բժշկական նիւթերու օժանդակութիւնը ըստ կարիքի տրամադրուեցաւ ժողովուրդին, ինչպէս նաեւ Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանի պաքալորիայի աշակերտութեան:

- Անհատ բարերարներու կողմէ տրամադրուած մեծ գումարները, իրենց փափաքին համաձայն յատկացուեցան այրիներու, հիւանդներու, բժշկական մեծածախս վիրահատութեան պարագաներու, որոնց թիւը անհամար է:

- ՍՕ Խաչի Շրջ. Վարչութիւնը նաեւ մօտէն հետաքրքրուեցաւ երկրաշարժէն տուժած շրջաններու, յատկապէս Լաթաքիոյ «Շուշի» եւ Բեսապի «Գետաշէն» եւ «Մեդրի» մասնաճիւղերու իրավիճակով եւ նիւթաբարոյական օժանդակութիւն տրամադրեց իւրաքանչիւրին, որոնք տրամադրուեցան անդամուհիներու եւ կամ երկրաշարժէն տուժած կեդրոններու նորոգութեան:

- Զանազան - Թորոնթոյի մէջ կազմակերպուած հալէպահայութեան ի նպաստ դրամահաւաքին.

- Երկրաշարժին փութացին իրենց նիւթական ներդրումը բերել աշխարհասփիւռ գաղութները անհատներ թէ կազմակերպութիւններ, որոնց կատարած օժանդակութիւնները իրենց փափաքին համաձայն բաժնուեցան ժողովուրդին:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑՆԵՐ

* «Գանձասար» պաշտօնաթերթի խմբագրութիւնը նկարահանած է «Պնակ Մը Տաք ճաշ» եւ «Տաքուկ բնակարան» ծրագիրները: Թղթակիցները հարցազրոյց ունեցած են Խնամատարական յանձնախումբէն կարգ մը ընկերուհիներու հետ բարեսիրական այս զոյգ ձեռնարկներուն մասին:

Այս բոլորին զուգընթաց, գանազան՝ հայ թէ օտար լրատումիչոցներ եթերազրոյցներ վարեցին Շրջ. վարչութեանս ատենապետին հետ, մօտէն տեղեկանալու ՍՕ Խաչի ծաւալած բարեսիրական ու մարդասիրական ծառայութիւններուն մասին: Այդ կայաններէն յիշենք Փարիզի Ռատիօ AYP FM-ը, Վալանսի Ռատիօ A-ը, Արժանթինի «Կոմիտաս»-ը, Աւստրալիոյ Armenia Media-ն, Կիպրոսի մեկուսի «Սօսէ» մասնաճիւղը եւ Մալթա կազմակերպութիւնը: Յիշենք նաեւ, թէ Զանազանի «Հայ Հորիզոն» լրատումիչոցի տնօրէնութեան միջնորդութեամբ իրականացաւ երկրաշարժի շրջանին ՍՕ Խաչի ծաւալած գործունեութեան մասին տեսերիզի պատրաստութիւնը, որ ցուցադրուեցաւ 29 Ապրիլ 2023-ին, Զանազանի մէջ կազմակերպուած հալէպահայութեան ի նպաստ դրամահաւաքին. սոյն աշխատանքը իրագործեց Հալէպի մէջ «Հայ Հորիզոն»-ի թղթակցութիւնը:

Աւարտին, Շրջ. Վարչութիւնը կ'ողջունէ գաղութէն ներս իր անդամուհիներու բերած կարեւոր ներդրումը, յատկապէս՝ ազգային արժեքներու պահպանման, գաղութը կենսունակ ու առողջ պահելու եւ մեր աւանդութիւններու իւրայատուկ յատկանիշները արժեւորելու առումով:

Շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր նուիրատուներուն, որոնք փութացին իրենց աշակցութիւնը բերելու յատկապէս երկրաշարժի աղէտի օրերուն: Բոլորին վարձքը կատար:





ՆՄԸՄ-Ի ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ (2023)

ՅՄԸՄ-ի Սուրիոյ շրջանի հինգ մասնաճիւղերը կազմակերպելով իրենց սկաուտական անանդական կադանդի հաւաքները Նոր Տարին դիմաւորեցին ու վերստին սկսան իրենց գործունեութիւններն ու ծրագիրները, սակայն անսպասելիօրէն վրայ հասաւ 6 Փետրուարի երկրաշարժի աղէտը, կասեցնելու համար ոչ միայն միութեանական գործունեութիւնները, այլեւ ամբողջ գաղութին կենսունակութիւնը՝ վախի ու սարսափի մատնելով հանրութիւնը: Սակայն ՅՄԸՄ-ականը քաջ ու խիզախ անմիջապէս գործի պիտի լծուեր դժնդակ օրերը յաղթահարելու, հետեւաբար ՅՄԸՄ-ի Յալէպի մասնաճիւղի 7-րդ եւ 8-րդ վաշտերու սկաուտները համագործակցելով Յալէպի սկաուտական արաբական վաշտերուն հետ միասին կը կազմակերպեն ճաշի պատրաստութեան եւ մատակարարութեան աշխատանքներ՝ օժանդակելու համար երկրաշարժի հետեւանքով տուժած ժողովուրդին:

Շրջանի հինգ մասնաճիւղերը Մարտ եւ Ապրիլ ամիսներուն մէջ ունեցան իրենց անդամական ժողովները, իսկ Երեքշաբթի, 18 Ապրիլ 2023-ին, ՅՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութիւնը Ա. Մանուկեան Ժ. Տան Միութեան գրասենեակէն ներս հիւրընկալեց ՅՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ ընկ. Յակոբ Տեր Խաչատուրեանը: Մտերմիկ հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուեցաւ ՅՄԸՄ-ի Սուրիոյ շրջանի գործունեութեան եւ մարտահրաւերներուն մասին:

ՅՄԸՄ-ի Սուրիոյ շրջանի հինգ մասնաճիւղերը ոգեկոչեցին Յայոց Ցեղասպանութեան 108-ամեակը եւ յարգանքի տուրք մատուցեցին Մեծ Եղեռնի զոհերու յիշատակին: Արդ, Երկուշաբթի, 24 Ապրիլ 2023-ին,

Գամիշլի մասնաճիւղի սկաուտներն ու փողերախումբը, ժողովուրդի ընկերակցութեամբ, ուղղուեցան դէպի Ս. Յակոբ եկեղեցի, ուր կատարեցին ծաղկեմատոյց:

24 Ապրիլ 2023-ին, Դամասկոսի մասնաճիւղի սկաուտներն ու փողերախումբը այցելեցին Դամասկոսի գերեզմանատուն, ուր Ապրիլեան Նահատակներու յուշարձանին առջեւ ծաղկեպսակ գետեղեցին եւ վերանորոգեցին պահանջատիրութեան իրենց ուխտը:

Յալէպի մասնաճիւղի սկաուտները շեփորախումբի ընկերակցութեամբ, Կիրակի, 23 Ապրիլ 2023-ին, մասնակցեցան Յայոց Ցեղասպանութեան 108-ամեակին առթիւ ՍԵՄ-ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպած ժողովրդային ջահերթին, որ սկիզբ առաւ Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանէն դէպի Ազգ. Գերեզմանատուն, ապա 24 Ապրիլի առաւօտեան ժամը 9:30-ին, սկաուտները ներկայ գտնուեցան Ազգ. գերեզմանատուն, ուր յետ Ս. եւ Անմահ Պատարագին, Յայոց Ցեղասպանութեան սրբադասուած Նահատակներու յուշակոթողին դիմաց տեղի ունեցաւ ծաղկեմատոյց՝ ի յիշատակ մեր անմեղ զոհերուն: Սկաուտները Նաեւ ներկայ գտնուեցան Ս. Աստուածածին եկեղեցի, ուր տեղի ունեցաւ արեան տուչութիւն:

Երկուշաբթի, 24 Ապրիլ 2023-ին, Լաթաքիոյ մասնաճիւղի սկաուտներն ու փողերախումբը Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ ոգեկոչեցին Ապրիլեան զոհերու յիշատակը եւ ծաղկեմատոյց կատարեցին, իսկ Զեսապի մասնաճիւղի գայլիկները, սկաուտներն ու փողերախումբը, Երկուշաբթի, 24 Ապրիլ 2023-ին, Զեսապի մէջ տողանցեցին եւ Մեծ Եղեռնի յուշակոթողին դիմաց ծաղկեմա-



տոյց կատարեցին:

Կազմակերպութեամբ Քեսապի մասնաճիւղի Սկաուտ Խորհուրդին, Շաբաթ, 6 Մայիսի 2023-ին, «Սարդարապատ» սրահէն ներս տեղի ունեցաւ «Մոկլիի օրուան» հանդիսութիւն:

Կիրակի, 11 Յունիս 2023-ին, առաւօտեան գումարուեցաւ ԶՄԸՄ-ի Սուրիոյ շրջանի 23-րդ ներկայացուցչական ժողովը, Ա.



Մանուկեան Ժ. Տան «Լեւոն Շանթ» սրահէն ներս:

Ժողովին իրենց մասնակցութիւնը բերին 22 լիազօր ներկայացուցիչ եւ 13 խորհրդակցական ձայնով մասնակից: Ներկայ էին ԶՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան եւ Պատկան Մարմինի ներկայացուցիչները, ընթացաւարտ Շրջ. Վարչութիւնը, Շրջ. Սկաուտ Խորհուրդի ու խմբապետութեան, Զալէպի, Գամիշլիի, Լաթաքիոյ, Դամասկոսի եւ Քեսապի մասնաճիւղերու, Շրջ. Վարչութեան յանձնախումբերու, Զամազգայիի Սուրիոյ Շրջ. Վարչութեան եւ Սուրիահայ Օգնութեան Խաչի Շրջ. Վարչութեան ներկայացուցիչները:

Ժողովին բացումը կատարուեցաւ «Յառաջ Նահատակ» քայլերգով: Ներկաները մէկ վայրկեան յոտնկայս յարգեցին յիշատակը Սուրիոյ եւ Արցախի ԶՄԸՄ-ական նահա-

տակներուն, ինչպէս նաեւ ԶՄԸՄ-ական հին եւ նոր ննջեցեալներուն: Ժողովին ընթերցուեցան մասնաճիւղերու վարչութիւններուն ամփոփ տեղեկագիրները, ապա՝ Շրջ. Վարչութեան երկամեայ նիւթաբարոյական տեղեկագիրը: Ընթերցուեցաւ նաեւ Կեդրոնական Վարչութեան ամփոփ տեղեկագիրը – առաջարկներ ներկայացուեցան յառաջիկայ Շրջ. Վարչութեան եւ պատգամաւորական 13-րդ ժողովին:

Ժողովին այցելեց Բերիոյ Զայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Ս. Եպս. Ազգարեան: Ան ժողովին՝ հեգասահ ընթացք, ժողովականներուն ուժ, կորով եւ ծով համբերութիւն մաղթեց, որպէսզի ձեռք ձեռքի տալով կարողանանք մեր ազգին եւ ժողովուրդին ազգային, եկեղեցական, մարզական եւ մշակութային գործունեութեան նաւը դիւարել եւ հասնիլ բարօք լուծումներու: Աւարտին, ժողովը ընտրեց յառաջիկայ երկամեայ նստաշրջանի նոր Շրջանային վարչութիւնը հետեւեալ պատկերով.- Յարութ Օգճեան, Անի Մինասեան, Նայիրի Ազարիկեան, Յովիկ Սիւլահեան, Կարո Մահտերճեան, Կարո Ապաճեան, Արիկ Խաչոյեան, Յարութ Գաբրիէլեան (Լաթաքիա), Յակոբ Զանէշեան (Քեսապ), Միհրան Տիգրանեան (Գամիշլի) եւ Պօղոս Խաճարեան (Դամասկոս):

Այնուհետեւ, ընտրութիւն կատարուեցաւ Սուրիոյ շրջանի պատգամաւորներու եւ փոխպատգամաւորներու, որոնք իրենց մասնակցութիւնը բերին պատգամաւորական 13-րդ ժողովին, Զայաստան:

ԶՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութեան նըստավայրի անդամները, Ուրբաթ 28 Յունիս 2023-ին, լիակազմ այցելեցին Բերիոյ Զայոց Թեմի Բարեջան Առաջնորդ՝ Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի: Զետագային վարչութեան կազմէն՝ եղբ. Միհրան Տիգրանեան իր մահկանացուն կնքեց 30 Օգոստոս 2023-ին:

Շրջանս Զամա-ԶՄԸՄ-ական 12-րդ բանակումին իր մասնակցութիւնը բերաւ (16 քոյր-եղբայրներով (6 Զալէպ, 4 Լաթաքիա, 5 Քեսապ), որոնք 17 Յունիսին մեկնեցան Զալէպի օդակայանէն դէպի Զայաստան: Պատուիրակութեան պատասխանատուն էր Շրջ. Խմբապետ եղբ. Ռաֆֆի Սիւլահեան:

Բանակումը իրականացաւ 21-էն 28 Յունիս 2023-ին, Բիւրականի «Գառնիկ Մկրտիչեան» բանակավայրէն ներս:

Պատուիրակութիւնը իր աշխոյժ մասնակցութիւնը բերաւ բանակումի բոլոր յայ-

տագիրներուն, ունեցաւ նաեւ ընկերային պտոյտներ եւ Սուրիոյ Շրջանային վարչութեան ատենապետ եղբ. Յարութ Օգճեանի գլխաւորութեամբ այցելութիւն մը տուաւ սուրիական դեսպանատան, ուր շերմօրէն հիւրընկալուեցաւ Սուրիոյ արտակարգ ու լիազօր դեսպան դոկտ. Նորա Արիսեանի կողմէ:

ՀԱԸՄ-ի Սուրիոյ շրջանի պատուիրակութեան անդամները Համա-ՀԱԸՄ-ական 12-րդ բանակումի նախօրեակին այցելեցին Եռաբլուր, ուր հայրենիքի ազատութեան համար նահատակուած հերոսներուն շիրիմներուն առջեւ իրենց ուխտը վերանորոգեցին՝ շարունակելու հայ ժողովուրդին գոյապայքարի սուրբ երթը:

Պատուիրակութիւնը շրջապտոյտ մը կատարեց եւ այցելեց Սեւանայ լիճ ու Սեւանավանք, ապա՝ Դիլիջանի Պարզ լիճ, ետքը մեկնեցաւ դէպի Հաղարծին վանական համալիր, ուր մօտէն ծանօթացաւ հայկական խաչքարերուն եւ պատմական արժէքներ կայացնող մեր հարստութիւններուն: Ծաղկածորի մէջ անդամները ճոպանուղիով շրջագայեցան կախարդական բնութեան մէջ:

Տարուան մը ուշացումով, Ուրբաթ, 21 Յուլիսի երեկոյեան «Գառնիկ Մկրտիչեան» բանակավայրէն ներս ընթացք առաւ բանակումը ՀԱԸՄ-ի շրջանային եւ մեկուսի 30 շրջաններէ (750) բանակող քոյրերու եւ եղբայրներու Արցախի սկաուտներուն բացա-



կայութեամբ՝ շրջափակման պատճառով: Կազմակերպուեցաւ համա-ՀԱԸՄ-ական 12-րդ բանակումի պաշտօնական շքերթը, առաջնորդութեամբ ՀԱԸՄ-ՀԱՍԿ-ի սկաուտական շեփորախումբին եւ մասնակցութեամբ բանակումի մասնակից պատուիրակութիւններուն:

Օփերայի «Ազատութեան» հրապարակէն ընթացք առած եւ «Աբովեան» փողոցով,

«Հանրապետութեան» հրապարակով մինչեւ «Շահումեան»-ի հրապարակ երկարած շքերթը տեսց շուրջ մէկ ժամ: Տողանցեցին բանակումին խմբապետական ընդհանուր



եւ գործադիր կազմերը, ապա բոլոր պատուիրակութիւնները՝ շրջաններու անուններու այբբենական շարքով: Խորխտ ու խիզախ բանակողներու առջեւէն տողանցեցին Հայաստանի, Արցախի, ՀԱԸՄ-ի, ՀԱԸՄ-ի սկաուտութեան եւ համա-ՀԱԸՄ-ական 12-րդ բանակումի դրօշները պարզած սկաուտներ: Երեւանի շքերթէն ետք, երեկոյեան ժամը 8-ին, համա-ՀԱԸՄ-ական 12-րդ բանակումի մասնակիցները ուղղուեցան Հայոց Յեղասպանութեան նահատակներու Ծիծեռնակաբերդի յուշահամալիր, ուր լուռ եւ կարգապահ շարքերով տողանցեցին մուտքէն մինչեւ անմար կրակին շուրջ առաջնորդող երթուղին:

Համա-ՀԱԸՄ-ական 12-րդ Բանակումի ընթացքին կազմակերպուող «Got Talent» մրցումին, Սուրիոյ շրջանի պատուիրակութենէն եղբ. Յովսէփ Իշխան Մարաշլեան իր մասնակցութիւնը բերաւ «Kong Fu (Wushu)» մարզածեով եւ քոյր Աննա Պետրոսեան՝ ասմունքով, իսկ «Top Chef» մրցումին Սուրիոյ պատուիրակութենէն իր մասնակցութիւնը բերաւ քոյր Լուսին Զիւրքճեան:

Համա-ՀԱԸՄ-ական 12-րդ բանակումի վեցերորդ օրը Սուրիոյ շրջանի պատուիրակութենէն ուրթ քոյր-եղբայրներ բարձրացան Արագած լեռ: Բանակավայրէն ներս տեղի ունեցան նաեւ դաշտային խաղեր, որոնց մեր քոյրերն ու եղբայրները աշխոյժ մասնակցութիւն բերին:

Համա-ՀԱԸՄ-ական 12-րդ բանակումի Սուրիոյ պատուիրակութիւնը Կիւմրիի մէջ տեսակցեցաւ յունահռոմեական ոճի ըմբշամարտիկ, Ողոմպիական խաղերու ոսկիէ, արծաթէ եւ պրոնզէ մետալակիր Արթուր

Ալեքսանեանի հետ եւ մտերմիկ գրոյց ունեցաւ անոր հետ, ինչպէս նաեւ այցելեց ՅՄԸՄ-ի ռահվիրայ Վահան Չերագի արձանը, Կիւմրիի Վարդանանց հրապարակին մէջ, վերանորոգելով հայ սկաւտին երդումը՝ ըլլալ Վահան Չերագի եւ ՅՄԸՄ-ի հիմնադիրներու արժանաւոր յաջորդները:

Շաբաթ, 29 Յունիս 2023-ին, Համա-ՅՄԸՄ-ական 12-րդ բանակումը, փակման պաշտօնական հանդիսութեամբ հասաւ իր աւարտին:

Շրջանային Վարչութեան հովանաւորութեամբ Սուրիոյ Շրջանի մասնաճիւղերուն վարչութիւնները կազմակերպեցին իրենց տարեկան բանակումները հետեւեալ պատկերով՝

19-25 Յունիս 2023-ին, Բեսապի մասնաճիւղի «Կասիոս» տարեկան բանակումը տե-



ղի ունեցաւ ՅՄԸՄ-ի բանակավայրէն ներս:

27 Յունիսէն - 4 Յունիս 2023-ին, Դամասկոսի մասնաճիւղի «Ռաֆֆի Յովսէփեան» տարեկան բանակումը տեղի ունեցաւ



ՅՄԸՄ-ի բանակավայրէն ներս:

7-14 Օգոստոս 2023-ին, Հալէպի մասնաճիւղի «Լեւոն Արգարեան» տարեկան բանակումը տեղի ունեցաւ ՅՄԸՄ-ի բանակավայ-



րէն ներս:

10-17 Օգոստոս 2023-ին, Գամիշլիի մասնաճիւղի «Կարօս Մկրտիչեան» տարե-



կան բանակումը տեղի ունեցաւ Հայ Կաթողիկէ Համայնքի վանքէն ներս:

14-20 Օգոստոս 2023-ին, Լաթաքիոյ



մասնաճիւղի «Գառնիկ Մկրտիչեան» տարեկան բանակումը տեղի ունեցաւ ՅՄԸՄ-ի բանակավայրէն ներս:

Ընդգծելի էր Գամիշլիի մասնաճիւղի բանակումը, որ Շրջանային Վարչութեան հետեւողական աշխատանքով, տասը տարի ընդմիջումէ ետք իրականացաւ Բեսապի մէջ:

Յովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար

Սրբ. Եպս. Աշգարեանի, 13 Օգոստոս 2023-ին Քեսապի մէջ, Ս. Աստուածածնայ վերափոխման տօնին առիթով, Շրջ. Վարչութիւնը



կազմակերպեց Սկաուտական ամենդական տողանցք, որ ընթացք առաւ, Ս. Աստուածածին եկեղեցին, յետ խաղողօրհնէքի, մինչեւ համալիր, ուր տեղի ունեցաւ պաշտօնական հաւաք ներկայութեամբ Սրբազան հօր եւ քոյր Միութիւններու ու տեղւոյն պետական ներկայացուցիչներու:

Տողանցքին իրենց մասնակցութիւնը բերին Յալէպի, Լաթաքիոյ, Քեսապի եւ Գա-



միշլիի սկաուտներն ու Յալէպի, Լաթաքիոյ եւ Քեսապի փողերախումբերը:

Շրջանի հինգ մասնաճիւղերու տարեկան բանակումներու օրերուն, ՅՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Սկաուտ Խորհուրդը, Սուրիոյ հինգ մասնաճիւղերուն միջեւ կայմերու պատրաստութեան մրցում կազմակերպեց, մրցակցութեան ոգի ստեղծելով մասնաճիւղերուն միջեւ:

Յիշեալ մրցումին առաջին հանդիսացաւ Քեսապի մասնաճիւղը, երկրորդ՝ Դամասկոսի մասնաճիւղը եւ երրորդ՝ Գամիշլիի մասնաճիւղը:

Օգտուելով տարեկան բանակումի հաւաքներէն, Քեսապի մասնաճիւղի կազմակերպութեամբ վարչութիւնս հովանաւորեց ֆութպոլի մրցաշարքեր Քեսապի, Լաթաքիոյ, Դամասկոսի մարզական խումբերուն միջեւ:

Հովանաւորութեամբ ՅՄԸՄ-ի Սուրիոյ

Շրջանային Վարչութեան, Կիրակի, 10 Սեպտեմբեր 2023-ին, կիրակնօրեայ գործունեութեան ամարտին Յալէպի մասնաճիւղի նախկին խմբապետ եղբ. Յակոբ Ուրիշիկեան, ՅՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ՝



եղբ. Մանուկ Թեօշկերեանի ձեռամբ, ստացաւ ՅՄԸՄ-ի սկաուտական բարձրագոյն՝ Արարատեան կարգ:

ՅՄԸՄ-ի Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր Ժողովը տեղի ունեցաւ 2-7 Հոկտեմբեր 2023-ին, Հայաստան: Ժողովին մասնակցեցան միութեան Շրջանային եւ Մեկուսի 30 շրջաններէ 75 իրաւասու ձայնով պատգամաւորներ, իսկ Սուրիոյ շրջանէն իրենց մասնակցութիւնը բերին Շրջ. Վարչութեան լիազօր ներկայացուցիչ՝ եղբ. Յարութ Գաբրիէլեան, շրջանի պատգամաւորներ՝ եղբ. Աւետիս Տերվիշեան, եղբ. Անդրանիկ Սարգիսեան:

Իր հնգօրեայ աշխատանքներուն ամարտին, Ընդհանուր Ժողովը ընտրեց 2023-2027 քառամեակի ՅՄԸՄ-ի նոր Կեդրոնական



Վարչութիւնը, որուն մաս կազմեց Սուրիոյ շրջանէն եղբ. Աւետիս Տերվիշեան:

Ուրբաթ, 10 Նոյ. 2023-ին, ՅՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան Լաթաքիոյ ներկայացուցիչին հետապնդումով ու Քեսապի եւ Լաթաքիոյ մասնաճիւղերու վարչու-

թիւներուն համագործակցութեամբ քեապէն եւ Լաթաքիայէն ՅՄԸՄ-ական քոյրեր ու եղբայրներ ուղղուեցան դէպի Լաթաքիոյ մարզաւան, ներկայ գտնուելու ՅՄԸՄ-ի եւ «Յթօն»-ի միջեւ կայացած պասքէթպոլի մրցումին եւ քաջալերական երգերով խրախուսելու աղջկանց պասքէթի խումբը: Մըրցումը վերջ գտաւ 67/54 արդիւնքով ի նպաստ «Յթօն»-ի: Աղջկանց խումբը իր տպաւորիչ խաղարկութեամբ խանդավառեց հանդիսատեսները:

ՅՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ, Կիրակի, 19 Նոյեմբեր 2023-ին, ՅՄԸՄ-ի հիմնադրութեան ամսուան մէջ աւանդութիւնը պահելով Յոգեհանգստեան արարողութիւն կատարուեցաւ՝ ՅՄԸՄ-ի հին եւ Նոր Ննչեցեալներու եւ ՅՄԸՄ-ական Նահատակներու յիշատակին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Սուրբ եւ Ամմահ Պատարագ մատուցեց Յոգ. Տ. Արմէն Աբղ. Գալաճեան: Արարողութեան ներկայ գտնուեցան ՅՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Աւետիս Տերվիշեան, ՅՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. վարչութեան ատենապետ եղբ. Յարութ Օգճեան,



Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդրոնական վարչութեան անդամ Յրաչ Յակոբեան, Յարաբերական Մարմինի ներկայացուցիչ Վրէժ Եագուպեան, ՅՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութեան անդամները, ՅՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Սկաուտ Խորհուրդը, ՅՄԸՄ-ի Յալէպի մասնաճիւղի վարչութիւնը, ՅՄԸՄ-ի Յալէպի մասնաճիւղի Սկաուտ Խորհուրդը, մասնաճիւղի խմբապետը, ՅՄԸՄ-ի Գամիշլիի մասնաճիւղի վարչութեան անդամ եղբ. Ատուր Ադամեան, ՅՄԸՄ-ական շքանշանակիր երեք եղբայրներ եւ ՅՄԸՄ-ի Յալէպի մասնաճիւղի երեք պարման միաւորի տարագաւոր ՅՄԸՄ-ականներ:

Պատարագէն ետք, ՅՄԸՄ-ի հոգեւոր հո-

վի Արժ. Տ. Մաշտոց Ա. Զինյ. Արապաթեան Յոգեհանգստեան արարողութիւն կատարեց՝ ՅՄԸՄ-ական հին եւ Նոր Ննչեցեալներու հոգիներուն խաղաղութեան համար: Յո-



գեհանգստեան արարողութենէն ետք, ցաւակցութիւնները ընդունուեցան եկեղեցւոյ ներքնասրահը:

Երկուշաբթի, 20 Նոյեմբեր 2023-ին ՅՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը իրականացուց ՅՄԸՄ-ի աշխատակազմի եւ շքանշանակիր քոյր-եղբայրներու աւանդական մտերմիկ հաւաք, ՅՄԸՄ-ի ընտանեկան պարտզէն ներս:

ՅՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութեան հովանաւորութեամբ եւ կազմակերպութեամբ՝ ՅՄԸՄ-ի Դամասկոսի մասնաճիւղի վարչութեան, Ուրբաթ, 1 Դեկտեմբեր 2023-ին, Յայ Կաթողիկէ «Ամիսեան» սրահին մէջ տեղի ունեցաւ ՅՄԸՄ-ի հիմնադրութեան 105-ամեակին Նուիրուած պաշտօնական տօնակատարութիւն, ներկայութեամբ՝ Բերիոյ Յայոց թեմի Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տեր Մակար Սրբ. Եպիսկոպոս Աշգարեանի – Դամասկոսի Յայ Կաթողիկէ համայնքի Առաջնորդ Արհիապատիւ Գերապայծառ Տեր Գեորգ Եպս. Ասատուրեանի, Սուրիոյ Յայ Աւետարանական համայնքի Պետ Վերապատուելի Դոկտ. Յարութին Սելիմեանի:

Օրուան պատգամը արտասանեց Եղբ. Մանուկ Քեօշկերեան: Այնուհետեւ, տեղի ունեցաւ ՅՄԸՄ-ի մէջ երկարամեայ ծառայութիւն ունեցող 5 եղբայրներու՝ ԱԼՕ Աճեմեան, Գեորգ Գալէմքերեան, Ռաֆֆի Սրապեան, Յրաչ Խաճարեան եւ Դաւիթ Միսիրեան Ծառայութեան շքանշաններու բաշխում, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յարութ Օգճեանի կողմէ, որուն կ'ընկերակցէր եղբ. Պօղոս Խաճարեան՝ Շրջանայինի ներկայացուցիչը Դամասկոսի մէջ:



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԻ 2023 ՏԱՐՈՒԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Համազգային Հայ Կրթական և Մշկթ. Միությունը 2023-ին բոլորեց իր հիմնադրութեան 95-ամեակը:

Համազգայինի Սուրիոյ շրջանը, իր հինգ մասնաճիւղերով և չորս միաւորներով երախտարժան գործունեութիւն տարաւ: Սակայն 6 և 20 Փետրուարին տեղի ունեցած իրերայաջորդ ահաւոր երկրաշարժները պատճառ դարձան, որ գաղութի միութենական-ազգային աշխատանքները սառնի ժամանակաւորապէս, որմէ անմասն չմնաց նաեւ Համազգայինը, յատկապէս՝ Հալէպի մէջ, որուն գործունեութիւնը ամբողջութեամբ սառեցաւ և գրասենեակը կրեց ահաւոր վնասներ:

Մշակութային գործունեութիւնը կրկին ընթացք առաւ Մարտ 2023-ի կիսուն: Սակայն Արցախի իրավիճակին պատճառով գործունեութիւնները յետաձգուեցան և ըստ յարմարութեան ի գործ դրուեցան:

Այս տարի Համազգայինը ունեցաւ իր դրօշը, որ պատրաստուեցաւ Համազգայինի Կեդրոնական Վարչութեան կողմէ և տրամադրուեցաւ բոլոր շրջաններուն և մասնաճիւղերուն:

Ակնարկ մը նետելով Համազգայինի Սուրիոյ շրջանի 2023 տարուան իրագործումներուն վրայ, ի յայտ կու գայ Սուրիոյ Շրջ. Վարչութեան, հինգ մասնաճիւղերուն և չորս միաւորներուն նկատառելի գործունեութիւնը:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Համազգայինի Սուրիոյ Շրջանային 23-րդ Ներկայացուցչական ժողովով յառաջացած Շրջանային Վարչութիւնը, բաղկացած՝ 9 անդամներէ, 2023-ին շարունակեց իր գործունեութիւնը հետեւեալ անդամներով.-

Մարալ Տիբպիքեան ատենապետ
Կարօ Տէյիրմէնճեան գանձապահ
Շուշիկ Ղազարեան հաշուապահ
Արամ Արամեան

Սագօ Խալոյեան
Սեւան Մանճիկեան (Քեսապ)
Ռաֆֆի Յակոբեան (Լաթաքիա)
Ռիթա Տէր Սարգիսեան (Գամիշլի)

Շրջ. Վարչութիւնը իրագործեց հետեւեալ գործունեութիւնները.

- 31 Յունուար 2023-ին, գումարեց Գ. զեկուցական ժողովը, ուր ներկայացուց Համազգայինի հիմնադրութեան 95-ամեակին առիթով կազմուած յանձնախումբը և այդ ուղղութեամբ նախատեսուած իրագործելի ծրագիրները:

- Լիբանանէն հրաւիրեց բեմադրիչ Վալէ Ատրունին, երեք ամսուան ժամկետով, «Լեւոն Շանթ» թատերախումբին հետ «Փայտոջիլներու Պահարանը» կատակերգութիւնը բեմ բարձրացնելու:

- Համազգայինի Սուրիոյ շրջանը երկրաշարժի աղետալի օրերուն առանձին չմնաց: Համազգայինի Կեդր. Վարչութիւնը յետ երկրաշարժի աղետին, հաղորդագրութեամբ մը Սուրիոյ հայ գաղութին և հայրենակիցներուն անվերապահ աջակցութիւն ցուցաբերեց մաղթելով, որ տոկալով նաեւ այս դժուարութեան՝ ոտքի կանգնին և դարձեալ շարունակեն իրենց բնականոն կեանքն ու աշխոյժ գործունեութիւնը:

- Միջմիութենական ծիրէն ներս, ներկայ գտնուեցաւ և մասնակցութիւն բերաւ Հայոց Յեղասպանութեան 108-րդ տարելիցին նուիրուած նախաձեռնութիւններուն՝ Սուրբ և Անմահ Պատարագին, ծաղկեմատոյցին,

արեան տուչութեան, ժողովրդային ջախերթին եւ կեդրոնական հասնդիսութեան:

- 16 Ապրիլ 2023-ին մասնակցութիւն բերաւ Արցախի գօրակցական հաւաքին, ԱԶԵ Ճեմարանէն ներս:

- 15 Ապրիլ 2023-ին, Շրջ. Վարչութեան անմիջական հետապնդումով եւ «Ն. Աղբալեան» մասնաճիւղի վարչութեան կազմակերպութեամբ տեղի ունեցաւ «Աշուղական երեկոյ», ի պատիւ ՅՅԴ Բիւրոյի ներկայացուցիչին, Միջին Արեւելքի կեդրոնական կոմիտէներու եւ Հայ Դատի յանձնախումբերու ներկայացուցիչներուն:

- Համազգայինի Սուրիոյ Շրջանային 25-րդ ներկայացուցչական ժողովի նախօրեակին, ժողովի մասնակիցներուն մտերմիկ ընթրիք մը կազմակերպեց:



30 Ապրիլ 2023-ին գումարուած Համազգայինի Սուրիոյ Շրջանային 25-րդ ներկայացուցչական ժողովը յառաջացուց Նորընտիր Շրջ. Վարչութիւնը հետեւեալ պատկերով:-

- | | |
|------------------------------|-----------|
| Ռաֆֆի Սիւլահեան | ատենապետ |
| Մարինա Պօղիկեան | ատենադպիր |
| Սաօ Արսլանեան | գանձապահ |
| Սեդա Աճեմեան | հաշուապահ |
| Կարօ Տէյիրմենճեան | |
| Արա Մուրաֆեան | |
| Հուրի Մուսալլի | |
| Սօսի Կարճիկեան (Զեսապ) | |
| Ռաֆֆի Յակոբեան (Լաթաքիա) | |
| Ռիթա Տէր Սարգիսեան (Գամիշլի) | |
| Վազգէն Պէլեան (Դամասկոս) | |

Շրջ. Վարչութիւնը իր ընտրութեան օրէն իրագործեց հետեւեալ գործունեութիւնները:- Կազմակերպեց Միութեան գործունեութեան ընթացիկ աշխատանքները, Համազգայինի Կեդր. Վարչութեան հետ համախորհուրդ:

- 1 Օգոստոս 2023-ին հիւրընկալեց հալեպահայ համազգայնական, ներկայիս Հա-



մազգայինի Արեւմտեան Ամերիկայի Շրջ. Վարչութեան անդամ ընկ. Յովիկ Սերայտարեանը եւ խորհրդակցական հասնդիպում ունեցաւ անոր հետ:

- Լիբանանահայ վաստակաւոր թատերագիր, բեմադրիչ Վաչէ Ատրունիին հետ գործակցութիւնը շարունակեց: «Փայտոռչիւներու Պահարանը» կատակերգութիւնը հանրութեան յաջողութեամբ ներկայացնելէ ետք, թատերական Նոր ներկայացում բեմ բարձրացնելու աշխատանքին ձեռնարկեց:

- Հրաւիրեց բժշկ. Ռաֆֆի Ապեճեանը, որպէս ետդրատային խումբի ղեկավար գործակցութիւնը շարունակելու «Նիկոլ Աղբալեան» մասնաճիւղին հետ:

- 27 Սեպտեմբեր 2023-ին, լիակատար առցանց կիստ գումարեց, Շրջ. Վարչութեան նստավայրի եւ շրջաններու անդամներուն մասնակցութեամբ: Ժողովին արծարծուեցան Միութեան մասնաճիւղերու եւ միաւորներու գործունեութիւններն ու յառաջիկայ ծրագիրները, ինչպէս նաեւ Համազգայինի հիմնադրութեան 95-ամեակին առնչուող նախաձեռնութիւնները: Շրջ. Վարչութիւնը իր գօրակցութիւնը յայտնեց Արցախին եւ արցախահայութեան:

- 7 Հոկտեմբեր 2023-ին, երկու ներկայացուցիչներով իր մասնակցութիւնը բերաւ Համազգայինի Կեդր. Վարչութեան կազմակերպած շրջանային եւ մեկուսի կազմերու ներկայացուցիչներու առցանց ժողովին, որուն առանցքը կազմեց Արցախի մէջ տիրող եւ Արցախի հայութեան բռնի տեղահանման իբրեւ հետեւանք ստեղծուած իրավիճակը, Արցախի մշակութային կոթողներու պահպանութեան հարցն ու Արցախի ժողովուրդին կիւրաքարայնական գօրակցութիւնը, այս գծով շեշտուեցաւ Համազգայինի հրատարակած արցախցի լուսանկարիչ Դաւիթ Ղահրամանեանի «Արցախ.- Անաւարտ Պատերազմ» լուսանկարներու պատկերագիրքի առաւելագոյն տարածման ու

հանրայնացման անհրաժեշտությունը: Կեդր. Վարչութեան ցուցմունքով Միութեան 95-ամեակի նախաձեռնությունները եւ բոլոր ձեռնարկները յետաձգուեցան:

- 12 Յոկտեմբեր 2023-ին, Համազգայինի «Չաւարեան» մշակութային կեդրոնէն ներս հիւրընկալեց Ամերիկայի Միացեալ Նահանգներէն ժամանած հալէպահայ վաստակաւոր համազգայնական ընկ. Վահէ Ժամագործեանը, հանդիպում ունեցաւ անոր հետ եւ շինիչ գաղափարներու փոխանակում տեղի ունեցաւ:

- 16 Յոկտեմբեր 2023-ին, մտերմիկ հանդիպում մը կազմակերպեց Համազգայինի «Չաւարեան» Մշկթ. կեդրոնէն ներս, Համազգայինի Սուրիոյ շրջանի վաստակաշատ երեց ընկերներուն՝ ընկ. Վահէ Ժամագործեանի, ընկ. Կարպիս Դերձակեանի եւ ընկ. Նշան Օղիկեանի Հալէպ ժամանելուն առիթով:

- 29 Յոկտեմբեր 2023-ին, հայկական մշակոյթի ամսուան մէջ, նախագահութեամբ՝ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, հոգեհանգստեան արարողութիւն կատարեց Սրբ. Քառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ, յիշելով եւ յարգելով Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան շարքերէն ներս անսակարկ ծառայութիւն ունեցած հին եւ նոր ննջեցեալները, յարգանքի ու աղօթքի այս արտայայտութիւնը աւանդութիւն դարձնելու եւ ամէն տարի կատարելու:

- 2 Դեկտեմբեր 2023-ին, հովանաւորութեամբ՝ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, ներկայութեամբ՝ Կեդր. Վարչութեան ատենապետ ընկ. Չաքար Բէշիշեանի, Կեդր. Վարչութեան անդամ ընկ. Արա Գերոզեանի, Սուրիոյ անդամ ընկ. Կարօ Մանճիկեանի եւ Կեդր. Վարչութեան քարտուղար ընկ. Տօնիկ Տօնապետեանի, Համազգայինի 95-ամեակի Յօբելեանական Հանդիսութիւնը կազմակերպեց, «Գ. Եսայեան» սրահէն ներս, մեծաթիւ հանդիսականներու ներկայութեամբ: Օրուան բանախօսն էր Կեդր. Վարչութեան ատենապետ ընկ. Չաքար Բէշիշեանը, որմէ ետք Կեդր. Վարչութիւնը ընդառաջելով Շրջ. Վարչութեան առաջարկին, Սրբազան Զօր հովանաւորութեամբ եւ Կեդր. Վարչութեան ատենապետին ձեռամբ Համազգայինի շքանշանով պարգևատրուեցաւ Համազգայինի շարքե-

րէն ներս երկար տարիներու ծառայութիւն եւ վաստակ ունեցած ընկի. Զոհի Կանանեանը:



Յիշեցք, որ Յօբելեանական հանդիսութեան հրաւերներուն հետ Շրջ. Վարչութիւնը յատուկ յուշանուէր փոխանցեց հրաւիրեալ բոլոր մարմիններուն եւ Շրջ. Վարչութեան նախկին անդամներուն:

Շրջ. Վարչութեան անդամները հանդիպում ունեցան Կեդրոնական Վարչութեան անդամներուն հետ: Շրջ. Վարչութեան ատենապետը, Միութեան հիմնադրութեան 95-ամեակի Յօբելեանական հանդիսութեան առիթով պատրաստուած յուշանուէրը փոխանցեց Կեդր. Վարչութեան ատենապետին եւ անդամներուն:

Շրջ. Վարչութիւնը, Կեդր. Վարչութեան անդամներուն ներկայութեամբ սիրոյ սեղանի շուրջ մտերմիկ հանդիպում մը կազմակերպեց, Համազգայինի չորս միաւորներու եւ «Նիկոլ Աղբալեան» մասնաճիւղի վարչութիւններուն, Հաշուեքքնիչ մարմինի անդամներուն, Շրջ. Վարչութեան նախկին անդամներուն, Էսդրատային խումբի ղեկավար բժշկ. Ռաֆֆի Ապեճեանի եւ «Չուարթօնց» երգչախումբի խմբավար տիկ. Գայիանէ Սիմոնեան-Տերեանի հետ: Հանդիպումը ջերմացաւ գեղարուեստական յայտագիրով:

Շրջ. Վարչութեան գլխաւորութեամբ, Կեդր. Վարչութեան պատուիրակութիւնը ներկայ գտնուեցաւ Սուրիահայ Օգնութեան Խաչի Շրջ. Վարչութեան կազմակերպած ամանորեան ցուցահանդէս-վաճառքի բացման հանդիսութեան, պաշտօնական այցելութիւն տուաւ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանին, այցելեց Համազգայինի «Չաւարեան» մշկթ. կեդրոն, ուր շրջագայելով իրազեկ դարձաւ «Ն. Աղբալեան» մասնաճիւղին եւ միաւորներուն յատկացուած բաժիններուն եւ հանդիսասրահին ներկայ իրավիճակին: Այցելեց նաեւ Ս. Աստուածա-

ծին եկեղեցի եւ Սրբոց Բառասնից Մանկանց Մայր եկեղեցի: Համազգայինի Կեդրոնական Վարչութեան ատենապետին եւ անդամներուն եռօրեայ գօտեպնդող այցելութիւնը նոր թափ ու կորով պարգեւեց Սուրիոյ շրջանի համազգայնականներուն:

- Հետամուտ եղաւ բոլոր վարչութիւններու գործունեութիւններուն բարեյաջող ընթացքը ապահովելու: Երեք անդամներով ներկայ գտնուեցաւ մասնաճիւղերու վարչութիւններուն կազմակերպած Համազգայինի 95-ամեակի Յորելենական հանդիսութիւններուն, ինչպէս նաեւ «Համօ Օհանջանեան» մասնաճիւղի «Կիլիկիա» երգչախումբի ելոյթին:

- Գաղութիս կարգ մը ձեռնարկներու կազմակերպման համար գործակցեցաւ ուղեկից միութիւններուն հետ եւ քաջալերեց անոնց կազմակերպած ձեռնարկներն ու ընդառաջեց անոնց հրաւերներուն:

- Նոր Տարուան առիթով Սուրիոյ շրջաններու ազգային դպրոցներու մանկապարտեզի աշակերտներուն նուիրեց Համազգայինի Կեդրոնական Վարչութեան կողմէ առաքուած «Լալան ու Արան» մակնիշը կրող գրչատուփեր, պայուսակներ եւ ներկեր: Յատուկ օրակարգերով հանդիպումներ ունեցաւ միաւորներու եւ մասնաճիւղերու վարչութիւններուն հետ, նստավայրի եւ շրջաններուն մէջ:

ՀԱՄԱՀԱՅԻՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԲ (ՖՈՐՈՒՄ) - 2023

7-19 Յուլիս 2023-ին, Հայաստանի մէջ տեղի ունեցաւ 2023 տարուան Համազգայինի



ոլանողական հաւաքը (Ֆորումը), որուն Համազգայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան կողմէ իր մասնակցութիւնը բերաւ ընկի. Վեհան Պարսումեանը:

Ֆորումին Սուրիայէն անկախաբար մասնակցեցաւ նաեւ Յովիկ Պարսումեանը:

«ՆԻԿՈՆ ԱՂԲԱԼԵԱՆ» ՄԱՍՆԱԾԻՂ - ՀԱԼԵՊ

Վարչութիւնը կը գործէ «Չաւարեան»

Մշկթ. կեդրոնէն ներս, յանձնախմբային դրութեամբ: Յառաջացուցած է գրական, երաժշտական, ընկերային, տիկնանց, «Շուշի» մանկապատանեկան պարարուեստի դպրոցի եւ «Սարդարապատ» պարարուեստի, նաեւ «Արշիլ Կորքի» կերպարուեստի յանձնախումբերը:

Մասնաճիւղի վարչութիւնը գործակցելով յանձնախումբերուն հետ իրագործեց հետեւեալ հրապարակային եւ մշակութային գործունեութիւնները.-

-3 Փետրուար 2023-ին, կազմակերպեց յանձնախումբերու ծանօթացման երեկոյ, ՀՄԸՄ-ի պարտեզէն ներս:

- 7 Ապրիլ 2023-ին, «Արշիլ Կորքի» կերպարուեստի յանձնախումբը Ս. Յարութեան տօնին առիթով կազմակերպեց հաւկթախաղ, ուսումնարանի աշակերտներուն համար:

- 9 Ապրիլ 2023-ին, Ս. Յարութեան տօնին առիթով կազմակերպեց պարահանդես, «Անի» ճաշասրահէն ներս:

- 15 Ապրիլ 2023-ին, երաժշտական յանձնախումբը կազմակերպեց «Աշուղական երեկոյ», ի պատիւ ՀՀԴ Բիւրոյի ներ-



կայացուցիչին, Միջին Արեւելքի կեդրոնական կոմիտէներու եւ Հայ Դատի յանձնախումբերու ներկայացուցիչներուն, «Գ. Եսայեան» սրահէն ներս:

- 21 Ապրիլ 2023-ին, մասնաճիւղի գրական յանձնախումբը կազմակերպեց «Մանկութիւն Չունեցող Ստեղծագործներ» խորագիրով դասախօսութիւն, զոր ներկայացուց գրական յանձնախումբի անդամ ճարտարագետ ընկ. Կարպիս Միւսասեան, «Ա. Մանուկեան» Ժ. Տան «Լեւոն Շանթ» սրահէն ներս:

- 1 Մայիս 2023-ին, «Շուշի» մանկապատանեկան պարախումբը իր մասնակցութիւնը բերաւ Սուրիոյ Մշակոյթի Նախարարութեան հովանաւորութեամբ տեղի ունեցած պարի միջազգային օրուան առիթով կազմակերպուած փառատօնին:

«Շուշի» եւ «Սարդարապատ» պարախումբերը իրենց մասնակցութիւնը բերին

ազգային եւ պետական շարք մը ձեռնարկներու:

- 2 Մայիս 2023-ին, ընկերային յանձնախումբը կազմակերպեց ռալի, «Չաւարեան» մշկթ. կեդրոնէն ներս, 1-4 կարգերու աշակերտներուն:

- 19 Մայիս 2023-ին, Տիկնանց յանձնախումբը նախաճաշ կազմակերպեց Համբարձման տօնին առիթով, «Շագլի» ճաշարանէն ներս:

- Յունիս ամսուան ընթացքին «Արշիլ Կորքի» կերպարուեստի յանձնախումբը կազմակերպեց քանդակագործութեան դասընթացք (կաւագործութիւն), դասատու ունենալով՝ արուեստագետ Վարդգէս Պարսումեանը: Դասընթացքի աւարտին հաստատագրեր տրուեցան մասնակիցներուն:

- 5 Յուլիս 2023-ին կազմակերպեց յանձնախումբերու ատենադպիրներուն յատուկ ատենադպրութեան դասընթացք, «Չաւարեան» մշկթ. կեդրոնէն ներս: Նիւթը փոխանցեց ընկի. Հռիփ Կանանեան:

- 10-31 Յուլիս 2023-ին, Մասնաճիւղի գրական յանձնախումբը կազմակերպեց «Կար ու Չկար 2», 6-9 կարգերու աշակերտներուն յատուկ ծրագիրը, որուն հիմնական նպատակն էր նոր սերունդին մօտ սեր արթնցնել մայրենի լեզուին հանդէպ: Մասնակիցները այցելեցին Հալեպի մէջ գործող մշակոյթի կեդրոններ:

- 19 Յունիս 2023-14 Յուլիս 2023, Վարչութիւնը կազմակերպեց ամառնային արուեստի դպրոցի միամսեայ ծրագիր, յատուկ նախակրթարանի աշակերտներու, «Չաւարեան» մշկթ. կեդրոնէն ներս:

- 24 Յուլիս 2023-ին, վարչութիւնը մասնաճիւղի պարախումբի եւ կերպարուեստի դպրոցի աշակերտներուն յատուկ պտոյտ մը կազմակերպեց, Միխիթարեան վարժարանէն ներս:

- 16 Սեպտեմբեր 2023-ին կազմակերպեց մտերմիկ ընթրիք, «Տիգրանեան» պարտեզէն ներս, մասնակցութեամբ Եսդրատային խումբի անդամներու:

- 20 Սեպտեմբեր 2023-ին, մասնաճիւղի կերպարուեստի յանձնախումբը կազմակերպեց գործունէութիւն մը՝ յատուկ ուսումնարանի աշակերտներուն, Սրբոց Քառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ: Աշակերտները ծանօթացան եկեղեցւոյ մէջ գտնուող հին ու արժէքաւոր սրբապատկերներուն, որոնց մասին բացատրութիւններ փոխանցեց ուսումնարանի գծագրութեան ուսուց-

չուհի՝ Տիկ. Սօսի Բեռլեկեանը: Ապա, եկեղեցւոյ շրջափակին մէջ տեղադրեցին գծագրութեան եռոտանիները եւ ուսուցչուհիին հսկողութեամբ գծեցին տեղւոյն խաչքարերն ու յուշարձանները:

- 24 Հոկտեմբեր 2023-ին, մասնաճիւղի Եսդրատային Նուագախումբը Հալեպի Պետական Համալսարանի «Պասէլ» սրահէն ներս իր մասնակցութիւնը բերաւ ԶՈՄ-ի կազմակերպած «Հայկական Մշակութային Շաբթուան» գեղարուեստական յայտագիրին, ղեկավարութեամբ՝ բժշկ. Ռաֆֆի Ապեճեանի:

- 4 Նոյեմբեր 2023-ին «Արշիլ Կորքի» կերպարուեստի ուսումնարանի աշակերտները ծանօթացան քանդակագործութեան արուեստին եւ կաւով պատրաստեցին արձանիկներ:

- 27 Հոկտեմբեր 2023-ին, մասնաճիւղի գրական յանձնախումբը կազմակերպեց հայկական վեց վարժարաններու միջեւ (Է. եւ Ը կարգերու աշակերտներու) հարց-պատասխանի մրցոյթ, Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահէն ներս:

- 11 Նոյեմբեր 2023-ին, «Արշիլ Կորքի» կերպարուեստի յանձնախումբը կազմակերպեց հաճելի պտոյտ մը՝ «Ֆրանսիսքան» վանքի գեղեցիկ պարտեզին մէջ: Աշակերտները ուշադրութեամբ դիտեցին բնութիւնը, ապա գծեցին:

- Մասնաճիւղի Եսդրատային Նուագախումբը իր մասնակցութիւնը բերաւ «Զուրթուպա» անձնական համալսարանի աւարտական հանդէսի գեղարուեստական յայտագիրին, «Չ. Գաբրիէլեան» սրահէն ներս:

- Մասնակցութիւն բերաւ ազգային եւ եկեղեցական տօնակատարութիւններուն:

«ՎԱՅԱՆ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ» ՄԱՍՆԱՃԻՂ - ԼԱԹԱՔԻԱ

«Վահան Նաւասարդեան» մասնաճիւղի վարչութիւնը ամէն շաբթի գործ դնելով ծո-



վեգերեայ շրջանի հայ համայնքին մէջ վառ պահեց հայկական մշակութային արժէքները: Մասնաճիւղի վարչութիւնը կազմակեր-

պեց հետեւեալ ձեռնարկները.

- 19 Ապրիլ 2023-ին, Համազգայինի «Վահան Նաւասարդեան» մասնաճիւղը իր անդամական արտակարգ ընդհանուր ժողովը գումարեց, «Կարպուշեան» սրահէն ներս:

- Մասնաճիւղը իր մասնակցութիւնը բերաւ Հայոց Ցեղասպանութեան 108-ամեակի ոգեկոչական արարողութիւններուն, ՀՀ Անկախութեան 105-ամեակին նուիրուած դաշտազնացութեան, Արցախի զօրակցական հաւաքներուն, Ապա Նաեւ ՀՀ Դաշնակցութեան 133-ամեակի տօնակատարութեան:

- 11-12 Նոյեմբեր 2023-ին, մասնաճիւղը իր մասնակցութիւնը բերաւ հովուական այցելութեամբ Լաթաքիա ժամանած Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի ընդունելութեան:

- 24 Նոյեմբեր 2023-ին, վարչութիւնը կազմակերպեց պաշտօնական հանդիսութիւն, նուիրուած՝ Համազգայինի 95-ամեակին եւ Համազգայինի «Վահան Նաւասարդեան» մասնաճիւղի 35-ամեակին: Հիւր բաՆախօսն էր Հալեպէն ժամանած համազգայնական երեք ընկ. Պարգեւ Աւագեանը:

«ՀԱՍՏ ՕՅԱՆՋԱՆԵԱՆ» ՄԱՍՆԱԾԻՂ - ԲԵՏԱՊ

Համազգայինի «Համօ Օհանջանեան» մասնաճիւղը իր աշխոյժ գործունեութեամբ կը շարունակէ հայ մշակոյթի ջահը վառ պա-



հել գրասեր եւ մշակութասեր քեսապահայութեան մօտ:

2023-ին մասնաճիւղի վարչութիւնը իրագործեց հետեւեալ գործունեութիւնները.-

- 29 Յունուար 2023-ին, մանկապարտեզի փոքրիկներուն համար կազմակերպեց մտերմիկ հաւաք մը, ուր Նոր Տարուան առիթով Համազգայինի Կեդրոնական Վարչութեան կողմէ «Լալան ու Արան» մակնիշով գազակներ նուիրեց փոքրիկներուն:

- 22 Մարտ 2023-ին վարչութիւնը կազմակերպեց անդամական մտերմիկ հաւաք մը, նուիրուած՝ Համազգայինի Հիմնադրութեան 95-ամեակին եւ «Հ. Օհանջանեան»

մասնաճիւղի 35-ամեակին, Քեսապի Ժողովրդային տան «Սիմօն Չաւարեան» սրահէն ներս: Համազգայինի Կեդր. վարչութեան անդամ ընկ. Կարօ Մանճիկեան արտասանեց իր խօսքը: Հոգշ. Տ. Անդրանիկ Վրդ. Զիւրիմեան այս առիթով ուղղեց իր սըրտի խօսքը: Աւարտին, կարկանդակի հատում կատարուեցաւ:

- 8,9 Մայիս եւ 18 Յունիս 2023-ին, վարչութիւնը երկու փուլով կազմակերպեց միջոյարոցական ասմունքի մրցաշարք, նուիրուած Քեսապի գաւակ, բանաստեղծ՝ Վրեժ Գլնճեան-Թուրեանի:

- 9 Յուլիս 2023-ին, «Սահակեան» սրահէն ներս կազմակերպեց «Քեսապի Կեանքէն Դրուագներ եւ Տաղեր» գիրքին շնորհանդէսը, որուն ներկայ գտնուեցան Նաեւ Քեսապի հայ երեք համայնքներու հոգեւոր հովիւները, Համազգայինի Կեդրոնական եւ Շրջանային վարչութեան անդամներ եւ Քեսապահայեր:

- 9 Դեկտեմբեր 2023-ին, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Ս. Եպս. Ազգարեանի, կազմակերպութեամբ մասնաճիւղի վարչութեան, ելոյթ ունեցաւ «Կիլիկիա» երգչախումբը, խմբավարութեամբ Քեսապի Հայ Առաքելական համայնքի հոգեւոր տեսուչ՝ Հոգշ. Տ. Անդրանիկ Վրդ. Զիւրիմեանի, դաշնամուրի ընկերակցութեամբ՝ Տիկ. Անի Պօմուշաքեանի, «Սարդարապատ» սրահէն ներս:

-Մասնակցութիւն բերաւ ազգային եւ եկեղեցական տօնակատարութիւններուն:

«ԱՄԵՏԻՍ ԱՅԱՐՈՆԵԱՆ» ՄԱՍՆԱԾԻՂ - ԳԱՄԻՇԼԻ

Գամիշլիի մէջ Համազգայինի «Ա. Ահարոնեան» մասնաճիւղը կը շարունակէ վառ պահել հայ մշակոյթին ջահը, մշակութային նախաձեռնութիւններով եւ իր աշխոյժ մասնակցութիւնը բերելով ազգային-եկեղեցական տօներուն:

Մասնաճիւղի վարչութիւնը անցնող տարուան ընթացքին իրագործեց հետեւեալ գործունեութիւնները.-

- Կազմակերպեց երաժշտական դասընթացք: Մասնաճիւղը ունեցաւ գործիքաւորուած երաժշտանոց, պրն. Յարութ Մատարճեանի ղեկավարութեամբ:

- Մասնաճիւղի «Վանայ» պարախումբը իր մասնակցութիւնը բերաւ կազմակերպուած ձեռնարկներուն, գեղարուեստական ղեկավար ունենալով ընկի. Նանար Սար-



գիսեանը:

-Յունուարին վարչութիւնը ներկայ գըտ-
նուեցաւ Արաբական մշակութային կեդրոնէն
ներս տեղի ունեցած ցուցահանդէսին, հե-
տագային նաեւ այլ ձեռնարկներու:

- 1 Մարտ 2023-ին, կազմակերպեց Յո-
գեբանական բուժօգնութեան դասախօսու-
թիւն, նախաձեռնութեամբ՝ ՄԱԿ-ի հոգեբա-
նական բաժանմունքին, Ազգ. Փոխանորդա-
րանի դահլիճէն ներս:

- Հիւրընկալեց Արաբական մշակութա-
յին կեդրոնի Տնօրէնուհի՝ Ֆայգա ալ-Բատ-
րի, ինչպէս նաեւ Պաաս օրաթերթի Գա-
միշլիի թղթակից՝ Գարօլին Ղուկասեան:
Հանդիպումին առանցքը դարձաւ ապագայ
համագործակցութիւնը Համազգայինի եւ
արաբական մշակութային կեդրոնին միջեւ:

- Մարտ 2023-ին, առցանց դրութեամբ
կազմակերպեց «Ատենադպրութեան դաս-
ընթացք», երկու հանդիպումներով, Հա-
մազգայինի Մշակութային կեդրոնէն ներս:
Դասընթացքին սիւրճ փոխանցեց Հայաս-
տանէն ընկի. Նայիրի Մկրտիչեան:

- 15 Մարտ 2023-ին, Կանանց միջազ-
գային օրուան առիթով Ազգ. Փոխանորդա-
րանի դահլիճէն ներս դասախօսութիւն կազ-
մակերպեց: Դասախօսն էր՝ Արաբ Մշակոյ-
թի կեդրոնի տնօրէնուհի տիկ. Ֆայիգա Ալ-
Բատրի, սիւրճ ունենալով «Մարտ ամսուան
ընթացքին, կնոջ նուիրուած տօները», որուն
ընդմէջէն դասախօսը անդրադարձաւ ա-
րուեստի ու մշակոյթի մէջ կնոջ ունեցած դե-
րակատարութեան, նաեւ հայ կնոջ ձգած
շնորհալի դրոշմին՝ Սուրիոյ հայրենիքին
նկատմամբ:

- 22 Մարտ 2023-ին, կազմակերպեց առ-
ցանց դասախօսութիւն: Դասախօսն էր՝ Մե-
ծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թան-
գարանի տեսուչ Հոգ. Տ. Արտաւազդ Վրդ.
Շառոյեան, Ազգ. Փոխանորդարանի դահլի-
ճէն ներս: Հոգեւոր հայրը, շրջելով թանգա-
րանին մէջ առցանց կերպով ներկաներուն
բացատրեց թանգարանի եկեղեցական
սպասներուն եւ անոնց գործածութեան
պատմականը եւ թանգարանի փոխադրու-
թիւնը Սիսեւ Անթիլիաս:

- Մեծ Պահքի ընթացքին, շաբաթական
դրութեամբ, Գամիշլիի Ս. Յակոբ եկեղեցւոյ
մէջ Արեւազալի ժամերգութենէն ետք դասա-
խօսական ձեռնարկ կազմակերպեց մշա-
կութային, կրօնական եւ հոգեբանական գա-
նազան սիւրճերու շուրջ:

- 29 Մարտ 2023-ին, Ս. Յակոբ եկեղեց-

ւոյ տիկնանց կազմի նախաճաշի ձեռնար-
կին, կոկիկ յայտագիրով Մայտա Ղազար-
եան-Յարութիւնեան ներկայացուց «հայ
կնոջ դերը պատմութեան ընթացքին» սիւ-
րճ:

- Կազմակերպեց «karaoke» Վանայ պա-
րախումբի երեք անդամներուն համար, մշա-
կութային կեդրոնէն ներս:

- 16 Ապրիլ 2023-ին, Համազգային Մշա-
կութային կեդրոնէն ներս գումարեց անդա-
մական արտակարգ ընդհանուր ժողով:

- Մասնաճիւղը իր մասնակցութիւնը բե-
րաւ Հայոց Յեղասպանութեան 108-ամեա-
կի ոգեկոչական հանդիսութեան, ջահերթին
եւ ծաղկեմատոյցին: Մասնաճիւղի «Կոմի-
տաս» երաժշտանոցը եւ «Վանայ» պարա-
խումբը իրենց մասնակցութիւնը բերին Հա-
յոց Յեղասպանութեան 108-ամեակի ոգեկո-
չումին:

- 25 Մայիս 2023-ին, կազմակերպեց ոգե-
կոչական երեկոյ, նուիրուած Ս. Ներսէս



Շնորհալի հայրապետին վախճանման 850-
ամեակին, Գամիշլիի Ս. Յակոբ եկեղեցւոյ
մէջ: Ձեռնարկի գեղարուեստական յայտա-
գիրին, դպրաց դասին եւ կիրակնօրեայ դըպ-
րոցի աշակերտներուն կողքին իրենց մաս-
նակցութիւնը բերին Համազգայինի «Կոմի-
տաս» երաժշտական դպրոցի աշակերտնե-
րը: Օրուան բանախօսն էր Հոգ. Տէր Արմէն
Աբդ. Գալաճեան:

- Տարիներու ընկալուած սովորութիւնը
պահելով, կազմակերպեց Համազգայինի
Ամառնային արուեստի դպրոցը:

- Մասնակցութիւն բերաւ Արցախի մէջ
շրջափակուած բնակչութեան զօրակցական
հաւաքին եւ ձեռնարկներուն:

- Մասնաճիւղի վարչութեան հետապըն-
դումով Գամիշլիէն, Հասիչէն եւ Տէրիքէն
հայրորդիներ իրենց մասնակցութիւնը բերին
Հալէպի հայագիտական հիմնարկի վարչութե-
ան կազմակերպած հայերէն լեզուի տար-
րական սկզբունքներու առցանց ուսուցու-

մին, որ յատուկ էր սկսնակներու, շաբաթական երկօրեայ դրութեամբ:

- 25 Օգոստոս 2023-ին, Տերիքի մէջ կազմակերպեց երիտասարդական եռօրեայ համագումար՝ «Ես Այլ Կամ» խորագիրով:

- 22 Յոկտեմբեր 2023-ին, մասնաճիւղի վարչութիւնը Յոգեհանգստեան պաշտօն կատարեց Յամազգայինի եւ «Աւետիս Ահարոնեան» մասնաճիւղի հին եւ նոր ննջեցեալներու հոգիներուն, ապա նաեւ հոգեսուրճ տեղի ունեցաւ:

- 14 Յոկտեմբեր 2023-ին, մասնաճիւղի վարչութիւնը քաղաքավարական եւ ծանօթացման այցելութիւն տուաւ «Իլիաս Յաննա» մշակութային եւ բարեգործական հաստատութեան:

- Վարչութիւնը եւ Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամը, տօնական օրերուն շնորհաւորական այցելութիւն տուին Ճեզիրէի Առաջնորդական փոխանորդ Յոգձ. Տ. Լեւոն Վրդ. Եղիայեանին:

- Դեկտեմբերին երաժշտանոցի եւ պարախումբի աշակերտները յիշատակեցին Ամանորի եւ Ս. Ծնունդի տօները, ապա հայր սուրբին շնորհաւորական այցելութիւն տուին, որուն ընթացքին գեղարուեստական յայտագիր մը ներկայացուցին:

«ԼԵՒՆ ՇԱՆՔ» ՄԱՍՆԱՃԻՂ- ԴԱՄԱՍԿՈՍ

Յամազգայինի «Լեւոն Շանք» մասնաճիւղի վարչութիւնը, Սուրիոյ մայրաքաղաք Դամասկոսի մէջ մշակութային աւանդը պահելով աշխոյժ գործունեութիւն տարաւ իրագործելով հետեւեալները.

- 29 Յունուար 2023-ին, կազմակերպեց «Գրական երեկոյ», նուիրուած մտաւորական, ազգային գործիչ եւ բանաստեղծ Լեւոն Շանքի, «Ահարոնեան» կեդրոնէն ներս:

- Վարչութիւնը, քոյր միութիւններուն հետ կազմակերպեց Յայոց Յեղասպանութեան 108-ամեակի ոգեկոչում, «Ա. Ահարոնեան» կեդրոնէն ներս: Բանախօսն էր համազգայնական ընկեր Պարգեւ Աւագեանը:

- Մասնակցութիւն բերաւ ազգային եւ եկեղեցական տօնակատարութիւններուն, ինչպէս նաեւ Արցախի գօրակցութեան ձեռնարկներուն:

- 13 Օգոստոս 2023-ին, վարչութիւնը հաւատարիմ մնալով իր ազգապահպան առաքելութեան, կազմակերպեց ընթրիքի ձեռնարկ մը, Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով, «Ահարոնեան» կեդրոնի շրջափակէն ներս, համախմբելով գա-

ղութի զաւակները հայաշունչ իր յարկէն ներս:

- 17 Դեկտեմբեր 2023-ին, կազմակերպեց Յամազգայինի հիմնադրութեան 95-ամեակին նուիրուած Յոբելեանական հանդի-



տութիւն, «Ա. Ահարոնեան» սրահէն ներս: Օրուան բանախօսն էր «Գանձասար» շաբաթաթերթի խմբագիր Չարմիկ Զիլկբօշեան-Պօղիկեանը:

«ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՂԵԱՆ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԻՎՈՐ

Յամազգայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական դպրոցի վարչութեան անմիջական հետապնդումով, երաժշտանոցը



գործեց Ազգ. Միացեալ վարժարանէն ներս: Վարչութիւնը կազմակերպեց հետեւեալ աշխատանքները.-

- Նոր Տարուան սեմին կազմակերպեց երաժշտանոցի ուսուցչական կազմի մտերմիկ հաւաք:

- Յաջորդաբար կազմակերպեց բոլոր կարգերու աշակերտներու ծնողական հաւաքներ:

- 26 Յունուար 2023-ին, կազմակերպեց աշակերտական համերգ եւ խաղեր, «Գ. Եսայեան» մուտքի սրահէն ներս:

- 15 Յոկտեմբեր 2022-ին երաժշտանոցի 2021-2022 տարեշրջանի շրջանաւարտ-

ներու վկայականաց բաշխման հանդեսը, «Լ. Շանթ» սրահէն ներս:

Երաժշտանոցի աշակերտներ երաժժշտական մարզէն ներս պատուաբեր արդիւնքներ ապահովեցին Սուրբոյ պիոներական շարժումի մրցումներուն: Ինչպէս նաեւ երաժշտանոցէն շրջանաւարտներ պատուաբեր ելոյթներ ունեցան ազգային եւ պետական ձեռնարկներուն:

- 14, 15 Յունիս 2023-ին կազմակերպեց ամսվերջի երկու աշակերտական համերգներ, Ա. Մանուկեան Ժ. Տան «Լեւոն Շանթ» սրահէն ներս:

- 25 Յունիս 2023-ին կազմակերպեց 2022-2023 տարեշրջանի վկայականաց բաշխման հանդէս, «Լեւոն Շանթ» սրահէն ներս: Հանդէսին, առաջին անգամ ըլլալով բեմ բարձրացաւ երաժշտանոցի աշակերտական նորաստեղծ լարային նուագախումբը, ղեկավարութեամբ՝ ջութակի ուսուցչուհի օրդ. Լուսիա Պանտաքի:

- Յուլիս 2023-ին, աշակերտական ամառնային դասընթացք կազմակերպեց: Դասընթացքը ընդգրկեց սոլֆեժի եւ երաժժշտական գործիքներու դասաւանդութիւն, որուն կողքին կատարեց նաեւ պտոյտներ եւ հիւրասիրութիւններ:

Վարչութիւնը այցելութիւն տուաւ առաջնորդ սրբազան հօր, ինչպէս նաեւ հիւրընկալեց անցեալին երաժշտանոցէն ներս գործած եւ այցելութեամբ Հալէպ ժամանած այցելուներ:

Երաժշտանոցը երժշտ. կատարումներով մասնակցութիւններ բերած է ուղեկից միութիւններու ձեռնարկներուն:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ՉՈՒԱՐԹՆՈՑ» ԵՐԳՉԱԽՄԱԲԱՅԻՆ ՄԻԱՄՈՐ

Համազգայինի «Չուարթնոց» երգչախումբային միաւորի վարչութեան աչալուրջ աշխատանքով, «Չուարթնոց» երգչախումբը իրագործեց հետեւեալները.



- 4 Յունուար 2023-ին, հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանին, Ս. Ծննդեան տօնին առիթով, երգ-

չախումբը յատուկ յայտագիրով ներկայացաւ «Ալ -Բարիէ ալ-Միլատիէ» խորագիրը կրող տօնական փառատօնին, ինչպէս նաեւ Հալէպի Ալ- Հաթապ հրապարակին վրայ: Այս առիթով, 5 Յունուար 2023-ին, վարչութիւնն ու անդամները, Շրջ. Վարչութեան գլխաւորութեամբ, Ազգ. Առաջնորդարանէն ներս շնորհակալական այցելութիւն տուին առաջնորդ սրբազան հօր:

- Երգչախումբը միանալով աշխարհի տարբեր երկիրներու մէջ բնակող հայրենակիցներուն, կատարեց Հայոց Սուրբ Ծնունդին նուիրուած «Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ» երգը, որ նկարահանուեցաւ Սրբ. Զառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ: Տեսերիզը տարածուեցաւ ընկերային ցանցերուն միջոցաւ եւ տեղ գտաւ երգչախումբի դիմատետրի էջին մէջ: Նախագիծի գաղափարը մտայղացումն էր Արմէն Սմբատեանի, իսկ համակարգողը՝ Մարգարիտա Կրտիկաշեան:

- Երգչախումբը իր մասնակցութիւնը բերաւ Շրջ. Վարչութեան կազմակերպած Համազգայինի 95-ամեակի Յորելենական հանդիսութեան: Երգչախումբը իր մասնակցութիւնը բերաւ նաեւ ազգային եւ պետական ձեռնարկներուն, երբեմն հանդէս գալով ուղեկից եւ տասնեակ երգողներով:

Երգչախումբը կը գործէ գեղարուեստական ղեկավարութեամբ տիկ. Գայիանէ Սիմոնեան- Տերեանի:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՄԻԱՄՈՐ

Համազգայինի Հայագիտական Հիմնարկը, որպէս արեւմտահայերէնի անադարտ պահպանման եւ տարածման օրրան,



վերանորոգ թափով իր գործունեութիւնը շարունակեց: Միաւորի Վարչութիւնը հիմնարկի դասախօսներուն եւ տնօրէնուհիին հետ համախորհուրդ, յաճախակի հանդիպումներով կարգաւորեց հիմնարկի կրթական կեանքը:

Հիմնարկի վարչությունը իրականացուց հետևելու գործունեությունները.

- Շրջ. Վարչութեան վաւերացումով, ի գործ դրաւ Հիմնարկի Գիտական Խորհուրդին վերամշակած ներքին կանոնագրութիւնը (1996-ին պատրաստուած Շրջանային Վարչութեան կողմէ), ինչպէս նաեւ ուսանողի յատուկ բաժինը եւ կանոնագրային տրամադրութիւնները: Ինչպէս նաեւ վերամշակման ենթարկուեցան կարգ մը դասանիւթեր, դասախօսներուն ներդրումով:

- 11 Մարտ 2023-ին, այցելութիւն տուաւ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Աշգարեանին, Շրջ. Վարչութեան ատենապետին, հիմնարկի դասախօսներուն եւ տնօրէնուհիին ընկերակցութեամբ:

- 16 Մարտ 2023-ին, հիմնարկէն ներս հիւրընկալեց Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Աշգարեանը:

- 11 Մայիս 2023-ին, վարչութիւնը դասախօսական երեկոյ մը կազմակերպեց, նուիրուած՝ հայ թատրոնի պատմութեան: Օրուան բանախօսն էր Լիբանանէն ժամանած թատերագիր, բեմադրիչ Վաչէ Ատրունիին:

- 21 Յունիս 2023-ին, հիմնարկի մեծ ընտանիքին ներկայութեան ողջերթ կատարեց, հիմնարկի վաստակաշատ դասախօս, գրող տիկին Լալա Միսկարեան-Միհասեանին, որ հիմնադրութեան առաջին օրէն, անելի քան 25 տարի, ամբողջական նուիրումով ու սիրով հայ գրականութեան շունչն ու ոգին փոխանցած է հիմնարկի ուսանողներուն:

- Օգոստոս-Սեպտեմբեր ամիսներուն կազմակերպեց հայերէնի տարրական գիտելիքներու ուսուցման դասընթացք, յատուկ սկսնակներու, դասատուներ ունենալով Լեւոն Շառոյեան եւ Մարիա Գաբրիէլեան: Հիմնարկը իր աշխատանքներուն մէջ ներգրաւեց նաեւ երկրէն դուրս գտնուող հիմնարկի նախկին դասախօսներ:

- 2023-2024 տարեշրջանին, ընթացք տուաւ առցանց դասաւանդութեան, Հալէպի ուսանողներուն կողքին առիթ ընծայելով Սուրիոյ զանազան շրջաններու եւ արտասահմանի մասնակիցներուն հետեւելու հիմնարկի դասաւանդութեան: Զաջալերական քայլով մը, վարչութիւնը 2023-2024 տարեշրջանին Սուրիոյ զանազան շրջաններու ուսանողներուն համար ուսումնառութիւնը անվճար յայտարարեց:

- Հիւրընկալեց նախապէս հիմնարկէն

ներս գործած եւ այցելութեամբ Հալէպ ժամանած անձնաւորութիւններ:

«ԼԵՒՆ ՇԱՆԹ» ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄԻԱՌՈՐ

«Լեւոն Շանթ» թատերական միաւորի վարչութիւնը յառաջացուց մշակութային յանձնախումբ եւ տիկնանց յանձնախումբ: Վարչութիւնը իրականացուց հետևելու գործունեությունները.

- 27 Մարտ 2023-ին, Թատրոնի միջազգային օրուան առիթով, իր մասնակցութիւնը բերաւ հալէպահայ հինգ թատերախումբերու համախմբումին կազմակերպութեամբ տեղի ունեցած ձեռնարկին:

- 13 Ապրիլ 2023-ին, բեմ բարձրացուց մանկապատանեկան թատերական ներկայացում «Կարմիր գլխարկիկը» խորագրով, «Գ. Եսայեան» սրահէն ներս: Թատրերգութեան աւարտին, Տիկնանց յանձնախումբին կողմէ «Կարմիր գլխարկիկը»-ին կարկանդակը հիւրասիրուեցաւ ներկայ գտնուող աշակերտներուն:



- 30 Մայիս 2023-ին, այցելութիւն տուաւ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Աշգարեանին, ընկերակցութեամբ՝ բեմադրիչ Վաչէ Ատրունիին եւ Շրջ. Վարչութեան ներկայացուցիչ Արա Մուրաֆեանին:

- 16, 17, 18 Յունիս 2023-ին, երեք օրեր յաջորդաբար հալէպահայ հանդիսատեսին ներկայացուց «Փայտոջիւներու Պահարանը» կատակերգութիւնը, լիբանանահայ վաստակաւոր թատերագիր, բեմադրիչ Վաչէ Ատրունիին բեմադրութեամբ, «Գ. Եսայեան» սրահէն ներս: Ելոյթներու աւարտին, Շրջ. Վարչութեան ձեռամբ յուշանուէրներով պարգեւատրուեցան Գեորգ Թիւթիւնճեանը՝ իր 50 տարուան ծառայութեան համար, Գեորգ Կարանեանը՝ իր 30 տարիներու ծառայութեան համար եւ բեմադրիչ Վաչէ Ատրունիին՝ թատրերգութեան բեմադրութեան համար:

95-ամեակը բոլորած Համազգայինը վերանորոգ թափով կը շարունակէ իր մշակութային երթը, հայ մշակոյթի պահպանման եւ զարգացման նպաստելով:



ՍՈՒՐԻՈՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ՝ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՌԱՅԿԻՐԱՅ

Համայնքի մը երիտասարդութիւնը հայելին է անոր գոյերթին: Երիտասարդութեան աշխոյժ գործունէութիւնը յոյս ու կորով կը ներշնչէ եւ ամենէն դժխեմ պայմաններուն մէջ անգամ կեանքի գունաւոր երանգները կը պարզէ:

Սուրիոյ Երիտասարդական Միութիւնը ազգային դաստիարակութեան, հայ երիտասարդի կերտման, անոր նկարագրի ձեւաւորման ու հաւաքական աշխատանքի պատրաստութեան նպաստող միջավայր մըն է, ուր երիտասարդութիւնը ոչ միայն հայ ազգին ու Հայաստան աշխարհին առնչուող գիտելիքներով կը հարստանայ, այլեւ գրուցելու, անկաշ-



կանդ կարծիք արտայայտելու, քննական միտք ձեւաւորելու եւ հաւաքական աշխատանքի մաս կազմելու կազմակերպչական հմտութիւններ ձեռք կը բերէ, գաղափարական հիմքով կը հարստացնէ իր աշխարհահայեացքը ու կամաւոր ծառայութեան պատրաստակամութեամբ կը սատարէ միութեան ծրագիրներու իրականացման:

Ստորեւ կը ներկայացնենք համառօտ պատկեր մը ՍԵՄ-ի վերջին շրջանի գործունէութենէն.

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս տարեշրջանին Սուրիոյ Երիտասարդական Միութիւնը կազմակերպեց զանազան նիւթերով սեմինարներ եւ դասախօսութիւններ, ինչպէս՝

Ա) Քաղաքական Սեմինար Լաթաքիոյ մէջ, որուն հիմնական նպատակն էր միութեան բոլոր մասնաճիւղերէն ներկայացող մասնակիցներու գիտելիքներու հարստացումը, անոնց քաղաքական մտածելակերպի ձեւաւորումը, ինչպէս նաեւ շրջաններու աշխուժացումն ու ընդհանուր մթնոլորտի բարելաւումը: Սեմինարի ընթացքին ներկա-

յացուեցան օգտաշատ գիտելիքներ ու տեղեկութիւններ, տեղի ունեցան դասախօսութիւններ, զրոյցներ եւ գործնական աշխատանքներ (workshop):

Բ) Մարդակերտման սեմինար, որուն ընթացքին ներկայացուեցան «Ինքնաճանաչում եւ Ինքնագարգացում», «Ղեկավարութիւն», «Դասախօսութիւն Պատրաստելու Հմտութիւն» եւ «Մարմնի Լեզուն (Body Language)» նիւթերը:

Գ) Հարցազրոյցի (interview) եւ CV-ի պատրաստութեան սեմինար:

Դ) Ռազմաքաղաքական ընդհ. գիտելիքներու սեմինար:

Սեմինարներուն կողքին կազմակերպուեցաւ նաեւ միութեան 12-րդ կարգի երի-

տասարդներուն Յալէպի համալսարանական մասնագիտութիւններու ծանօթացման հանդիպում մը:

Միութիւնը այս տարուան ընթացքին իրագործեց նաեւ հարց-պատասխանի մըրցումներ, յատկապէս՝ միջդպրոցական հարց-պատասխանի մրցոյթ մը «Յայ Poly» վերնագիրով Յալէպի հայկական վարժարաններու միջնակարգի աշակերտութեան մասնակցութեամբ, ինչպէս նաեւ ԱԶԵ Ճեմարանի 11-րդ կարգի աշակերտութեան միօրեայ գործունէութիւն մը (Open day), որպէսզի գիրեք ծանօթացնէ ՍԵՄ-ի աշխատանքին ու առաքելութեան:

Միութիւնը թելեկրամի վրայ պատրաստեց հայ-Intelligence անունով հարց-պատասխանի խաղ-մրցում, որ մեծ ընդունելութիւն գտաւ մասնակիցներուն կողմէ: Կազմակերպուեցան նաեւ ճատրակի եւ ունազնդակի մրցաշարքեր:

ՍԵՄ-ը տարուան ընթացքին այցելեց նախ Յայ Ծերանոց, ուր խումբ մը ընկերներ Նոր Տարուան եւ Ս. Յարութեան զոյգ տօներուն առիթով հանդիպեցան հայ մամիկներուն եւ պապիկներուն հետ, իսկ Մայրերու Օրուան առիթով 21 Մարտ 2023-ին, խումբ մը ընկերներ այցելեցին հալէպահայ նահատակներու մայրերուն:

- 23 Ապրիլ 2022-ին, Յայոց Յեղասպանութեան 108-րդ տարելիցին առիթով տեղի ունեցաւ ժողովրդային ջահերթ-մոմավառութիւն ԱԶԵ Ճեմարանի շրջափակէն դէպի Ազգ. գերեզմանատուն, ուր տեղի ունեցաւ ծաղկեմատոյց: Բեսապի, Լաթաքիոյ, Դամասկոսի եւ Գամիշլիի մէջ եւս տեղի ունեցան միութեան մասնաճիւղերուն կազմակերպած ապրիլեան ժողովրդային մոմավառութիւն-ձեռնարկները:

- Լիզպոնի 5 նահատակներու ոգեկոչումը ամէն տարի տեղի կ'ունենայ 27 Յուլիսին, 2023-ի նոյն օրը միութիւնս այցելեց Ազգ. գերեզմանատան մէջ գտնուող Լիզպոնի տղոց յիշատակին տեղադրուած յուշակոթող եւ ծաղկեպսակ գետեղեց այնտեղ, ոգեկոչելու գործունէութեան 40-րդ տարելիցը եւ յարգելու պայթարող ընկերներուն օրինակը: 23 Յուլիս 2023-ին, Բեսապի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ եւս տեղի ունեցաւ Լիզպոնի հինգ հերոսներու գործունէութեան 40-ամեակին յիշատակումն ու հոգեհանգստեան արարողութիւնը:

Արցախեան 44 օրեայ պատերազմի նահատակներու ոգեկոչումը տեղի ունեցաւ 5

Նոյեմբեր 2022-ին, Ազգ գերեզմանատան մէջ, ընկ.Յարութ Բանոյեանի, ընկ. Մոսիկ Սեքլեմեանի եւ ընկ. Յակոբ Ասթարճեանի նահատակութեան երկրորդ տարելիցին առիթով:

Ազգին ու հայրենիքին համար պայքարող հայ երիտասարդները միշտ ալ մնացին ՍԵՄ-ի կիզակետին մէջ, անոնց յիշատակի ոգեկոչումը պայքարի ճամբան շարունակելու ուղերձն էր յստակ:

Վերջին երկամեակին կազմակերպուեցան նաեւ.

Ա) Ժողովրդային Երգահանդէս 4 Դեկտեմբեր 2022-ին, ազգային, յեղափոխական երգերու մեկնաբան Սուրբն Աճեմեանի կատարողութեամբ, Յալէպի «Գ. Եսայեան» սրահէն ներս:

Բ) Միջմասնաճիւղային երկու բանակումներ Բեսապի ՅՄԸՄ-ի բանակավայրէն ներս, որոնք նուիրուած էին Արցախի եւ յատկապէս Շուշիի մարտերուն ընթացքին նահատակուած ընկ. Յարութ Բանոյեանի եւ ընկեր Յակոբ Ասթարճեանի յիշատակին: Յակառակ երկրէն ներս տիրող տնտեսական ծանր պայմաններուն եւ սղածին, ճիգ չխնայուեցաւ ամէն գնով յաջողցնելու բանակումները: Բանակումներու դաստիարակչական ծրագիրը կ'ընդգրկէր դասախօսութիւններ, գրոյցներ, երգի ուսուցում, արշաւներ, յանձնախումբերու աշխատանք եւ ռատիօ ժամի յայտագիր:

Այս ժամանակաշրջանին միութիւնը տպագրական, հրատարակչական ոլորտին մէջ հրապարակեց օրացոյց, պատրաստել տուաւ յատուկ գազակներ, յուշատետրեր, յուշանուէրներ եւ գլխարկներ:

Յատկանշական է նաեւ Սուրիոյ Երիտասարդական Միութեան ընկերներուն տարած աշխատանքը Յալէպն ու Լաթաքիան հարուածած աղետալի երկրաշարժի ընթացքին՝ մարդասիրական զանազան աշխատանքներու մասնակցութեամբ, ինչպէս՝ պաշարներու դասաւորում եւ երկրաշարժէն տուժողներու օգնութիւն:

24 Ապրիլին միութիւնս մասնակցեցաւ նաեւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահէն ներս տեղի ունեցած արեան տուչութեան եւ ծաղկեմատոյցին:

Սուրիոյ Երիտասարդական Միութիւնը իր վեց մասնաճիւղերով կը շարունակէ հաւաքական կազմակերպ աշխատանքի ատակ երիտասարդ մարդուժի պատրաստութեան դարբնոցը հանդիսանալ:





ՍՈՒՐԻՈՅ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ՝ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌՈՂՋ ՄԻՋԱՎԱՅՐ

Սուրիոյ Պատանեկան Միութեան վեց մասնաճիւղերու մէջ հայ պատանի-պարմանուհիները կը հետեւին ընկերային եւ դաստիարակչական ծրագրի, վարժութիւն ձեռք կը ձգեն ազատօրէն արտայայտուելու, ինքնավստահ դառնալու, աշխատանք կազմակերպելու, կը հարստացնեն իրենց գիտելիք-

Միութեան «Սերժ Թովմասեան» մասնաճիւղի վարչութիւնը կազմակերպեց՝ Հայ-Board-ը, որուն գլխաւոր նպատակն էր քաջալերել հայ պատանին հայերէն ստեղնաշարը օգտագործելու՝ շարք մը հարցումներու պատասխանելով, բառերու հոմանիշներն ու հականիշները գրելով, երգերու բառերը ամ-



ները՝ ընթերցելով, դասախօսութիւն կարդալու վարժութիւն ունենալով, ազգային-յեղափոխական երգեր սորվելով եւ իրենց ձիրքերը զարգացնելով:

Տարուան ընթացքին միութեան կազմակերպած գլխաւոր աշխատանքներէն քանի մը հատը յիշենք.

-Արդի աշխարհին հետ կապ պահելու եւ մեր մշակոյթը, լեզուն իւրացնելու եւ ճիշդ ձեւով օգտագործելու համար կարիք ունինք արդիականացման: Պատանիներուն համար կարեւորագոյն ու առաջին քայլը հայերէն լեզուով գրաշարելու վարժութիւն ձեռք ձգելն էր համացանցի տարբեր հարթակներուն, նոյնիսկ անձնական մեր էջերուն վրայ: Առ այդ, Սուրիոյ Պատանեկան

բողջացնելով, ինչպէս նաեւ հակիրճ շարադրութիւններ պատրաստելով՝ իր հեռաձայնին հայերէն ստեղնաշարի գործածութեամբ: Աւարտին յաղթող խումբի անդամները պարգեւատրուեցան օգտաշատ հայերէն գիրքերով:

-Հինգշաբթի, 19 Յունուար 2023-ին «Սողոմոն Թեղիբեան» կեդրոնէն ներս տեղի ունեցաւ «Արամ Մանուկեան» մասնաճիւղի վարչութեան կազմակերպած միջմասնաճիւղային «Հայերէն Լեզուի Մրցանակ»-ը:

Հալեպի զոյգ մասնաճիւղերու իւրաքանչիւրէն 10 պատանի-պարմանուհիներ իրենց մասնակցութիւնը բերին սոյն մրցանակին:

Մրցումին հինգ բաժիններն էին՝ ընթերցանութիւն, շարադրութիւն, բառերու

իմաստներ, հեքել եւ բերանացի անսխալ արեւմտահայերէն օգտագործելով հարցումներու պատասխանել:

Ժիւրիին կողմէ կիշեր տրուելէն ետք, ամենաբարձր կիշ հաւաքող խումբն ու իւրաքանչիւր կարգէ գերազանց մասնակցութիւն ունեցող պատանի-պարմանուհիները պարգեւատրուեցան խորհրդանշական յուշանուէրներով:



-Պատանիները միշտ վառ կը պահեն հայրենիքին ու ազգին համար զոհուած ազատամարտիկներուն յիշատակը, խոստանալով դառնալ տիպար եւ աշխատասեր հայ պատանիներ ու դրական գործերով նպաստել իրենց ընկերային միջավայրի առողջ ու հայեցի պահպանման: Այս առումով ամենադուրսին դարձած է ամէն տարի 27 Յուլիսին այցելել Ազգային գերեզմանատուն՝ ոգեկոչելու Լիզպոնի Գործունեութեան 40-ամեակը եւ վերյիշելու անոնց կենսագրութիւնն ու հերոսական գործողութիւնը:

-21-27 Օգոստոս 2023-ին տեղի ունեցաւ Սուրիոյ Պատանեկան Միութեան տարեկան բանակումը, որ կոչուեցաւ «Սիմոն Չաւարեան» բանակում, առ ի ոգեկոչում ՀՀԳ հիմնադիրներէն Դաշնակցութեան խիղճը խորհրդանշող ռահվիրային՝ Սիմոն Չաւարեանի:

Ընդի. Վարիչ Մարմինի կողմէ կազմակերպուած այս բանակումը իւրայատուկ մըթնոլորտ ուներ: Անոր կը մասնակցէին Սուրիոյ վեց մասնաճիւղերը՝ «Քրիստափոր», «Ռոստոմ», «Չաւարեան», «Արցախ», «Սերժ Թովմասեան» եւ «Արամ Մանուկեան»:

Բանակումի օրակարգերը կ'ընդգրկէին դասախօսութիւններ, զրոյցներ, ազգային-յեղափոխական երգերու ուսուցում եւ դաշտային ու դաստիարակչական խաղեր: Օրուան ընթացքին տեղի կ'ունենային նաեւ յանձնախմբային աշխատանքներ, որոնց ընդմէջէն պատանիները հաւաքական աշխատանքի վարժութիւն ձեռք կը ձգէին: Այդ յանձնախումբերէն յիշենք յատկապէս՝ հաղորդումներ պատրաստելու յանձնախումբը, որուն պարտականութիւնն էր տեսանիւթեր պատրաստել եւ գետնէ վիութեան դիմատետրի էջին վրայ:

Բանակումը իր ամառային հասաւ ամենադական խարուկահանդեսով, որուն ընթացքին պատանիները հրաւիրեալներուն իրենց բանակումի եօթնօրեայ աշխատանքը ցոյց տուին:

Բանակումը պատանիներուն համար ե՛լ դաստիարակչական ե՛լ ընկերային կեանքի եզակի առիթ մըն է, որուն ընթացքին շրջաններու պատանիները կը ծանօթանան եւ սերտ ընկերներ կը դառնան:



-7 Հոկտեմբեր 2023-ին Սուրիոյ Պատանեկան Միութեան անդամները կրկին այցելեցին Ազգ. գերեզմանատուն՝ յարգանքի տուրք մատուցելու Շուշիի մարտերուն նահատակուած մեր ընկերներուն՝ Յարութ Բանոյեանի, Մոսիկ Սեքլեմեանի եւ Յակոբ Աստարճեանի, ինչպէս նաեւ հալէպահայ նահատակներ Ռաֆֆի Պչաքճեանի եւ Սահակ Նալպաստեանի յիշատակին ու ծաղկե-

պասկ գետեղելու անոնց յուշակոթողներուն դիմաց, որպէս խոստում հայօրէն գոյատեւելու եւ հայեցի դաստիարակութեամբ տոգորուելու:

Պատանեկան Միութեան շարքերէն ներս հայ պատանին կ'աղերսուի նաեւ Հայ գրականութեան, Հայոց պատմութեան եւ աշխարհագրութեան, ինչպէս նաեւ հայ ժողովուրդի ազատագրական պայքարի պատմութեան, յատկապէս ֆիտայիներու կեանքին ու գործին:

Այս նիւթերով 20 Հոկտեմբեր 2023-ին ԱՄՏ Տան «Լեւոն Շանթ» սրահէն ներս տեղի ունեցաւ «Արամ Մանուկեան» մասնաճիւղի վարչութեան կազմակերպած «Հայ Ասպետ»-ի մրցանակը: Մրցոյթին նպատակն էր նոր գիտելիքներ սորվիլ եւ զանոնք ինքնավստահութեամբ ներկայացնել հանդիսատեսին եւ ժիւրիի անդամներուն:

Մրցումէն շաբաթ մը առաջ մասնակից պատանիները գըրքոյկ մը ստանալով պատրաստուած էին մրցումին՝ հարստացնելով իրենց գիտելիքները:

Մրցումը աւարտին հասաւ առաջին հանդիսացող խումբին ու անհատական գերազանց ներկայացում ունեցող պատանիին պարգեւատրումով:

-Սուրիոյ Պատանեկան Միութեան Ընդհանուր Վարիչ Մարմինին կազմակերպութեամբ, 25-26 Նոյեմբերին տեղի ունեցաւ աւարտական կարգերու երկօրեայ սեմինար, որուն մասնակցեցան Հայլէպի «Ս.Թովմասեան» եւ «Ա.Մանուկեան», Լաթաքիոյ «Արցախ», Զեսապի «Քրիստափոր» եւ Դամասկոսի «Ռոստոմ» մասնաճիւղերու պատանիները: Սեմինարի ընթացքին կը տիրէր ջերմ ու մտերմիկ մըթնոլորտ մը, ուր պատանիները կը ծանօթանային իրարու եւ կը գրուցէին իրենց առօրեային շուրջ:

Բժախնդրօրէն պատրաստուած էին դաստիարակչական դասախօսութիւններն ու նիւթերը, որոնց նպատակն էր՝ պատանիներուն մէջ ամրապնդել ազգային գիտակցութիւնն ու հայեցի կրթութիւնը, վարժեցնելով որ հարցերը քննեն բազմակողմանիօրէն եւ քննական մտածողութեամբ օժտուին: Իւրաքանչիւր դասախօսութենէ ետք պատանիները խմբային աշխատանք կը տանէին: Անոնք լրջութեամբ կը հետեւէին

օրակարգի կետերուն:

-Արցախի զօրակցական հաւաք
ՀՅԴ Սուրիոյ Պատանեկան Երիտասարդական եւ Ուսանողական միութիւնները իրենց աջակցութիւնը յայտնեցին Արցախին: 19 Մարտ 2023-ին ԱԲԵԾ-ի մէջ պատրաստեցին տեսերիզ մը ցոյց տալու, թէ մենք միշտ Արցախի կողքին ենք խօսքով ու գործով: Արտասանուած կարգախօսներէն էին. «Ազատատենչ Արցախի ազատատենչ ժողովուրդ՝ ազատ, ապահով եւ խաղաղ կեանք մը ապրելու իրաւունքը ունի», «Բացէ՛ք կեանքի ճանապարհը» եւ «Միրելի Արցախի հայրենակիցներ ձեր կողքին ենք խօսքով ու գործով»:

Իսկ 16 Ապրիլ 2023-ին Սուրիոյ Պատանեկան Միութիւնը իր մասնակցութիւնը բերաւ Արցախի զօրակցական հաւաքին, որ



տեղի ունեցաւ ԱԲԵԾ-էն ներս: Ընկերները մասնակցեցան երգչախումբով եւ երգեցին շարք մը հայրենասիրական երգեր՝ գեղարուեստական ղեկավարութեամբ ընկեր Յովիկ Պարսումեանի: Յիշենք, որ այդ օրուան բանախօսն էր Արցախի ազգային ժողովի վերջին նախագահ ընկեր Դաւիթ Իշխանեան:

-ՀՅԴ Բիւրոյի երիտասարդական գրասենեակը կազմակերպեց «Պատանի Ախոյեան» մրցանակը, որ կ'ընդգրկէր ասմունք, ճարտասանութիւն, դրուագ, ազատ նիւթ: Իւրաքանչիւր մրցումի աշխարհի գանազան երկիրներէն պատանիներ մասնակցեցան: Աշխոյժ մրցակցութենէ ետք, մեր դժուար պայմաններն ու խոչընդոտները յաղթահարելով Սուրիոյ մասնակիցները իրաւարար կազմին գնահատանքին արժանացան: 2023 տարուան «Չաւարեան» բանակումի խարուկահանդեսին պարգեւատրուեցան Սուրիայէն մասնակցած 10 պատանիները եւ գնահատանքի արժանացան:

ՍՓԻՌԵԻ ՏՎԻՆ



ՔԵՍԱՊԻ ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Նախաբան

Հայ դպրոցի դերն ու կարելությունը մեր ազգային կեանքին մեջ անփոխարինելի են՝ ըլլալով մարդակերտումի եւ հայակերտումի առաջին դարբնոցը:

Հայ դպրոցի կենսական նպատակներն է հայեցի դաստիարակություն ջամբել՝ սորահաս սերունդներուն: Աւելին, ա՛յս է անոր առաքելությունը:

Քեսապի մեջ կրթական կազմակերպուած գործը սկիզբ առած է 19-րդ դարու կեսերէն, ուսումնական ու հայեցի կրթութեան բեղուն գործունեութիւն ունեցած է՝ ազգին տալով անուանի կղերականներ, բժիշկներ, ազգային գործիչներ, ուսուցիչներ եւ այլն: Անցեալի պատկերը ներկայիս փոխուած է. Ինչպէս Սուրիոյ այլ շրջաններուն մեջ, նոյնպէս Քեսապի պարագային Հայ դպրոցը լուրջ հարցականներու առջեւ կը գտնուի՝ պայմանաւորուած 2011-էն սկսած պատերազմական վիճակին բերումով եւ ապա տընտեսական տագնապի հետեւանքով յառաջացած փոփոխութիւններով: Գաղութի հայութեան թիւը զգալիօրէն նօսրացած է, որ առաջին հերթին ակներեւ է դպրոցներուն թուաքանակի անկումին ընդմէջէն: Կրթական մարզի պայմաններն ու հարցերը շրջանէ շրջան կրնան տարբեր ըլլալ, սակայն հասարակաց իրողութիւնը կը մնայ ա՛յն, որ անցեալի Հայ դպրոցը այսօր կը ներկայանայ տարբեր պատկերով՝ իր առաւելութիւններով ու թերութիւններով: Ստեղծուած է նոր իրավիճակ, որ ստեղծած է նոր հարցականներ, որոնք անհրաժեշտաբար կը պահանջեն վերատեսութեան եւթարկել նախկին որոշ պատկերացումներ, որդեգրել համապատասխան գործելակերպային մօտե-

ցում, կատարել մասնագիտական սերտողութիւն եւ անկէ բխող արդիւնքներուն վրայ կատարել անհրաժեշտ բարեփոխութիւններ:

Քեսապի մեջ ներկայիս կը գործեն հետեւեալ հայկական վարժարանները.

ա. - Հայ Աւետարանական Միացեալ Վարժարան (Մանկապարտեզ եւ Նախակրթարան),

բ. - Հայ Կաթողիկէ Բարեյուսոյ Վարժարան (Մանկապարտեզի եւ Նախակրթարանի բաժիններով),

գ. - Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ճեմարան (Մանկապարտեզէն երկրորդական):

Կը գործէ նաեւ պետական նախակրթարան, նաեւ միջնակարգ եւ երկրորդական վարժարան՝ միւլեւնոյն շրջափակէն ներս, երկու անջատ դպրոցաշէնքերու մեջ: Պետական Նախակրթարանի եւ Միջնակարգի մեջ հայ աշակերտ չունիւք, երկրորդականի մեջ այս տարեշրջանին կը յաճախեն 3 հայ աշակերտ-աշակերտուհիներ (Գրական բաժին):

Հայ Աւետարանական Նահատակաց Վարժարան¹

(Ներկայացնող՝ Վարժարանի Տնօրէնուհի Անի Թրթռեան-Պոյմուշաբեան)*

«Համաշխարհայնացման եւ ճարտարագիտական նորարարութիւններու հոսանքին դէմ՝ հոգեւոր կրթութիւնը կը մնայ առաջնայինը»:

Պատմական Ակնարկ

1852-ին խումբ մը հաւատացեալներու ջանքերով, դժուար պայմաններու մեջ հիմը կը դրուի Քեսապի Հայ Աւետ. Վարժարանին, որուն կառուցումէն մէկ տարի ետք, 1853-ին, կը հիմնուի Քեսապի Հայ Աւետարանական եկեղեցին:

1852-ին քսան աշակերտները բաղկացած այս դպրոցը ներկայիս բնաշխարհի մեջ գտնուող Հայ Աւետարանական համայնքի հնագոյն դպրոցն է:



1857-ին՝ այր ու կին, չափահաս եւ մանուկ՝ թիւով 251, վարժարանին աշակերտութեան մաս կազմած են: վարժարանը ունեցած է տղոց եւ աղջկանց անջատ դպրոցաշէնքեր:

1908-ին դպրոցի աղջկանց բաժինը օժտուած է գիշերօթիկի բաժինով եւ դպրոցը վերածուած է բարձրագոյն վարժարանի: Իսկ մանչերու վարժարանը՝ 1874-1884-ի միջեւ վերածուած է միջնակարգի:

1908-ին աշակերտութեան թիւը հասած է 472-ի: 1909-ի ջարդերուն, թուրքերը քանդած ու այրած են դպրոցաշէնքերը, սակայն մէկ տարի ետք, 1910-ին վերակառուցուած են երկու դպրոցաշէնքերը:

1855-1911-ին վարժարաններուն հսկողութիւնը կատարած են ամերիկացի միսիոնարները, իսկ 1911 թուականէն՝ Քեսապի Հայ Աւետարանական եկեղեցին: Ուսուցչական կազմերու անդամները եղած են ընդհանրապէս Այնթապի Թուրքիոյ Կեդրոնական Գոլէճէն:

Վարժարանը գաղութին տուած է բազմաթիւ ուսեալ շրջանաւարտներ, ինչպէս՝ տոքթ. Սողոմոն Աբելեան, որ 1890-ին եղած է առաջին հայ շրջանաւարտ բժիշկը Պէյրութի Ամերիկեան Համալսարանի Բժշկական դպրոցէն եւ տոքթ. Ծերոն Զիւրիքեան, որ 1908-ին եղած է ամենափոքր վկայեալ բժիշկը (21 տարեկան) Պէյրութի Ամերիկեան Համալսարանի նոյն դպրոցէն:

1914-ին, տարագրութեան նախօրեակին, Քեսապի եւ շրջանի Հայ Աւետարանական վարժարաններու աշակերտութեան թիւը հասած է 900-ի:

Այնուհետեւ 1924-ին, տարագրութենէն ետք, վերաբացուած է մանկապարտեզի եւ

Նախակրթարանի բաժիններով: Բարձրագոյն դասարանի աշակերտները իրենց ուսումը շարունակած են տեղւոյն Ուսումնասիրաց Ընկերութեան Երկրորդական վարժարանէն ներս: 1935-ին վարժարանը կը դառնայ բարձրագոյն Նախակրթարան՝ ընդգրկելով 260 աշակերտ, իսկ 1942-ին կը վերածուի իննամեայ միջնակարգ վարժարանի, իսկ 1967-ին կ'ունենայ միայն մանկապարտեզ եւ Նախակրթարան՝ արտագաղթի պատճառով աշակերտութեան թիւը զգալիօրէն նուազելով եւ կառավարական մակարդակով դպրոցը միջնակարգ պահելու համար բաւարար պիտոճէ չունենալուն պատճառով:

1981-1982 տարեշրջանին, Քեսապի շրջաններուն վերջին մանկապարտեզներն ալ կը փակուին ու կը միանան Քեսապի վարժարանին, որ կը վերանուանուի Քեսապի Հայ Աւետարանական Նահատակաց Միացեալ վարժարան:

1988-1990-ին վարժարանը կ'ունենայ իր նոր դպրոցաշէնքը եւ աշակերտութեան թիւը կը հասնի 125-ի:



2002-2003 տարեշրջանին, վարժարանը մեծ շուքով կը կշէ իր հիմնադրութեան 150-ամեակը: Նոյն տարեշրջանին դպրոցը կ'ունենայ 64 աշակերտ եւ դպրոցի շրջանաւարտներէն՝ 29 համալսարանական ուսանող:

1874-2023 Վարժարանը ունեցած է 20 տնօրէն՝ 17-ը պատուելի հովիւներ, 3-ը՝ աշխարհական: Ամենէն երկար պաշտօն վարած են Վեր. Արտաշէս Գերպապեան՝ 18 եւ Անի Աբելեան 28 տարի:

Վարժարանի Վերջին Տասնամեակի Իրավիճակը

2014-ին, Քեսապի տեղահանութեան շրջանին, վարժարանը ենթարկուեցաւ կողոպուտի եւ հիւթական մեծ վնասներու: Սա-

կայն նոյն տարին իսկ Հայ Աւետարանական համայնքապետին եւ Կրթական Խորհուրդին ջանքերով, բնակչութեան Քեսապ վերադառնալէն ետք, վարժարանը վերստին բացաւ իր դռները՝ նորոգուած յոյսով, հաստատուն կամքով եւ դիմագրաւելով նոր մարտահրաւերներ: Գլխաւորը հայ աշակերտութեան թիւի նուազումն է եւ օտար (ոչքեսապցի) աշակերտներու թիւի աճը: Ասոնց կողքին տնտեսական ծանր պայմանները, անապահովութեան զգացողութեան շարունակումը, ժողովուրդին մօտ գալիք օրերուն նկատմամբ անորոշութիւնը եւս մարտահրաւերներ են, առաւել կան նուազ չափով:

Տիրող պայմաններուն առընթեր վերջին տասնամեակին հայ աշակերտութեան թիւը զգալի կերպով նուազած է: Հպարտութեան առթանքի երեւոյթ է ուսուցչուհիներուն մեծամասնութեան հայ, վկայեալ եւ երիտասարդ ըլլալը, եւ որոնք յետ իրենց մասնագիտական ուսումին, վերադառնալով իրենց գիւղը, այսօր կը ծառայեն վարժարանէն ներս:

Վարժարանս կը վայելէ Սուրբոյ Հայ Աւետ. Համայնքապետ Վերապատուելի դոկտ. Յարութիւն Սելիմեանի հովանաւորութիւնն ու Համայնքի Կրթական Խորհուրդի նիւթաբարոյական աջակցութիւնը: Տնօրէնութիւնն ու ուսուցչական կազմը համագործակցաբար կ'աշխատին իրենց լաւագոյնը ընելու՝ բարձրացնելու համար վարժարանին կրթական եւ դաստիարակչական մակարդակը՝ պատրաստելով տիպար քաղաքացիներ եւ ողջմիտ սերունդ:

Հարիւր եօթանասունմեկ տարիներու ընթացքին, Քեսապի Հայ Աւետարանական Նահատակաց Միացեալ Վարժարանը տուած է բազմաթիւ շրջանաւարտներ, որոնք յետ մասնագիտական ուսման եղած են մասնագետներ եւ վարած են տարբեր պաշտօններ Քեսապի ու այլ գաղութներուն մէջ, ինչպէս՝ Միջին Արեւելքի, Միացեալ Նահանգներու եւ Քանադայի մէջ:

- 2023 - 2024 տարեշրջանին աշակերտութեան ընդհանուր թիւն է 51
- Հայ աշակերտներուն թիւը՝ 6
- Ընդհանուր ուսուցչական կազմին թիւը՝ 14
- Հայ ուսուցիչներու թիւ՝ 11
- Առաւել երկու պաշտօնեաներ՝
- Օթօքարի վարիչ (հայ)
- Դպրոցի հոգատար մայրիկ (ոչ հայ)
- Որպէս շրջանաւարտ մէկ աշակերտու-

հին այս վարժարանին եւ ապա՝ ուսուցչուհի եւ տնօրէնուհի, քսաներեք տարիներու փորձառութեամբս այսօր անգամ մը եւս պարտք կը զգամ յիշելու եւ յիշեցնելու Հայ դպրոցի գոյութեան, պատճառին եւ ընթացքին անհրաժեշտութիւնը: Հայ դպրոցը պէ՛տք է գոյատեւէ, որովհետեւ ան կարելոր սիւներէն մէկն է հայ ազգի գոյատեւման: Հո՛ն է որ մանուկը կը կրթուի, կը դաստիարակուի, կը սորվի եւ ուսում առնելով՝ կը զարգանայ դառնալու տիպար անձ եւ տիպար հայորդի: Ինչպէս ամէն սերունդ իր ժամանակի ծնունդն է եւ պէտք է քալէ իր ժամանակին հետ՝ շրջափոխութեան օրէնքին ենթակայ, նոյնպէս մենք՝ որպէս նոր սերունդի պատկանող անձեր՝ ապրելով հանդերձ տեղական պահանջներու թելադրանքով, պարտաւոր ենք պահպանել մեր նախնեաց բարոյական դիմագիծն ու ազգային-կրօնական ժառանգութիւնը եւ կամրջել նոր սերունդին ներկայի պէտքերը իր ապագայի հեռանկարին հետ: Վստահելով Աստուծոյ շնորհքին եւ առաջնորդութեան, կը յուսանք որ պիտի շարունակենք մեր երթը՝ հաւատարիմ մնալով մեր կոչումին եւ առաքելութեան:

* * *

Հայ Կաթողիկէ Բարեյուսոյ Վարժարան²
(Ներկայացնող՝ Վարժարանի Տնօրէնուհի Սալբի Թիթիգեան)**

«Իրապաշտ ըլլանք, ապագան այնքան ալ յստակ չէ եւ կը կարօտի մեր բոլորին աջակցութեան»:

Հայ դպրոցը երկրորդ տունն է հայ մանուկին եւ աշակերտին: Այդ դպրոցներէն մին



եղած է՝ Քեսապի Հայ Կաթողիկէ Բարեյուսոյ վարժարանը երկար տարիներու ընթացքին: Քեսապի Հայ Կաթողիկէ առաջին յիշուած դպրոցը կառուցուած է Աստուծան

հայրերու կողմէ, 1861-ին: Մեզի ծանօթ կաթողիկէ առաջին վարժարանը կը բանայ Չըմմառեան շրջուն քարոզիչ՝ Վրթանէս վրդ. Եուզուքեանը, 1864-ին: 1880-էն ետք ընդհատաբար կը գործէ մանչերու դպրոց մը: 1904-ին Կաթողիկէ եւ Նորակազմ լատին համայնքները կը միացնեն դպրոցական կըրթական գործը, զոր կը ղնեն լատին Ֆրանչիսկեան Թերրա Սանթա Առաքելութեան իտալացի հայրերու տեսչութեան տակ: Վանահայր Սապաթիս Տէլ Կայծօ 1905-էն սկըսեալ դպրոցին հոգ կը տանի: 1909-ի աղետէն ետք Յայր Սապաթիս կառուցել կու տայ դպրոցական շէնք մը, որ կը գործածուի նաեւ իբրեւ վանք ու եկեղեցի: 1919-1921 կը պահէ փոքրիկ որբանոց մը, եւ 1921-ին վերստին կը բանայ իր դպրոցը: Այս շրջանին դպրոցը փայլուն յաջողութիւններ կ'արձանագրէ: 1925-ին կ'ամբողջացնէ Լատինաց վանքի Նոր համալիրը, որուն մէջ աչքի կը գարնէ դպրոցի երկյարկանի Նոր շէնքը: Այդ ատեն, դպրոցը եղած է հնգամեայ նախակրթարան: 1930-ին Աղջկանց բաժնի դաստիարակութիւնն ու մանկապարտէզը կը յանձնուին Անարատ Յղութեան Յայ Բոյրերուն:

1946-ին, Բեսապի շրջանի լատին համայնքը կը լուծուի: 1950-ին քոյրերը կը լքեն իրենց գործը: Դպրոցը ամբողջապէս կ'անցնի Բեսապի կաթողիկէ ժողովրդապետութեան: 1967-1974 դպրոցը փակ կը մնայ Սուրիոյ բոլոր կաթողիկէ վարժարաններուն պէս:

1974-ին կը վերաբացուի Նոր արտօնագրով եւ Նոր անունով՝ Բարեյուսոյ վարժարան: Նախակրթարան է եւ ունի մանկապարտէզ: 1997-ին կը Նորոգուի եւ կը բարեզարդուի Գալուստ Կիւլպէնկեան հաստատութեան նպաստով եւ կ'ունենայ Նոր յարկ մը: Վարժարանս, իր տեսչական եւ ուսուցչական կազմերով, կը պահէ իրեն վստահուած կրթական-բարոյական եւ ազգային-հոգեւոր դաստիարակութիւնը: Վարժարանը տուած է մեծաթիւ շրջանաւարտներ:

2014-ին սուրիական հայրենիքին մէջ ծայր առած ցաւալի իրադարձութիւններէն ետք եւ ցարդ վարժարանը կը դիմագրաւէ բազմապիսի մարտահրաւերներ, իսկ հայ աշակերտութեան թիւը աւելի ու աւելի կը նուազի տարբեր պատճառներով: Սակայն, որպէս սփիւռքահայ վարժարան, ան իր սեփական ուժերով եւ անխոնջ ուսուցչակազմով, որոնց մեծամասնութիւնը ընդ-

հանրապէս հայեր են, կը փորձէ բարձր պահել իրեն վստահուած պարտականութիւնը, կերտելով ազգասեր եւ կրօնասեր հայ սերունդներ: Սակայն, իրապաշտ ըլլանք, որ ապագան այնքան ալ յստակ չէ եւ կը կարօտի մեր բոլորին աշակցութեան, թէ նիւթական եւ թէ բարոյական, որպէսզի ան Նոր շունչ ստանայ, կանգուն մնայ եւ շարունակէ իր առաքելութիւնը՝ որպէս հայ մարդու եւ մտքի դարբնոց:

Այս տարեշրջանին աշակերտութեան ընդհանուր թիւն է 44 (մանկապարտէզ եւ նախակրթարան): Դպրոցին մէջ կը գործեն 9 հայ ուսուցիչ-ուսուցչուհիներ՝ տարբեր մասնագիտական ճիւղերէ վկայուած: Դըպրոցը ունի նաեւ տնտես մայրիկ, ժամկոչ եւ վարիչ, որոնք լոյնապէս հայեր են: Իսկ 2014-էն սկսեալ, դպրոցիս ընդհանուր վերահսկիչն է՝ Յայր Նարեկ Վրդ. Լուիսեան:

* * *

Ազգային Ուսումնասիրաց Միացեալ Ճեմարան³

(Ներկայացնող՝ Ճեմարանի Տնօրէն Վարուժան Փանոսեան)^{***}

«Հայեցի կրթութիւնն ու դաստիարակութիւնը մեր ուսերուն դրուած պարտք է: Այնքան ատեն որ Բեսապի մէջ հայ կ'ապրի, այս գործը պիտի շարունակուի՝ ինչ ալ ըլլան պայմանները»:

Պատմական Հակիրճ Ակնարկ³

Դպրոցը Հիմնուած է 1924-ին Ուսումնասիրաց Միութեան (հիմնադրուած 1910-ին) ջանքերով: Միութեան կրթասեր երիտա-



սարդները նպատակ ունեցած են ազգային բարձրագոյն նախակրթարան մը կամ երկրորդական վարժարան հիմնելով եւ յարանուանական նախակրթարանները միացնելով յարանուանական դպրոցներուն եւ կըր-

թական գործին ազգային դիմագիծ տալ՝ Քեսապի և Լոր սերունդը օտարամուտ ազդեցությունները հեռու պահելու համար: Վարժարանը կը հիմնուի բացառապես քեսապցիներու բարոյական ջանքերով եւ նիւթական միջոցներով: 1928-ին վարժարանը կ'ունենայ իր սեփական շէնքը, ներկայ վայրին մէջ: 1938-ին Ուսումնասիրացի Միջնակարգն ու Միացեալ Նախակրթարանը կը միանան Ուսումնասիրաց Միացեալ անուան տակ: Դպրոցը 1938-1958 կ'ըլլայ ութամեայ, 1958-1963 եօթամեայ, իսկ անկէ ետք մինչեւ 2004 վեցամեայ Նախակրթարան: 2004-ին կ'ունենայ միջնակարգ եւ տարուէ տարի դասարան առ դասարան բարձրանալով կը հասնի Երկրորդականի, որմէ իր առաջին շրջանաւարտները կու տայ 2009-ին:

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յայերէնի յատուկ դասարան: Տարիներէ ի վեր Յայերէնի դասաւանդումը կը կատարուի յատուկ դասարանի մը մէջ, ուր հայերէնը կը դասաւանդուի համագործակցային փոխներգործուն դասաւանդման մեթոտով: Ունինք գրադարան, հարուստ տարրալուծարան:

Համակարգիչի սենեակ: 2014-ին, ահաբեկիչներու Քեսապ ներխուժումով կողոպտուեցան արդիական բոլոր այն սարքերը, որոնք ապահովուած են մեծ զոհողութիւններով եւ որոնցմով սկսած էինք դասաւանդումը ու կրթական այլ ձեռնարկները աշակերտներուն համար աւելի հաճելի, հետաքրքրական եւ դիւրամատչելի դարձել: Անցնող տասը տարիներուն, դժբախտաբար չկարողացանք ունենալ Նախկին արդիական գործիքները: Իսկ ներկայ տնտեսական պայմաններուն մէջ այդ մէկը գրեթէ անկարելի է: Ունեինք համակարգիչներու սենեակ, որ նուէր էր Քանատա բնակող քեսապցիներէն: 2013-ին պաքալորիայի դասարանը, իբրեւ փորձառական առաջին քայլ, Յայերէնի ամավերջի քննութիւնը կատարեց համակարգիչի վրայ: Պարագան եզակի մնաց: Աւելի՛ն, այսօր ընդամենը ունինք միայն երկու Laptop-ներ, մէկը հաշուապահին յտկացուած է, իսկ միւսը՝ ուսուցչուհիներուն՝ հարցարաններ եւ իրենց դասաւանդութիւնը վերաբերող այլ նիւթեր պատրաստելու համար:

Ճեմարանի Պատմութիւն: Ճեմարանի հիմնադիր միութեան՝ Ուսումնասիրաց Միութեան (Նախապէս ընկերակցութիւն)

100-ամեակին առիթով լոյս տեսաւ «Հարիւրամեակ Քեսապի Ուսումնասիրաց Ընկերութեան եւ Նոյնանուն երկրորդական Վարժարանին», Հատոր Առաջին 1910-1940, գիրքը (Անթիլիաս, 2018), որ պատրաստուած է վարժարանի 1939-ի շրջանաւարտներէն Յակոբ Մանճիկեանի եւ իր կնոջ՝ Քնար Մանճիկեանի կողմէ:

Արեւային Ուժանիթի Համակարգ եւ Ձեռնուցում: 2022-2023-ի տարեշրջանի երկրորդ կիսուն կարելիութիւն ունեցանք արեւային վահանակներով ճեմարանի լուսաւորումը ապահովելու: Ձեռնուցման կեդրոնական համակարգը կը բանի վառելանիւթով: Ճարելը շատ դժուարացած է եւ ահագին մեծ գումարի կը կարօտի: Ասով մէկտեղ, կ'ապահովենք վառելանիւթի պէտք եղած քանակը՝ ոչ միանուագ կերպով: Դպրոցաշէնքի վեց յարկերը,- առաւել հաշուապահութեան եւ տնօրէնութեան գրասենեակները, որոնք առանձին յարկի վրայ են,- ձմրան ամիսներուն պէտք եղած չափով ջեռուցուած են:

Կրթական եւ Ուսումնական Յաջողութիւններ: Պետական քննութիւններուն մասնակցող մեր պրովէի եւ պաքալորիայի աշակերտներուն յաջողութեան տոկոսը բարձր է: Նախավերջին երկու տարիներուն ապահովեցինք պաքալորիայի 100 առ 100 յաջողութիւն: Արդէն ունինք դեղագործ, ատամնաբուժ, երկրաչափ տնտեսագետ եւ այլ ճիւղերէ վկայուած շրջանաւարտներ: Ունինք շրջանաւարտներ, որոնք ցրուած են աշխարհով մէկ՝ Քանատա, Եւրոպա, Հայաստան եւ այլ երկիրներ: Ունինք մագիստրոսի աստիճանին տիրացուներ, շուտով կ'ունենանք Նաեւ դոկտորականի արժանացած շրջանաւարտ մը: Յատուկ երախտագիտութիւն կը յայտնենք Հայկազեան Համալսարանի (Լիբանան) տնօրէնութեան, որ անցնող տասը տարիներուն հոգաց շուրջ մէկ տասնեակ մեր աշակերտներուն կրթաթոշակները եւ ձրի կեցութեան տեղ տրամադրեց անոնց Համալսարանի Գիշերօթիկէն ներս: Ասկէ դուրս մեր շրջանաւարտները ուր ալ երթան, իրենց գիրենք կ'արժեցնեն ազգային կեանքին իրենց մասնակցութեամբ:

Տագնապի տարիներուն Եագուպիեցի ընտանիքներ Քեսապ հաստատուեցան, երբ ահաբեկիչները գրաւեցին իրենց գիւղը եւ գիրենք տեղահանեցին: Ունեցանք 10-12 աշակերտներ, որոնց ընդունեցինք գրկաբաց եւ սրտաբաց՝ հոգալով անոնց կրթաթոշակները: Այս վերջին քանի մը տարի-



ներուն անոնցմէ կը գանձուի խորհրդանշական կրթաթոշակ: Ուրախ ենք, որ այդ աշակերտներէն մէկը եկող տարի պիտի աւարտէ բժշկութեան ճիւղը եւ պիտի հանդիսանայ առաջին բժիշկը, որ մեր ճեմարանէն շրջանաւարտ պիտի ըլլայ:

Անդրադառնալով ուսուցչուհիներու յաջողութեանց՝ վերջին երկու տարիներու ընթացքին երեք անգամ ընկերային գիտութիւն դասաւանդող մեր ուսուցչուհին (քեսապցի) անձնական հրաւեր ստանալով ելոյթ ունեցաւ Սուրիոյ պատկերասփիւռի կայաններէն («Սամա»՝ երկու անգամ, այս վերջերս ալ «Ֆատաիէ Թարպաուիէ Սուրիէ»-ն) մանկավարժական նիւթերով՝ ըստ առիթի ճեմարանի քարոզչութիւնը կատարելով:

Կրթական Տնօրէնութիւն: Կրթական Տնօրէնութեան կողմէ եկող բոլոր այցելու քընկէները բարձրօրէն կը գնահատեն եւ խիստ գովելի կ'որակեն մեր տարած աշխատանքը, թէ՛ ուսումնական մակարդակի վերաբերեալ, եւ թէ՛ իրենց հետ գործակցութեան մեր եղանակին, ցուցաբերած կանոնաւոր եւ հետեւողական բժախնդրութեան համար: Անոնք ամէն անգամ գոհ եւ ուրախ կը մեկնին ճեմարանէն. գայն կը դասեն Լաթաքիոյ Նահանգի լաւագոյն դպրոցներուն շարքին: Երբ մեր կարգին կ'այցելենք Կրթական Տնօրէնութիւն՝ հոն եւս նոյնը կը լսենք ճեմարանի մասին: Այս մէկը պատիւ է մեզի համար: Ի դէպ, բնաւ չենք թերանար, պատշաճ ձեւով եւ ճշդուած ժամանակացոյցին մէջ կը կատարենք իրենց կողմէ մեզի յղուած բոլոր հրահանգները:

Հայերէնաւանդ Ուսուցչուհիներ: Ճեմարանը Հայերէն դասաւանդող ուսուցչուհիներու տագնապ չէ ունեցած, մինչեւ անցեալ տարեշրջանին, երբ 2.-Թ. կարգերու ուսուցչուհին անձնական շատ յարգելի պատճառով ստիպուած եղաւ հրաժարական տալու: Բարեբախտաբար, Քեսապի Ս. Աստուածածինի եկեղեցւոյ հոգեւոր տեսուչ Յոզ. Հայր Անդրանիկի Վրդ. Քիւրիւմեան ստանձնեց այդ պատասխանատուութիւնը, որ բարեխղճօրէն եւ հմտօրէն կատարեց, հակառակ իր բազմազբաղուածութեան եւ յաճախակի ճամբորդութիւններուն: Յոզ. Հայրը Քեսապի մէջ իր ծառայութեան ժամանակաշրջանը աւարտելով՝ Նոր Տարիէն ետք պիտի մեկնի շրջանէն, այնպէս որ Միջնակարգի դասարաններուն համար կը նախատեսենք յարմարագոյն լուծումը գտնել:

Միջնակարգի հայերէնի դասաւանդումը կը ծրագրենք վստահիլ ճեմարանի հայերէնաւանդ մեր ուսուցչուհիներուն: Անշուշտ բարեբախտութիւն պիտի ըլլայ մեզի համար, եթէ նոր ժամանող Հայր Սուրբը ստանձնէ նոյն աշխատանքը, եթէ անշուշտ իր ժամանակը արտօնէ: Այս պարագան շուտով կը յստականայ:

Ի դէպ, ուրախութեամբ կ'ուզենք նշել, որ հայերէնաւանդ մեր երկու ուսուցչուհիները երկրորդ տարին ըլլալով կը հետեւին Համագայինի Հալէպի Հայագիտական Հաստատութեան դասընթացքներուն, իսկ եկող տարի անոնց կը միանայ հայերէնաւանդ մէկ (առայժմ) ուսուցչուհի եւս՝ իբրեւ երրորդ տարուան ուսանողուհի, որ Հայագիտականի առաջին երկու տարիներու դասաւանդութեան նախապէս հետեւած է Քեսապի մէջ:

Լիայոյս ենք, որ գալիք տարիներուն հայերէնաւանդ ուսուցչուհիներու կարիք չենք ունենար:

Շրջանաւարտներ: Ճեմարանը այս տարի իր նոր շրջանի տասնվեցերորդ շրջանաւարտ սերունդը պիտի տայ: Ուրախալի է, որ նախկին մեր շրջանաւարտ համալսարանական ուսանողուհիները կը նուիրուին ուսուցչական ասպարեզին, որ, այնքան ալ գրաւիչ ասպարեզ մը չէ ներկայ տնտեսական կացութեան մէջ: Ներկայիս ունինք այդպիսի վեց ուսուցչուհիներ: Առաւել երկու հոգի Հայ Աւետարանական Նահատակաց Միացեալ եւ մէկ՝ Հայ Կաթողիկէ համայնքի վարժարանէն ներս կը դասաւանդեն:

Պարծանք է մեզի համար, որ պաքալորիա դասարանի քիմիագիտութեան ու բնագիտութեան ուսուցչուհին մեր նախկին աշակերտուհին է:

100 Ամեակ: 2024-ին, Աստուծոյ կամքով, պիտի յիշատակենք ճեմարանի հիմնադրութեան 100-ամեակը: Այս ուղղութեամբ սկսած են նախապատրաստական աշխատանքներ տանիլ: Առիթը մեծաշուք ձեւով պիտի տօնենք:

ԴԺՈՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պիտոճ: Դժուարութիւններէն առաջինը տարեկան պիտոճէն գոյացնելն է: Հոգաբարձութիւնը շատ ջանք կը թափէ, որ ծնողներուն բեռը թեթեւցնէ, որովհետեւ անոնք ալ կը տուայտին սղաճի հետեւանքներէն: Եւ եթէ չըլլան ԱՄԷ, Ամերիկա, Զանաթա, Աւստրալիա բնակութիւն հաստատած քեսապցի



մեր հայրենակիցներուն օժանդակութիւնները, մենք շատ դժուարաւ, թերեւս ալ բնաւ չկարենանք կանգուն պահել ճեմարանը:

Յայախօսութեան պարագան: Արաբախօս աշակերտներուն ներկայութիւնը մեր աշակերտներուն համար օգտակար է, այն իմաստով որ անոնց հետ արաբերէն խօսելով կը տիրապետեն արաբերէն խօսակցական լեզուին: Բայց կան դասարաններ մէկ երկու հայախօս աշակերտներով: Դասարանէն դուրս երբ կը խաղան անոնց հետ՝ ստիպուած կ'ըլլան հայերէնի փոխարէն արաբերէն գործածելու:

Մենք նահանջողը չենք հայերէն սորվեցնելու մեր նպատակէն: Մեր ուսուցչուհիները, եւ ոչ միայն հայերէն դասաւանդողները, ջանասիրաբար կ'աշխատին, եւ այլընտրանքային բազմաթիւ ձեւերով, դպրոցական ձեռնարկներով զարկ կու տան հայերէնախօսութեան:

Այլ հարցերն են՝ բարձրագոյն դասարաններուն համար որակեալ ուսուցիչներ ապահովելը, Լաթաքիայէն քեսապ երկու ուղղութեամբ անոնց երթելու ծախսը հոգալը, քեսապի շրջաններու գիւղերէն աշակերտները տունէն դպրոց տեղափոխելը: Անհրաժեշտ պէտք ունինք երրորդ փոխադրակառքի, որպէսզի անելի դիւրին ըլլայ աշակերտները շրջաններէն դպրոց տեղափոխելը:

Վերանորոգում: Ամէն տարի ահագին գումար կը յատկացնենք վերանորոգման: Ամէն տարեշրջանի աւարտին կամ սկիզբը պէտք եղած վերանորոգման աշխատանքները կը կատարենք: Վերջին տարիներուն այդ աշխատանքները առաջ կը տարուին հանգրուանային կերպով: Այս տարի, օրինակ, կրցանք ներկել Մանկապարտեզն ու Նախակրթարանի միայն երեք դասարանները, վերանորոգեցինք տանիքը, վերամրացնել տուիւնք երկրաշարժին հետեւանքով խախտած եւ փլած քարերը, ճեղքուած պատերը: Անցեալ տարի, Կաղանդի գիշեր երբ դպրոցին մօտակայքը հրթիռ մը ինկաւ՝ մեր օթոքարներն ու դարպասը վնասուեցան, անոնք եւս վերանորոգեցինք:

Գլխաւոր Մտահոգութիւնը: Գալիք տարիներուն բողբոջ դասարանի աշակերտներուն թիւը չափազանց քիչ պիտի ըլլայ: Նոր ընտանիքներ գրեթէ չեն կազմուիր: Երիտասարդ-երիտասարդուհիներ, նորակազմ ընտանիքներ կը գաղթեն օտար երկիրներ: Այս երեւոյթին լուծում գտնելը մեր ձեռքը չէ, կապ չունի կրթական կեանքին հետ,

բայց ամէնէն շատ տուժողը մեր վարժարանները պիտի ըլլան:

Որպէս վերջաբան: Պիտի ջանանք կանգուն պահել քեսապի ճեմարանը՝ կարելի բոլոր միջոցներով: Կ'ընդունինք, որ մարտահրաւերները բազմապիսի են, բայց իբրեւ հոգաբարձութիւն ու տնօրէնութիւն, Ազգային առաջնորդարանի եւ անոր պատկան կրթական մարմիններուն հետ մենք կը յաղթահարենք դժուարութիւնները, որպէսզի որքան կարելի ըլլայ նուազին թերութիւնները եւ բազմանան՝ առաւելութիւնները:

Պիտի մնանք կանգուն, որովհետեւ կրթական մարզին մէջ հայեցի կրթութիւնն ու դաստիարակութիւնը մեր ուսերուն դրուած պարտքն է: Այնքան ատեն որ քեսապի մէջ հայը կ'ապրի, այս գործը պիտի շարունակուի՝ ինչ ալ ըլլան պարագաները:

* * *

ՓՈՒՍԱՆ ԵՇՐԱԿԱՑՈՒԹԵԱՆ

Վարժարաններու մասին պատմական տուեալները ցոյց կու տան վարժարաններու մէկուկէս դարու կտրած-անցած ճամբան: Պատմական տուեալները ուսանելի կրնան ըլլալ անկասկած, սակայն ներկայի հետ համեմատութիւնը ճիշդ տեղ չ'առաջնորդեր: Ներկայ հարցերուն լուծում չի բերեր: Ժամանակները կը փոխուին, կը փոխուին նաեւ պայմաններն ու մարտահրաւերները: Իրատեսական մօտեցումը կը թելադրէ՝ ներկայ հանգրուանը վերլուծել ներկայ ժամանակին մէջ՝ մէկդի դնելով յոռետեսական ամէն մտածում, թէ հայկական այս փոքրիկ աւանին մէջ հայեցի կրթութիւնը խամրող փուլ թեւակոխած է: Նոյնքան սխալ է ամէն ինչ լաւատեսական ակնոցով դիտելը: քեսապի հայկական վարժարաններու տնօրէններուն լաւատեսութիւնը ապագայի նկատմամբ, ամէն պարագայի քաջալերելի եւ գօտեպնդիչ են՝ միայն այն մօտեցումով, որ անոնք կ'ընդունին որ վարժարանները ունին որոշ դժուարութիւններ եւ ամէնէն մեծ մարտահրաւերը, որ կը դիմագրաւեն անոնց հայեցի դիմագիծը պահելն է:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1.- Պատմական տուեալները քաղուած են՝ Վեր. Տիգրան Խրլոբեան, «Ոսկեմատեան» (Ա. եւ Բ. հատոր), Պէյրութ, 1950. Վեր. Եղիա Քասունի, «Լուսաշաւիղ», Պէյրութ, 1947. Յակոբ Չոլաքեան, «քեսապ» Ա. հա-



տոր, Յալեպ, 1995:

* Անի Թրթռեան- Պոյմուշաքեան ծնած է Պէյրուբ: Նախնական ուսումը ստացած է Բեսապի Յայ Աւետարանական Նահատակաց Միացեալ Վարժարանէն, ապա յաճախած է Բեսապի պետական Դպրոցը՝ մինչեւ պաքալորիա:

Համալսարանական ուսում ստացած է Լիբանանի Հայկազեան Համալսարանէն եւ Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական Ճեմարանէն՝ արժանանալով պսակաւոր արուեստից վկայականին՝ Զրիստոնէական Դաստիարակութեան ճիւղին մէջ: Բսաներեք տարիներէ ի վեր կը պաշտօնավարէ Բեսապի Յայ Աւետարանական Նահատակաց Միացեալ Վարժարանէն ներս, իբրեւ ուսուցչուհի, ապա՝ որպէս տնօրէնուհի:

** Սալբի Ճորճ Թիթիգեան ծնած է Բեսապ: Նախնական կրթութիւնը ստացած է Բեսապի Յայ Աւետարանական Նահատակաց Միացեալ վարժարանէն, ապա յաճախած է Բեսապի պետական Միջնակարգ եւ Երկրորդական վարժարան եւ վկայուած՝ գիտական պաքալորիայով: Համալսարանական ուսումը ստացած է Լաթաքիոյ «Թշրին»

Ուսումնասիրաց վարժարանէն (Ներկայիս՝ Ճեմարան) ներս, իսկ միջնակարգը եւ երկրորդականը՝ Բեսապի պետական վարժարանէն:

Աւարտած է Լաթաքիոյ «Թշրին» համալսարանը՝ Անգլերէն գրականութեան մասնագիտութեան բաժինը: Չինուորական պարտադիր ծառայութենէն ետք, 1999-ին, ընտրած է ուսուցչական ասպարէզը՝ դասաւանդելով անգլերէն լեզու Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ճեմարանի բարձրագոյն դասարաններուն մէջ, մինչեւ 2021:

2006-էն ի վեր համանուն Ճեմարանի տնօրէնն է:

2.- Պատմական տուեալները քաղուած են՝ Յակոբ Չոլաքեան, «Բեսապ», Ա. հատոր, Յալեպ, 1995:

3.- Պատմական տուեալները քաղուած են՝ «Հարիւրամեակ Բեսապի Ուսումնասիրաց Ընկերութեան եւ Նոյնանուն երկրորդական Վարժարանին», Հատոր Առաջին 1910-1940, պատրաստեցին՝ Յակոբ Մանճիկեան-Բնար Մանճիկեան, Անթիլիաս, 2018: Նաեւ՝ Յ. Չոլաքեան, «Բեսապ», Ա. հատոր:

համալսարանի Գրական գոլէճի բաժանմունքէն, որմէ ետք ստացած է կրթական համապատասխան տիպլոմ՝ կրթական գոլէճէն: Երկար տարիներ դասաւանդած է միջնակարգի եւ երկրորդական վարժարաններէ ներս, թէ՛ Բեսապի եւ թէ՛ Լաթաքիոյ մէջ: Ան թարգմանութեամբ կը զբաղի (արաբերէն-անգլերէն): 2009-էն մինչեւ օրս, ան կը վարէ Բեսապի Յայ Կաթողիկէ Բարեյուսոյ վարժարանի գործադիր տնօրէնի պաշտօնը՝ միեւնոյն ատեն դասաւանդելով հայերէն եւ անգլերէն:

*** Վարուժան Փանոսեան ծնած է Բեսապ: Նախակրթութիւնը ստացած է Ազգ.

ԲԵՏԱՊԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐՇԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ԹՈՒՎԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ (2023-2024)				
ՎԱՐՇԱՐԱՆԻ ԱՆՈՒՆ	ԿԱՐԳԱՎԻՃԱԿ	ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ԹՈՒՎԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ		
		ՀԱՅ	ՈՉ ՀԱՅ	ԸՆԴՀ.
Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ճեմարան	Երկրորդական (ունի Միջնակարգ, Նախակրթարան եւ Մանկապարտէզ)	111	85	196
Հայ Կաթողիկէ Բարեյուսոյ վարժարան	Նախակրթարան (ունի Մանկապարտէզ)	---	44	44
Հայ Աւետ. Նահատակաց Միացեալ վարժարան	Նախակրթարան (ունի Մանկապարտէզ)	6	45	51
		117	174	291

Թղթածրարը պատրաստելու աշխատանքը տարին Բեսապի մէջ «Գանձասար» շաբաթաթերթի թղթակիցներ՝ Դալար Թութիկեան-Գերպապեան Մարինա Բենդէգեան-Լևոնեան Հսկողութեամբ՝ դրկտ. Շողիկ Աշրգեանի





ՔԵՍԱՊԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 2023 ԹՈՒՎԿԱՆԻՆ

Կարօ Վ. Մանճիկեան

Քաջածանօթ իրողութիւն է, որ նախորդ դարու աւարտին, ու դարուս առաջին տասնամեակին Սուրիան ապրեցաւ տնտեսական վերելքի բարգաւաճող իրավիճակ: Երկրին արտաքին պարտքը գեռօ էր, իսկ Կեդրոնական Դրամատունը յաջողած էր հաւաքել օտար դրամանիշներու կոկիկ պահեստ մը, երբ յանկարծ՝ 2011-ին ծայր տուաւ ցայսօր շարունակուող տագնապը:

Քայլարշաւներով եւ ցոյցերով սկսող տագնապը, ունեցաւ մանր-մուսր, ապա ծանր բախումներ՝ պետական բանակին եւ գինեալ ահաբեկչական խմբաւորումներուն միջեւ, իսկ վերջիններուս արեւմուտքը, դաշնակցած Թուրքիոյ եւ Արաբական Ծոցի երկիրներուն հետ, տրամադրեց անսպառ տընտեսական եւ գինուորական միջոցներ: Երկիրը գործնականին մէջ մասնատուեցաւ (Ամերիկան՝ Զիւսիս-արեւելք, Թուրքիան՝ հիւսիսը գրաւելով): Եւ երբ գինական միջոցները չյաջողեցան տապալել իշխանութիւնը, Սուրիոյ պարտադրեցին ծանրակշիռ ու անմարդկային տնտեսական պաշարում մը, որ ցայսօր կը շարունակուի, եւ որ բացարձակապէս կը վնասէ միայն ժողովուրդին:

Պաշարումը շարունակուեցաւ հակառակ պսակածեւ ժահրի համաճարակին ու աղէտալի երկրաշարժին, որոնցմէ անշուշտ անմասն չմնաց Քեսապը:

Սուրիական դրամանիշի արժեզրկումը տուաւ տապարի հարուածը Սուրիոյ՝ ընդհանրապէս, Քեսապի՝ մասնաւորապէս:

Քեսապի տնտեսութիւնը գերակայօրէն հիմնուած է գիւղատնտեսութեան վրայ:

Քեսապի մէջ կ'արտադրուին խնձոր, դեղձ, աւելի նուազ համեմատութեամբ՝ սալոր, տանձ, այլ պտուղներ ու քիչ քանակով

բանջարեղէնի որոշ տեսակներ:

Երկրագունդի ջերմաստիճանի մագլցումին պատճառով, Քեսապի մէջ խնձորի մշակումը նահանջ արձանագրեց, երբ առկայ տեսակաւոր վարակներ աճեցան, եւ զանազան պատճառներով զանոնք չեզոքացնելը շատ դժուարացաւ (օրինակ՝ ներածուած անտրակ դեղեր, վարակներու տարածման բարենպաստ կլիմայ...):



Խնձորենիները շատ արագ թափով ու մեծ համեմատութեամբ սկսան չորնալ: Այդ այգիները նահանջ արձանագրելով, պարտիզականները սկսան խնձորի ծառերը փոխարինել կորիզային պտուղներով, առաւելաբար՝ դեղձենիներով ու սալորենիներով կամ ձիթենիներով:

Անշուշտ դեղձի մշակումն ալ ունի իր դժուարութիւնները, որոնցմէ մէկը եթէ բորբոսային վարակն է, միւսը անոնց ջուրի պահանջկոտութիւնն է, մինչ Քեսապի հողի ընդերքը սակաւաջուր է:

Գիւղացիք մասնակի համեմատութեամբ կ'օգտուին դափնիի պտուղի հաւաքէն, որմէ կը պատրաստեն դափնիի իւղը՝ օճառի պատրաստութեան համար:

Դափնիի իւղը մեծ համեմատութեամբ

կը գործածուի Ս. Միւռնի պատրաստութեան մէջ, որ հայրենի մեր ժողովուրդը զայն բալասան կ'անուանէ:

Վերջին տասնամեակին ձիթենիներու մշակումը աճ արձանագրեց, սակայն միայն ընտանեկան կարիքները գոհացնելու համար:

Անտառային բոյսերէն է նաեւ սումախը, որմէ քեսապցին կը պատրաստէ անոր փոշին՝ կերակուրներուն թթու համ տալու համար:

Նուազ քանակով կը մշակուին նաեւ կըրնենիներ, որովհետեւ անոնք դեղձենիներուն նման ջուրի առնչութեամբ պահանջկոտ են: Նուռէն կը պատրաստեն նուռի թթու, ընդհանրապէս անձնական տնային պէտքերը գոհացնելու, իսկ ոմանք ալ՝ վաճառելու նպատակով:

Չափաւոր տեղ կը գրաւէ նաեւ խաղողի մշակումը: Քեսապի խոնաւ օդը չի նպաստեր անոր, սակայն քեսապցիք խաղողէն կը պատրաստեն խաղողի ռուպ՝ տնային պահանջքի չափերով:

Հոս տեղին է յիշել նաեւ, որ սուրիական դրամանիշի անկումին պատճառով, տարապայման մեծ արժէք ստացան վարակներու վնասագրեման համար գործածուած դեղերը, որոնք բացարձակապէս կը ներածուին դուրսէն: (Նախապէս՝ արեւմուտքէն, այժմ՝ նաեւ Հինաստանէն ու Հնդկաստանէն):

Իսկ պարարտանիւթերը, որոնց արտադրութիւնը գոյութիւն ուներ նախքան 2011-ը, այժմ ամբողջութեամբ կը ներածուի դուրսէն (սուրիական գործարանները քանդուած են ահաբեկիչներուն կողմէ):

Քեսապի առեւտրական շուկան նաեւ ստացաւ աղետալի հարուած, երբ 2014-ի Քեսապի բռնագրաւումին պատճառաւ կողոպտուեցաւ, ինչպէս նաեւ արհեստանոցներն ու զբօսաշրջիկական հաստատութիւնները (ճաշարաններն ու պանդոկները):

Անոնցմէ քանի մը հատը ցայսօր կը մնան նիւթական թէ մարդուժի դժուարութիւններուն պատճառաւ:

Յայսօր շուկային հաստատութիւններուն գերակշիռ մասը կը մնայ քեսապցիներուն ձեռքը:

Արհեստանոցներէն՝ երկաթագործութեան, ատաղձագործութեան, օճառաշինութեան մեքենաներու, ինքնաշարժներու կորոգութեան... եւայլն, քանի մը հատը կը բաւին:

Քեսապի արտադրած՝ դափնիի իւղով պատրաստուած օճառը, որ 2011-էն առաջ

հասաւ մինչեւ ճափոնի կամ Ֆրանսայի շուկաները, այսօր կը սպառուի միայն Քեսապի շուկային մէջ, սահմանափակ քանակով:

Զբօսաշրջիկութեան մարզը անցնող 2-3 տարիներուն, մանաւանդ այս տարի (2023), մեծ չափով ազդուեցաւ տնտեսական սղութեան, բայց առաւելաբար վառելանիւթի սահմանափակութեան պատճառաւ:

Օդափոխութեան եկողներուն համար վառելանիւթ ապահովելը, այն ալ սուղ գիներով, դժուարացաւ:

Պանդոկներն ու ճաշարանները կը գործէին առաւելաբար ամառուան Յուլիս ու Օգոստոս ամիսներուն: Անոնք իրենց ամբողջական ուժականութեամբ սկսան բանիլ միայն տօնական օրերուն (օրինակ՝ Ս. Աստուածածնայ տօնին... եւայլն):

Քեսապցիք, որոնք իրենց տունները օդափոխութեան եկողներուն վարձով կու տային վերոյիշեալ պատճառներով նուազագոյն չափով օգտուեցան:

Ինչպէս վերը նշեցինք Սուրիոյ պարտադրուած տնտեսական պաշարումը հիմնական պատճառն է առկայ դժուարութիւններուն:

Արտածումները՝ ներառեալ գիւղատնտեսական բերքերուն գրեթէ չկան, եղածն ալ՝ ի գին աննկարագրելի դժուարութիւններու:

Գիւղատնտեսական մթերքներուն նահանգէ-նահանգ տեղափոխութիւնը առընչուած է վառելանիւթերու սղութեան:

Այս ամէնէն Քեսապը անպայման ստացաւ իր տուժանքի բաժինը:

Քեսապի տնտեսական վիճակը մէկ փոքրիկ պատկերն է Սուրիոյ տնտեսական պատկերին:

Կը մնայ յուսալ, որ յառաջիկային ինչ որ քաղաքա-տնտեսական՝ միջազգային համաձայնութիւն-հաւասարակշռութիւն մը գոյանայ ու համաշխարհային եռացող տագնապալի իրավիճակէն դուրս գալով հնարաւորութիւն տայ, որ Սուրիան ալ հասնի այդ բաղձալի, երազ դարձած վիճակին, որպէսզի Քեսապն ալ վերագտնէ իր վերելքի ճանապարհը, որպէսզի քեսապցին կամ սուրիացին ընդհանրապէս գաղթի ճանապարհը բռնելու փոխարէն ջանան վերակազմակերպել իրենց կեանքն ու աշխատանքը:

Կեանքը առանց յոյսի արդէօք մահ չէ՞: Կը յուսանք:





ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ՔԵՍԱՊԻ ՄԷՋ 2023-ԻՆ

Կարո Վ. Մանճիկեան

Քեսապի մէջ կը գործեն տասնեակի մը հասնող հայկական միութիւններ:

Անոնցմէ են՝ ՅՄԸՄ-ի, ՍՕ Խաչի, Համազգայինի, ՍԵՄ-ի, Պատանեկան Միութեան, ՀԲԸՄ-ի, Ջանից-ի եւ ՀԿՄ-ի մասնաճիւղերը, իւրաքանչիւրը իր ծրագրային թէ կազմակերպչական իւրայատկութիւններով:



Վերոյիշեալները նորութիւններ չեն Քեսապի մէջ: Անոնց կազմումը վաղ ժամանակներէն եղած է:

Օրինակ մը տալու համար միայն կշեմ, որ այս տարի՝ 2023-ին Համազգայինի Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան 95-ամեակն էր, եւ միաժամանակ անոր՝ Քեսապի «Համօ Օհանջանեան» մասնաճիւղի 35-ամեակը:

Այստեղ աւելորդ չեմ նկատեր արձանագրելու, որ վերոյիշեալ միութեան մասնաճիւղը այդ տօները տօնախմբեց իր կազմած «Կիլիկիա» երգչախումբին ելոյթով, ղեկավարութեամբ Հոգշ. Հայր Անդրանիկ Վրդ. Զիւրիմեանի՝ հոգեւոր տեսուչ Քեսապի հայ առաքելական համայնքի: Իր տեսակին մէջ երգչախումբի 3-րդ ելոյթն էր երկու տարուան մէջ: Երգացանկը կ'ընդգրկէր հոգեւոր շարականներ ու հայրենասիրական երգեր:

Երգահանդեսը նախագահեց Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Աշգարեան:

Շուտով, Համազգայինի թատերախումբն ալ իր թատերախաղով բեմ պիտի բարձրանայ 2024-ին:

ՅՄԸՄ-ի Քեսապի մասնաճիւղը, իր ներմիութենական աշխատանքներէն դուրս, յաճախ հրապարակ կու գայ իր փողերախումբով, որ համ ու հոտ կ'ընծայէ հայաբոյր կեանքին, զանազան տօնական առիթներու, որոնցմէ գլխաւորը, ամէն ամառ՝ Օգոստոս ամսուն, Ս. Աստուածածնայ տօնին համահարկ ՅՄԸՄ-ական տողանցքին մասնակցութիւնն է:

Այս տարի եւս, ՅՄԸՄ-ի Քեսապի մասնաճիւղը ունեցաւ իր ամառնային բանակումը:

ՀՕՄ-ի՝ ՍՕ Խաչի Քեսապի եւ Գարատուրանի («Գետաշէն» եւ «Մեղրի») մասնաճիւղերը, մերթ ընդ մերթ կը կազմակերպեն ձեռնային աշխատանքներու եւ քաղցրաւենիներու ցուցահանդէսներ: Անոնք աշխուժօրէն յառաջ կը տանին իրենց ներմիութենական եւ բարեսիրական աշխատանքները, ու իրենց մասնակցութիւնը կը բերեն զանազան տօներու ոգեկոչումներուն:

Վերոյիշեալ մնացեալ միութիւններուն գործունէութիւնները կը սահմանափակուին իրենց ներքին գործունէութիւններուն ու հաւաքներուն մէջ: Անոնցմէ մէկ մասը իր մասնակցութիւնը կը բերէ միութենական ամառնային բանակումներուն եւ սեմինարներուն:

Ընդգծելի ու գեղեցիկ երեւոյթ է, որ մեր Քեսապի միութիւնները, անխտիր, ամէն տարի, համատեղ ու միասնաբար կը մասնակցին Ս. Վարդանանքի եւ Մեծ Եղեռնի ոգեկոչումներուն ու անոնց աշխատանքներուն: Մինչ անոնցմէ ոմանք միասնաբար



կը տօնեն նաեւ 28 Մայիսի հանդիսութիւնը: Այս օրերուն Զեսապի միութիւններուն դիմագրաւած դժուարութիւններէն հիմնականը երիտասարդ եւ հմուտ մարդու թիւն ազուճումն է: Թուական թէ որակական նահանջ, ակամայ, կեանքի դժնդակ պայմաններուն բերմամբ:

Դժուարութիւն է նաեւ տնտեսական իրավիճակի պարտադրութիւնը: Զեսապի գիւղերը աշխարհագրականօրէն բաւական հեռու են իրարմէ, աշխարհագրական այդ

ունենալով հանդերձ, արդարանալու փորձէ մը խուսափելով մէկտեղ հրամայական կը դառնայ հարցադրել:

- «Յաջողեցա՞նք վերակազմակերպել ու վերաշխուժացնել մեր կառոյցները». ակնարկը կ'երթայ ամէն կառոյցներուն, ի մասնաւորի երիտասարդ ուժեր համախմբող կառոյցներուն:

Վերակազմակերպել ըսելով պէտք չէ հասկնալ անոնց կազմակերպական կառոյցները փոխել ու նորը գծել. այլ անոնց աշ-



վիճակը, վառելանիւթի սահմանափակ ըլլալը եւ փոխադրամիջոցներու ծախսերուն տարապայման սղութիւնը պատճառ կը դառնան, որ միութիւններուն գործունէութիւնները սահմանափակումներու ենթարկուին: Բարեբախտաբար հեռուները ապրող մեր քեսապցի քոյրերն ու եղբայրները ըստ հնարաւորին սատար կը հանդիսանան, բարոյապէս թէ նիւթապէս:

Չեկուցական այս բաժինը այսքանով անարտելով կ'արժէ ապագային համար եւս մտորումներ կատարել:

ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Կաթողիկոսը 2022 եւ 2023 տարիները հռչակեց «Սփիւռքի Տարի», որուն համար կայացան խորհրդածրոյցներ:

Այդ հռչակագիրով կ'ընդգծուէր սփիւռքեան կառոյցները վերակազմակերպելով՝ վերաշխուժացնել:

Վերոյիշեալ դժուարութիւնները ի մտի

խատանքային դաշտը, ծաւալը, ոճը... (եւ այլն), արդիականացնել, աշխուժացնել, միշտ ի մտի ունենալով սփիւռքեան թէ համահայկական իրավիճակի յարափոփոխ իրականութիւնը:

Այս հարցադրումը չի վերաբերիր միայն Զեսապի մեր կառոյցներուն այլ համասփիւռքեան կառոյցներուն, որուն մէկ փոքրիկ մասնիկը կը վերաբերի Զեսապին:

Վերակազմակերպում, վերաշխուժացում, փնտռելով նաեւ մեր կառոյցներէն դուրս մնացած, մասնագիտացած, հմտացած... համահայկական ներուժը, ի սպաս ամբողջական հայութեան եւ Հայաստան ու Արցախ հայրենիքներուն:

Կը մաղթենք, որ 2024-ի անարտին, դրական պատասխան կը ստանան վերոյիշեալ հարցադրումները:

Ամենալաւն ու ամենաբարին 2024-ի նոր ամեակին:



ՔԵՍԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ ԱՅՍՕՐ

Սեան Ա. Մանճիկեան

2014-ի տեղահանութիւնը, հայաւան Քեսապի համար անկիւնադարձային ու ճակատագրական տարեթիւ մը դարձաւ: Հին տեղի ունեցան հիմնական փոփոխութիւններ տարբեր մարզերու մէջ: Քեսապ տեղահանութենէն առաջ եւ տեղահանութենէն վերջ տոյնը չէր:

լուր, երբեմն անցնելով ովկիանոսէն անդին: Անոնք գաղթի ճամբան բռնեցին՝ ուսման, գիւտարական ծառայութենէն զերծ մնալու, ապահովութեան որոնման, անգործութեան առաջը առնելու եւ ընկերային կեանքի փնտռտուքի տարբեր պատճառներով:

Հանդերձ ընտանեօք գաղթողներ ալ



Այս յօդուածով պիտի անդրադառնամ Քեսապի ընկերային կեանքին կրած հիմնական փոփոխութիւններուն:

2014-ի տեղահանութենէն ետք, Քեսապի գլխաւոր ու հիմնական դժուարութիւններէն մէկն էր երիտասարդութեան գաղթը: Երիտասարդութեան նկատառելի մէկ մասը հաստատուեցաւ Հայաստան եւ ոմանք այ-

եղան, երբեմն դէպի հայրենիք ուղղուելով, երբեմն՝ արեւմտեան երկիրներ:

Քեսապահայութեան թիւի նօսրացումին հետ, շատ մը դժուարութիւններ երեւան եկան: Քեսապի հայկական դիմագիծը զգալիօրէն նահանջեց, ինչ որ ժխտական հոգեվիճակ ստեղծեց Քեսապի մէջ ապրողներուն համար:

Քեսապ հայաւանի բնակչութիւնը իր բարքերով ու սովորութիւններով կը գատորոշուէր այլ գաղթօճախներու հայորդիներէն: Այսօր անոնց տեղ տարբեր բարքեր ու սովորութիւններ ներմուծուած են այստեղ:


Բնականաբար անցեալի բարքերն ու սովորութիւնները նոյնը պիտի չմնային ու անշուշտ կեանքի ընթացքին փոփոխութեան պիտի ենթարկուէին: Սակայն այդ փոփոխութիւնները արագացման ենթարկուեցան վերջին տասնամեակին: Արդեօք ընկերային ցանցերուն ստեղծած մթնոլորտի՞ն, թէ երկրին տագնապալի պայմաններուն ազդեցութեան տակ տեղի ունեցան այս բոլորը...:

Անցեալի բարքերն ու սովորութիւնները այլեւս գրաւիչ չեն թուիր նոր սերունդին: Անոնց տեղ որդեգրուեցան նոր բարքեր ու սովորութիւններ:

Սակայն մետաղեայ դրամին երկրորդ երեսն ալ պէտք է տեսնել: Հակառակ այս ստեղծուած բոլոր դժուարութիւններուն, այնպիսի լաւ ու յուսադրիչ երեւոյթներ կան, որոնք արժանի են միայն բարձր գնահատանքի:

Քեսապի մէջ տակաւին բոլոր միութիւնները կը գործեն, հակառակ անոր որ անոնց մէջ գործող անհատները ծանրաբեռնուած են մէկէ աւելի պաշտօններով ու աշխատանքներով՝ մարդուժի սակաւութեան հետեւանքով, այդուհանդերձ անոնք սիրով ու ջանասիրութեամբ այդ աշխատանքի քաղցր լուծը յառաջ կը տանին:

Ուրեմն այդ միութիւնները իրենց գործերը յառաջ պէտք է տանին համագործակցութեամբ ու ներդաշնակութեամբ, Քեսապի ընկերային կեանքը կազմող հարստութիւններուն տէր կանգնին, կամ գանոնք



Քեսապի ինքնութեան երեսներէն շատ կարեւոր արժէք մըն ալ խաթարուեցաւ. ատիկա Քեսապի բարբառն էր՝ «Քեսապնօքը»:

Այսօր նոր սերունդի փոքրերուն կամ երիտասարդներուն մէջ հազուադէպ են անոնք, որոնք իւրացուցած են Քեսապի բարբառը, կամ անոնք, որոնք հարագատօրէն կը խօսին Քեսապի բարբառով: Կար ժամանակ, երբ մեր վարժարաններուն մէջ կ'արգիւտէր «քեսապնօք»-ը խօսիլ, որովհետեւ շատերու ընտանիքներուն մէջ «հայերէն լեզուի» գործածութիւնը զիջած էր բարբառին:

Կեանքի կոչեն՝ գէթ եղածը կորուստէ փրկելով:

Կեանքի այս փուլին ապրելու համար յոյսի ու կամքի կարիք ունինք: Պէտք է տոկալ ու քաջութեամբ դժուարութիւնները յաղթահարել, չյանձնուիլ օրուան ստեղծած պայմաններուն՝ Սուրիական Հայրենիքի տագնապին, տնտեսական եւ կենցաղային դժուարութիւններուն, երկրաշարժի ստեղծած սարսափի եւ վախի հոգեվիճակին:

Այս բոլորը անցողիկ են: Հոգին կառչած մնալու հրամայականին դէմ յանդիման կը գտնուինք, ուստի պէտք է պայքարիլ ու չլսահանջել:



ԴՊՐՈՑԱՇԷՆՔԸ ՉԷ ԿՐԹՕՋԱԽԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԱՐԺԵՒՈՐՈՂԸ

Մարիա Գաբրիելյան

Սփիռքի տարբեր երկիրներու մէջ կազմաւորուած համայնքները հայ պահող ամենակարեւոր կռուանները կրթական հաստատութիւններն են: Հալէպի կրթական բնագաւառը մեծապէս տուժեց երկրի մղած պատերազմին հետեւանքով, այնպէս որ կարելի է յստակ բաժնեգիծ քաշել նախապատե-

Բերել երկրորդական վարժարան) աշակերտութեան թիւը անկում արձանագրեց: Ստեղծուեցաւ վաստակաշատ, փորձառու եւ որակեալ ուսուցիչի տաճնապ:

Պատերազմի տարիներուն, ապահովական նկատառումներով, ուսումնական տարեշրջանի ընթացքին յաճախակիօրէն դըպրոցներու փակուելուն պատճառով՝ աշակերտներու ուսումնական մակարդակը նահանջեց:

Ազգային դաստիարակութեան եւ հայեցի կրթութեան առնչութեամբ ոչ թէ տեղքայլ, այլեւ ետդարձ կատարեցինք: Հայկական բոլոր վարժարաններուն անխտիր՝ հիմնադրութեան գլխաւոր նպատակը հայեցի կրթութիւն ջամբելն է, իսկ հայեցի կրթութեան ակնադբիւրը հայերէնի դասատունն է եւ անա այս դարձաւ մեր ամենախոցելի կետը: Պատերազ-



մէն առաջ հայկական վարժարաններու մէջ հայերէն դասաւանդելու դիմում ներկայացնող ուսուցիչը քանի մը քննութիւններու պէտք էր ենթարկուէր, որոնց հիման վրայ անոր դիմումը ընդունիլ-չընդունելու հարցը կ'որոշուէր: Հալէպի մէջ Համազգայնի Հայագիտական հիմնադրուելէ ետք (1996-ին), հայերէնի ուսուցիչը եթէ Հայագիտական վկայական չունենար նոյնիսկ չէր կրնար դասաւանդութեան դիմում ներկայացնել, այսօր հայկական վարժարաններու մէջ թերաւարտներ հայերէն կը դասաւանդեն, հարցը միայն թերաւարտութեան մէջ չէ, այլ՝ այդ

րազմեան եւ յետպատերազմեան փուլերուն միջեւ:
Յետպատերազմեան շրջանի ամենէն աչքառու փոփոխութիւնը դպրոցներու եւ աշակերտութեան թուապատկերն է: Հալէպի չորս ազգային վարժարանները, որոնք դասարաններու խճողուածութեան խնդիր կը դիմագրաւէին՝ միաւորուեցան մէկ վարժարանի մէջ: Հինգ երկրորդականներու (Ազգային Զարէն Եփփէ Ճեմարան, Լ.Նաճարեան Գ.Կիլպէսկեան կեդր. վարժարան, Կիլիկեան վարժարան, Կրթասիրաց Սարգիս Չեմպերճեան երկրորդական վարժարան,

Թերաւարտին լաւ հայերէն չիմանալուն մէջ, դէռ չխօսինք հայերէնի ուսուցիչին քննարկում կատարելու, սերտողութիւն պատրաստելու, հարցազրոյցի մը հարցումներուն պատասխանելու կարողութիւններուն մասին, դէռ չխօսինք հայերէն գիրք չընթերցող, թերթ չկարդացող հայերէնաւանդ ուսուցիչներու մասին:

տարեկան եռամսեայ արձակուրդ եւ դէռ չհաշուած հայկական ու պետական տօներու առիթով տրուած արձակուրդները, հետեւաբար ո՞վ պիտի մերժեր նման աշխատանք: Այսօր հայկական վարժարաններու ուսուցիչներու աշխատավարձը հազիւ շաբաթ մը կրնայ ապրեցնել զանոնք, անշուշտ չենք խօսիր ընտանիք պահող ուսուցիչին



Հայկական վարժարաններու մէջ ոչ հայ աշակերտներու ներկայութիւնը այլ լուրջ ու զգայուն խնդիր է, որ իր բացասական անդրադարձը կ'ունենայ դասարանի մթնոլորտին վրայ: Դպրոցներէն ոմանք կ'արդարացնեն ըսելով, որ ոչ-հայ աշակերտը պարտաւոր է հայերէնի դասապահերուն հետեւիլ, շատ բարի, խնդիր չկայ, թող հետեւի, թող սորվի հայոց այբուբենը, թող գրէ ու կարդայ հայերէն, սակայն մեր հայերէնի դասապահերը լոկ հայերէն սորվեցնելո՞ւ կը ծառայեն, թէ ազգային հայրենասիրական ոգին սերմանելու գերկարելոր առաքելութիւնն ունին:

մասին, այլեւ միայն ինքզինք հոգացողին: Թէեւ դպրոցներու մեծամասնութիւնը շանք չի խնայեր զանազան միջոցներով «նուեր» անուան տակ ուսուցիչին այլ մուտք ապահովելու, սակայն ի վերջոյ այդ նուերները մնայուն չեն, ի վերջոյ ուսուցիչն ալ արժանապատուութիւն ունի, իր աշխատանքին վարձատրութիւնը պիտի ակնկալէ եւ ոչ թէ նուերը: Այս գլխաւոր պատճառներէն մէկն է, որ իր կոչումին հաւատարիմ անձը, որ օժտուած է ե՛ւ գիտական համապատասխան վկայականով, ե՛ւ զարգացումով, ե՛ւ հմտութեամբ, պիտի չնախընտրէ մուտք գործել ուսուցչական ասպարէզ, այլ պիտի փորձէ բարեսիրական թէ այլ հաստատութիւններու մէջ քարտուղարական կամ վարչական աշխատանքներ ստանձնել:

Ուսուցչական ասպարէզը սկսած է կորսնցնել իր հրապուրանքը, սկսած է քաշողական աշխատանք չդառնալ: Նախապատերազմեան շրջանին ուսուցիչը ինքնաբաւ էր, եւ ոչ միայն, այլ կրնար իր աշխատավարձէն խնայողութիւն եւս ընել եւ պահ գումար ունենալ: Այդ օրերուն ուսուցչութիւնը պահանջուած աշխատանք էր, մարդիկ ինչ-ինչ միջնորդութիւններու կը դիմէին ուսուցիչ դառնալու համար, բնականաբար այդպէս պիտի ըլլար՝ լաւ աշխատավարձը,

Տնտեսական եւ ծառայողական բնագաւառի դժուարութիւնները դարձած են դրպրոցներու դիմագրաւած առաջնային խնդիրները: Ուսումնական ու կրթական աշխատանքներու քննարկումներ կատարելէ շատ աւելի կը քննարկուին վառելանիւթի, արեգակնային համակարգով էլեկտրածիններու եւ նմանօրինակ խնդիրներ:

Լա՛ւ, եթէ այսքան լուրջ դժուարութիւններ կը դիմագրաւէ կրթական բնագաւառը, ի՞նչ պէտք է ընել...

Նախ ամէն բանէ առաջ պիտի խոստովանիք, որ կրթական բնագաւառը մեր ծրագիրներուն մէջ առաջնային տեղ պէտք է գրաւէ, պիտի խոստովանիք, որ մեր համայնքի ապագայ զարգացումները կախեալ են կրթական բնագաւառի ապրած զարգացումէն, եթէ տակաւին համոզուած չէք, որ կրթականն է մեր էութեան պահպանման երաշխիքը, ապա պէտք է կարդանք Խրիմեան Յայրիկ եւ լսենք, որ այս իմաստուն մարդը շուրջ մէկուկէս դար առաջ ինչպէ՞ս բնութագրած է ուսումն ու կրթութիւնը:



Եթէ համոզուիք, ուրեմն ահագանգ պիտի հնչեցնենք եւ առ այդ մշակենք մեր ծրագիրները:

Կրթական մշակ եւ հրապարակագիր Լեւոն Շառոյեան շրջան մը առաջ մամուլով շատ լուրջ յօդուածներ լոյս ընծայեց կրթական բնագաւառի դիմագրաւած դժուարութիւններուն մասին, քանի՞ կրթական հաստատութիւն կարդաց այդ օգտաշատ յօդուածները, քանի՞ ինքնամակալական կամ հոգաբարձական կազմ ականջ տալով այնտեղ ներկայացուած մերօրեայ հարցերուն հանդիպումի հրաւիրեց յօդուածագիրը եւ գլուխգլխի քննարկեց հարցերը, որպէսզի իր հովանաւորած կրթօջախը բարելաւէ, քանի՞ կողմ մտածեց այս կարեւոր օրակարգով խորհրդակցական հանդիպում կամ խորհրդաժողով հրաւիրել եւ միահամուռ ջանքերով սերտել հարցերը:

Այսուամենայնիւ, ուշ քան երբեք...: Տակաւին կարելի է բարեփոխումներու ծրագիր մշակել, տակաւին ժամանակը չէ սպառած

վտանգի գօտիէն դուրս գալու համար, տակաւին կարելի է մտածել հետեւեալ առաջադրանքներուն մասին.

ա.-Ուսուցիչներու, տեսուչներու, դաստիարակներու եւ տնօրէններու համար մշակուած կարճաժամկետ մասնագիտական դասընթացքներ կազմակերպել (սմանօրինակ ողջունելի աշխատանք մը այս օրերուն կը գործադրուի Բերիոյ Յայոց Թեմի Ուսումնական Խորհուրդին կողմէ):

բ.-Վարժողական ծրագիր կազմակերպել:

գ.-Վերել նշուած երկու ծրագիրները ապարդիւն կը դառնան, եթէ հոնկէ ստացուած գիտելիքներու եւ փորձառութեան գործադրումը չհետապնդուի: Չի բաւեր մասնակցութիւնը, այլեւ ստրկածը գործադրելն է հարկաւոր:

դ.-Խստապահանջ ըլլալ ուսուցիչներուն ոչ միայն դասատուութեան եղանակին եւ փոխանցած գիտելիքներուն նկատմամբ, այլեւ՝ վերաբերմունքին, վարմունքին, նոյնիսկ աշակերտին հետ խօսակցութեան ոճին:

ե.-Սեղանի մը շուրջ համախմբել հայկական վարժարաններու հայերէնաւանդ ուսուցիչները, քննարկել եւ եզրակացնել հետեւեալ հարցերը.

I.-Յայերէն ուղղագրութեան եւ լեզուաբանութեան մէջ տեղի ունեցած նորութիւնները:

II-Յայերէն ուսուցիչի պատրաստուածութեան մակարդակը:

III-Յայեցի դաստիարակութեան ծրագիր խցընդոտները:

IV-Յայերէնասեր եւ ազգասեր սերունդներ պատրաստելու նախագիծերը:

V-Յայ ուսուցիչի տիպարը:

Ինչքան կարեւոր են ուսումն ու գիտութիւնը, նոյնքան եւ անելի կարեւոր են ապրումն ու նուիրումը: Ուսուցչութիւնը կոչում է, վճարովի արհեստ չէ, այլ՝ պատուեգինով նուիրական առաքելութիւն: Դպրոցին մակարդակը ուսուցիչի մակարդակէն կախեալ է եւ ոչ թէ կրթօճախի գեղեցիկ կառոյցէն, որովհետեւ դպրոցաշէնքը չէ կրթօճախին մակարդակը արժեւորողը, այլ այնտեղ շընչողն ու շունչ սպառողը: Օրուան հրամայականը կրթական բնագաւառի վերելքին զարկ տալն է:



ՍՈՒՐԻՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԸ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԻՃԱԿՆ ՈՒ ՄԵՆՔ

Յակոբ Քիլճեան

Տնտեսութիւնը պետութեան մը զարգացման գլխաւոր գործօններէն մէկն է, որ կ'երաշխաւորէ ընկերութեան կայունութիւնը եւ բարօրութիւնը:

Երկրի մը տնտեսութեան մաս կը կազմեն անոր ընդերքը, բնական հարստութիւնները, արտադրութիւնները, դրամանիշը, ճարտարագիտութիւնը եւ այլն:

Յաճախ պատերազմներ տեղի ունեցած են տնտեսութիւնը թիրախ դարձնելով, ըլլան անոնք դասական կամ տնտեսական պատժամիջոցներ, շրջափակում, դրամա-

կարելոր աշխարհագրական դիրքով: Ան կամիջած է Արեւելքն ու Արեւմուտքը եւ դարձած առեւտուրի հիմնական ճանապարհներէն մէկը:

Սուրիոյ տնտեսութիւնը նախքան 2011-ի պատերազմը կը յատկանշուէր ընդհանրապէս երրորդ երկիրներու տնտեսական յատկանիշներով եւ առաջնորդուած էր ընկերվարական սկզբունքներով, մանաւանդ անցեալ դարու ութսունական թուականներուն, երբ երկիրը կը դիմագրաւէր տնտեսական շրջափակում եւ ճգնաժամ: 2000 թուա-



տուներու հետ յարաբերութեան խզում, երկրէն դուրս գտնուող դրամագլուխի սառեցում եւ այլն:

Սուրիան պատմութեան ընթացքին եղած է հարուստ երկիր՝ իր բնութեամբ եւ

կանէն ետք, տնտեսական աճը պետութեան առաջնահերթութիւններու ցանկին մէջ անելի բարձր դիրք գրաւեց: Տեղի ունեցան կարգ մը տնտեսական բարեկարգումներ, ինչպէս սեփական դրամատուներու գործելը Սու-

րիոյ տարածքին եւ նոր օբեկտներու որդեգրումը, որոնք կը քաջալերեն օտար դրամագլուխներու ներդրումը Սուրիոյ մէջ: Այս բոլորին արդիւնքով Սուրիոյ տնտեսութիւնը աճ արձանագրեց եւ Սուրիոյ դրամանիշը՝ լիրան, բաւական կայուն վիճակի մէջ մնաց:

Սակայն 2011-ի պատերազմը այս աճը եւ զարգացման ընթացքը շրջեց եւ տարիներու աշխատանքի արդիւնքով արձանագրուած ձեռքբերումները շոգիացան, իսկ Սուրիոյ տնտեսութիւնը ապրեցաւ ու կ'ապրի իր ամենէն դժուար օրերը:

դաք Դամասկոսի մէջ տնտեսութիւնը աւելի լաւ վիճակ կը պարզէ համեմատաբար: Հակառակ անոր, որ Դամասկոսի մէջ սղաճը բարձրագոյն տոկոսը ցոյց կու տայ, սակայն գործարաններն ու փոքր մակարդակի աշխատանքները աւելի լաւ վիճակի մէջ են, այլ նահանգներու հետ համեմատած, իսկ արեւելեան նահանգները, որոնք կառավարութեան հակակշռէն դուրս են, բացուած են դրացի երկիրներու եւ անոնց շուկաներու հետ յարաբերութիւններ կը մշակեն ու օտար դրամանիշով առեւտուր կ'ընեն:



Առաջին հերթին դադրեցաւ զբօսաշրջութիւնը, որ կը կազմէր Սուրիոյ տնտեսութեան 15 առ հարիւրը, ետքը բոլոր օտար ներդրումները Սուրիոյ մէջ կասեցուեցան ու յառաջացաւ օտար դրամանիշի պահանջքի խնդիր, հետեւաբար ալ սուրիական լիրան սկսաւ հետզհետէ կորսնցնել իր արժէքը եւ գնաճի մակարդակը բարձրանալով հասաւ մինչեւ 140 առ հարիւրի:

Պատերազմին վրան աւելնալու եկան տնտեսական պատժամիջոցները, պասկաձեւ ժահրի համաճարակը, Ուքրանիոյ պատերազմը, երկրաշարժը եւ վերջապէս Կազախի պատերազմը, որոնք աւելի ծանրաբեռնեցին Սուրիոյ տնտեսութիւնը, որ արդէն հակակշռելի չէր կառավարութեան կողմէ:

Վատ վիճակի մէջ են երկրի հիմնական ենթակառոցները՝ էլեկտրականութեան, ջրի մատակարարում, հաղորդակցութեան միջոցներ, փոխադրամիջոցներ, պետական ծառայողական հաստատութիւններ:

Ներկայիս տնտեսական վիճակը կը տարբերի նահանգէ-նահանգ: Մայրաքա-

Հալէպը, որ ճանչցուած է իբրեւ Սուրիոյ տնտեսական մայրաքաղաքը, ստացաւ իր տնտեսութեան մեծագոյն հարուածը: Ան ուներ շրջանի երկիրներուն մէջ մեծագոյն արդիւնաբերութեան գօտիներէն մէկը, որ կը յատկանշուէր այլազան գործարաններով, որոնք իրար կ'ամբողջացնէին, իսկ արտադրութիւնը կը կատարելագործուէր անոր սահմաններուն մէջ, առանց կարիք ունենալու այլ արդիւնաբերութեան գօտիներէ կամ այլ երկիրներէ որեւէ նիւթի: Այս գործարաններու մեծամասնութիւնը կողոպտուեցաւ, մանաւանդ թրքամետ խմբաւորումներու կողմէ, Թուրքիոյ դրդումով: Ներկայիս արդիւնաբերութիւնը նուազագոյնի հասած է Հալէպի մէջ, չըսելու համար ոչնչացած է, որովհետեւ հում նիւթի չգոյութիւնը կամ գոյութեան պարագային իր բնական գինէն աւելի բարձր ըլլալը կը ստիպէ գործարարը, որ ապրանքին գինը բարձրացնէ, սակայն մատչելի չըլլար հասարակութեան համար եւ իր մրցակցութիւնը կը կորսնցնէ շրջանի այլ շուկաներու արտադրութեան հետ:

Աւելին. գործարարին դեմ բազմաթիւ խոչընդոտներ կան եւ ան յաւելեալ տուրք կը վճարէ հում նիւթ ներմուծելու ու արտադրելու համար: Ասոնց կողքին շահատուրքը եւ մաքսատուրքը աւելի կը ծանրաբեռնեն գործարարն ու վաճառականը: Անշուշտ այս բոլորը կ'ենթադրեն արդիւնաբերութեան որակի անկում:

Տնտեսութիւնը կառուցելն ու զարգացնելը երկար տարիներու աշխատանք կ'ենթադրէ, սակայն տնտեսութիւնը քանդելը՝ շատ աւելի կարճ ժամանակ: Յստակ է, որ Սուրիան իր սեփական ուժերով առանձին չի կրնար վերականգնել այս տնտեսական վիճակը, իսկ եթէ չըլլան արտաքին օժանդակութիւններ, վերականգնումը կ'երկարի տասնեակ տարիներ:

Սուրիական դրամանիշի՝ լիրայի, անկումը աւելի արագ է քան պաշտօնէութեան ամսական թոշակները աւելցնելու կառավարութեան կարողականութիւնը, իսկ կառավարութեան հիմնական մուտքի աղբիւրները կը մնան շահատուրքն ու մաքսատուրքը: Այս շղթային մէջ պետական պաշտօնեան կը մնայ տկարագոյն օղակը, որուն միջին աշխատավարձը կը հասնի լաւագոյն պարագային երեսուն ամ. տոլարի: Համաձայն կարգ մը սերտողութիւններու, Սուրիոյ ժողովուրդի 90 առ հարիւրը կը մնայ աղքատութեան շեմէն վար: Ըստ ՄԱԿ-ի չափանիշներուն, մարդու օրական եկամուտը պէտք է ըլլայ նուազագոյնը 1,9 ամ. տոլար, որ կը համապատասխանէ ամիսը յիսունեօթ ամ. տոլարի:

Սուրիոյ մեծագոյն վնասը կը մնայ իր մարդուժի գաղթը դեպի այլ երկիրներ, որուն ներկայութիւնը ճգնաժամէն ետք անհրաժեշտ է վերականգնումի աշխատանքին համար:

Իսկ Սուրիոյ հայութիւնը ո՞ր է այս բոլորէն: Անշուշտ իբր Սուրիոյ ընկերութեան անբաժան մասնիկը, հայութիւնն ալ, ինչպէս բոլորը, նոյն վնասները կրեց:

Գաղութի թիւը նօսրացաւ: Մեծ թիւով հայորդիներ գաղթած են, անոնց հետ գաղթած է որակի կարելոր բաժին մը: Ծննդաբերութեան համեմատութիւնը նուազած է: Գործարարները փակած են իրենց գործարանները: Ժողովուրդին մեծ մասը կ'ապրի բաժնուած օժանդակութիւններուն եւ դուրսէն եկած գումարներուն վստահելով: Պաշտօնեաներուն ամսականները (միջին ամսականը, որ 30 ամ. տոլար է), հազիւ կը բաւարարեն ընտանիքի քանի մը օրուան ծախսերը:

Գաղթի արագընթաց երթը հաստատութիւններու եւ միութիւններու մարմիններուն մէջ ստեղծած է կարգի եւ փորձառութեան փոխանցման բնական եղանակի խախտում, որուն հետեւանքով այնտեղ ստեղծուած է թուլութիւն եւ փորձառու անհատներու թիւի նօսրացում: Տրամադրուած պիտոճէները բաւարար չեն ծրագիրներու իրականացման համար, իսկ կատարուած ծրագիրները բաւարար չեն եղածը պահելու համար: Հիմնական հարցումը, որ կը մնայ հետեւեալն է. Արդեօ՞ք մենք կարողութիւն ունինք եղած վիճակը հակակշռելու: Թէեւ Սուրիոյ կառավարութեան հասած օժանդակութիւնները, որոնք կը տրամադրուին կարգ մը բարեկամ երկիրներու կողմէ, սահմանափակ են, սակայն համայնքներու տրամադրուած օժանդակութիւնները աւելի ազդեցիկ կրնան ըլլալ, որովհետեւ այս պարագային կան յստակ անուանացանկեր, որոնք բիրեղացած են պատերազմի տարիներուն: Պատերազմի սկիզբը ցանկին մաս կազմող ընտանիքներուն թիւը շատ աւելի էր քան՝ այսօր, հետեւաբար ներկայիս կարելի է աւելի մեծ թիւով մարդոց օժանդակութեան հասնիլ: Ծառայողական բնոյթ ունեցող հաստատութիւնները այս օրերուն պէտք է իրենց հասած նուիրատուութիւնները լիովին յատկացնեն ժողովուրդին՝ այդ գումարները բաժնելով երկու տեսակ ծրագիրներու, առաջինը՝ գուտ նիւթական օժանդակութիւններ, երկրորդը՝ հիմնելու ծառայողական բնոյթ ունեցող հաստատութիւններ, որոնք կրնան գործ հայթաթել երիտասարդութեան: Պէտք է ընդունիլ, որ այս գաղութի ապագան կը ճշդուի երիտասարդութեան պարզած վիճակին լոյսին տակ: Երիտասարդութիւնը, որ իր հետաքրքրութիւնները սկսած է որոնել այս երկրէն դուրս, որովհետեւ յոյսի նշոյլ չի տեսներ ներկայ վիճակի լայնամասշտապ բարեփոխման համար:

Հետեւաբար կարելոր է տաղանդաւոր, փորձառու եւ իւրայատուկ ուժերուն տրամադրել համապատասխան պիտոճէ՝ պահելու զանոնք, որովհետեւ կորսուածը դժուար է կրկին գտնել: Պաշտօնեաներուն թոշակները պէտք է բաւարարեն ընտանիքի նուազագոյն կարիքները: Լքուած կառոյցները անհրաժեշտ է յարմար ձեւով շահարկել: Այս բոլորը իրականացնելու համար անհրաժեշտ է մէկդի դնել տարակարծութիւնները, մեր ուժերը համախմբել՝ միասնաբար յաղթահարելու այս դժուար պայմանները:





ՀԱԼԷՊԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԵԱՆՔԻՆ ՊԱՐԶԱԾ ՎԻՃԱԿԸ

Մեան Շահագրգիռ

Կը փորձեմ վերյիշել տասնամեակ մը առաջուան մեր հասարակական-ընկերային կեանքը, երբ ամեն ինչ համարեա՛ր իր բնականոն գոյնը, համն ու հոտը ունէր կամ թերեւս մենք այդպէս կը կարծէինք: Հասարակութիւնը իր տարբեր շերտերով միաւորուած կը գործէր անկախ յարանուանական, կուսակցական եւ կամ ազգային խմորումներէն, այդ օրերուն մեզ միաւորողը մարդ-

ներէն, երբ տեսանք, որ մահուան ուրուականը մեր չորս կողմը կը թափառի, իսկ կեանքը ակնթարթ մըն է, հետեւաբար մտածեցինք, որ աւելի լաւ է մեր անձին մասին մտածելը, քան՝ ուրիշներուն հոգալը:

Այսօրուան տիրող իրավիճակին ի տես կը վերյիշեմ ջերմութիւն եւ հոգատարութիւն բուրոյղ մեծ մօրս եւ հօրս տունը եւ կը փորձեմ տրամաբանական բացատրութիւն

գտնել հոն անցած դարձածին: Ահա՛ ճիշդ այդ նեղլիկ տան մէջ կը վայելէինք հրաշագործ մեծ մօրս եւ հօրս հոգատարութիւնն ու անհամար գոհողութիւնները: Թէ ինչպէս տեղն ու տեղին ամեն տեսակի տնային աշխատանք կ'իրականացնէին, պաշար կ'ամբարեին, գացող-եկող հիւրերուն կը հիւրասիրէին, մեր բոլորին պետքերը կը հոգային, մեծին հոգը կը թեթեւցնէին, փոքրին խաղը կը տանէին, հաստատաբար իրենք ալ ունէին մտահոգութիւններ, կեանքի դժուար պայման-



կային վեհ արժեքներն ու բարոյական կապերն էին: Այդ բոլորը վերջին շրջանին քայքայման ենթարկուեցան եւ մարդ արարածը իր բնագոյնէրու գերին դարձաւ՝ առանց կանգ առնելու կամ զսպուելու:

Ի՞նչն էր արդեօք պատճառը՝ պատերազմը, անձնասիրութի՞ւնը, ինքնանպատակ եւ եսակեդրոն դոսեւորումները: Արդեօք մահուան սպառնալի՞քն էր, որ մեզ այսքան հեռացուց մեր մարդկային սկզբունք-

ներ, յուսալքութեան վայրկեաններ, սիրտ ու հոգի մաշեցնող կսկիծներ, թախիծ ու մորմոք, բայց եւ այնպէս միշտ ու միշտ մեզ դիմաւորած էին լայն ժպիտով եւ օրհնաբեր մաղթանքներով, իսկ իրենց այդ վերաբերմունքը վարակիչ անդրադարձ ունեցած էր թէ՛ մեր եւ թէ՛ մեր շրջապատին վրայ:

Իսկ այսօր... Այսօր պատկերը լրիւ տարբեր է, կազմաքանդուած է անհատին առաջին խնամակալը՝ ընտանիքը, տիրող

քաղաքական, ընկերային եւ տնտեսական պայմաններուն, բարոյական արժէքներու եւ ըմբռնումներու փոփոխութեան եւ ամենէն կարեւորը աւերիչ ընկերային ցանցերուն պատճառով: Ականատես եղանք ընտանիքի երեցի կերպարի փլուզման, հայրը կամ ընտանիքի երեցը այլեւս ուժեղ եւ ոգեշնչող անձնաւորութիւն չէ իր երեխաներուն համար, որովհետեւ իր մտայնութիւնն ու մտածելակերպը այլեւս հնամենի եւ եւ չեն համընկնիր նորօրեայ «գարգացած» պայմաններուն հետ, դեռ աւելին. այլեւս ընտանիքի անդամներուն մեծամասնութիւնը կ'աշխատի, տնտեսապէս անկախ է, հետեւաբար ծնողական վերահսկողութենէ դուրս է, այնպէս որ փողոցը դարձաւ ինսամակալ, մոռնալով, որ նոյն այդ հայրն էր, որ տարիներ շարունակ առանձին կը մաքառէր ընտանիքին ապրուստը հոգալու, ուսումնական ծախսերն ու ընկերային կարիքները ապահովելու: Բայց եւ այնպէս որպէսզի արդարացի ըլլանք ճիշդ չէ միայն ժխտականօրէն դատել պատկերը, ժամանակին եթէ ընտանիքը նիւթապէս բաւարարուած էր, ամօթալի էր ընտանիքի մնացեալ անդամներուն յատկապէս իգական սեռին աշխատանքը, օրէ օր փոխուեցան ըմբռնումները եւ արմատացաւ այն գաղափարը, որ աշխատանքը կապ չունի կարիքաւոր ըլլալու իրականութեան հետ, հաստատուեցաւ այն միտքը, որ աշխատանքը մարդ անհատի ինքնաարտայայտումն է, անձին կարողութիւններուն եւ աստուածատուր շնորհներուն գարգացումն ու կատարելագործումը: Այս բոլորին կողքին եղան նաեւ բարձր գիտակցութեան տէր գաւակներ, որոնք անըզգամ եւ ձեռնածալ չմնացին իրենց հօր կամ մօր ամենօրեայ ապրուստը հոգալու վագքին մէջ, փութացին եւ ձեռք երկարեցին, իրենց կարելին ըրին բեռը թեթեւցնելու:

Ինչպէս անցեալին, նաեւ վերջին տասնամեակին, յատկապէս երիտասարդներուն մօտ շեշտուեցաւ գաղթի երեւոյթը: Բնականաբար արդար իրաւունքն է բարօր կեանքի պայմաններ ունենալը, նեռարեալ կեանքի ապահովութիւնն ու կայունութիւնը, առողջապահական, մշակութային, կրթական եւ աշխատանքային ենթակառոցներու յարմարագոյն պայմաններու գոյութիւնը, իսկ պատերազմական թոհ ու բոհէն ելած երկրի մը համար դժուար էր օր ու գիշերուան մէջ կայուն վիճակ գտնելը, այս պատճառով ընտանիքներ, յատկապէս երիտասարդներ, այլեւս համբերանք չունեցան դեռն տոկալու եւ դեռն արշալոյսը սպասելու եւ որոշեցին գաղթի ճամբան բռնել: Այս մէկը պատճառ դարձաւ ոչ միայն գաղութիս մէջ ընդհանրապէս եւ միութենական ու համայնքի պայմաններ ունենալը, նեռարեալ կեանքի ապահովութիւնն ու կայունութիւնը, առողջապահական, մշակութային, կրթական եւ աշխատանքային ենթակառոցներու յարմարագոյն պայմաններու գոյութիւնը, իսկ պատերազմական թոհ ու բոհէն ելած երկրի մը համար դժուար էր օր ու գիշերուան մէջ կայուն վիճակ գտնելը, այս պատճառով ընտանիքներ, յատկապէս երիտասարդներ, այլեւս համբերանք չունեցան դեռն տոկալու եւ դեռն արշալոյսը սպասելու եւ որոշեցին գաղթի ճամբան բռնել: Այս մէկը պատճառ դարձաւ ոչ միայն գաղութիս մէջ ընդհանրապէս եւ միութենական ու համայնքի պայմաններ ունենալը, նեռարեալ կեանքի ապահովութիւնն ու կայունութիւնը, առողջապահական, մշակութային, կրթական եւ աշխատանքային ենթակառոցներու յարմարագոյն պայմաններու գոյութիւնը, իսկ պատերազմական թոհ ու բոհէն ելած երկրի մը համար դժուար էր օր ու գիշերուան մէջ կայուն վիճակ գտնելը, այս պատճառով ընտանիքներ, յատկապէս երիտասարդներ, այլեւս համբերանք չունեցան դեռն տոկալու եւ դեռն արշալոյսը սպասելու եւ որոշեցին գաղթի ճամբան բռնել:



Երիտասարդութեան եւ յատկապէս տղոց գաղթի հետեւանքով յառաջացած դրական միակ երեւոյթը այդ էր, որ իգական սեռին առիթ տրուեցաւ յայտնուելու վճարովի եւ կամ կամաւոր տարբեր-տարբեր պատասխանատու պաշտօններու վրայ, բայց եւ այնպէս պէտք չէ վարանիկը ըսելու, որ տղաքը ընդհանրապէս կը խուսափէին նման ձեռնարկութիւններու մէջ աշխատանք ստանձնելէ վարձատրութիւններուն անբաւարարութեան պատճառով: Ծիշդ է, որ ազգային իշխանութիւնը, շտապի միասնական մարմինը, հայրենիքի, Երրօրայի եւ Ամերիկայի մէջ գործող շրջանաւարտից միութիւնները, տե-

քային դաշտին մէջ յատկապէս երիտասարդ մարդուժի բացակայութեան, այլեւ տարեցներ ու ծերունիներ մնացին առանձին՝ կենցաղային եւ նիւթական դժուարութիւններու առջեւ անզօր եւ կարօտեալ:

Երիտասարդութեան եւ յատկապէս տղոց գաղթի հետեւանքով յառաջացած դրական միակ երեւոյթը այդ էր, որ իգական սեռին առիթ տրուեցաւ յայտնուելու վճարովի եւ կամ կամաւոր տարբեր-տարբեր պատասխանատու պաշտօններու վրայ, բայց եւ այնպէս պէտք չէ վարանիկը ըսելու, որ տղաքը ընդհանրապէս կը խուսափէին նման ձեռնարկութիւններու մէջ աշխատանք ստանձնելէ վարձատրութիւններուն անբաւարարութեան պատճառով: Ծիշդ է, որ ազգային իշխանութիւնը, շտապի միասնական մարմինը, հայրենիքի, Երրօրայի եւ Ամերիկայի մէջ գործող շրջանաւարտից միութիւնները, տե-

ղական եւ համաշխարհային բարեսիրական նպաստի մարմիններ տարբեր առիթներով եւ տարբեր տեսակի օժանդակութիւններ կը տրամադրեն մեծին եւ փոքրին, նորածինին եւ տարեցին, աշակերտին եւ ուսանողին, արհեստաւորին եւ նորապսակ գոյգերուն, բայց եւ այնպէս կարելի չէ հիմնուիլ նման օժանդակութիւններու վրայ՝ ապրուստ ապահովելու եւ կամ կայուն ապագայ խոստանալու համար:

Երկրի տնտեսական անկայուն վիճակը պատճառն էր, որ երիտասարդներ հրաժարին ընտանիք կազմելու գաղափարէն, նկատի ունենալով անոր ծանր բեռը, յատկապէս



ընտանիքի անդամներուն թիւը մեծնալու բերումով յառաջացած դժուարութիւնները, չնայած վերջին գոնէ 15 տարիներուն նուազած է բազմազաւակ ընտանիքներուն թիւը:

Բայց եւ այնպէս վերջին շրջանին նկատառելի է շատ երիտասարդ (20-30) տարիքի գոյգերու ամուսնութիւնը, որոնց մեծամասնութիւնը հմայուած ըլլալով նախամուսնական եւ յետամուսնական արեւմտեան բարքերով ու սովորութիւններով (propose, save the date, baby's welcome shower...) կը փորձէ նորութիւն բերելով իր առիթը իւրաքանչեւ դարձնել: Մտահոգիչը այն է, որ ամուսնական կեանքի պատասխանատուութիւններուն ու դժուարութիւններուն դէմ յանդիման գտնուելէ ետք՝ այդ նորակազմ ընտանիքներու մեծ մասը փուլ կու գայ եւ կ'ունենանք քայքայուած ընտանիքներ եւ անոնցմէ ծնունդ առած՝ հոգեպէս խանգարուած զաւակներ:

Այսպէս, արեւմտեան բարքերն ի տես, հնամենի մնացին աւանդական տոհմիկ ընտանիքներն ու հայկական աւանդութիւնները, բարքերն ու սովորութիւնները, անոնք պարզապէս մնացին մշակութային միութիւններու քարոզչական ձեռնարկներու բովանդակութիւնը, հազուադէպօրէն կը գըտնենք երիտասարդներ, որոնք հաճոյք կ'առնեն եւ կամ իրենց առօրեային բաժին կը դարձնեն այս բոլորը:

Դժբախտաբար կրնանք եզրակացնել, որ այնպէս ինչպէս մեր երկրի քաղաքական եւ պատերազմական վիճակին, նոյնպէս ալ մեր առօրեայ հարցերուն հիմնական դրդապատճառները ընկերային ցանցերն էին եւ կը շարունակէն մնալ. անոնց դերակատարութիւնը մեծ էր մարդկային վեհ արժեքներու արժեզրկման մէջ: Այդ հարթակները հիմնականապէս դարձան ցուցամոլութեան, վիրաւորանքներու փոխանակման եւ նոյնիսկ սպառնալիքներու ասպարէզ, հեռու ողջմիտ երկխօսութենէ եւ փնտրոտուքներէ:

Եւ այս բոլորին ի տես կը մտածեմ մեր ազգի բոլոր բաղադրիչներուն դերակատարութեան մասին բոլոր բնագաւառներէն ներս անխտիր: Անբաւարար էին բոլորին կողմէ կազմակերպուած եւ ծրագրաւորուած գործելաոճերը, այո՛ սերտած եւ ճանչցած էինք մեր անցեալի եւ ներկայի բացթողումներն ու դժուարութիւնները, բայց չէինք յաջողած ճշդել մեր ապագայի մարտավարութիւնն ու կիրարկելիք ռազմավարութիւնը, բեմերէն հնչող սրտառու ճարերը մնացին պարզապէս ծափողջոյններ խլող ելոյթներ, ո՛չ մնացած իսկական մարդուժը փրկեցինք զանոնք խթանելով եւ աշխատանքային խրախուսող պայմաններ ստեղծելով, ո՛չ իսկ գալիք շրջանին համար այսօրուան արհեստավարժ աշխարհին հետ քայլ պահող մասնագետ նոր ուժ պատրաստեցինք: Եւ հակառակ մեր եզրակացուցածին, խօսածին, լսածին եւ շօշափածին՝ մնացինք նոյն շրջանառուող օղակին մէջ կարկտան լուծումներու եւ «գործ քալեցնողներու» սահմաններուն մէջ:



ՆԱՄԱԶԳ-ԱՅԻՆԻ ՆԱԼԷՊԻ ՆԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՆԻՄՆԱՐԿԸ՝ ՄԻՋԻՆ ԱՐԵԲԵԼՔԻ ԱՆՄԱՐ ՓԱՐՈՍԸ

Անի Դալիթեան-Ուրիշիկեան

Հին ժամանակներէն, հայ ժողովուրդին համար կրթական կեանքն ու մայրենիին պահպանումը կենսական հարցերէն եղան: Դարերէ ի վեր գոյութիւն ունեցող հայ ժողովուրդի պատմութեան ճակատագրական բոլոր հանգրուաններուն եական դեր ունե-

ցումը եւ ժամանակակից աշխարհի արագ փոփոխութիւնն ու անոր արագ հոսքին ազդեցութիւնները՝ իրենց դրական կողմերուն կողքին ունեցան նաեւ իրենց ժխտական կողմերը ո՛չ միայն քաղաքական, տնտեսական, մշակութային, մարդկային եւ ուրիշ



ցան հայ եկեղեցին ու հայ դպրոցը, որոնք եղան հայեցի դաստիարակութեան, հայապահպանումի եւ հայակերտումի գլխաւոր գործօնները:

Աւելի ուշ Հայաստանի, ինչպէս նաեւ Սփիւռքի տարբեր գաղթօճախներու մէջ զարկ տրուեցաւ նաեւ հայագիտական ուսումնասիրական ամպիոններու եւ կեդրոններու հաստատման: Ուսումնական եւ գիտական այս համակարգը, որ իր մէջ ընդգրկեց հայ ժողովուրդի մշակոյթը, գրականութիւնը, լեզուն եւ պատմութիւնը՝ մեծ դեր ունեցաւ կրթական կեանքէն ներս:

Սակայն՝ առհասարակ վերջին յիսուն տարիներու ընթացքին համաշխարհայնա-

ւորտներու մէջ, այլ նաեւ կրթական համակարգին վրայ:

Այնուհետեւ Սփիւռքի տարածքին հայօրէն գոյատեւելու համար, ազգային դաստիարակութիւն ջամբելու եւ արեւմտահայերէնը պաշտպանելու նպատակով հայագիտական նշանաւոր կեդրոններ հաստատուեցան ու համալսարանական ամպիոններ զարգացան, ինչպէս Վենետիկի, Վիեննայի, Թիֆլիսի, Փարիզի, Պոլիսի, Իրանի, Կիպրոսի, Եգիպտոսի, Լիբանանի, Սուրիոյ մէջ եւ այլուր:

Ինչպէս նշեցինք, կրթական համակարգը վերջին կէս դարուն այլ ոլորտներու կողքին ստացաւ իր դժբախտ բաժինը, մանա-

լանդ արեւմտահայերէնի տակաւին բաբախող սիրտերը՝ Լիբանան եւ Սուրիա, ուր ներքին պատերազմը, տնտեսական վիճակը, կենցաղային հարցերը պատճառ դարձան, որ հայ ժողովուրդի հայեացքը ուղղուի դէպի Եւրոպա, Քանադա եւ Միացեալ Նահանգներ: Մեծ թիւով հայեր հեռացան իրենց ծննդավայրէն, նօսրացնելով հայ համայնքը



եւ պատճառ դառնալով մարդուժի տկարացման, դպրոցներու, ճեմարաններու, հայագիտական հիմնարկներու փակման եւ արեւմտահայերէնի ուսուցման դադրեցման:

Հակառակ այս բոլոր բացասական իրադարձութիւններուն, մեծ հպարտանքով կ'ուզենք անդրադառնալ Համազգայինի Հալէպի Հայագիտական Հիմնարկին, Միջին Արեւելքի առանձնայատուկ եւ եզակի այն կեդրոնին, որ հակառակ բազում դժուարութիւններուն 27 տարիէ ի վեր կը գործէ անխափան:

Համազգայինի Հալէպի Հայագիտական Հիմնարկը Սուրիոյ Շրջանային Վարչութեան կողմէ հիմնուեցաւ 1996-ին: Նախաձեռնութիւնը կը միտեր սուրիահայ համայնքէն ներս ուսումնական հաստատութիւններուն համար պատրաստել հայերէնաւանդ դասատուներ եւ որակաւոր մարդուժ, կազմաւորել հայագետներ, ինչպէս նաեւ Սփիւռքի տարածքին պահպանել արեւմտահայերէնը՝ վառ պահելով հայ ժողովուրդի մշակութային եւ կրթական կեանքը:

Արդարեւ, Սուրիոյ Շրջանային Վարչութեան Նախապատրաստական աշխատանքներէն ետք, գործնական աշխատանքը սկիզբ առաւ եռամեայ ծրագրով: Անշուշտ ուսումնական այս ճանապարհը հարթելը հեշտ չէր, ուսումնական ծրագրի հաստատումը կը պահանջէր բարոյական, կազմակերպչական, մարդուժի եւ տնտեսական իրականացում: Այս ընթացքին դժուարութիւններէն մէկն ալ այն էր, որ Հայագիտական Դասընթացի ծրագրի իրականացման համար պատրաստ դասագիրքեր չկային, ուստի դասաւանդութեան ծրագրի գիրքերը պատրաստուեցան հիմնարկի նուիրեալ դասախօսներու կողմէ եւ իւրաքանչիւրը իր մասնագիտութեամբ տարիներու ընթացքին դասագիրքերը վերամշակեց եւ խմբագրեց: Կարճ ժամանակ մը վերջ եռամեայ դասընթացը դարձաւ հայագիտական քառամեայ ծրագիր:

Հիմնարկի կարելոր հանգամանքներէն մէկն ալ այն է, որ հայագիտականը ուսանողութեան համար տարիքային խմբաւորում չունի, քառամեայ դասընթացքին կրնան հետեւիլ պետական պաքաւորիա ունեցող ու-



սանող եւ ուսանողուհիներ: Հիմնարկը իր դռները իւրաքանչիւր տարեշրջանի, ի հեճուկս բոլոր դժուարութիւններուն, վերստին կը բանայ եւ կը հիւրընկալէ ուսումնասեր, գրականասեր, պատմասեր, բանասեր եւ լեզուասեր նոր ուսանողներ: Սակայն վեր-

ջերս հայերենը եւ մանաւանդ արեւմտահայերենը նահանջի մէջ են ոչ միայն Սփիւռքի մէջ, այլ նաեւ արեւմտահայերէնի պաշտպան եւ կորիզ համարուող Յալէպի մէջ, ուր տնտեսական եւ կենցաղային հարցերը այնքան ծանրացան, որ մայրենիի (արեւմտահայերէնի) նկատմամբ հետաքրքրութիւնն ու հետապնդումը երկրորդական դարձան, չնայած որ այս մէկը պատճառաբանութիւն պետք չէ ըլլայ:

Յետեւաբար, ուսանողութեան պատկերը հիմնարկէն ներս ալ հետզհետէ նուազե-

պակածել ժահրի համաճարակը, երկրաշարժը եւ այլն):

Նախապէս հիմնարկ կ'այցելէին Յալէպ ժամանած հիւր արուեստագետներ, գրողներ եւ մտաւորական դէմքեր՝ Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ, ինչպէս նաեւ հիմնարկը հիւրընկալած է հայրենի դասախօսներ (փրոֆ. Լալիկ Խաչատուրեան, փրոֆ. Ռուբէն Սահակեան, գրաբարագետ՝ Էդուարդ Մկրտչեան, դոկտոր Ժիլիէթա Կիլամիրեան, դոկտ. Անահիտ Սարգիսեան եւ ուրիշներ), որոնք իրենց մասնագի-



ցաւ եւ բախտատմամբ նախանցած տարիներուն նօսրացաւ՝ կեանքի զանազան պայմաններու բերումով: Այս առնչութեամբ Յայագիտական Յիմնարկի Միաւորը՝ հայերէնասեր նոր երիտասաղներ անդամագրելու միտումով իւրաքանչիւր ուսումնական տարեշրջանին հիմնարկէն ներս քառամեայ ծրագիրին հետեւելու համար հաստատած է կրթական նպաստի նուիրում (scholarship) անխտիր բոլոր հայ ճեմարաններու երկրորդականի աւարտական կարգին հայերէն լեզուի նկատմամբ սեր եւ հետաքրքրութիւն ունեցող աշակերտներուն: Ուստի Յայագիտական Յիմնարկին կարելորագոյն առաքելութիւնը արեւմտահայերէնը պահպանել եւ մարդուժ պատրաստելն է՝ ծառայելու կրթական, միութենական եւ մշակութային կեանքէն ներս:

Արդարեւ, Յամազգայինի Յալէպի Յայագիտական Յիմնարկը հիմնուած օրէն հաւատարիմ մնալով իր առաքելութեան եւ նպատակներուն աներեր կը գործէ, տարուէ տարի կատարելագործելով ինքզինք: Այս տարիներուն ընթացքին հիմնարկը յաջողած է դիմագրաւել ժամանակի բոլոր մարտահրաւերները՝ (Սուրիոյ ներքին պատերազմը,

տութեամբ հարստացուցած են հիմնարկի ուսումնական ծրագիրը, սակայն Յալէպի անապահով վիճակը պատճառ դարձաւ կասեցնելու դասախօսներուն այցելութիւնը: Յետեւաբար, Յիմնարկի Միաւորը օգտուելով արդիական միջոցներէն հիմնեց առցանց դասընթացքի դրութիւնը, որ հնարաւորութիւն տուաւ դասընթացքը հասանելի դարձնելու Սուրիոյ զանազան հայաշատ միւս շրջաններ եւ ինչու չէ ապագայի հեռանկարով ծաւալել Սփիւռքէն առ աշխարհ: Անշուշտ այս ծրագիրը իրագործելն ալ ունեցաւ իր դժուարութիւնները՝ մանաւանդ տնտեսական հարցով, սակայն հիմնարկը շնորհիւ իր բարերար աշակիցներուն եւ բարի կամեցողներուն, ինչպէս նաեւ Շրջանային Վարչութեան զօրակցութեան՝ կարողացաւ ապահովել առցանցի համար անհրաժեշտ բոլոր արդիական սարքերը եւ ծրագիրը անելի զարգացնելու գծով աշխատանք տարաւ: Այսպիսով 2022-2023 տարեշրջանին Յայագիտական Յիմնարկը ունեցաւ իր առցանց Ա. կարգը: Այս տարի նաեւ անցնելով Բ. կարգին:

Մինչ այդ, հիմնարկի վարչութիւնը առցանց դրութենէն անելի օգտուելու եւ ուսումնական ծրագիրը նոր դասանկերով հարըս-



տացնելու միտումով, որոնումներ կատարեց եւ կապեր հաստատեց Նախկին եւ Նոր դասախօսներու հետ: Ներկայիս տիկին Լենա Նազարեան Միացեալ Նահանգներէն առցանց դրութեամբ գրականութիւն կը դասաւանդէ հիմնարկի ուսանողներուն: Հիմնարկի յառաջիկայ ծրագիրներէն՝ հայ երաժշտութեան պատմութիւն պիտի դասաւանդէ Համազգայինի Կեդրոնական Վարչութեան ատենապետ խմբավար Չաքար Զէշիշեան:

Հայագիտական առարկաներու նկատմամբ երիտասարդ Նոր սերունդը ներգրաւելու համար, ինչպէս նաեւ արեւմտահայերէնի անադարտ պահպանման հեռանկարով հիմնարկի միաւորը կազմակերպեց առցանց լեզուական տարրական դասընթացք, յատուկ սկսնակներու: Մեծ թիւով մասնա-

դարացուցած է իր հիմնադիրներու տեսլականը եւ արդարօրէն իրականացուցած իր առաքելութիւնը:

Հաստատ, այո՛: Հայրենիքի ու Սփիւռքի տարածքին կայք հաստատած իր դասախօսները, որոնց շունչն ու ոգին տակաւին գոյ է հիմնարկէն ներս, անդու կը գործեն հայրենիքի թէ՛ Սփիւռքի հայերէնագիտութեան զանազան բնագաւառներէն ներս:

Այո՛, հաստատ իրագործած է, երբ իր շրջանաւարտները իրենց ստացած գիտելիքներով, հոգեւոր ու մտային սնունդով կը սնուցանեն ու կը հարստացնեն զանազան գաղութներ:

Հայագիտականի դեսպաններն են անոնք, որոնք աշխարհին լաւապէս կը ներկայացնեն հայագիտութիւնն ու անոր վըս-



կիցներ հետեւեցան առցանց դասընթացքին Սուրիոյ Հիւսիսային շրջանէն՝ Գամիշլիէն, Հասիչէն եւ Տերիքէն, ինչպէս նաեւ Քեսապէն ու Լաթաքիայէն:

Այսօր հիմնարկը ունի անելի քան 40 ուսանող, որպէս դասարանային դրութիւն կամ առցանց հետեւող, որոնց մօտ ակնյայտ է մայրենի բարելաւումն ու արեւմտահայերէնի տիրապետումը եւ անոնց բումն փափաքը ծանօթանալու մեր գրական գոհարներուն:

Հիմնարկը իր երդիքին տակ պիտի շարունակէ համախմբել երիտասարդ սերունդը զայն զինելով տարրական գիտելիքներով, զարգացնելով հայերէն լեզուի եւ յատկապէս արեւմտահայերէնի իմացութեամբ եւ հայկական դպրոցները օժտելով հայերէնաւանդ ուսուցիչներով:

Արդեօ՞ք Հայագիտական Հիմնարկը ար-

տահուած արեւմտահայերէնի պահպանման աւանդը:

Արդեօ՞ք հարկ է այժմեականացնել ծրագիրը ու անելի հետաքրքրական միջոցներով իրականացնել զայն, առաւել երիտասարդութիւն ներգրաւելու հիմնարկէն ներս՝ ամփոփ ու խտացուած ծրագիրներով, երկամեայ դասընթացքներով եւ լեզուական տարրական գիտելիքներով:

Համազգայինի Հալէպի Հայագիտական Հիմնարկը շուրջ քառորդ դարէ անելի դժուար պայմաններու մէջ կ'իրագործէ հսկայ ներդրում մը՝ կեանքի կոչելով հայերէնաւանդ ուսուցիչներ եւ մշակութասեր Նորահաս մարդու թէ՛ գաղութէն ներս եւ թէ՛ Սփիւռքին համար:

Միթէ ժամանակը չէ՞ որ հիմնարկի վկայականը ստանայ պետական ճանաչում եւ գրաւէ իր ուրոյն տեղը:



ՆԱՅ-ՍՈՒՐԻԱԿԱՆ ՆՆԱԳՈՅՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ (ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

Դոկտոր Հուրի Ազեզեան

Ք.ա. առաջին հազարամեակին հայ ժողովուրդը արդէն կ'ապրեր իր պատմական հողերուն տարածքին՝ Հայկական լեռնաշխարհին մէջ: Լեռնային այս գեղատեսիլ երկիրը յաճախ ենթարկուած է իր աշխարհագրական դիրքի գործօնի պարտադրանքներուն, եւ պատմութեան զանազան հանգրուաններուն՝ հզօր հարեւաններուն յարձակումներուն թիրախը եւ հակամարտութիւններուն թատերաբեմը դարձած է՝ երբ արեւելեան տերութիւնները ձգտած են իրենց գերիշխանութիւնը տարածել Հայկական

րուած են հայկական գաղթօճախներ, ինչպէս Սուրիոյ հայկական գաղթավայրը:

Միւս կողմէ, պատմական Սուրիա հիւսիսարեւելքէն սահմանակից եղած էր Հայաստանի, եւ Հայկական բարձրաւանդակէն անցած էին հին Արեւելքի առեւտրական միջազգային այն ճանապարհները, որոնք Սուրիոյ տարածքը կը կապէին Սեւ ու Կասպից ծովերուն հետ: Թէեւ այդ նոյն ճանապարհներէն նաեւ կ'անցնէին Հայաստանը տրորող ներխուժողները արեւելքէն թէ արեւմուտքէն, որոնք սակայն կը նպաստէին մասնաւորապէս առեւտրական եւ մշակութային յարաբերութիւններու զարգացման՝ Հայաստանի եւ դրացի երկիրներուն միջեւ, ներառեալ Հայաստանի եւ Սուրիոյ միջեւ:



բարձրաւանդակին վրայ, իրենց համար որպէս դիրամատչելի անցք մը դէպի Փոքր Ասիա, մինչ արեւմտեան տերութիւններու հեռանկարը եղած էր իշխել Եփրատ եւ Տիգրիս գետերու հովիտներուն, որոնք զիրենք կ'առաջնորդէին դէպի Միջագետք եւ Պարսկաստան: Հետեւաբար, հայերը վաղնջական ժամանակներէն նախ առեւտրական նպատակներով անցած են հարեւան երկիրներ, սակայն, նաեւ շատ յաճախ պարտադրուած գաղթած են իրենց հայրենիքէն, ենթարկուած են բռնագաղթերու եւ գերեզարկութիւններու դէպի սահմանամերձ թէ հեռաւոր երկիրներ, ուր ժամանակի ընթացքին գոյաւո-

Հայ-սուրիական հնագոյն յարաբերութիւնները յատկանշական դարձած էին, երբ Արտաշէսեան հայոց Տիգրան Բ. թագաւորի հայկական տերութեան սահմանները դէպի հարաւ հասած էին մինչեւ Պաղեստին եւ Անտիոք դարձած էր Արքայից արքային մայրաքաղաքներէն մէկը: Ապա, Սուրիոյ վրայ հռոմեական եւ քիզանդական տիրապետութիւններէն ետքն է, որ հայ-սուրիական կամ հայ-արաբական յարաբերութիւնները պիտի նուաճէին ուշագրաւ փուլ մը, յատկապէս արաբական Օմայեան խալիֆայութեան շրջանին (661-750թթ.), որուն մայրաքաղաքն էր Դամասկոս:

Կարելոր հանգամանք է, թէ Միջին Արեւելքը որ բնորոշուած էր բազմատարրութեամբ եւ փոքրամասնութիւններու առկայութեամբ, թատերաբեմը դարձած էր բազմատեսակ հոսանքներու՝ կրօնական, ցեղային, քաղաքական, ընկերային, որոնք ի վեր-



չոյ ներկայացուած էին երկու մեծ հատուածներով՝ քրիստոնէութեամբ եւ իսլամութեամբ (կամ մահմետականութեամբ): Այդ ոլորտներուն մէջ Սուրիա իր կարգին ենթարկուած էր պատմական պարբերացումներու, որոնք դրական թէ բացասական անդրադարձ ձգած էին ի միջի այլոց նաեւ տեղւոյն հայութեան վրայ, որ իբրեւ ինքնուրոյն համայնք յաջողած էր դառնալ տարածաշրջանի գանազան ազգաբնակչութիւններու խայտաբղետ խճանկարին մէկ մասը, մանաւանդ որ անոր պատմութիւնը սերտօրէն աղերսուած էր Միջին Ասիոյ մեծ եւ զօրաւոր հաւաքականութիւններուն հետ:

ա) Հայերու նախնական առնչութիւնները Սուրիոյ հետ

Հայերու նախնական յարաբերութիւնները Սուրիոյ հետ սկսած են վաղնջական ժամանակներէն, երբ Զ.ա. Թ. դարու վերջերէն մինչեւ Զ.ա. Ը. դարու առաջին կէտը, պատմական Սուրիոյ հիւսիսային շրջանները ենթարկուած էին Ուրարտուի Հայկական թագաւորութեան, ապա Զ.ա. 740-730 թուականներուն, Ասորեստանի Թալատպալասար Գ. թագաւոր (Զ.ա. 745-725թթ.), Ուրարտուի Սարգուրի Բ. (Զ.ա. 764-735թթ.) թագաւորէն վերանուաճած էր զանոնք: Միաժամանակ, Եփրատ եւ Տիգրիս գետերը Հայաստանը կապած էին հարաւի երկիրներուն հետ, եւ դեռ Արեւելքի հին ճանապարհները, որոնք Սուրիան միացուցած էին Սեւ ծովուն հետ, անցած էին Հայկական բարձրաւանդակէն: Բացի այդ, Փիւնիկեի կարաւանային առեւտրական ճանապարհը Տաւրոսէն ձգուած էր դէպի սուրիական անապատ՝ մինչեւ Եփրատ գետի հովիտը, որուն մէկ ճիւղը ուղղուած էր դէպի հարաւ Բաբելոն, երկրորդը դէպի հիւսիս՝ Կասպից ծովու աւազանը: Այս ճանապարհով է, որ Հայաստան իր առեւտրական յարաբերութիւնները պահած էր Տիւրոսի (Ներկայիս՝ Սուր), Սիդոնի (Ներկայիս՝ Սայտա), Պիպլոսի եւ փիւնիկեան այլ վաճառաշահ քաղաքներու հետ: Հետաքրքրական է Աստուածաշունչի վկայութիւնը, թէ Զ.ա. 592-570 տարիներուն Տիւրոսի (Սուրի) շուկաներուն մէջ վաճառուած էին Հայաստանէն բերուած ապրանքներ, յատկապէս որ փիւնիկեցիները Հայաստանէն ներածած էին նաեւ ջրիներ եւ ձիեր, բացայայտելով Փիւնիկեի եւ Հայաստանի հարաւային շրջաններուն միջեւ առկայ առեւտրական աշխոյժ յարաբերութիւնները, որոնց հետեւանքով բացա-

ռուած չէր հայերու երթելը սուրիական այս շրջանները, նոյնիսկ մնայուն կայք հաստատելու դէպքերու առկայութիւնը:

Աւելի ուշ, Աքամէնեան Պարսկաստան Դարեհ Ա.-ի օրօք (Զ.ա. 522-486թթ.) ենթարկուած էր պետական եւ վարչական վերակազմութեան, Հայաստան դարձած էր Պարսկաստանի տասներորդ սատրապութեան մէկ մասը, որ հիւսիսարեւմտեան կողմէն շարունակուած էր մինչեւ Սուրիա: Պատմականօրէն փաստուած է, թէ հայ առեւտրականներ եւ գաղթականներ Աքամէնեան կայսրութեան տարածքին գտնուած էին Պոնտոսի, Կապադովկիոյ, Կոմմագէնի, Կիլիկիոյ եւ նաեւ Սուրիոյ մէջ, մինչ պարսկական կայսերական բանակին մէջ որպէս առեւտրականներ, ձիաւորներ եւ հետեւակներ գործնապէս մասնակցած էին պարսիկներու կողմէ սկիւթացիներուն, յոյներուն եւ եգիպտացիներուն դէմ մղուած գրեթէ բոլոր պատերազմներուն: Միաժամանակ, Աքամէնեան Պարսկաստանի արքայական ճանապարհին մէկ հատուածը անցած էր Հայաստանէն, Պարսից կամ Արաբական ծոցը միացնելով Միջերկրական ծովուն եւ նպատելով առեւտրական կապերու զարգացման՝ ընդարձակածաւալ կայսրութեան հեռաւոր ծայրամասերուն հետ, ի միջի այլոց Սուրիոյ եւ Հայաստանի միջեւ: Միւս կողմէ Պարսկական կայսրութեան կարաւանային հին ճանապարհները, որոնք Հնդկաստանն ու Պարսկաստանը կապած էին Սուրիոյ եւ Պաղեստինի հետ, սուրիական հատուածին մէջ ունէին իրենց առեւտրական կեդրոնները: Շատ հաւանաբար այդ նպատակին համար հիմնուած կամ վերահիմնուած ամենահին քաղաքներէն հանդիսացած են Դամասկոսը, Էմեսան (Ներկայիս՝ Յոմա), Ապաֆամիան (Ներկայիս՝ Համա) եւ Հալէպը, մանաւանդ որ Աքամէնեան մեծ կայսրութեան մէջ, Սուրիա կառավարուած էր իբրեւ ընդարձակ սատրապութիւն մը, որուն աթոռանիստ քաղաքը հանդիսացած էր Դամասկոս:

Աղեքսանդր Մակեդոնացի (Զ.ա. 337-323թթ.) փիւնիկեան ափերը գրաւած էր Զ.ա. 333-332 տարիներուն, որոնց մեծ մասը հետագային ընդգրկուած էր Սելեւկեան պետութեան մէջ: Խորքին մէջ Մեծն Աղեքսանդր Փոքր Ասիոյ տիրելու իր հօր՝ Փիլիպպոս Բ. թագաւորի աշխարհակալան ծրագիրն է, որ իրագործած էր: Անոր նուաճումներուն տասներկու տարիներու ընթացքին ծովային եւ ցամաքային առեւտուրը ծաղկած էր ամբողջ



Արեւելքի տարածքին, գուգահեռաբար Փիւնիկէի ծովեզերքներէն մինչեւ Պարսկաստանի բարձրաւանդակը յունական գիտութիւնն ու արուեստը ծաւալած էին, Սուրիոյ Ալեքսանտրէթ կամ Աղեքսանտրէթ նաւահանգիստը դարձած էր ամբարշտական մեծ կեդրոն մը, նոյնիսկ Արեւելքը՝ Արեւմուտքին կապող միակ կեդրոնը: Յիշարժան է, թէ Մեծն Աղեքսանդրի աշխարհակալութիւնները Արեւմուտքի քաղաքակրթութեան ժողովուրդներուն ծանօթացուցած էին Արեւելքը, վաճառականութեան ընթացքը ուղղելով դէպի այդ կողմ, երբ Արեւելքի բազմապիսի ապրանքները արդէն սկսած էին կենսական դառնալ անոնց համար:

Հայաստանի պարագային, վերոյիշեալ արշաւանքներու հիմնական հետեւանքը հանդիսացած էր նախ Աքամենեան տիրապետութեան տապալումը, այնուհետեւ Հայաստան աւելի քան վեց երկար դարեր պահպանած էր իր անկախութիւնը: Պարսկական լուծը թօթափելէն յետոյ Հայաստանի մէջ հաստատուած Երուանդունիները, եւ հետագային Արտաշեսեանները հանդէս եկած էին միջազգային յարաբերութիւններու ոլորտները իբրեւ իրաւական կողմ, լուրջ դեր կատարելով արեւելեան Փոքր Ասիոյ մասնաւորաբար քաղաքական եւ տնտեսական կեանքին մէջ:

բ) Հայերու Յարաբերութիւնները Սուրիոյ Հետ Սելեւկեաններու Օրօք

Մեծ աշխարհակալին մահուընէ վերջ, Սուրիա ընդգրկուած էր Սելեւկեան տէրութեան մէջ, որ հիմնադրուած էր Մեծն Աղեքսանդրի գորավար Սելեւկիոս Ա. Նիկատոր (Ք.ա. 354-280 թթ.) կողմէ: Սելեւկեան հելլենիստական պետութեան (Ք.ա. 312-65 թթ.) մաս կազմած էին Փոքր Ասիոյ մեծագոյն մասը, Փիւնիկէն, Միջագետքը, Պարսկաստանն ու Միջին Ասիայէն մինչեւ Հնդկաստան բոլոր երկիրները: Այս հսկայ տէրութեան կորիզը հանդիսացած էր Սուրիա: Ըստ կարգ մը պատմագիրներու Սելեւկիոս Ա. Նիկատոր Ք.ա. շուրջ 300 թուականին իր հօր անունով հիմնադրած էր Սուրիոյ Անտիոք աթոռանիստ քաղաքը Որոնդէս գետի ափին, ըստ ուրիշներու Մեծն Աղեքսանդրի կողմէ հիմնուած «Անտիոքա Գալլիբեո» կոչուած բնակավայրը, նոյնիսկ Սելեւկիոս Ա.-ի կողմէ վերաշինուած եւ անուանուած էր Անտիոք: Սելեւկեանները նաեւ կարգ մը սուրիական հին քաղաքներ վերակազմակերպած էին քաղաքական, զինուորական,

տնտեսական նկատառումներով եւ զանոնք վերածած էին հելլենիստական քաղաքներու, ինչպէս Լաւոդիկէ (Ներկայիս՝ Լաթաքիա) եւ Սելեւկիա (Ներկայիս՝ Սոււէտիա) նաւահանգիստները, վերջինը տեղադրուած էր Որոնդէս գետի գետաբերանը, իսկ Անտիոքի հարաւը ինկած էր Աֆամիան՝ կայսրութեան ռազմական կեդրոնը:

Ընդհանրապէս յունամակեդոնական քաղաքները, բնակավայրերն ու ռազմական համայնքները, որոնց հիմնադրութիւնը վերագրուած էր Սելեւկեան տէրութեան հիմնադիրին եւ անոր առաջին յաջորդներուն, ձգուած էին Միջերկրական ծովու փոքրասիական ափերուն, նաեւ ցրուած էին հիւսիսային Սուրիոյ եւ Եփրատ գետի միջին հոսանքին վրայ: Առաջին Սելեւկեաններու խտացեալ քաղաքաշինութիւնը այն միջոցառումներէն մէկը հանդիսացած էր, որ պիտի դիրացնէր լայնածաւալ ու խայտաբղետ տէրութեան համամիացման քաղաքականութիւնը, ապա քաղաքները կարելոր էին որպէս ընկերային-տնտեսական եւ մշակութային յենարաններ: Այս առիթով կարելոր է նշել, թէ համանման երեւոյթ նկատուած էր նաեւ հին Հայաստանի մէջ: Պատմական Սուրիոյ վերոյիշեալ տարածաշրջանը կոչուած էր «Սելեւկէս», որուն շրջածիրէն ներս



շեշտուած էր հելլենիզմը՝ յոյն-մակեդոնացի բնակչութեան, յունարէն լեզուին ու մշակոյթին բացարձակ տիրապետութեամբ: Այլ խօսքով Սուրիա դարձած էր հելլենիստական քաղաքակրթութեան կեդրոն, նոյնիսկ Լաւոդիկէի (Ներկայիս՝ Լաթաքիա), Արուատի, Տիւրոսի (Ներկայիս՝ Սուր), Սիդոնի (Ներկայիս՝ Սայտա) մէջ հատուած դրամները կրած էին յունարէն գրութիւններ՝ փիւնիկեան գրութիւններու կողքին:

Հետեւաբար, Սելեւկեաններու հելլենիստական շրջանին Սուրիոյ եւ Միջագետքի մէջ զարգացած քաղաքները ընդհանրապէս



առելտրական յարաբերություններ ունեցած էին Հայաստանի հետ, մասնաւորաբար Հայաստանի հարաւ-արեւմտեան շրջաններուն՝ Փոքր Հայքի ու Ծոփքի քաղաքներուն հետ: Հնդկաստանէն արտահանուած ապրանքները Սել ծովու տարածքը փոխադրուած էին Կասպից ծով-Կուր գետ-Ճորոխ գետ գետային ճանապարհով, որուն մէկ ճիւղը Դիլիջանի կիրճով իջած էր Արարատեան դաշտ, հանգուցուելով Միջերկրականի ափերէն, Անտիոքէն եւ Սելեւկիայէն եկած ուղեգիծին հետ: Չուգահեռաբար Եգիպտոսէն, Բեդրայէն կամ պաղեստինեան ծովեզերքէն դուրս եկած կարաւանները՝ ծովափնեայ ճանապարհով հասած էին մինչեւ Լաւողիկէ, յետոյ անցած էին Սելեւկիա եւ Անտիոք, իսկ Տիրոսի ձախակողմէն թեքուած էին դէպի Դամասկոս, հետեւելով գլխաւոր հին ճանապարհին: Ապա Արուատէն դուրս եկած կարաւանները հետեւած էին ծովեզերեայ ճանապարհին եւ կամ թեքուած էին արեւելք՝ դէպի Էմեսա ու Ապաֆամիա, սակայն բոլոր կարաւանները համախըմբուած էին Որոնդէս գետի վրայ -Անտիոքի կամ Սելեւկիոյ մէջ-, որ այդ օրերուն նաւարկելի եղած էր:

Այստեղ կարելոր է անդրադառնալ, թէ Սելեւկեանները իրենց փառքի օրերուն անմրցակից կերպով նաեւ տիրած էին նշանաւոր Մետաքսի ուղիին, որ անցնելով իրանեան բարձրաւանդակէն եւ Միջին Ասիայէն երկարած էր մինչեւ Մոնկոլիա: Ուստի, Ծայրագոյն Արեւելքի, Հնդկաստանի, Արաբական թերակղզիի ապրանքները նախ Միջագետք եւ յետոյ Արեւմուտք՝ այսինքն Սուրիա հասած էին, անցնելով Մծբինէն կամ Նուսեյաիսէն, Ուռհայէն եւ Տորա-Օրորուսէն (Եւրոբոս): Վերջինը հիմնուած էր Ք.ա. 300 թուականին, այդ օրերուն ծաղկուն բնակավայր մը ներկայացուցած էր եւ պաշտպանած էր առելտրական գլխաւոր ճանապարհները՝ բացայայտելով վաճառաշահ կեդրոն մը ըլլալու իր նշանակութիւնը:

Հայաստան-Սուրիա յարաբերութիւններու գծով մեծ կարելորութիւն ներկայացուցած էր նաեւ Ուռհա քաղաքը, որուն աշխարհագրական դիրքը նկատի առնելով շատ հաւանաբար հիմնադրուած էր Սելեւկեաններէն առաջ: Ուռհա տեղադրուած էր հին առելտրական ճանապարհներու խաչմերուկին վրայ, երբ այդ ճանապարհներէն մէկը Հայաստանէն իջած էր դէպի Ամիդ (Ամիդիա) կամ Տիարպէքիր, ապա լեռներուն մէջէն

ձգուելով հասած էր շրջանի դաշտավայրը, շարունակուած էր դէպի հարաւ՝ Խառան կամ Հարրան քաղաքը եւ Եփրատ գետի վրայով ուղղուած էր դէպի Սուրիոյ արեւելեան եւ արեւմտեան մեծ քաղաքները: Չուգահեռաբար Ուռհայի մէջ իրարու հանդիպած էին հիւսիս-հարաւային եւ արեւելք-արեւմտեան ճանապարհները, վերջինը կը հասներ մինչեւ Մծբին կամ Նուսեյաիս, ապա Պարսկաստան, Հնդկաստան, Չինաստան, եւ Սելեւկեաններու շրջանին է որ - Նոյնիսկ հաւանաբար ալ նախապէս - այս ճանապարհով կարաւանները փոխադրած էին Հնդկաստանէն՝ համեմտեր, թանկագին քարեր ու շղարշ կերպաս, Չինաստանէն՝ մետաքս, դէպի Փոքր Ասիոյ եւ Միջերկրական ծովու բարգաւաճ երկիրները: Միաժամանակ անհրաժեշտ է նկատի առնել, թէ հելլենիստական շրջանին Սուրիա վերածուած էր երկրագործական խիստ կարելոր երկրի մը:

Միւս կողմէ մակեդոնական եւ ապա Սելեւկեան շուրջ մէկ ու կէս դարու տիրապետութիւնը Հայաստանի վրայ - թէեւ յաճախ անուանական -, պատեհութիւն ընծայած էր քաղաքական-տնտեսական եւ մշակութային սերտ յարաբերութիւններու, հետեւաբար խիստ հաւանական կը նկատուի, թէ Սուրիոյ վրայ Սելեւկեան տիրապետութեան Նոյնիսկ առաջին շրջանին, որոշ թիւով հայեր, մանաւանդ առելտրականներ, արիեստագործներ եւ կամ գիտութեան ու մշակոյթի մարդիկ կայք հաստատած էին Սուրիոյ մէջ, յատկապէս Անտիոքի եւ Սելեւկիոյ շրջանները: Աւելի ուշ երբ Հայաստան թոթափած էր Աքամենեան Պարսկաստանի լուծը, Արմաւիրը դարձած էր Երուսաղիմիներու Նորաստեղծ պետութեան (Ք.ա., 2.-Բ.դդ.) քաղաքական կեդրոնը, միաժամանակ ներկայացնելով տարանցիկ առելտրի մեծ կեդրոն մը: Քաղաքին համար յատուկ նշանակութիւն պարգած էր կարաւանային այն հիւսիսային ճանապարհը, որ Արեւելքի երկիրները կապած էր Սել ծովուն հետ: Յիշարժան է, թէ Արմաւիրի եւ շարք մը ուրիշ քաղաքներու յառաջացումը Արաքս գետի հովիտին մէջ պատահականութեան արդիւնք չէր, երբ կանուխ հելլենիստական շրջանին արդէն սկսած էր հայկական տարրերու համախմբման գործընթաց մը, որ Արարատեան դաշտի եւ ընդհանրապէս Հայաստանի համար սկզբնաւորած էր քաղաքական, տընտեսական եւ մշակութային զարգացման Նոր ժամանակաշրջան մը: Միջագային



ամբուտուն ու իշխող դասակարգին տակաւ աճող պահանջները խթանած էին արտադրողական ոյժերու զարգացումը: Շուտով երբ Արաքս գետը փոխած էր իր հունը, Երուանդունիները իրենց նստավայրը տեղափոխած էին Նորակառոյց Երուանդաշատ քաղաքը, ապա Արտաշէսեաններու նստավայրը դարձած էր գեղակերտ Արտաշատը:

Այդ միջոցին եւ Աղեքսանդր Մակեդոնացիի մահուընէն վերջ (Ն.Ք., 323թ.), Աքամենեաններու հայ զօրավարները կամ վասալները ճանչցած էին Սելեւկեաններու գերիշխանութիւնը եւ անոնց հետ մշակած երկարատեւ յարաբերութիւններու ընթացքին մեծ թիւով հայեր կայք հաստատած էին Սուրիոյ հիւսիսային շրջանները, մասնաւորապէս մայրաքաղաք Անտիոքի մէջ եւ Եփրատ գետի հովիտը: Կարելի է ըսել, թէ պատմական տուեալներով հաստատուած է Սելեւկեաններու բանակներուն մէջ գործող հայերուն ներկայութիւնը, ուր նշանաւոր հանդիսացած էին Անտիոքոս Գ. Մեծի հայ զօրավարներէն Արտաշէսն ու Չարեհը: Այս երկուքը Սելեւկեան բանակին մէջ ղեկավարած էին հայկական զօրամասերը եւ անոնց շնորհիւ է որ Մեծ Յայքն ու Ծոփքը անկախ յայտարարուած էին, իսկ Անտիոք ընդունած էր հայ գաղթականներ:

Փաստօրէն Աքամենեան Պարսկաստանի նուաճումները, Մեծն Աղեքսանդրի աշխարհակալութիւնը եւ Սելեւկեաններու հելլենիստական մեծ պետութեան հիմնադրութիւնը, Յայաստանի պատմութեան եւ անոր քաղաքական-տնտեսական-մշակութային որակական զարգացման գծով՝ սկիզբը դարձած էին Նոր դարաշրջանի մը, որ երկարած էր մինչեւ Արտաշէսեան եւ Չարեհեան թագաւորութիւններու հիմնադրութիւնը:

Այնուհետեւ, Արարատեան դաշտը դարձած է Յայաստանի եւ հայ ժողովուրդի քաղաքական, տնտեսական եւ մշակութային կեանքի միաւորման կեդրոնը: Նոր մայրաքաղաք Արտաշատը շուտով վերածուած էր միջազգային ամբուտունի նշանակալից կեդրոնի եւ կարաւանային ու ռազմական ճանապարհներու հատման կետի մը: Մասնաւորաբար Բ. դարու երկրորդ տասնամեակէն սկսեալ, Արտաշատը կարելոր դեր ունեցած էր միջազգային ամբուտունի շրջագիծէն ներս, երբ հռոմէացի Տրայանոս կայսրը (98-117թթ.) կործանելով հարաւային ամբուտական ճանապարհին վրայ գտնուող Սելեւկիան, Մծբինը կամ Նուսեյաինը եւ Եդեսիան

կամ Ուռհան, միջազգային ամբուտունի կարաւանները հիմնականին մէջ սկսած էին երթելու հիւսիսային մայրուղիին ուղեգիծով, որ անցած էր հայոց մայրաքաղաք Արտաշատէն, եւ ուրեմն ցամաքային ճանապարհներով կատարուող միջազգային ամբուտունի համար Յայաստանը ստացած էր առաջնակարգ նշանակութիւն, իսկ երբ հայոց գահը բարձրացած էր Վաղարշ Ա. (117-140թթ.), անգիր օրէնքին հաւատարիմ հիմնադրած էր Նոր մայրաքաղաք՝ Վաղարշապատը եւ այդտեղ փոխադրած էր արքունիքը, սակայն «Արտաշատը, ինչպէս Տիգրանակերտին, այնպէս ալ Վաղարշապատին չգիշեցաւ առաջնութեան դասին»: Ըստ Մովսէս Խորենացիի, «Արտաշէսը երկու ծովերու մէջ եղած ցամաքը նուաճելով, ովկիանոսը կը լեցունէր նաւերու բազմութեամբ, կամենալով բոլոր արեւմուտքը իրեն հպատակեցնել», կը կարծուի, թէ այստեղ ակնարկուած է Միջերկրական ծովուն, բացայայտելով այդ օրերուն հայերու ներկայութեան մասին, իբրեւ արդիւնք յատկապէս ամբուտական յարաբերութիւններուն:

Արտաշէս Ա. որդեգրելով հելլենիստական աշխարհի համաբնակեցման ուղեգիծը, դէպի Արտաշատ փոխադրած էր Երուանդաշատ քաղաքի բնակչութեան մեծ մասը, նաեւ այդտեղ տեղաւորած էր իր արշաւանքներուն ընթացքին գերեվարուած բազմութիւններուն մէկ մասը: Յայոց թագաւորը հովանաւորած էր երկրագործութիւնը եւ զարկ տուած էր ամբուտունի, երբ հետագային Չինաստանի մէջ գործած էին հայ ամբուտականներ, որոնք մետաքս եւ չինական այլ ապրանքներ արտահանած էին դէպի Արեւմուտքի երկիրները: Եւ տակաւին Արտաշատի մէջ առկայ էին բազմաթիւ «գործոց տներ», ուր պատրաստուած էին զէնքեր ու զրահներ, շքեղ հանդերձանքներ, կահոյքներ, պերճանքի առարկաներ, մինչ բրոնզագործական ու մետաղագործական արտադրանքները ոչ միայն ողողած էին քաղաքի շուկան, այլեւ հասած էին հեռաւոր երկիրներ: Արտաշատէն անցած Մետաքսի ուղին Յայաստան ապրանքներ ներմուծած էր Յնդկաստանէն, Չինաստանէն, Միջերկրականի ծովափնեայ երկիրներէն, որոնց շարքին նաեւ Սուրիայէն, ուր չէր բացառուած այդ օրերուն ամբուտական հայերու երթելու դէպի այս շրջանները:

բ.- Սուրիա Մեծն Տիգրանի Յայկական Տերութեան Մէջ



Հայ-սուրիական յարաբերություններու զարգացման մեծապես նպաստած են հայոց Տիգրան Բ. թագաւորի (Ք.ա. 99-55թթ.) աննախընթաց նուաճումները:

Արտաշեսեան Տիգրան Բ. թագաւոր, Ք.ա. Ա. դարուն ոչ միայն Հայաստանը միաւորած էր իր իշխանութեան տակ, այլևս հիմնած էր ընդարձակածաւալ տերութիւն մը: Հայկական տերութեան գոյութիւնը նշանակալից էր Հայաստանի, նաեւ սահմանակից երկիրներուն՝ Սուրիոյ, Կիլիկիոյ, Կապադովկիոյ եւ Միջագետքի պատմութեան համար, երբ արտաքին իւրայատուկ հանգրուան մը հանդիսացած էր հելլենիզմի համակարգի զարգացման բնագաւառէն ներս: Հայոց արքային երեսնամեայ տիրապետութեան անմիջապէս նախորդած էր Մերձաւոր Արեւելքի մէջ Հռոմի եւ Պարթեւաստանի (Պարսկաստանի) իշխանութիւններու հաստատումը, իսկ հայկական տերութեան անկումով սկսած էր արեւմտեան եւ արեւելեան աշխարհակալութիւններու տիրապետութեան ժամանակաշրջան մը, որուն արտաքին քաղաքականութիւնը բնորոշուած էր բուռն հակամարտութեամբ վերին Եփրատի եւ Տիգրիսի տարածքներուն մէջ: Մերձաւոր Արեւելքի քաղաքական պատկերը պայմանաւորող եւ Հայաստանի համար ճակատագրական դարձած այս արտաքին քաղաքական իրավիճակը անփոփոխ կերպով շարունակուած էր մինչեւ Թ.ժ. դարեր, շուրջ հազարամեակ մը:

Հայոց արքային արտաքին քաղաքականութեան հզօրութեան շրջանին (Ք.ա. 85-69թթ.), Հայաստանի եւ սահմանակից երկիրներէն Սուրիոյ ու Միջագետքի պատմութիւնը լուսաբանող սկզբնաղբիւրները թէեւ սուղ են, այսուհանդերձ առկայ տեղեկութիւնները ճշգրտութեամբ բնութագրած են այն հայկական տերութիւնը, որ ի յայտ եկած էր Մերձաւոր Արեւելքի մէջ, այս վերջնոյն համար անցումային դարձած ժամանակաշրջանի մը՝ Հռոմի եւ Պարթեւաստանի միջեւ անոր բաժանման նախօրեակին: Իրականութեան մէջ հայկական տերութիւնը մեծ տերութիւններու շարքին անցած էր Ք.ա. 85 թուականին, Պարսկաստանի դէմ իր տարած յաղթանակով եւ Ք.ա. 83 թուականին Սուրիոյ եւ Փիւնիկիի իրեն միացման շնորհիւ: Եւ չնայած Սելեւկեաններու գահակալական երկարատեւ կռիւներուն, կատարուած աներուածութիւններուն, առետրական կապերու խանգարման, Սուրիա հանդիսա-

ցած էր Միջին Արեւելքի ամենէն զարգացած եւ ծաղկուն երկիրներէն մէկը, նոյնիսկ ամենէն մարդաշատը Իտալիայէն ու Եգիպտոսէն վերջ:

Փիւնիկեան ծովեզերքին, հարաւային Սուրիոյ եւ Պաղեստինի հետեւողութեամբ որոնք ճանչցած էին Տիգրան Բ.-ի գերիշխանութիւնը, հիւսիսային Սուրիա եւ Կիլիկիա իրենց կարգին ներգրաւուած էին հայկական տերութեան մէջ, որպէս սատրապութիւն, որուն մայրաքաղաքը դարձած էր Անտիոք:

Անտիոք, որ նախապէս Ք.ա. 92 թուականին Տիմիթրիոս Բ.-ի (Ք.ա. 146-138, 130-125թթ.) եւ Փիլիպպոս Ա.-ի (Ք.ա. 95-93 թթ.) պարտադրած էր լուրջ զիջումներ կատարել՝ որպէսզի քաղաքին շնորհուէր դրամ հատելու իրաւունք, շարունակած էր թողարկել եւ Տիգրան Բ.-ի օրօք: Հաւանաբար Ք.ա. 83 թուականին Անտիոքի փողերանոցին մէջ հատուած դրամները կրած էին Տիգրան Բ.-ի անունը իբրեւ «թագաւոր», նաեւ Անտիոքի պահապան աստուած «Տիւսէ»-ի պատկերը առաջին անգամ ըլլալով քաղաքին պատմութեան մէջ: Հետագային Արտաշատի եւ Տիգրանակերտի փողերանոցներուն մէջ դրամները հատուած էին «Արքայից-արքայ» արձանագրութեամբ, բացայայտելով Տիգրան Բ.-ի փառքն ու հզօրութիւնը:

Հայ-պարթեւական կռիւներէն ետք, մօտաւորապէս Ք.ա. 84 կամ 83 թուականին, Տիգրան Բ. յաջողած էր տիրել ամբողջ հիւսիսային Սուրիոյ:

Անտարակոյս, որ Սուրիոյ ժողովուրդը բաւական միահամուռ ձգտում ունեցած էր պահպանելու սուրիական տերութիւնը: Սուրիական հելլենիստական ընկերութիւնը կարիքը ուներ կեդրոնական ուժեղ իշխանութեան մը, որ կրնար նախ վերջ դնել երկրին մէջ տիրող անիշխանութեան եւ ապա զարգացման բարենպաստ պայմաններ ստեղծել: Այս գծով, Տիգրան Բ.-ի արտաքին քաղաքական դրութիւնը վստահութիւն ներշնչած էր սուրիացիներուն, երբ հայոց թագաւորը պարտութեան մատնելով Պարսկաստանի Արշակունիները՝ նախ վերցուցած էր Սուրիոյ դէմ ծառայած սպառնալիքը, որուն դէմ Սելեւկեանները անզօր մնացած էին, եւ յետոյ իր ռազմական հեղինակութիւնը պահած ու ամրապնդած էր: Սուրիոյ համար ակներեւ կերպով որեւէ վտանգ բացառուած էր Տիգրան Բ.-ի կողմէ, նոյնիսկ Տիգրան Բ. Սուրիոյ վրայ իր իշխանութիւնը ստանձնած էր նոյնիսկն սուրիացի ժողովուրդին առա-



չարկով եւ սկսած էր պատմական Սուրիոյ տարածքին Սելեւկեաններու փոխարէն վրճուական դեր խաղալ: Ըստ Մովսէս Խորենացիի, հայոց արքան Պաղեստինէն «Շատ գերի վերցնելով՝ կը շրջապատէ Պտղոմայիոյ քաղաքը», եւ գերիները Արմաւիրի եւ Զասախ գետի վրայ՝ Վարդգէսի անունին մէջ տեղաւորելէ յետոյ, «Կը շարժի, կ'երթայ Ասորիք...»: Զաւանաբար, Տիգրան Բ. Սուրիոյ հարաւային շրջանները, ներառեալ Դամասկոսն ու Փիւնիկիէի ծովափնեայ քաղաքները գրաւած էր յամառ եւ երկարատեւ կռիւներէ վերջ: Դրամագիտական տուեալներու հիմամբ, Մեծն Տիգրան Լաւողիկէի (Լաթաքիոյ) շնորհած էր անկախութիւնը եւ քաղաքը վերածած էր գլխաւոր աւազանի գիստի, որպէս ծովային կարեւոր ելք մը հիւսիսային Սուրիոյ համար: Տիգրան Բ.-ի կողմնակիցները մեծ հաւանականութեամբ եղած էին Անտիոք քաղաքի ու միջազգային տարանցիկ առեւտուրի հետ կապուած առեւտրականներու դասակարգը: Սուրիոյ միացումը Զայաստանի անոնց համար տընտեսական որոշադրիչ նշանակութիւն պարգած էր, երբ Տիգրան Բ. ամբողջական կերպով տիրած էր հելլենիստական աշխարհի միջազգային տարանցիկ առեւտուրի կարեւորագոյն՝ Պարսից (Արաբական) ծոց-Չեգմա-Անտիոք ճանապարհին, որուն գլխաւոր հանգուցակետերէն էին հայկական Ծովքի Արշամաշատ եւ Արկաթիակերտ քաղաքները:

Տիգրան Բ. այն տիրակալներէն հանդիսացած էր, որ ձգտած էր իր հսկողութեան տակ պահել միջազգային առեւտուրը, մանաւանդ որ առեւտուրէն գանձուող տուրքը կը կազմէր հայկական տերութեան գանձարանին հիմնական բաժինը: Զայոց արքային գլխաւոր մտահոգութիւններէն եղած էր Լաւա Գոքը եւ Առաջաւոր Ասիոյ մէջէն անցնող առեւտրական ճանապարհներու զարգացման եւ բարեկարգման հարցը, ինչ որ նշանակալից կերպով բացատրած է Տիգրան Բ.-ի նուաճողական քաղաքականութիւնը եւ փոխադարձաբար այն աջակցութիւնը, որ անոր ցոյց տուած էին Սուրիոյ հելլենիստական քաղաքներուն, յատկապէս Անտիոքի վաճառականներն ու արհեստանոցներու տերերը:

Յետեւաբար, Սուրիոյ իշխող դասակարգը տնտեսապէս հզօր, քաղաքականապէս կազմակերպուած, շնորհիւ քաղաքային կազմակերպուածութեան, հայկական տիրապետութեան շրջանին շարունակած էր

լիարժէք կերպով պահպանել իր ընկերային-տնտեսական բարձր դիրքը եւ քաղաքական իշխանութիւնը: Սուրիոյ քաղաքային աւազանին դարձած էր Տիգրան Բ.-ի ընկերային անմիջական յենարանը, թէեւ հայ եւ սուրիացի հելլենիստական աւազանիներու փոխյարաբերութիւնները իրաւահաւասար չէին եւ հայկական արքունիքին մէջ հայ տարրը գերակշռող եղած էր: Ինչպէս նաեւ, հայոց աւազանին պահպանած էր համապետական կայսերական կառավարող իր դիրքերը, կազմելով պետական վարչամեքենային կորիզը: Կարելի է ըսել, թէ Սուրիա մտած հայկական բանակը չէր նպատակադրած իշխող դասակարգը ընկճել, այլ հետամուտ եղած էր այդ դասակարգի շահերուն պաշտպանութեան, իսկ Տիգրան Բ.-ի բերած զօրամասերը Սուրիոյ մէջ ծաւալած իրենց գործունեութեամբ՝ փոխարինած էին տեղական զօրքերը: Շատ հաւանաբար, հայոց արքան իր մօտ ծառայութեան ընդունած էր սելեւկեան վարձկան բանակի զինուորները, եւ Սուրիոյ հայկական զինուած ոյժերուն հրամանատար նշանակուած էր վերոյիշեալ Բագրատը կամ Բագադատը, որ օժտուած էր քաղաքական որոշակի իշխանութեամբ, հանդիսանալով Տիգրան Բ.-ի փոխարքան:

Կարեւոր հանգամանք է նաեւ, թէ սուրիական Փիւնիկիէ քաղաքները Տիւրոս (Ներկայիս՝ Սուր), Սիդոն (Ներկայիս՝ Սայտա), Պերիթ (Ներկայիս՝ Պէյրութ) Զ.ա. Ա. դարուն պահպանած էին իրենց նշանակութիւնը Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ տարանցիկ առեւտուրի գծով, միաժամանակ հանդիսանալով ստրկավաճառութեան մեծ շուկաներ: Ուրեմն Սուրիոյ վրայ հայկական տիրապետութեան շրջանին, հայերու թիւը անհամեմատօրէն բազմացած էր: հայերը Սուրիոյ մէջ գրաւած էին քաղաքական կարեւոր դիրքեր, մեծ յաջողութիւն արձանագրած էին տնտեսական մարզին մէջ: Մեծն Տիգրանի բանակայիններէն ոմանք հաստատուած էին Սուրիա, մինչ շատեր սեփականատերը դարձած էին ընդարձակ հողատարածքներու: Կ'ենթադրուի, թէ Սուրիոյ վրայ հայկական տիրապետութեան շրջանին, եթէ հայերու թիւը բազմացած էր յատկապէս աթոռանիստ Անտիոքի եւ երկրին հիւսիսային մասերուն մէջ վերոյիշեալ պատճառներով, ապա նոյնպէս հայերու թուական աճ մը արձանագրուած էր սուրիական ծովեզերքին՝ մասնաւորաբար Լաւողիկէի (Լաթաքիոյ) եւ Սուրիոյ հարաւային շրջաններէն մանա-



լանդ Դամասկոսի մեջ, ուր գործած էին Տիգրան Բ.-ի արքայական փողերանոցները, յուշելով հայերու որոշակի ներկայութեան, անոնց գրաւած քաղաքական դիրքերուն եւ տնտեսական յաջողութիւններուն մասին: Նոյնիսկ, կը կարծուի, թէ Լաւոդիկէի (Լաթաքիոյ) եւ Դամասկոսի մեջ հաստատուած էր հայոց արքային զօրամասերու բանակայիններէն եւ հայ վաճառականներէն կազմուած դասակարգ մը, հայերը յառաջացուած էին փոքրաթիւ հայ համայնքներ, թէկուզ ժամանակաւոր բնոյթի: Արաբ պատմագրութեան մեջ հայերու ներկայութիւնը Լաւոդիկէի (Լաթաքիոյ) նաւահանգիստին տարածքին՝ վերագրուած է հնագոյն ժամանակներու: Հաւանաբար Անտիոքի լեռնային շրջաններու եւ Մուսա լեռան հայութեան նախնիքը, այս կողմերը եկած էին այդ ժամանակներէն: Ըստ Վեր. Տիգրան Անդրեասեանի, հնագոյն ժամանակներէն Անտիոքի մեջ հայ գաղթականներ գտնուած էին:

Ընդգծելի է, թէ Տիգրան Բ.-ի ստեղծած հայկական պետութիւնը, ռազմաքաղաքական միաւորում մը եղած էր, բազմազգ եւ զարգացման տարբեր մակարդակներ ներկայացնող տարրերէ կազմուած, իսկ հայոց թագաւորին կողմէ նուաճուած երկիրներու կարեւորագոյնը՝ տնտեսական եւ մշակութային առումներով իբրեւ խիստ զարգացած երկիր Սուրիա հանդիսացած էր, Սելեւկեաններու երբեմնի հզօր տերութեան կեդրոնը, իր բնական իւրայատուկ բարենպաստ պայմաններով եւ ռազմաառեւտրական դիրքին շնորհիւ:

Յետաքրքրական է, թէ Օգոստոս կայսեր (Ք.ա., 27-14թթ.) ժամանակաշրջանը ներկայացնելու համար, Փլին Աւագի (Ք.ա. 79թ.) պետական-պաշտօնական ցանկերէն քաղուած քաղաքներու եւ գիւղերու անուանացանկին մեջ գտնուած է նաեւ «Granucomatital» անուանումը, որ ըստ անգլիացի պատմաբան ճոնսի՝ աղաւաղումը պէտք է ըլլայ Ամանոսի արեւելեան ստորոտներուն վրայ տեղադրուած եւ Մեծն Տիգրանի կողմէ գերեզարուած արաբներով բնակեցուած «Tigronucomatital» անուն քաղաքին: Ըստ Վեր. Տիգրան Անդրեասեանի այդ քաղաքին բնակիչները միայն հայեր կրնային ըլլալ եւ նախահայրերը՝ Մուսա լեռան եւ Քեսապի հայութեան: Մեծ հաւանականութեամբ հայոց արքային հետեւորդները նախ հաստատուած էին Անտիոքի լիճին առափնեայ շրջանները, յետոյ ապահովական մտահո-

գութիւններով շարժած էին դէպի Անտիոքի արեւմուտքը՝ Հիւսընլէք կոչուած վայրը, այդտեղէն ալ դէպի Մուսա լեռ եւ Քեսապ: Ի գուրջէ որ առ այսօր Մուսա լեռան եւ Քեսապի հայութիւնը Անտիոքը կը կոչէ «Քաղք», այսինքն քաղաք եւ ոչ թէ Անտիոք, ինչ որ կ'ապացուցէ, թէ անոնք նախապէս Անտիոքի շատ մօտիկ գտնուած էին:

Պատմականօրէն փաստուած է, թէ հայկական տերութեան բոլոր ժողովուրդները իրարու հետ ուղղակի յարաբերութեան մեջ եղած էին, երբ հայոց արքային մականին տակ միացած էին տոհմացեղային նահապետական շրջաններ, կիսաաւատատիրական երկիրներ եւ հելլենիստական զարգացած քաղաքներ, որոնցմէ իւրաքանչիւրը ուներ յատուկ կազմակերպուածութիւն եւ իրավիճակ: Այսպէս, Ատրպատականի եւ Կորդուքի թագաւորները եթէ մնացած էին իրենց գահերուն վրայ, ապա Միջագետքն ու Սուրիան վերածուած էին նահանգներու եւ կառավարուած էին Մեծն Տիգրանի կողմէ նշանակուած կառավարիչներով: Դեռ չհաշուած, որ հայկական ընդարձակ տերութեան ներքին կազմակերպման կարեւորագոյն միջոցառումներէն մէկը դարձած էր առեւտրի կարգաւորումը, իբրեւ կարեւոր գործօն ոչ միայն առեւտրականներուն, այլ նաեւ հողատերերուն եւ արհեստաւորներուն համար:

Տիգրան Բ. քաղաքներու եւ քաղաքային մշակոյթի վերելքին համար դէպի Հայաստան գաղթել տուած էր առեւտրականներ, արհեստաւորներ ու աշխատաւորներ Կապադովկիայէն, Կորդուկէն եւ շատ հաւանաբար նաեւ Սուրիայէն ու Ադիաբէնի հելլենիստական իր գրաւած քաղաքներու բնակչութենէն, դարձեալ որդեգրելով համաբնակեցման ուղեգիծ: Վստահաբար հայոց արքային վարած քաղաքականութեան ամենէն վառ դրսեւորումներէն դարձած էր իր նուաճած երկիրներու բնակչութեան բռնի վերաբնակեցումը հսկայական տարողութիւններով, երբ Հայաստանի տակաւ առ տակաւ աճող տնտեսութիւնը եւ զարգացող քաղաքային կեանքը պահանջած էին մարդոյժի նորանոր զանգուածներ, յատկապէս որ Տիգրան Բ. իր գործունեութեան մեջ ներկայացած է ոչ միայն իբրեւ Մեծ Հայքի թագաւոր, ապա որպէս աշխարհակալ տերութեան մը «միապետը», եւ անոր նախաձեռնութիւններուն մեծ մասը նպատակադրած էր այդ դիրքին ամրապնդումն ու տերութեան ըն-



դարձակ շրջաններուն կարգաւորման ու դասաւորման հարցերը, միաժամանակ գործնական յարաբերութիւններ ստեղծելով տուեալ երկիրներուն եւ անոնց բնակչութեան հետ:

Վերոյիշեալ հանգամանքներէն մեկնելով, Տիգրան Բ.-ի գահակալութեան առաջին տասնամեակները նշանաւորուած էին աշխոյժ քաղաքաշինութեամբ եւ քաղաքային կեանքի զարգացմամբ, իրագործումներուն մեծագոյնը հանդիսացած էր Տիգրանակերտ մայրաքաղաքի կառուցումը Աղձնիքի մէջ, որ Տիգրան Բ.-ի աշխարհակալական պետութեան քաղաքական եւ մշակութային մայրաքաղաք-կեդրոնը դարձած էր Զ.ա. շուրջ 77 թուականին. «*Երբ Տիգրանը զօրեղացաւ մինչ այդ աստիճան՝ ան հիմնեց քաղաք մը... որն անուանեց Տիգրանակերտ, եւ բերաւ այդտեղ իր աւերած 12 հելլենական քաղաքներու բնակչութիւնը*»: Տիգրանակերտը տեղադրուած ըլլալով Աքամենեան Պարսկաստանի արքայական մեծ ճանապարհին մօտ, զանազան ուղղութիւններով կապուած էր առեւտրական կարեւոր կեդրոններու հետ, դառնալով միջազգային առեւտուրի, արհեստներու, արդիւնագործութեան եւ հելլենիստական գիտութեան ու մշակոյթի կարեւոր կեդրոն մը, եւ իր այդ հանգամանքով Յայաստանը կամրջած էր մասնաւորապէս Սուրիոյ ու Միջագետքի հետ՝ Եդեսիոյ կամ Ուռհայի, Մծբինի կամ Նուսեյպիսի եւ ուրիշ քաղաքներու միջոցով: Ուրեմն Յայաստան յաջողած էր իշխել Արեւելքի առեւտրական միջազգային ճանապարհներուն, փոխադարձաբար Տիգրան Բ.-ի կողմէ քաջալերուած էր Յայաստանէն հայերու արտագաղթը դէպի իր նուաճած երկիրները, ներառեալ Սուրիա առաւելաբար առեւտրական-տնտեսական նպատակներով:

Այստեղ հարկ է շեշտել այն իրողութիւնը, որ եթէ նոյնիսկ նախապէս ալ Յայաստանի եւ Արարատեան դաշտի վրայով անցած էր Առաջաւոր Ասիոյ տարանցիկ առեւտուրի ճանապարհներէն այն մէկը, որ Ծայրագոյն Արեւելքի երկիրները, Չինաստանն ու Միջին Ասիան կապած էին Եւրոպայի հետ՝ Կասպից եւ Սել ծովերու միջոցով, այդ ճանապարհին առկայութեամբ է, որ մասամբ պայմանաւորուած էր հայկական մայրաքաղաքներու՝ Արմաւիրի, Երուանդաշատի, Արտաշատի հիմնադրութիւնը նոյնիսկ Արարատեան դաշտին մէջ, Արաքս գետի հովիտի երկայնքին: Դետեւաբար Տիգրան Բ.-ի

օրօք հայկական տերութեան նշանակութիւնը տարանցիկ առեւտուրի մէջ աւելի կարեւոր դարձած էր երբ երկրին աշխարհագրական դիրքը ներգրաւած էր մանաւանդ տարանցիկ առեւտուրի հարաւային այն ճանապարհները, որոնք արեւելեան երկիրները միացուցած էին յատկապէս Անտիոքի եւ Միջերկրական ծովու նաւահանգիստներուն հետ, այլ խօսքով պատմական Սուրիոյ տարածքին հետ: Յայաստանի առեւտրական աշխոյժ շարժումին մէջ ներգրաւուած էին, նոյնիսկ գերակշռող դեր ունեցած էին հայերու կողքին ուրիշ ժողովուրդներու գաղթականներէն կազմուած համայնքները եւս, ինչպէս հրեաներն ու ասորիները: Տիգրան Բ. ըմբռնելով Սուրիոյ հարուստ եւ ազդեցիկ քաղաքներուն դրսեւորած կարեւորութիւնը, իր պետութեան համակարգին մէջ անոնց հանդէպ ցուցաբերած էր համապատասխան իրավիճակ:

Արքայից արքային հայկական տերութեան համար հռոմեացի Լուկոլլոսի յաղթանակը եւ մայրաքաղաք Տիգրանակերտի անկումը՝ քաղաքական ծանր հետեւանքներ ունեցած էին: Յայոց արքային նուաճած բոլոր երկիրները, Տավրոսեան լեռնաշղթայէն եւ Տիգրիս գետէն դէպի հարաւ հիւսիսային Միջագետքը, Կորդոքը, Կոմմագենը, Սուրիան եւ Արեւելեան Կիլիկիան անջատուած էին Յայաստանէն:

Ուշագրաւ է, թէ սուրիական շրջաններէն Մեծն Տիգրանի քաջուելէն ետքն ալ տընտեսական եւ մշակութային յարաբերութիւնները շարունակուած էին երկու երկիրներուն միջեւ, պատմական Սուրիա տակաւին երկար ժամանակ Յայաստանի հետ կապուած էր Տիգրանակերտ-Արտաշատ ճանապարհով, որ դէպի Միջին Ասիա տանող մայրուղիին մէկ հատուածը ներկայացուցած էր, հետագային Սուրիայէն, Միջագետքէն եւ այլ երկիրներէ առեւտրական կարաւանները ժամանած էին Յայաստանի նոր մայրաքաղաքը՝ Վաղարշապատ եւ ուրիշ վայրեր:

դ) Յայերու Յարաբերութիւնները Հռոմեական Սուրիոյ Հետ

Պատմական Սուրիոյ համար հռոմեական տիրապետութիւնը յատուկ կարեւորութիւն բացայայտած է, ուր Սուրիա ենթարկուած էր պետական, տնտեսական, մշակութային, գիւղատնտեսական համակարգուած վարչութեան մը, որուն միջոցով հռոմեական քաղաքակրթութիւնը ներմուծուած էր Մերձավոր Արեւելքի ամենէն զարգացած ժողո-



վորդներն մեկուն մեջ: Նշելի է, թե Սուրիոյ մարզպանութիւնը ներկայացուցած էր շատ ընդարձակ տարածք մը եւ մարզպանը պատասխանատու հանդիսացած էր Յոմմի առաջ, պաշտօն ունենալով պաշտպանելու ասիական բոլոր գաղութները: Կը կարծուի, թե Սուրիա-Անտիոքի եւ Սելեւկիոյ հայ ազգաբնակչութենէն ոմանք, որոնք հետամուտ էին աւելի ազատ եւ ինքնիշխան կեանքի, չհանդուրժելով նոր տիրապետութիւնը՝ նախընտրած էին հաստատուիլ շրջակայ անմատչելի լեռներուն եւ անտառներուն մէջ, օրինակ Մուսա լեռան եւ Կասիոս-Քեսապի շրջանները ապաստանած հայերը մեծ հաւանականութեամբ նախահայրերը հանդիսացած են Մուսա լեռան եւ Քեսապի հայկական համայնքներուն:

Այս տեսակետը կարելի է հաստատել այն իրողութեամբ, թե Անտիոքէն ոչ շատ հեռու առկայ եղած էին հայկական անուանումներով գիւղեր կամ բնակավայրեր, որոնց մէկ մասը առ այսօր կը գոյատեւէ, ինչպէս Արամօ, Գնիէ, Ղնեմիէ, Եագուպիէ հայաբնակ գիւղերը, միայն հայկական անուն կը կրեն Ջաղցընէն (ջաղացքներ), Միատուն, Գիրակոսի (Կիրակոս), Պետրոսիկ եւ այլ վայրեր: Միաժամանակ Անտիոքի հայութեան թիւը ստուարացած էր քաղաքին անկումէն ետք, հայ զինուորական տարրին ներկայութեամբ. *«Մանաւանդ Յայաստանէն եկած լուրերն ալ քաջալերական չէին այն ատեն հոն վերադառնալու համար: Ուստի հաւանական է որ շատ հայեր Սուրիա մնացին եւ հոն հաստատուեցան»:*

Յատկապէս նաեւ Անտիոք, Սելեւկիա եւ Լաւոդիկէ (Լաթաքիա) քաղաքները բուռն զարգացում ապրած էին, նշանաւոր դարձած էր Անտիոքի արուարձանը Դափնէ կամ Տաֆն: Հռոմեացիները երկար ժամանակ չէին յաջողած ջնջել Անտիոքի վրայ հայերուն ձգած քաղաքակրթական որոշակի հետքերը: Ըստ Մովսէս Խորենացիի այդ միջոցին Անտիոքի մէջ համաբնակեցման պարագայ մը իրականացած էր հայոց Արշամ թագաւորի օրօք (Ք.ա.38-18թթ.), երբ հայոց թագաւորը ի վերջոյ հպատակելով Հրեաստանի Հերոդոտէս թագաւորին, սուրիական Անտիոք քաղաքը ուղարկած էր բազմաթիւ հայ աշխատաւորներ: Յիշուած է նաեւ, թե քրիստոնէութեան տարածման առաջին դարու կեսերուն, Խառանէն կամ Հարրանէն ոչ հեռու դաշտային եւ լեռնային վայրերու մէջ գտնուած էին բազմաթիւ հայաբնակ գիւղեր,

մեծ հաւանականութեամբ այդ օրերուն է, որ սկզբնաւորուած էին Սելեւկիայի եւ Կասիոս-Քեսապի առ այսօր գոյատեւող հայկական համայնքները:

Արտաշատի պայմանագիրով (Ք.ա. 66թ.) երբ պատմական Սուրիա անջատուած էր Հայաստանէն, մինչեւ Դ. դար դարձած էր Հռոմեական կայսրութեան նահանգներէն մեկը, այսուհանդերձ Հայաստանի հետ յատկապէս առեւտրական կապերը աշխոյժ կերպով շարունակուած էին: Սուրիա հռոմեական տիրապետութեան սկզբնական տարիներուն ընդգրկած էր բարձր քաղաքակրթութեամբ օժտուած շրջաններ եւ կիսաքաղաքակիրթ շրջաններ՝ երկրին ներքին մասերուն մէջ: Յունական եւ փունիկեան այնպիսի հարուստ քաղաքներ առկայ եղած էին Սուրիոյ մէջ, որոնք իրենց քաղքենի կեանքով, ընդարձակ առեւտուրով, գրական ու գեղարուեստական դպրոցներով գերազանցած էին նոյնիսկ Հոմմի քաղաքները: Հռոմեացիներուն համար Սուրիոյ նահանգը իր Անտիոք փառաւոր մայրաքաղաքով՝ կեդրոնական կարեւորութիւն ներկայացուցած էր արեւմտեան Ասիոյ իրենց տիրոջներուն մէջ: Սուրիա իր քաղաքակրթութեամբ, զարգացած տնտեսութեամբ եւ ընկերային ու մշակութային բարձր մակարդակով՝ հռոմեական տիրապետութեան տակ դարձած էր հռոմեական պետութեան ուժի կեդրոնը Արեւելքի մէջ, փոխադարձաբար հռոմեացիները երկիրը փրկած էին ներքին հակամարտութիւններէն եւ արտաքին թշնամիներէն: Հետեւաբար, հռոմեացիներու օրօք Սուրիա տակաւ առ տակաւ վերականգնած էր (Ք.ա. 30-70թթ.), երկրին համար սկսած էր խաղաղ, կայուն եւ բարգաւաճ ժամանակաշրջան մը: Հռոմեացիները Սուրիոյ մէջ եւս մեծ զարկ տուած էին ճանապարհաշինութեան, ճանապարհային ցանցերու եւ ջրաբաշխումի ու ոռոգման դրութիւններու իրագործման, մեծ վերելք արձանագրած էր առեւտուրը միջազգային նոր վաճառականութեան ընդհանուր շրջագիծէն ներս, որպէս արդիւնք՝ զարգացում ապրած էր երկրի տնտեսական կեանքը, անմիջական անդրադարձ ձգելով Սուրիոյ բնակչութեան կենսամակարդակին վրայ:

Այստեղ հարկ է վերբերել այն հանգամանքը, թե ի դէպ Սուրիոյ ամենահին կարաւանային քաղաքներու պատմութիւնը ցարդ պարզաբանուած չէ, ուր պեղումները մասնակի բնոյթ ունին, իսկ արձանագրութիւն-



ները ամբողջական չեն տակալին, նոյնիսկ պարսկական եւ Սելեւկեան ժամանակներու յատուկ տեղեկութիւնները բաւարար չեն բնորոշուած, բայց պարագան նոյնը չէ Սելեւկիոյ, Փալմիրի եւ Տորա-Օրոբուսի (Եւրոբուս) համար, կարաւանային երեք կարելոր քաղաքներ, որոնք հելլենիստական-հռոմէական իրենց մշակոյթով յատուկ տեղ գրաւած էին Սուրիոյ պատմութեան մէջ:

Ահաւասիկ վերոյիշեալ բոլորակէն ներս, Սուրիոյ ներքին թէ արտաքին առեւտուր-վաճառականութիւնը հանդիսացած էր երկրին գլխաւոր եկամուտը, առեւտրականները ընկերութեան մէջ գրաւած էին առաջնակարգ դիրք, որոնք ընդհանրապէս տեղացիներ եղած էին: Սակայն, Արեւելքի պատմութեան մէջ ի յայտ եկած էր հռոմէացի վաճառականին կերպարը, իտալացի կամ յոյն, որոնք թէւ նախ հաստատուած էին Անտիոք, այսուհանդերձ Ա. դարուն իրենց տեղը զիջած էին իրենց հմտութեամբ ու փորձառութեամբ ծանօթ սուրիացի մրցակիցներու, որոնց շարքին բացառուած չէր Սուրիոյ մէջ հաստատուած կամ տարանցիկ առեւտուրով զբաղուող հայ առեւտրականներու ներկայութիւնը:

Հռոմէական Սուրիոյ մէջ երկրագործութիւնը իր կարգին մեծապէս զարգացած էր: Ճարտարարուեստի գծով, կերպասի արտադրութիւնը շարունակուած էր Սիդոնի եւ Տիրոսի մէջ, նոյնպէս փինիկեան որդան կարմիրը շեշտած էր իր արժէքը ամէնուրեք: Սուրիա եւ Եգիպտոս դարձած էին կաշիի եւ կտաւատ կերպասի արտահանման գլխաւոր կեդրոնները, ինչպէս նաեւ Դամասկոսի իշխանութիւնը մեծապէս ընդարձակուած էր եւ Դամասկոս մայրաքաղաք դարձած էր Ատրիան կայսեր տիրապետութեան շրջանին (117-138թթ.), մինչ Աղեքսանդր Սէֆերիոսի տիրապետութեամբ (222-235թթ.) քաղաքը կարելոր դիրք գրաւած էր, նոյնիսկ գերծ մնացած էր կալուածական տուրքեր: Հռոմէական Դամասկոսը հանդիսացած էր վաճառաշահ կեդրոն մը, ինչ որ կրնայ յուշել այդտեղ հաստատուած հայ տարրի մը ներկայութեան մասին, առաւելաբար առեւտրականներ, երբ հայերը Սուրիոյ հարաւային շրջանները երթելէ ունէին առեւտրական նկատառումներով:

Հռոմէական տիրապետութեան շրջանին եւ Զ.ա. Ա.-Դ. դարերուն, Սուրիա իր կարգին ենթարկուած էր պարթեւապարսկական ասպատակութիւններուն, որոնք երբեմն

պարսիկներուն կողքին զուգորդուած էին հայերու ներկայութեամբ: Պարթեւներու ծաւալումը մինչեւ Եփրատ գետի տարածքները նոր կացութիւն ստեղծած էր Մերձաւոր Արեւելքի մէջ, յառաջացած էին քանի մը մանր իշխանութիւններ, որոնցմէ նշանաւոր հանդիսացած էին Օսրոյէի կամ Ուռհայի (Զ.ա. 132-242թթ.) եւ Փալմիրի թագաւորութիւնները:

Օսրոնի կամ Ուռհայի թագաւորութիւնը հիմնադրուած էր երբ Սելեւկեաններ քաշուած էին Եփրատ գետի արեւմտեան կողմը, Միջագետքը ձգելով պարթեւներուն եւ ինկած էր երբ Հռոմ իր իշխանութիւնը ուղղակիօրէն ծաւալած էր դէպի կայսրութեան արեւելեան շրջանները: Թագաւորութեան գոյութիւնը վիճելի ըլլալով հանդերձ, կը կարծուի, թէ գոյատեւած էր 375 տարի եւ իւրայատուկ երեւոյթ մը նկատուած էր յաճախակիօրէն խուճապի ենթարկուած այս շրջանին համար, նաեւ ուշագրաւ է, թէ եղած էր հայ, ասորի, արաբ եւ պարթեւ խառն բնակչութեամբ թագաւորութիւն մը, որուն վերջին գահակալները իբրեւ թէ հայեր էին, օրինակ անուանի դարձած էր Աբգար Ե. թագաւոր (Զ.ա. 4-7 թթ., 13-50թթ.), որ Մովսէս Խորենացիի վկայութեամբ հիմնադրած էր Եղեսիա քաղաքը: Նիկոլայ Յովհաննիսեան Ուռհայի կամ Եղեսիոյ «Յայ-արաբական» թագաւորութեան գոյութիւնը բնորոշած է որպէս «ուշագրաւ վարկած», եւ ըստ անհրոթեան, Աբգար Ե. թագաւոր քրիստոնէութիւնը ընդունած էր Առաքեալներու ձեռամբ:

Այս պարագային, շահեկան են Տիգրան Սաւալանեանցի փոխանցած այն տեղեկութիւնները, որոնց համաձայն այդ օրերուն հայերը հաստատուած էին Ս. վայրերուն մէջ եւս, ուր չէր բացառուած նաեւ հայ ուխտաւորներու ներկայութիւնը, որոնք մեծ հաւանականութեամբ անցած էին Սուրիոյ քաղաքներէն, յատկապէս Յալեպէն եւ ապա Դամասկոսէն դէպի Ս. վայրերը իրենց ճանապարհորդութեան ընթացքին:

Սուրիոյ կարաւանային կարելորագոյն քաղաքներէն եւ սուրիական անապատէն անցնող բոլոր կարաւաններուն հանգուցակետը հանդիսացած էր Փալմիրը: Զաղաքին դէկավարները օգտուելով քաղաքին ռազմավարական դիրքէն, անկախութեան հեռանկարով ճկուն քաղաքականութիւն մը վարած էին երկու մրցակից հզօր տերութիւններուն՝ Հռոմէական եւ Պարթեւական կայսրութիւններուն հետ: Փոխադարձաբար



հռոմեացիներն ու պարթեւները իրենց մրցակցություններով հանդերձ, ձգտած էին վերարժեւորել Փալմիրեն անցնող անապատային ուղղակի ճանապարհը, որ իրենց համար շատ անելի ապահով նկատուած էր: Նշանաւոր դարձած էր Փալմիրի իշխող Ուզայնա գերդաստանը, ուր փայլած էր Չէնոպիա թագուհին, ան նաեւ գարկ տուած էր մշակութային կեանքին: Թագուհին իր փառքի գագաթնակէտը նուաճած էր 271 թուականին երբ Անտիոքի ու Սուրիոյ մեծ մասին տիրած էր: Հայերուն համար կարեւոր նշանակութիւն ունի այն հանգամանքը, թէ Փալմիրի Չէնոպիա թագուհին լաւ յարաբերութիւններ ունեցած էր յատկապէս հայոց Խոսրով Բ. Կոտակ թագաւորի հետ (330-339 թթ.) եւ անոր «Վաքալլաթ» կամ «Աթենադորոս» գաւակը թագաւորած էր «Հարաւ-արեւմուտեան ստորին Հայաստանի վրայ (264-273 թթ.)», լուսարձակի տակ բերելով հայ-սուրիական յարաբերութիւններու աշխոյժ ժամանակաշրջան մը, ուր չէր բացառուած հայերու վերաբնակեցումը յիշուած աշխարհագրական տարածքներուն վրայ: Այս մասին կան նաեւ այլ վկայութիւններ:

Ուրեմն սուրիական վերոյիշեալ շրջաններուն մէջ հայկական տարրի մը ներկայութիւնը անխուսափելի կը նկատուի, մասնաւորաբար երբ Փալմիրի վաճառականները որպէս անապատի գաւակներ, ոչ միայն առետրական կեդրոններ հիմնած էին Եփրատ ու Տիգրիս գետերու, Պարսից ծոցի, Կարմիր ծովու, Եգիպտոսի եւ Միջերկրական ծովու ծովեզերեայ շրջանները եւ ծաւալած էին լայնածիր գործունէութիւն, ապա նաեւ ունէին իրենց առետրական նաւատորմիղները: Մինչ Փալմիրի նաւահանգիստը՝ Տորա-Օրորուս, ներկայիս Սալիհիէթ ալ-Ֆուռաթ, մեծապէս սատարած էր Փալմիրի առետրական վերելքին: Ըստ արաբական աղբիւրներու հետաքրքրական է, թէ քաղաքին բնակչութիւնը յոյներէ, մակեդոնացիներէ, փալմիրցիներէ, հռոմեացիներէ, պարսիկներէ եւ մանաւանդ հայերէ բաղկացած խառնուրդ մը ներկայացուցած էր, ուր իւրաքանչիւր համայնք զգեստաւորուած էր իր ազգային հանդերձանքով, նոյնպէս եւ հայերը: Տեղւոյն բնակչութեան գումարուած էին առետրական կարաւաններուն ընկերացող գանազան ժողովուրդներու ներկայացուցիչներուն ժամանակաւոր ներկայութիւնը, հանգամանք մը, որ բացայայտած է նաեւ հայերու ներկայութիւնը Եփրատ գե-

տի հովիտի հարաւային շրջաններուն մէջ, ուր ակնառու եղած էր քաղաքակրթութիւններու թէ արուեստներու փոխանակում մը: Եւ դեռ Փալմիրեն անցած էին Հնդկաստանէն, Պարսկաստանէն, Պարսից ծոցէն, Միջագետքէն արտահանուած ապրանքները դէպի Սուրիա եւ Միջերկրական ծովու աւազանը եւ փոխադարձաբար:

Միւս կողմէ, Հայաստան շուրջ հինգ դար մնացած էր Հռոմի քաղաքական ազդեցութեան տակ եւ հռոմեացի կայսրեր Սուրիոյ ու Միջագետքի իրենց տիրոջները պահպանելու համար, ջանացած էին Հայկական բարձրաւանդակը պահել իրենց տիրապետութեան տակ, յաճախակի ընդհարումներ ունենալով պարսիկներուն հետ: Անհրաժեշտ է ընդգծել, թէ Մեծն Տիգրանէն ետք Հայաստանի Արտաշէսեան եւ ապա Արշակունի թագաւորները հռոմեա-պարթեւական եւ յետոյ հռոմեա-սասանեան հակամարտութիւններուն մէջ փորձած էին քաղաքական չեզոքութիւն մը պահել, Հայաստանի անկախութիւնն ու հողային ամբողջականութիւնը պահպանելու ճկուն քաղաքականութեամբ մը: Երբեմն սակայն, ստիպուած կողմ եղած էին մասնակցելով պատերազմներու: Ահաւասիկ այս շրջագիծէն ներս, Անտիոք, որ Արեւելքի մէջ ռազմական գործողութիւնները ղեկավարող հռոմեացի կայսրերու նստավայրը ներկայացուցած էր, միշտ հայ տարր մը ընդունած էր, որպէս ռազմագերի, դաշնակից զօրք եւ կամ արքունի հիւր, օրինակ, Բ.ա. 50/51 թուականի պարթեւ-հայկական արշաւանքը ղեկավարուած էր պարթեւ թագաժառանգ Բակուրի կողմէ, որուն խորհրդատուն եղած էր հայկական ջոկատի ղեկավարը՝ Վասակ կամ Օսակէս, «*Բացառուած չէ, որ սա հայ եղած է...*»: Աւելի ուշ, հռոմեացի Անտոնինոս Գարազալլա կայսր (211-217թթ.) տարուած ամբողջ Առաջաւոր Ասիան նուաճելու իր երազով - որուն նախապայմանն էր անշուշտ Հայաստանի եւ Օսրոյէնի (Ուռհայի կամ Եդեսիոյ) թագաւորութիւններու վերացումը -, 215 թուականին Անտիոք եկած եւ գերեվարած էր Օսրոյէնի Աբգար Թ. թագաւորը (212-215թթ.), այնուհետեւ հայոց Խոսրով Ա. թագաւորը (217-238թթ.) Անտիոք հրակիրած եւ բանտարկած էր, մէկ տարի յետոյ 217 թուականին հայոց թագաւորը բանտին մէջ մահացած էր:

Նոյն այդ ժամանակամիջոցին, քրիստոնէութեան տարածման առաջին դարերուն Անտիոք, Եդեսիա եւ Ամիդ կամ Տիարպէթիր



քաղաքները վերածուած էին կրօնական-մշակութային մեծ ուստաններու, ուր հիմնուած էին նաեւ բարձրագոյն դպրոցներ, ընդունելով բազմաթիւ հայ ուսանողներ, զուգահեռաբար սերտացնելով յատկապէս հայասորական յարաբերութիւնները, նաեւ առեւտրական առումով, ինչ որ կը մղէ մտածելու, թէ հայերը շատ լաւ ճանչցած էին այս շրջանները: Թէեւ քրիստոնէութեան տարածման սկզբնական օրերէն, Դամասկոս իր կարգին դարձած էր քրիստոնէութեան տարածման օրրաններէն, սակայն իրենց կարգին Յալէպ եւ Լաթաքիա հանդիսացած էին քրիստոնէական կեդրոններ, սակայն, պատմականօրէն չէ հաստատուած, թէ հայերը որոշակի կապեր ունեցած էին այս քաղաքներուն հետ քրիստոնէութեան սկզբնական շրջաններուն:

Եդեսիոյ կամ Ուռհայի թագաւորութիւնը ինկած էր շուրջ 242 թուականին: Այնուհետեւ քաղաքը կռուախնձոր դարձած էր հռոմեական եւ սասանեան հակամարտութիւններուն միջեւ, Ե. դարուն սակայն, Եդեսիա վերածուած էր քրիստոնէական մեծ եւ բարգաւաճ կեդրոնի մը, նշանաւոր դարձած էին քաղաքին վանքերը, վանական կեդրոնները, «ակադէմիաները», գիտնական աստուածաբանները, Նոյնպէս Ե. դարու կիսուն այդտեղ գործած էին երեք կրթական հաստատութիւններ՝ հայկական, պարսկական, ասորական (սըրյան)։ «Կը կարծուի, թէ իւրաքանչիւր դպրոցի անուանումը առնուած էր վարչական կազմի ազգային պատկանելիութենէն...»:

Յիշարժան է, թէ մասնաւորաբար Անտիոք դարձած էր քրիստոնէական ուշագրաւ կեդրոն մը, մանաւանդ որ 70 թուականին հռոմեացիներ ւաւերած էին Երուսաղէմը: Այդ օրերուն, Անտիոք նաեւ մշակութային, առեւտրական եւ արհեստագործական յատկանշականօրէն մեծ կեդրոն մը հանդիսացած էր, հաւանաբար մեծ թիւով հայ առեւտրականներ, բանուորներ, արհեստաւորներ, մշակոյթի գործիչներ հաստատուած էին այդտեղ, յատկապէս Իսոսի կամ Ալեքսանտրէթի ծոցէն մինչեւ Սելեւկիա եւ Լաւոդիկէ (Լաթաքիա), երբ Իսոսի (Ալեքսանտրէթի) ծոցը կոչուած էր «Յայոց ծոց»: Յռչակաւոր եղած էր նշանաւոր ճարտասան Ղեւոնիոս Լիբանիոսի (314-393թթ.) Անտիոքի դպրոցը, ուր աշակերտած էին 20 հայ աշակերտներ. «... Եւ անդադար երթելեկին վաճառաբեր կարաւանաց, ի միջի կալով երկույուն

Դրանցն Ամանոսի, մինչեւ Ծոցոյն Յայոց կոչիլ այդ յանուն Նորին՝ Ծոց Աղէքսանդրէկի...»:

Այս դպրոցին աշակերտներէն էր նաեւ Ղեւոնդիոս Յայկազն (կամ Լեւոն Յայկազն), որ Յայաստանի մէջ հիմնած էր փիլիսոփայութեան դպրոց մը, ապա դարձած էր Անտիոքի համալսարանի ուսուցչապետը: Մեծ հաւանականութեամբ այդտեղ ուսանած էր Ս. Մեսրոպ Մաշտոց, երբ յիշուած է, թէ ան մանկութենէն ստացած էր յունական կրթութիւն եւ վարժ էր յունական դպրութեան: Նոյնպէս, Յովհան Ոսկեբերան 405 թուին աքսորուած էր Անտիոքի մօտիկը՝ Կոկիսոն, ուր հանդիպած էր Դիոսկորոս անունով հայ եպիսկոպոսի մը, որ զինք հրաւիրած էր հայոց եկեղեցին, նախագահելու Ս. Գրիգոր Լուսաւորիչի նուիրուած տօնախմբութեան մը: Միաժամանակ Կոկիսոնի բերդատըր իշխանը հայ մը եղած էր, Սոպատարոս իշխան, որուն մասին դրուատիքով խօսած է Յովհան Ոսկեբերան, շեշտելով որ Ջահան գաւառի բոլոր բերդատերերը հայեր էին, Նոյնպէս եւ բնակչութեան մեծամասնութիւնը: Յովհան Ոսկեբերան Կոկիսոնի խըստաշունչ ձմեռը կոչած էր՝ «Յայկական ձմեռ»: Անտիոք իր դիրքը պահած էր մինչեւ արաբական արշաւանքները:

Կը կարծուի, թէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ քրիստոնէական կրօնի տարածման իր աշխատանքներուն մէջ հասած էր մինչեւ Սուրիա: Ս. Գրիգոր Լուսաւորիչ Նոյնպէս ուխտաւորաբար այցելած էր Երուսաղէմ եւ այդտեղ ճգնողական կեանք վարած էր: Աւանդաբար Ս. Գրիգոր Լուսաւորիչի կը վերագրուի Երուսաղէմի տնօրինական վայրերու մեծ եկեղեցիներուն շինութիւնը: Ինչպէս նաեւ, Ս. Մեսրոպ Մաշտոց հայ գիրերը ստեղծելու նպատակով երբ Միջագետք եկած էր, գործնական խորհուրդներ ստացած էր ասորի գիտնականներէ, իսկ քրիստոնէական առաջին թարգմանութիւնները ասորերէն լեզուէն կատարուած էին:

Ուրեմն քրիստոնէութեան տարածման առաջին շրջաններուն եւ մինչեւ Ե. դար, պատմականօրէն հաստատուած է Սուրիոյ մէջ ծաւալած քրիստոնէական եռուզեռը, մանաւանդ երկրին հիւսիսային շրջաններուն մէջ, ուր իր կարգին հայ տարրին ներկայութիւնը պատմականօրէն հաստատուած է: Կարելի չէ Նոյնը ըսել սակայն, Սուրիոյ հարաւային շրջաններուն համար, նկատի առնելով հանդերձ Դամասկոսի քրիստո-



Նեական նշանակալից աւանդը, եւ այդ օրերուն դէպի Պաղեստին սկսած ուխտագնացութիւններու թափը, ուր բացառուած չէր, թէ հայ ուխտաւորներ եթէ նախ անցած էին պատմական Յալէպէն եւ յետոյ Դամասկոսէն, բայց ապացուցուած չէ կազմակերպուած եւ մնայուն հայ համայնքներու գոյութիւնը: Ի դէպ, Յալէպի պարագային կը կարծուի, թէ այս ուխտագնացութիւններուն զարգացումով է որ հայ ուխտաւորները սատարած էին տեղւոյն հայ համայնքին գոյաւորման եւ զարգացման: Դամասկոսի հայ համայնքին մասին նաեւ հետեւեալ կարծիքը տրուած է. «...Ստիպուած ենք ընդունիլ որ չորրորդ դարուն մէջ հաստատուած են այն բոլոր կայանները, որոնք կը գտնուին Երուսաղէմի ճամբուն վրայ, ի միջի այլոց նաեւ Դամասկոսի հայոց Ս. Սարգիս վանք»:

Վերջաբան

Մեծն Տիգրանի հայկական թագաւորութենէն վերջ, Յայաստանը աստիճանաբար փոքրանալով խաղաղասեր երկրի մը վերածուած էր՝ Յռոմէական եւ Պարսկական կայսրութիւններուն միջեւ, հետագային Բիւզանդական եւ Պարսկական կայսրութիւններուն միջեւ, մինչեւ բաժանումը Յռոմի եւ Պարսկաստանի միջեւ 387 թուականին, այնուհետեւ դարձած էր թատերաբեմը շարունակական յարձակումներու եւ ասպատակութիւններու: Երկրի տարածքին սըփռուած արհաւիրքներուն հետեւանքով դէպի Կիլիկիա, Սուրիա, Միջագետք, Պաղեստին եւ այլուրջ երբեմն արտագաղթը հասած էր մեծ տարողութիւններու, ստուարացնելով այդ վայրերուն մէջ արդէն իսկ գոյութիւն ունեցող հայկական բնակավայրերը, փոքրաթիւ համայնքները եւ կամ ստեղծելով նորերը: Պարսկահայաստանը երբեք չէր յաջողած ինքզինք վերականգնել, եւ Սասանեաններ (224-642թթ.) յատկապէս հալածանքի ենթարկած էին Յայաստանի մէջ պետական կրօն հռչակուած քրիստոնէութիւնը (301թ.), փոխարէնը հաստատելու զրադաշտականութիւնը: Եւ ուրեմն, զինեալ առճակատումը Աւարայրի պատերազմին (451թ.) անկիւնադարձային եղած էր հայ-պարսկական յարաբերութիւններուն համար: Մինչ Բիւզանդիա միշտ ջանացած էր Յայ Եկեղեցին ենթարկել կաթոլիկ (քաղկեդոնական) եկե-

ղեցոյ, իսկ Յայ Եկեղեցոյ կողմէ Զաղկեդոնի ժողովին (451թ.) մերժումով՝ յարաբերութիւնները մնայուն կերպով վատթարացած էին, Յայ Եկեղեցին անվիճելիօրէն դարձած էր հայ ժողովուրդի ազգային միութեան հիմնական գործօններէն մէկը: Նշելի է, թէ Արեւմտեան Յայաստանը քաղաքական եւ մշակութային առումներով համասեռ տարածք մը ներկայացուցած էր եւ Բիւզանդական կայսրութեան ենթարկուած էր մաս առ մաս: Բիւզանդական կայսրութիւնը մեծ ազ-



դեցութիւն ունեցած էր հայ ժողովուրդի քաղաքական, մտաւորական ու կրօնական կեանքին վրայ, երբ տակաւին Դ. դարու սկիզբը Յայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակումը, Յայ Եկեղեցոյ զգեցած ազգային ինքնութիւնը եւ ապա հայ գիրերու գիւտը խիստ մեծ առաւելութիւն մը հանդիսացած էին հայերուն համար, ընդդէմ Բիւզանդիոյ, անշուշտ նաեւ Պարսկաստանի:

Ամփոփելով, պատմաաշխարհագրական Սուրիոյ կամ «Պիլատ Ուլ-Շամ»-ի մէջ հայերու յարաբերութիւնները՝ սկսած էին դարերու խորքէն, երբ Յայկական բարձրաւանդակէն անցած էին հին Արեւելքի առեւտրական միջազգային այն ճանապարհները, որոնք պատմական Սուրիոյ տարածքը կապած էին Սեւ եւ Կասպից ծովերուն հետ:

Սուրիոյ հայ համայնքը պարբերաբար վերանորոգուելով նաեւ Յայաստանէն դէպի դուրս իրականացած առաւելաբար զանգուածային արտագաղթերով՝ որոնց բարձրակետը հանդիսացաւ Մեծ Եղեռնը, յաջողած է գոյատեւել, բարգաւաճիլ, զարգանալ եւ կարեւոր տեղ գրաւել հայութեան համայնական կեանքին մէջ:

Ծանօթ.
Յօդուածին ծանօթագրութիւնները կարդալ «Գանձասար»-ի կայքէջին վրայ գտնուած տարբերակին մէջ:



ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՀԱԼԵՊԱՅՆՈՒԹԵԱՆ ՎԵՐՁԻՆ ՏԱՍՆԱՄԵԱԿԻ ՉԱՆԳՈՒԱԾԱՅԻՆ ԱՐՏԱԳԱՂԹԻՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԿԻՃԱԿԻՆ ՄԱՍԻՆ

Սալբի Գասպարեան

ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետի 2022-ն ու 2023-ը յաջորդաբար «Սփիւռքի Տարի» հռչակելը՝ յանձնառութեան մըրճահարող ահագանգ է, ուղղուած՝ ազգային անյետաձգելի այլեւ հրամայական պատասխանատուութեան կոչելու համասփիւռքեան կեդրոնախոյս զանգուածը առաջնորդելու կոչուած ազգային համապատասխան ղեկավարութիւնները, ռազմավարութեան նոր ձեւաչափերով, իրապաշտական եւ գործնական լուծումներու հարթակի վրայ հակակշռելու գոյերթի նախադրեալներուն սպառնացող, նորորեայ առկայ մարտահրաւերները:

եղկելիօրէն ի յայտ եկած ճգնաժամային հանգուցաւոր հարցախնդիրներուն, ուր «տարագիր հայերու» եւ «տարաբնակ հայերու» լինելիութեան պայքարի ճակատները կը զուգահեռուին ազգային ինքնութեան պահպանման հասարակաց պահանջքներու առանցքին մէջ:

Այսօր ակնբախ իրականութիւն է, որ Սփիւռքի հայահոծ հնամեայ գաղութներուն մէջ ազգային ինքնութեան պահպանման կանոնակարգը կ'ենթարկուի նոր ազատական դրամատիրութեան քաղաքականութեան յարուցած անհակակշռելի վտանգներուն, որոնք ընդհանրապէս չպատճառաբանուած պատերազմներու եւ անոնց հետեւանքով ստեղծուած՝ տնտեսական սուր տագնապներու գործած աւերներով եւս աւելի կը սպառնան ազգային փոքրամասնութիւններու ինքնութեան կայունութեան, թիրախ դարձնելով «սփիւռքներու» կարգավիճակով գոյատեւող մեր «փոքր ածուններու» անհող կառոյցը, առաջին հերթին ցընցելով եկեղեցի-դպրոց-մամուլ երրորդութեան տնտեսական ապահովութիւնը երաշխաւորելու կոչուած հիմքերը:



Այս ուղղութեամբ մեր մտորումները ականայ կ'ուղղուին ցաւոտ եզրայանգումի, ընդ որուն՝ անկարելի կը դառնայ կեդրոնագուրկ, կեդրոնախոյս, բազմատարր ու բազմաբնոյթ էութեամբ յատկանշուող մեր «Սփիւռք»-ի յղացքը դիտարկել լոկ ժամանակի մը եւ վայրի մը սահմաններով ճշդուող հարթակի վրայ, ուր հնարաւոր ըլլայ համապատասխան վերլուծութիւններով եւ մատնանշումներով լուծումներ առաջարկել անոր խճանկարային տարածութեան վրայ

Եւ բոլորովին ալ պատահական չէ, որ Սուրիոյ եւ Լիբանանի երբեմնի հայատրոփ բարգաւաճ գաղութները, տարածաշրջանի դիմագրաւած նորագոյն մարտահրաւերներու եւ աւերիչ պատերազմներու ստեղծած անապահովութեան եւ տնտեսական ահաւոր տագնապներու պատճառով, զուգահեռաբար իրավիճակին տիրապետելու կոչուած նուազագոյն լուծումներու բացակայութեամբ, ենթարկուած են արտագաղթի անկասելի տեղաշարժերու, տակաւ ձուլուելու տարբեր երկիրներու մշակութային

խառնակեաց ընդերքին մէջ:

Այսօրուան տուեալներով, Հայաստանէն եւ Միջին Արեւելքի հայահոծ գաղութներէն, համազգային եղեռնի համեմատութիւններու հասած արտագաղթը, իր առարկայական ու ենթակայական գործօններու պատճառականութեամբ, թե՛ հայրենի պետութիւնը, թե՛ Սփիւռքի ազգային կառոյցներու ղեկավարութիւնը կը կանգնեցնէ մեր գոյերթին սպառնացող աննախընթաց մարտահրաւերներու դիմաց, ուր աշխարհաքաղաքական բարդ եւ յարափոփոխ խճանկարի ծանծաղուտին մէջ հարցականի տակ կը դրուի մանաւանդ Միջին Արեւելքի երբեմնի ծաղկուն եւ կենսունակ գաղութներու գոյութիւնը: Այստեղ մեր համեստ ակնարկը կեդրոնացնելով մանաւանդ սուրիահայ գաղութի ներկայ անբաղձալի իրավիճակին վրայ, պէտք է ըսել, որ Սուրիոյ տասնամեայ պատերազմի ընթացքին, տեղւոյն ազգային կառոյցներուն կրած ահաւոր ցնցումին յաջորդած է՛ւս 2023-ի աւերիչ երկրաշարժին հետեւանքով՝ արտահոսքը մեծածաւալ տարողութիւն ստացաւ, սպառնալով հալէպաբնակ մնացորդացի խեղճացած գոյութեան: Ազգային-հասարակական-մշակութային եռուն կեանքէն մարդու խօսքացումը քաղաքացիական հասարակութիւնը մատնեց ճարահատութեան, տակաւ գայն կանգնեցնելով աղքատութեան, անյուսութեան եւ հոգեբարոյական տուայտանքի սեմին...:

Իրապաշտ ըլլալու համար, պէտք է ըսել նաեւ, որ հայը միշտ ալ սովոր է իր խորքերուն մէջ փայփայելու արեւմուտք գաղթելու թաքուն ցանկութիւնը, տենչը, հետեւաբար պէտք է ընդունիլ, որ սովորաբար մեկնումները, մեկնելու մտմտութիւնն ու որոշումը յանկարծ չեն ծնիր, այլ անոնք մշուշոտ եւ անհեռանկար ապագային հանդէպ ժամանակի ընթացքին կուտակուած անհանգիստ զգացումներու յաճախանքով գոյացած խորագաց տագնապի ցուցանիշներ են, որոնք ինքնութեան բնականոն կենսակերպը պահող հարագատ միջավայրէն եւ ենթահողէն հեռանալու տուայտանքը կը դարձնեն անբեկանելի որոշում, երբ երբեմնի տուեալ շերմ միջավայրը այլեւս չի բաւարարեր ապագայի իրենց սպասումներն ու ձգտումները, երբ կը դադրին հաւատալ ապագայ բարեկեցութեան, ապահովութեան եւ խաղաղութեան, այլ խօսքով՝ երբ այլեւս չեն յաջողիր տանիլ կենցաղային արժանապատիւ գոյութեան մարտավարութիւնը... ասկէ մեկ-

նած՝ կրնանք ըսել, որ Միջին Արեւելքի մանաւանդ Սուրիոյ եւ Լիբանանի հայահոծ գաղութները, այդ երկիրներու մէջ տեղի ունեցած երկարամեայ մաշեցնող պատերազմներու եւ անոնց հետեւանքով իրենց կրած քաղաքական տագնապներու եւ տնտեսական ճգնաժամերու հետեւանքով, արդէն հոգեպէս պատրաստ էին լքելու յետ-Եղեռնի իրենց ծաղկեցուցած օրրանները... իրականութիւն է նաեւ, որ անկախ պատերազմներու ստեղծած անբաղձալի իրավիճակէն,



երիտասարդները արդէն սկսած էին գաղթել թէեւ աննշմար եւ ո՛չ զանգուածային թափով, երբ արեւմուտքի մէջ գտած էին աշխատանքային ասպարէզի նոր եւ ցանկայարոյց կարելիութիւններ:

Այստեղ մասնաւորաբար լուսարձակի տակ բերելով հալէպահայութեան զանգուածային արտագաղթի ցաւոտ երեւոյթը, պէտք է ըսել, որ ան կը պատճառաբանուի՝ գլխաւորաբար տնտեսական տակաւ վատթարացող ճգնաժամի եւ վերականգնումի ու բարելաման միջոցներու հանդէպ յոյս ու հաւատքի բացարձակ բացակայութեամբ, ուր մեծ դեր կը խաղան արեւմուտքի Սուրիոյ սահմանած «Կեսար» պատժամիջոցի արդիւնքով, շրջափակման ստեղծած տընտեսական սուր տագնապը, որուն հետեւանքով արգիլուած է հում նիւթերու հոսքը դէպի երկիր, ինչպէս նաեւ Էրտողանի քաղաքական լպիրշ վարքագիծով տեղի ունեցած մեծ գործարաններու եւ արդիւնաբերական ձեռնարկութիւններու պատկան գործիքներու, ծանրակշիռ սարքերու եւ պիտոյքներու գողութիւնը, որ է՛ւս հիմնական պատճառներէն մեկն է Սուրիոյ ճարտարարուեստի մայրաքաղաքը հանդիսացած Հալէպ քաղաքի անդամալուծութեան, ասոնց գումարած՝ ներքին կարգով տեղի ունեցած տնտեսական վտիտ ազատութիւններու սահմանափակումը, անձնական գործերու զարգաց-



ման համար հեռանկարներու չգոյութիւնը, կենցաղային կեանքի տարրական պայմաններու օրէցօր խորացող դժուարութիւնները, յարաճուն վերելք արձանագրող անտրամաբանական շահատուրքերը, անհակակշռելի, ահռելի սղաճը, դեռ չհաշուած փխրուն ապահովութեան անթաքոյց մտմտութիւն ու պարբերաբար կրկնուող ահաբեկչական արարքներու ստեղծած սարսափը...:

* * *

Իրատեսական առողջ տրամախոհութեան հարթակի վրայ, հեռու բարոյախօսութեան զգացականութեամբ բնորոշուող տեսական չափորոշիչներու հասկացութեան այլեւս կոշկոռ կապած իրահանգումներէն, պարտինք չդատափետել, չմեղադրել, չպարսաւել ու չքննադատել արտագաղթողները, որոնց ազգային ինքնութեան պահպանման բնագոյային յանձնառութեան շնորհիւ, արեւմուտքի ոստաններու, մանաւանդ Քանատայի գարթօնք ու ծաղկունք ապրող հնամեայ գաղութներու նորաստեղծ պատկերը կուգայ հաստատելու, որ Միջին Արեւելքի հարիւրամեայ անհաղթելի գաղութներէն դուրս, կայ թէ՛ մարդկային լիարժէք իրաւունքներով, թէ՛ ազգային ինքնութեան հիմնարար գործօններու աշխատունակութեամբ գոյատեւելու այլընտրանք, իրատեսական հայեացք մը, որ դիտարկուելով շօշափելի փաստերու եւ առարկայական տուեալներու պրիսմակէն, տրամաբանականութեան նոր որակով մտածել կու տայ, որ ի վերջոյ երբ չենք գտնուիր մեր կորուսեալ հարազատ հողին վրայ, անկախ վայրի տուեալէն, ըլլայ ան արեւմուտքի թէ արեւելքի տարածքին, թէն համեմատական տարբերութիւններով, մեր ազգային գոյերթը կարելի է շարունակել հոն՝ ուր մեր ինքնութեան գիտակցումն ու պահպանումը կը դառնան հաւաքական գերագոյն նպատակ...:

Ըստ միջազգային կարգ մը աղբիւրներէ քաղուած տուեալներու, վերջին տասնամեակին տարածաշրջանէն արտագաղթած այլաբնոյթ, այլադասան եւ այլազգի աշխատուծի բոլոր շերտերէն ամենալաւերը հայերն են, որոնք իրենց հաստատուած նոր երկիրներուն մէջ, նաե՛ւ ամենաշուտ յարմարողականութիւն (adaptation) ցուցաբերածներն են, աշխատասեր, հնարամիտ, գործունեայ եւ վստահելի տարրեր են, որոնք իրենց բազմաբնոյթ հմտութիւններով նոյնիսկ կը բարձրացնեն իրենց գտնուած տուեալ վայրերու մրցունակութեան տարր-

ըութիւնն ու որակը, առանց բացասական տրամադրուածութիւն յառաջացնելու տեղ-ւոյն բնիկներուն մօտ: Զետեւաբար, Սուրիոյ ընկերային, քաղաքատնտեսական ինչպէս նաե՛ւ ներագոյային տմոյն կեանքի անհեռանկար եւ անբարեյոյս իրավիճակին գիտակցումով, հնամաշ եւ ակամայ ժամանակավրէպ դարձած լոգուններու ծակ թըմբուկներով, ի գուր չքննադատենք գաղթողները... Խնայենք անհիմն վճիռները երբ նոյն-ինքն մնացողներու գոյերթի երաշխիքները տակաւ կ'աղօտին, կը խարխափին ու կ'անէանան...:

* * *

Յետ տասնամեայ պատերազմին, շարունակուող շրջափակման, տնտեսական պատժամիջոցներուն, երկրին բնական հարստութիւններու յափշտակման, իւրացումին, եւ 2023-ի Փետրուարին քաղաքը հարուածած աներիչ երկրաշարժի հետեւանքներուն, Զալէպ այսօր կը գտնուի տնտեսական անելի առջեւ, ուր մեր տակաւ մաշող գաղութին գոյութիւնը կը դիմագրաւէ ճակատագրական այս աննախընթաց մարտահրաւերի դաժան փորձութիւնը...:

Այնուամենայնիւ, դեռ կայ դեռեւս հալէպաբնակ նօսրացած շերտ մը, որ ի հեճուկս տիրող կենցաղային ծանր պայմաններուն, գէթ ներկայիս գաղթելու ծրագիր չունի, հետեւաբար անհրաժեշտ է դիմացող մնացորդացի տնտեսական իրավիճակը բարելաւելու կոչուած այլընտրանքային տարբերակներու ստեղծումը, սակայն պետք է ըսել, որ այս ուղղութեամբ բնականաբար դեռ չկան ընդունելի եւ գործադրելի լուծումներու առաջնորդող բաղադրատոմսեր, նկատի ունենալով նաե՛ւ, որ պարագայական չընչին եւ խաբուսիկ օժանդակութիւնները, երբեք չեն նպաստեր Զալէպի եւ իր օրինակով նօսրացող կենսունակ գաղութներու քայքայուած տնտեսութեան վերականգնումին համար մշտական լուծումներ ներկայացնելու, հետեւաբար, մնացորդացի հոսքը կասեցնելու համոզիչ եւ յուսադրող գործօններու ստեղծումը՝ իրամայական անհրաժեշտութեամբ կը թելադրէ տնտեսական համագործակցութեան նուազագոյն ծրագրի մը ենթահողին վրայ ունենալ **ներգաղութային միաբերեւո ուժերով դեկավարուող տնտեսական կեդրոնաձիգ ծրագիր**, որ նախ եւ առաջ կ'ենթադրէ **տնտեսական հիմնարար բանաձեւի մը յառաջացումը**, գաղութային բոլոր կողմերու բանիմաց եւ մասնագետ ներկա-



յացուցիչներու միահամուռ ուժերով կեանքի կոչելու «տնտեսական շտապ» մը, որ իր իրապաշտական եւ գործնական բանաձեւերու առաջադրանքներով դառնայ **ներգադրութային տնտեսական ներքին ինքնավարութեան ենթակառոյցը:**

Առ այդ՝

ա) Սուրիահայութեան գոյամարտի այս նորագոյն փուլին, հրաժարելով անցեալապաշտութեան ժամանակավրէպ գործելակերպէն, **մարտակոչի յանձնառութեամբ** մեր գաղութային գահավիժումին հակադարձել նոր ռազմավարութեան մը հրահանգումով, որ կը պահանջէ **համազարգացման ինքնավարութեան համընդհանուր ծրագրի մը ստեղծումը:**

բ) Լուսարձակի տակ բերելով խնդրոյ առարկայ սուրիահայ հաւաքականութեան ցարդ պարզած տեղաշարժերու հաշուեկշիռը, կեանքի կոչել իրատեսական եւ գործարելի գործօններով հիմնաւորուող այնպիսի ռազմավարութիւն մը, որ տուեալ պահուն, երկրին մէջ քաղաքական նոր խլրտումներու եւ տարածաշրջանին մէջ տեղի ունենալիք նորագոյն բախումներու պատճառով, որերորդ անգամ չկոտորակուինք եւ չենթարկուինք զանգուածային նոր գաղթերու փորձութեան:



գ) Ներգաղութային տնտեսական ծրագիր մը կեանքի կոչուելու պարագային, յառաջացնել մասնագետ տնտեսագետներու տեղայնական մարմին մը, որ վաւերական տուեալներով կատարէ իրավիճակի ուսումնասիրութիւն, ճշդէ կարիքներու մօտաւոր հաշուեկշիռը եւ համապատասխան գեկուցումներով ու փոխլրացման լուծումներու առաջարկներով, հունի մէջ դնէ եւ ղեկավարէ գաղութին տնտեսական կառոյցը: Մասնագիտական այս աշխատանքներու իրականացման համար պաշտօնակոչուող բանիմաց, յանձնառու մասնագետները, անհատները կամ խմբակները իրենց վստահուած գործը կատարեն վճարումի պայմա-

նով, որուն նիւթական աղբիւրը պետք է դառնայ այս նպատակով կեանքի կոչուելու ֆոնտերու միջոցաւ:

Յետեւաբար՝

դ) Սուրիոյ եւ Լիբանանի հայ գաղութներու ազգային անվտանգութեան հիմնահարցը՝ պետք է դարձնել արեւմուտքի հայ բարեկեցիկ համայնքներու համար առաջնակարգ օրակարգ, որուն առաջադրելի գործնական լուծումները պետք է սկզբնաւորել զանազան ֆոնտերու **համասփիւռքեան հիմնադրամի մը կամ դրամագլուխի մը հիմնումով**, որ գործնական զանազան ծրագիրներու մշակումով, դառնայ մնայուն օժանդակութիւն հայթայթող տնտեսական կառոյց, որուն ֆինանսաւորումը ընդհանրապէս եւ այլ կարիքներու համար կատարուի մեր կազմակերպութիւններու եւ ունեւոր անհատներու պարբերական կամ տարեկան ներդրումներով, տրուած ըլլալով նաեւ, որ համահայկական հիմնադրամը իր սահմանափակ կարելիութիւններով, չի կրնար դառնալ վտանգուած հայ գաղթօճախներու պահանջները բաւարարող կառոյց:

Յունկ՝

Պետք է ըսել, որ սփիւռքահայութեան անխուսափելի տեղաշարժերու պարագային, **հայրենադարձութեան նոր ռազմավարութեան մը յղացքով, արտահոսքը ուղղելի դէպի Յայաստան**, որովհետեւ վաղ թէ ուշ, Սփիւռքը դատապարտուած է անեացման, այնքան ատեն, որ ճակատագրականօրէն զրկուած է հարազատ հողի վրայ ըլլալու անփոխարինելի երաշխիքէն, հետեւաբար անոր կը պակսին ազգային միաձոյլ կառոյցի, կեդրոնաձգութեան եւ քաղաքական ազգային գաղափարախօսութեան հիմնարար պայմանները:

Սփիւռքահայ համայնքներու ո՛չ մէկ իրավիճակ կրնայ փոխարինել հայրենի հողը, հետեւաբար, մեր քաղաքական տարակարծութիւնները, ըլլան անոնք տեղայնական թէ համայնական, ներհամայնքային թէ համահայկական, անյապաղ փութկոտութեամբ, յստակատեսութեամբ, հանդուրժութեամբ եւ իմաստութեամբ քննարկուելու պահանջք կը ներկայացնեն, որ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ երկրորդ անգամ ըլլալով 2022-ն ու 2023-ը «Սփիւռքի Տարի» իրոջակելով կ'ենթադրէ՝ քաղաքական նուազագոյն ծրագրի մը շուրջ, համախոհութեան հարթակի վրայ կազմակերպուելով, կեանքի կոչել հայ Սփիւռքին կեդրոնաձիգ կառոյցը...:



ՀԱԼԷՊԻ ԾԱՐՏԱՐԱՐՈՒԹՅԱՏԻ ՊԱԼԱՏԷՆ ՆԵՐԱ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԱՆԴՐԱԴՒԱՐԶ

Սոնիա Գաբրիելյան

Հալեպի ճարտարարուեստի Պալատը կազմուած է 1935-ին, օրէնսդրական հրամանագիրով:

Խորհուրդը կը բաղկանայ 18 կամաւոր անդամներէ՝ Հալեպի բոլոր համայնքներու արդիւնաբերողներու երանգներէն:

Պալատին նպատակը, լիազօրութիւնն է ծառայել, ներկայացնել եւ պաշտպանել արդիւնաբերողներուն շահերը ու աշխատիլ արդիւնաբերողները զարգացնել ու յաջողակ դարձնել: Ըլլալով նախանձախնդիր բոլոր ձեռնարկութիւններու յաջողութեան, պալատը կը հովանաւորէ արդիւնաբերողները՝ նպաստելով անոնց աճին ու զարգացման: Պալատը կ'աշխատի կարգաւորել համապատասխան շրջանակներ, ձգտելով նաեւ պաշտպանել անոնց իրաւասութիւնները: Ծիշդ այս նպատակով ալ 2009-ին կազմուեցաւ Սուրիոյ ճարտարարուեստի Պալատներու Դաշնութիւնը:

Հին Հալեպի «Սապաա Պահրաթ» շրջանին մէջ կը գտնուի Հալեպի ճարտարարուեստի Պալատին պատմական շէնքը: 2000-ին կազմուեցաւ Գործարար Կանանց Յանձնախումբը, բաղկացած՝ 13 անդամներէ:

Օրին յանձնախումբը կը կազմակերպէր տարեկան ցուցահանդէս, դասախօսական շարքեր, դասընթացքներ ու կը մասնակցէր ներքին եւ արտաքին համաժողովներու:

Հոն կը տեսնէիք հայ կնոջ աշխատանքը համահաւասար արաբ իսլամին եւ քրիստոնէային՝ ի նպաստ գործունէութիւններու համալրուած ընթացքին:

Չանագան ժամանակաշրջաններու մէջ յանձնախումբին մաս կազմած են Անի Մարկոսեան, Ալին Մահսերեճեան, Մարդին Պաննա Գաբրիելյան, Սոնիա Յակոբեան,

Միրէյ Պոյաճեան, Անի Փիլաւճեան... Եւ շարան մը հայ գործունէայ տիկիներ՝ մինչեւ 2011 թուական:

Սուրիոյ դաժան պատերազմի ազդեցութենէն զերծ չմնաց Հալեպի ճարտարարուեստի Պալատին կառոյցը. 2012 թուականին ենթարկուեցաւ կատաղի ռմբակոծումի,



շուրջը տեղակայուած զինեալ խմբաւորումներու կողմէ պալատի կեդրոնակայանը պայթումի ենթարկուեցաւ հսկայական քանակութեամբ պայթուցիկներով, որոնք տեղադրուած էին շէնքին տակ փորուած նկուղի մը մէջ, ինչ որ պատճառ դարձաւ շէնքի ամբողջական փլուզման: Պալատի գրասենեակը փոխադրուեցաւ այլ վայր մը՝ Հին ալ-Շահպաա թաղամասի բնակարաններէն շէնքի մը մէջ ու այնտեղ գործեց եօթ տարի շարունակ:

2014-ին նորակազմ խորհուրդի 18 ան-

դամներուն մաս կազմեց Ալին Լահտոն (ծագումով հայ): Ան եղաւ ներկայացուցիչ կապը եւ ատենապետուհին Գործարար Տիկիններու Յանձնախումբին: Պալատը այժմ համագործակցութիւն կնքած է Հալէպի Համալսարանին եւ Սուրիոյ Չարգացման Քարտուղարութեան հետ (Ալ-Ամանէ Ասուրիէ Լիլթենմիէ):

Տիկիններու Յանձնախումբին մասնակցութիւն բերին երեք հայ կամաւոր անդամներ՝ Անի Մարկոսեան, Սոնիա Գաբրիէլեան եւ Անի Գուշեան:

Նոր գաղափարներով եւ նորովի գործունեութեամբ, - որոնք համապատասխան էին պատերազմի հանգամանքներու եւ արհաւիրքներու յաղթահարման, - սկսաւ նոր փուլը: Այս փուլին կիզակետը կինն էր. ներկայ դժուար պայմաններուն մէջ կարենալ ապահովելու իր ընտանիքին ապրուստը: Ուստի կազմակերպուեցան վերապատրաստման

մնայուն գործի վերածել:

Հպարտ ենք, որ մեր աշխույժ գործունեութիւնները արդիւնաբերական ասպարեզ դարձան շատերու համար: Քանիներ ունեցան իրենց հագուստի արտադրութեան գործատեղիները կամ սեփական քաղցրաւենիքի խոհանոցները, նման ձեռնարկներու ընդմէջէն փաստելով, որ հալէպցի կինը իր բազմերանգ մշակոյթով ու ձիրքերով պատգամ ուներ փոխանցելիք ողջ աշխարհին՝ ըսելու որ ան պատերազմի մարտահրաւերները կը դիմագրաւէ կեանքին կառչելով, ստեղծագործելով, արտադրելով եւ սուրիական ընկերութեան վերելքին նպաստելով:

2019-ին, Հալէպի Ճարտարարուեստի Պալատը վերադարձաւ իր վերանորոգուած հին կեդրոն՝ շարունակելու պայքարը:

Տիկնանց Յանձնախումբը իր կարգին շարունակեց կազմակերպել իր տարեկան ցուցահանդեսները, արդիւնաբերական հըմ-



դասընթացքներ, մարդկային պաշարներու զարգացման կարելիութիւններ եւ աշխատանքներու ձեւեր: Տարուած աշխատանքներուն կողքին ուշադրութիւն դարձուցինք նահատակներու պարագաներուն (կին, քոյր, մայր), բարելաւելու անոնց կենսամակարդակը: Առաւելաբար կազմակերպուեցան անվճար ցուցահանդեսներ յատուկ կիներու, ուր ցուցադրուեցան ձեռային աշխատանքներու տեսականի եւ սննդամթերքի արտադրութիւն, նպատակ ունենալով այցելուն ծանօթացնել գործող կիներուն եւ անոնց աշխատանքը շարունակական ու

տութիւններու զարգացման եւ ընտանեկան տնտեսութեան նպաստող «Ճարտար կիներ» խորագիրով, որուն կողքին տնային մաքրութեան տեսակաւոր սիւթերու պատրաստութեան դասընթացքները, կարի եւ ձեւաւորման դասընթացքները: Բոլորը կ'ուսուցանուէին մասնագետներու կողմէ: Տրուած բոլոր դասընթացքներու ակադեմիան, մասնակիցները կը ստանային համապատասխան վկայագրեր:

Աշխատանքները չկեդրոնացան միայն Հալէպի մէջ, այլ շարունակուեցան տարբեր նահանգներու մէջ, իսկ յանձնախումբի ան-

դամներեն ոմանք կը հսկէին աշխատանքներուն եւ դասախօսութիւններ կը կարդային մասնակիցներուն:

Երկրի ազատագրումէն վերջ, Դամասկոսի Միջազգային Ա. ցուցահանդէսին մեր հայ կիներն ալ իրենց բաժինը բերին:

Յանձնախումբը աշխատանք տարադպրոցի աշակերտներուն հետ՝ ուղղելու զանոնք դէպի արդիւնաբերական ասպարեզ, ըստ իրենց նախասիրութիւններուն, դասախօսութիւններու եւ գործնական աշխատանքներու միջոցով քաջալերելով ոչ միայն բժիշկը, երկրաչափը կամ իրաւաբանը, այլեւ՝ արտադրողը, որպէսզի աշխատի, արտադրել սկսի եւ ըստայնմ ընտրել համապատասխան համալսարանական ուսում: Մեծ յաջողութիւն արձանագրեցին այս դասընթացքները եւ գործնական առիթ հանդիսացան համալսարանական ուսանողներուն՝ մօտէն ծանօթանալու տեսական նիւթերու, գործնականը հետազօտելու: Զալէպի «Արդիւնաբերական Քաղաք»-ի տարածքին մէջ:

2019 - 2020... պսակածեւ ժահրի համաճարակ

Զալէպը կաթուածահար քաղաք դարձաւ պսակածեւ ժահրի համաճարակի օրերուն: Պետութիւնը նախազգուշական միջոցներու ձեռնարկեց: Շուկաները, ուսումնական հաստատութիւնները, զբօսայգիները, թատրոնները եւ աղօթատեղիները փակուեցան եւ գիշերային պարետային հսկողութան ժամեր ճշդուեցան՝ այսինքն գործազրկութիւնը ընթացք առաւ:

Գործարար տիկիները բարեսիրական աշխատանքի լծուեցան: Դրամահաւաք... ներքին եւ արտաքին միջոցներու դիմելով կարիքաւորներուն օգնութիւն հասցնելու, պատրաստելով սննդամթերքի եւ ժահրի տարածման կանխարգիլման նիւթերու սընտուկներ, հագուստեղէնի տեսակներ բաժնելով եւ այլն: Աշխատանքը մեծ էր այն աստիճան, որ յանձնախումբի անդամները առիթ չունէին զգալու համաճարակի ազդեցութիւնը:

Տիկիներուն աշխատանքը կը շարունակուէր՝ սովորական ծրագիրներէն զատ պատրաստելու նորածեւ զգեստներու ցուցադրութիւն, քաջալերելով Զալէպի արտադրողները: Ունէինք մասնակցող քանի մը տիկիներ, որոնք վերապատրաստուած էին մեր մօտ:

Զամաճարակի պայմաններու յաղթահարման աշխատանքը հազիւ բոլորած, 6

Փետրուար 2023-ին ահռելի երկու երկրաշարժ ցնցեց Զալէպը եւ տարածաշրջանը՝ 7.8 բալ ուժգնութեամբ, որուն յաջորդեցին հազարաւոր կրկնուող յետցնցումներ: Սպանուեցան հազարաւոր քաղաքացիներ, վնասուեցան կառոյցներ եւ բնակարաններ:

Երկրաշարժէն ամենաշատ վնասուողը Զալէպ քաղաքը եղաւ:

Ազդուած էին նաեւ Իտլիպ, Զամա, Լաթաքիա եւ Թարթուս նահանգները: Տուրտ ձմեռ, անձրեւ... Երկիրը ահռելի լափիւրինդոսի վերածուած էր: Ժողովուրդը տեսակաւոր հանրակացարաններու, մարզադաշտերու, ակումբներու, եկեղեցիներու, մզկիթներու եւ դպրոցներու մէջ կը տեղաւորուէր: Շատեր կը նախընտրէին քնանալ սեփական ինքնաշարժներու մէջ, սարսափելով շարունակուող ցնցումներէն:

Նուէրներ կը ստանայինք բարեկամ երկիրներէ, նաեւ արտերկրի սուրիացիներէ, որոնք կ'ուզէին ամէն գնով օգտակար դառնալ բոլորին անխտիր:

Օտարներ զգացական մօտեցումով կ'ուզէին օգտակար դառնալ պատսպարեալներուն:

Մոռցանք տուն-տեղ, Տիկնանց Յանձնախումբը մեղուի փեթակի նման աշխատանոցի վերածուած էր, դուրս եւ ներս, հասնելով մինչեւ քաղաքին յետին մասերը, օժանդակութիւններ բաժնելով անխտիր բոլորին: Մեզի համար Զալէպի ժողովուրդի զաւակները հաւասար արժէք ունէին, նամանաւանդ մանուկներու տեսակաւոր կաթ, սննդեղէն, տակաշոռ մեծերու եւ փոքրերու, անկողին, բարձ, վերմակ, հագուստ եւ անձնական մաքրութեան իրեր կը բաշխէինք:

Պատերազմի բոլոր տարիները ոչինչ էին երկրաշարժին սարսափներուն հետ համեմատաբար:

Արդիւնաբերութեան Պալատի նախագահ Ֆարես ալ-Շահապին եւ խորհուրդի անդամները օժանդակութիւններ ապահովելով համագործակցեցան մեզի հետ եւ մէկ տարուան տան վարձքի փոխարէն երկու միլիոն ս.ո. օժանդակութիւն տրամադրեցին հազար ընտանիքի, որ անտուն մնացած էր երկրաշարժին հետեւանքով:

Վերջերս Տիկնանց Յանձնախումբին մաս կազմեց հայուհի մը եւս, յանձին՝ Թալին Միկրոյեան-Ալեքսանեանի:

Բարի երթ եւ յաջողութիւն Տիկնանց Յանձնախումբի բազմածաւալ գործունեութեան:





ԹԱՏՐՈՆԸ՝ ՀԱԼԷՊԱՅԱՅ ԿԵԱՆՔԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՍԱԿԱՆ ԵՐԱՆԳԸ

Երան Չէթունցեան

«Messenger»-իս ձայնը կը լսեմ: Կը նա-
յիմ, որ եկած գրութիւնը Չարմինէն է եւ
չկարդացած իսկ, կը գուշակեմ բովանդա-
կութիւնը: «Բացառիկ»-ին համար յօդուած
մը գրելու առաջարկ է, իսկ որպէս նիւթ
կ'առաջարկէ ի մտի ունենալ հալէպահայ
թատրոնը: Սրտի հատոր թեմա մը ինծի հա-
մար, որ անշուշտ, կարելի չէ մերժել: Աւելի
անկեղծանալով կրնամ նոյնիսկ նշել, թէ որ-



քան հպարտ կը զգամ, երբ զիս կը սեպեն
հալէպահայ թատրոնի պատմութեան գի-
տակ մարդ: Բախտաւոր կը համարեմ անձս,
որ ժամանակակիցը եղած եմ հալէպահայ
թատրոնի ռահվիրաներուն, եթէ նոյնիսկ
խաղցած չեմ իրենց կողքին, բայց գոնէ վա-
յելած եմ անոնց ներկայութիւնը, լսած
անոնց պատմութիւնները թատրոնի մասին:
Եղած եմ այն երանելիներէն, որ Հալէպի բե-
մին վրայ վայելած եմ մեծանուն վարպետնե-
րու խաղարկութիւնը, ինչպէս՝ Միտր Մկրտիչ-
եանի, Վլատիմիր Մսըրլեանի կամ Գոյժ
Մանուկեանի: Իմ մանկական աչքերը տա-
կաւին չէն մոռցած տաղանդաւոր Ֆրունզի-
կին «Պաղտասար Աղբարը»: Անհատներ,
երեւոյթներ եւ ժամանակակիցներ, որոնք թըր-
ծած են թատրոնի հանդէպ անսահման սերս:

2003 թուականին, Հայագիտական
Ամպիոնի դասընթացքներու աւարտին ներ-
կայացուցի «Հալէպահայ թատրոնի Պատ-
մութիւն» խորագրեալ աւարտաճառս, եւ
մինչեւ օրս կը յիշեմ ընդդիմախօսիս՝ հալէ-
պահայ թատրոնի նուիրեալներէն՝ պրն. Յա-
կոբ Միքայէլեանի հնչեցուցած մէկ արտա-
յայտութիւնը: Անոր կարծիքով հալէպահայ
թատրոնի պատմութիւնը սահմանափակել
երեսուն էջերու մէջ կը նմանի փիղ մը տե-
ղաւորել շիշի մը մէջ: Այս պահուս, ըստ իս,
առաւել դժուարին գործ պիտի ըլլայ ընդա-
մէնը քանի մը էջերու մէջ ամփոփել հալէ-
պահայ թատրոնի անցած ուղին եւ անոր այս-
օրուան վիճակը:

Ուսումնասիրութեանս մէջ հալէպահայ
թատրոնի պատմութիւնը պայմանականօ-
րէն բաժնած էի երկու շրջաններու:

Ա. Հալէպահայ թատրոնը նախքան
1970-ական թուականները, որ կը յատկա-
նշուի դպրոցական ներկայացումներու կազ-
մակերպումով, Պոլիսէն, Իզմիրէն եւ Եգիպ-
տոսէն եկած խումբերով, ինչպէս նաեւ տե-
ղական ուժերով կազմուած խումբերով:

Բ. 1970-ական թուականներէն ետք
կազմակերպուած թատերական գործունե-
ութիւնը, որ կը յատկանշուի արհեստավար-
ժութեան մուտքով թատրոնի առանցքը
կազմող գրեթէ բոլոր բնագաւառներէն ներս:

Սուրիոյ կեանքը փոթորկող պատերազ-
մը շրջադարձային եղաւ նաեւ գաղութին
համար եւ մեր կեանքէն կարծես յաւետ կոր-
սուեցաւ խաղաղութիւնն ու անդորրը եւ սխա-
լած չենք ըլլար, եթէ անցած երկու շրջան-
ներուն գումարենք երրորդ մը: Եւ այսպէս,
2011 թուականին սկիզբ առած պատերազմը
անշուշտ իր անդրադարձը ունեցաւ սու-



րիահայ մշակութային կեանքին վրայ, հետեւաբար, վերելք ապրող հալեպահայ թատերական կեանքը սկսաւ մաքառիլ:

Տեղասպանութեան յաջորդող տարիներուն մեր ազգային կեանքի կազմաւորման մէջ մեծ եւ նշանակալից եղաւ հայ թատրոնին դերը: Հալեպահայ թատրոնի պատմութեան ծննդավայրը դարձաւ հայկական վարժարանը: Հայ մարդը, հազիւ իր ֆիզիքական գոյութիւնը ապահոված, ձեռնամուխ եղաւ իր հոգեւոր գոյութեան վերականգնումին: Տեղասպանութեան յաջորդող տարիներուն ան առաջին հերթին հիմնեց դպրոցը, եւ դպրոցին առաքելութիւնը բաժնեկցող թատրոնը, որուն մուսան՝ Մելփոմենը, բարեհաճ գտնուեցաւ եւ միշտ սաւառնեց թատրոնի ուժին հաւատացող հայ մարդուն գլխավերելը:

Յաջորդող տողերուն մէջ պիտի փորձեմ դիտարկել իւրաքանչիւր ժամանակաշրջան յատկանշող երեւոյթները եւ զուգահեռական մը տանիլ այսօրուան թատրոնի իրավիճակին հետ:

Նախքան 1970 թուականը հալեպահայ թատրոնը կարելի է հռչակել որպէս «ազգային գործօն», որ թատրոնի հոյլ մը նուիրեալներու շնորհիւ կոչուած էր մեծ առաքելութեան մը: Ամեն տարի ներկայացուող «Վարդանանք»-ը, ուրիշ բան չէր, եթէ ոչ ցեղասպանուած, վտարանդի դարձած հայ մարդուն վերականգնելու, ազգային ինքնութիւնը եւ պատկանելիութիւնը հաստատելու խիզախումը: Ժամանակի մեծագոյն խնդիրներէն էր բռնի թրջախօս դարձած հայորդիին յիշեցնել իր մայրենի լեզուն:

Այդ օրերուն, ազգային լուրջ խնդիրներէն կը սեպուէր արմատացած թրջախօսութիւնը, որ հակոտնեայ էր ազգային ոգիի պահպանումին: Այստեղ թոյլ տուէ՛ք ձեր ուշադրութեան յանձնեմ «Եփրատ» թերթի էջերուն լոյս տեսած յօդուած մը, ուր յօդուածագիրը խիստ քննադատական խօսքերով կը կշտամբէ Շահինեանը, որ յանդգնած է թրջերէնով ներկայացնել «Պալմումուճաւ» թատերախաղը:

Ահա, թէ ինչ կ'ըսէ. *«Մենք ինչ տարիներէ ի վեր պայքար կը մղենք մեր ջարդարարներու լեզուին դէմ: Պրն. Շահինեան անգիտակ կ'երեւայ այս տարրական ազգային ոգիին, եթէ ինք իր քսակը խորհելով ոտնակոխ կ'ընէ մեր նուիրական նահատակներու հոգիները, հայ ժողովուրդը, կարող է պոյքոթ հռչակել իր բեմին ալ, իր լեզուին ալ»:*

Միթէ այսօր ալ մեր դիմաց ծառացած չէ՞ լեզուի խնդիրը: Ճիշդ է, մենք հայախօս ենք, բայց ինչպիսի՞ հայերէն է մեր երիտասարդութեան բերնէն հնչածը: Եւ արեւմտահայերէնը տակաւ առ տակաւ կ'աղաւաղուի՝ «պայթաւ»-ներով, «հագուաւ»-ներով, «համեմուած» արաբերէն բառերով: Երիտասարդները ամենէն տարրական հայերէն բառերուն փոխարէն կը նախընտրեն արաբերէնը գործածել, պատճառաբանելով, թէ անելի դիւրին է:

Այսօրուան հալեպահայ թատրոնի գործիչներուն համար խիստ տարօրինակ կրնայ թուիլ այն փաստը, որ այդ ժամանակներուն թատրոնը հասութաբեր մշակութային գործունեութիւն էր: Իրապէս ապշեցուցիչ երեւոյթ, քանի որ նոյնը չենք կրնար ըսել մեր այսօրուան՝ 21-րդ դարուն մասին, որ կը յատկանշուի տնտեսական եւ արհեստագիտական լայն հնարաւորութիւններով:

Սփիւռքի տարածքին, կամ անելի ճոճգրիտ ըլլալու համար՝ սուրիահայ գաղութէն ներս, որքան դժուար դարձած է բեմականացման մը իրագործումը, զուտ նիւթական պատճառներով: Այստեղ ցաւով կարելի է մատնանշել այլ փաստ մը եւս, որ տասնեակ հազարներ հաշուող գաղութի մը մէջ հազիւ կը յաջողիք երկու սրահ լեցնել, այն ալ եթէ ներկայացուածը կատակերգութիւն է, մինչդէռ այն հեռու թուականներուն, շատ մը բարեսիրական միութիւններ, մարզական ակումբներ եւ դպրոցներ իրենց տարեկան բացը գոցելու որպէս լաւագոյն միջոց ընտրած են թատերական ներկայացման մը կազմակերպումը:

Կարելի չէ այս շրջանը փակել եւ չանդրադառնալ 1920-էն մինչեւ 1940-ականները գաղութը փոթորկող վերիվայրումներուն: Բնականաբար, կարելի չէր, որ Սուրիոյ քաղաքական եւ տնտեսական վիճակը իր բացասական անդրադարձը չունենար նաեւ գաղութին վրայ: Պարբերաբար տեղի ունեցող ապստամբութիւններն ու յեղաշրջումները կը խաթարէին Սուրիոյ փոքրամասնութիւններուն, այդ կարգին նաեւ հայութեան ներքին ծրագիրները:

Սուրիահայ գաղութին գոյութիւնը վտանգող եւ մշակութային կեանքին զարգացումը կասեցնող, կ'ենթադրէինք, վերջին հարուածները պիտի ըլլային 1950-ականներուն Սուրիոյ Կրթութեան Նախարարութեան կողմէ ամնուած որոշումները, որոնք կը սահմանափակէին ազգային



գործունեությունը: Գաղութը դեպի նօսրացում տանող այլ հարուած մը եղաւ հորիզոնային Միութեան ղեկավարութեան կողմէ կազմակերպուած ներգաղթը: Կը թուի, թէ ծաղկուն մշակութային կեանք եւ տասնեակ մը մտաւորականութիւն ունեցող գաղութը բռնած էր Յնդկաստանի կամ Լեհաստանի գաղութներուն ճամբան: Ուստի, վերջնականապէս Սուրիոյ մէջ ապրելու որոշումը կայացուցած հայուն դիմաց ծառայած էր գոյութեան մարտահրաւերը:

Գաղութի պատմութեան ուսումնասիրութիւնը ցոյց կու տայ, որ այդ օրերու ղեկավարները յաջողեցան որդեգրել եւ ձեռնարկել որոշ քայլեր, որոնք նպաստեցին մեր գոյութեան կանոնութեան: Մէկ խօսքով, յաջորդող տարիները ցոյց տուին, որ հարուստ պատմական անցեալ ունեցող սուրիահայ գաղութը կար ու պիտի մար արձանագրելու համար նոր նուաճումներ: Այս շրջանի թատերական գործունեութիւնը կը յատկանշուի թատրոնի գրեթէ բոլոր բաղադրիչ տարրերուն մէջ, դերասանէն գատ, արհեստավարժութեան մուտքով:

Անվարանօրէն կարելի է հաստատել, որ եօթնամասնականներէն մինչեւ 2011 թուականը Հալէպի մէջ կը տիրէր բեղուն թատերական կեանք: Կը գործէին տարբեր մշակութային միութիւններու հովանաւորութիւնը վայելող տասը թատերախումբեր, որոնք մեծաւ մասամբ, տարեկան կ'իրակասացնէին գոնէ մէկ ներկայացում:

Հալէպահայ թատերախումբերու կողքին Հալէպ այցելած են Լիբանանէն, ինչպէս նաեւ հայրենիքէն ժամանած թատերախումբեր: Այդ այցելութիւններուն շնորհիւ հալէպահայը կրցած է վայելել հայրենի անուանի դերասաններու խաղարկութիւնը, հաղորդակից ըլլալ համաշխարհային գրականութեան գոհարներուն:

Թատերական ներկայացումներուն կողքին նաեւ կազմակերպուած են դասախօսութիւններ, ցուցահանդէսներ եւ սեմինարներ: Որպէս յաղթական քայլ արձանագրենք, որ Հալէպի մէջ ներկայացուած է նոյնիսկ Տիգրանեանի «Անուշ» օփերան: Իրողութիւն մը, որ կը վկայէ տիրող թատերական մթնոլորտին մասին:

Երբ խօսքը հալէպահայ թատրոնի մասին է, պէտք է իւրայատուկ տեղ տրամադրել երեւոյթի մը, որ իր դրոշմը ձգեց գաղութի թատրոնի պատմութեան մէջ: Նախքան պատերազմին սանձագերծումը, հայրենի

անուանի բեմադրիչներու հետ համագործակցութիւնը նոր որակ բերաւ հալէպահայ թատրոնին, որ իր դրսեւորումը գտաւ ե՛ւ դերասանի խաղարկային որակին ե՛ւ խաղացանկին վրայ:

Վրայ հասաւ 2011 աղետալի թուականը: Սուրիական պատերազմը եկաւ կործանելու մինչեւ օրս իրագործուած իւրաքանչիւր վերելք: Մինչ այդ հարուստ մշակութային կեանքով ապրող հալէպահայ գաղութը անգամ մը եւս կանգնեցաւ գոյութեան մարտահրաւերին դիմաց: Շարունակել այստեղ ապրի՞լ, թէ ձգել երթալ, այս շփոթին մատնուած հալէպահայը, յամենայն դէպս շարունակեց կազմակերպել աւանդութիւն դարձած տարեկան մշակութային իր ձեռնարկները: Սակայն, Սուրիոյ տնտեսական ծանր



վիճակը իր անդրադարձը ունեցաւ նաեւ հայկական մշակութային միութիւններու գործունեութեան վրայ, այդ կարգին, նաեւ թատերական կեանքին վրայ: Որոշ թատերախումբեր առանց ընդհատումի շարունակեցին ներկայացումներ բեմ հանել ինչպէս ՀԵԸ-ի «Ադամեան» թատերախումբը, մինչ ուրիշներ դադրեցուցին իրենց գործունեութիւնը:

Մինչ օրս թատերական աշխոյժ գործունեութիւն կը ծաւալեն՝ ՀԵ Ընկերակցութեան «Ադամեան», Համազգայինի «Լեւոն Շանթ» եւ Կրթասիրացի «Աճեմեան» թատերախումբերը:

2001 թուականին ՀԲԸ Միութեան Տեղական Մասնաժողովի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ քառօրեայ սեմինար մը՝ նուիրուած հալէպահայ մշակութային կեանքին, եւ անշուշտ օր մը ամբողջ յատկացուեցաւ թատրոնին: Սեմինարի ընթացքին ելոյթ ունեցան գաղութի թատերական կեանքին մէջ իրենց կարեւոր ներդրումը բերած գործիչներ: Մասնակիցները, ինչպէս որոշուած էր նախապէս, իրենց տեսակետները պարզեցին հալէպահայ թատերական կեանքին առնչուող հարցադրումներու շուրջ:

Տաւ ի սիրտ, պատերազմի պատճառով առաջին հերթին հարուած կրեց որակը: Հա-



կառակ իր թատերական փայլուն անցեալին, այսօր հալէպահայ թատրոնը միայն ժամանցի թատրոն է: Չկան անցեալի ազգային ոգին ներշնչող գործեր, թէև այսօր առաւել քան երբեւէ սուր կը զգացուի անոնց անհրաժեշտութիւնը: Երիտասարդութիւնը, որ այս պահուն տիրող քաղաքական եւ տնտեսական պայմաններէն ելլելով կարծես կորսնցուցած է իր ազգային ոգին եւ պատկանելիութեան ուղեցոյցը, պետք ունի անմիջա-կան աջակցութեան: Այդ աջակցութիւնը լաւագոյնս կրնայ իրականացնել թատրոն երեւոյթը:

Ժամանակները փոխուած են: Այսօր Youtube-ի, TikTok-ի եւ նման արդիական հարթակներու դար է: Բայց թատրոնը երբեւէ չէ զիջած իր տեղը: Փաստն ալ աշխարհի չորս ծագերուն գործող հռչակաւոր թատերախումբերն են, որոնք հսկայական ծախսերով բեմականացումներ կ'իրականացնեն: Մեր կարծիքով իւրաքանչիւր մշակութային երեւոյթ ունի իր տեղն ու ժամանակը, պարզապէս պետք է գիտնալ ինչպէ՞ս, ե՞րբ եւ ի՞նչ ներկայացնել: Այո՛, կարելի է ներկայացնել կատակերգութիւն, բժախնդիր մօտեցում ցուցաբերել հնչող հայերէն լեզուին հանդէպ եւ որեւէ կերպ չզիջիլ որակը, չմոռնալ, որ մեր մշակութային կեանքին նշանաբանն է՝ ազգապահպանում: Իսկ ազգապահպանումը նաեւ կ'ենթադրէ որակ: Եկէ՛ք յիշենք այն հիմնաւորումը, որ բեմահարթակը անելի բարձր կառուցուած է անո՛ր համար, որ հանդիսատեսէն բարձր ըլլայ, զայն ի՛ր մակարդակին բարձրացնելու համար եւ ոչ հակառակը:

Քառօրեայ այդ սեմինարին ընթացքին զեկուցողներ եւ հանդիսատեսներ միասնաբար հասան էական եւ գործնական լուծումներու, որոնց գործադրութեան պարագային, կը կարծենք, որ շատ բան շահած կ'ըլլար հալէպահայ թատրոնը:

Յետաքրքրական առաջարկութիւններէն մէկն ալ թատերական աշխատանոցի մը (studio) հիմնումն էր, որպէս նպատակ ունենալով դերասաններու եւ թատերական գործիչներու նոր սերունդ մը պատրաստել: Ըլլալով ուսուցիչ, կրնամ հաստատել, որ թատրոնը աշակերտներուն ամենէն սիրած արուեստի ճիւղն է: Գրեթէ բոլորը կ'երագեն դեր մը խաղալ: Վստահ եմ ընթերցողը կըրնայ երեւակայել, թէ բեմ բարձրանալու կիրքով տոգորուած պատանիներուն որքա՛ն բան կրնայ պարգեւել այսօրինակ աշխա-

տանոցի մը գոյութիւնը:

Յնչած հետաքրքրական առաջարկներուն երկրորդը միացեալ թատերախումբի մը հիմնումն էր: Այս առաջարկը առաւել քան շահեկան եւ նպատակային է այսօր:

Այդ տարիներուն ո՞ր մէկուս միտքին ծայրէն կ'անցնէր պատերազմը կամ այսօրուան մեր վիճակը: Այս առաջարկին մէկ արտայայտութիւնը եղաւ «ՅՅԹ»-ի կազմումը, որուն հիմնական եւ միակ գործունէութիւնը կը հանդիսանայ «Թատրոնի միջազգային օրուան» նուիրուած ձեռնարկի մը կազմակերպումը: Որքան բան պիտի շահէր Յալէպի թատերական կեանքը, եթէ նոյն այդ յանձնախումբը կարենար ի մի բերել հալէպահայ թատերախումբերու կարողութիւնները եւ ներկայացնել միջազգային կամ հայ թատերագրութեան կամ գրականութեան գոհարներէն գործ մը:

Թատրոնի առանցքային տարրերէն հիմնականը հանդիսատեսն է: Յալէպի թատրոնի պատմութեան մէջ կը յիշուին տարիներ, երբ մէկ ներկայացումը ունեցած է բազմա-հազար հանդիսականներ, երբ բեմ բարձրացուած են բարձրարուեստ թատերական երկեր: Փաստօրէն ունեցած ենք թատերական ճաշակ ունեցող հանդիսատես:

Կը խորհիմք, որ գալիք տարիներուն, երբ չափով մը թօթափած ըլլանք պատերազմին առթած անորոշութիւնն ու յուսահատութիւնը, մեր նպատակը պետք է ըլլայ կրկին վեր բարձրացնել մշակոյթի նշանոցը:

Պատերազմի առաջին տարիներուն, երբ խօսք ըլլար թատրոնի մասին, անոր գոյութիւնը պահպանելու զատ ուրիշ ոչ մէկ բանի մասին կը համարձակէինք մտածել: Այս պահուս բոլորիս ճիտին պարտքն է մտածել նոր ռազմավարութեան մը մասին, որպէսզի ի գին ամէն ինչի կանգուն պահենք մեր թատերական հարուստ ավանդոյթները, յանուն մեր անցեալի փայլուն պատմութեան նոր յաջողութիւններ արձանագրենք, չէ՞ որ թատերական գործիչներու փայլուն փառանգ մը անցած է Յալէպէն, ու թէև այսօր անոնք չկան, բայց կայ իրենց ավանդը: Մենք պարտաւոր ենք յանձնառու ըլլալ եւ շարունակել դժուարութեամբ հարթուած ուղին:

Ուղեի՛, հայ թատրոն, ծունկերդ ծալլելու իրաւունք չունիս:

Թող բացուող վարագոյրդ նոր ներկայացումներու ծնունդը անտէ միշտ եւ բեմիդ վրայ երկար շարունակուի սերունդներուդ տողանցումը:





ՀԱԼԷՊԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌՕՐԵԱՅ ԿԱՄ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼԵԶՈՒՆ

Սօսի Սիշոյեան-Տապապաղեան

Բանաւոր խօսքը միտքերու արտայայտման հնչող խօսքն է, որ կ'ըլլայ պաշտօնական ու անպաշտօն: Հնչող խօսք կ'ըսենք, քանի որ խօսքի այլ տեսակ է նաեւ ներքին խօսքը, որ մարդու ներաշխարհին մէջ կը խմորուի մինչեւ դուրս գալը, երբեմն նաեւ չգալը: Պաշտօնական բանաւոր խօսքը



գրաւոր լեզուին մօտ եղող խօսքային որակն է, իսկ ժողովրդախօսակցական անկաշկանդ խօսքը կը դրսեւորուի իր անպաշտօն բնոյթով ամօրեայ գրոյցներու ընթացքին:

Բանաւոր լեզուն միշտ յարափոփոխ է գայն կրողի զարգացման հետ առընթեր եւ անոր ոչ միօրինակութիւնը ի յայտ կու գայ թէ՛ բառակազմութեան, թէ՛ քերականական առանձնայատկութիւններու եւ թէ՛ հնչիւնական համակարգին մէջ: Յաճախ կը հանդիպինք յուզականութիւն ու անմիջականութիւն արտայայտող բառաշերտերու, ձայնարկութիւններու, օտարաբանութիւններու, դարձուածքներու եւ այլն:

Բառեր կան, որոնք պատկանելութիւն ունին եւ կը պատշաճեցուն տուեալ միջա-

վայրին, բառեր ալ կան, որոնք պատկանելիութիւն չունին եւ կը գործածուին բոլոր ընկերային խաւերուն կողմէ: Ամօրեայ խօսքը այսպիսով միջավայրէ միջավայր կրնայ տարբերիլ: Փողոցը հանդիպած ուսուցիչին «ըսթեգ» կրնայ ըսել հալէպցին իբրեւ դիմումի արտայայտութիւն, մինչդեռ Նոյն անձնաւորութեան երբ հանդիսաւոր սրահի մէջ հանդիպի՝ «պարոն»-ով պիտի դիմէ անոր:

Տրուած ըլլալով որ ամօրեայ լեզուն, մասնաւոր փողոցի լեզուն անկաշկանդ լեզու է եւ ճիգ ու ջանք չի պահանջեր խօսողէն, հոն նկատելի են գոեհկաբանութիւն, հասարակաբանութիւն, քերականական անճիշդ ձեւեր ու կառոյցներ, ինչպէս նաեւ՝ անհարկի փոխառութիւններու օգտագործում: Փոխառութիւն երբ կ'ըսենք առաւելաբար կը հասկնանք բառային փոխանցումները, որոնք մտած են լեզուին մէջ եւ կը գործածուին գրաւոր եւ բանաւոր լեզուներուն մէջ: Անհարկի փոխառութիւնը, կամ օտարաբանութիւնը, միւս կողմէ, այն բառերու օգտագործումն է, զոր գրաւոր լեզուն կը մերժէ, քանի որ անոնց համարժեքը փոխառու լեզուին մէջ առկայ է:

Երբեմն կը պատահի, որ փոխառու լեզուն ունի փոխառեալ բառին համարժեքը, սակայն կարծութեան, բարեհնչեղութեան տեսակէտէն մեկնած ամօրեայ խօսքի մէջ կը գերադասուի փոխառեալը, ինչպէս օրինակ՝ քամերա՝ փոխան լուսանկարչական մեքենայի, կամ՝ ամպիլլանս փոխան շտապ օգնութեան մեքենայի:

Գաղտնիք չէ, որ լեզուները, որոնք կը գոյակցին, յաճախ իրարմէ կ'ազդուին, Նոյնիսկ երբ երկու լեզուները հնչիւնաբանական եւ մասնաւոր ձեւաբանական, շարահիւսա-



կան եւ բառակազմական տարբերութիւններ ունին ու կը պատկանին տարբեր լեզուաընտանիքներու: Արաբ բնակչութեան հետ փոխյարաբերութիւնը, բնականաբար իր ազդեցութիւնը պիտի ձգեր խօսակցական հայերէնին վրայ: Եթէ մէկ կողմէ ընդու-



նինք, որ վերապրողներու կողմէ Երկիրէն բերուած թրքերէնի գործածութիւնը նուազեցաւ տարիներու ընթացքին նկատելի չափով (ոչ բոլորովին), սակայն միւս կողմէ փոխառուեցան արաբերէն բառեր, արտայայտութիւններ, եւ նոյնիսկ որոշ քերականական կառուցուածքներ, որոնք մերժուած են գրաւոր լեզուին մէջ եւ կը մնան միայն փողոցի մակարդակին վրայ:

Արաբերէնի ազդեցութիւնը խօսակցական հայերէնի վրայ Սուրիոյ մէջ ընդհանրապէս եւ Հալեպի մէջ մասնաւորաբար, կարելի է դիտարկել քանի մը լեզուական առումներով. (հոս կը բաւարարուինք միայն իւրաքանչիւրէն քանի մը օրինակ նշելով):

Ա. Ընտանեկան յարաբերութիւններ կամ ընկերային փոխյարաբերութիւններ.

Հայերէնի խօսակցական լեզուին մէջ կարելի է օրինակ լսել «խալ» բառը, քեռիի փոխարէն, «ամմօ»՝ հօրեղբօր եւ առհասարակ:

Բ. Դիմումի եւ հրաժեշտի բառեր եւ արաբական արտայայտութիւններ՝

- «Էիլէն»՝ բարեւ
- «Մարհապա» բարեւ

«Պայ» ցտեսութիւն
 Ինշալլահ (Աստուած կամենայ)
 Սալամ
 Ապու Վարդան
 Ըսթեզ Արամ

Գ. Սնունդ, հագուստ եւ առօրեայ կեանքի իրեր՝

- Պալճան
- Մաղտանոս
- Կելեպիէ -արեւելեան աւանդական հագուստի տեսակ
- Քիւնէֆէ
- Շաուրմա
- Ֆալաֆէլ
- Թախըմ
- Ըճճէ
- Մլուխիէ
- Քըպէպէթ
- Ֆէթթէ
- Հալաուէթ ճըպնէ
- Սիխ քէպապ
- Մըշապաք
- Թանճարա
- Սահլէպ
- Ճազար
- Նասնէ

Դ. Հայիոյանքներ, անեծքներ, սպառնալիքներ, բացազանչութիւններ, ձայնարկութիւններ

- Իպնլ քալպ
- Սարսարի
- Ճահըշ
- Րուհա պալա րեճՅա
- Ալլահ լէ Էրրուիքի (Աստուած չցուցնէ)
- Ալլալլահ
- Եահօ՛
- Պէ՛ս
- Եանի՛
- Ուալլա՛
- Խալաս
- Եաօ

Ոճային նպատակներով՝ խօսքին զանազան արտայայտչական երանգներ տալու նպատակով գործածուող բառեր.

- Ալլա ուաքիլէք
- Պիշարաֆաք

Ե. Տեղական աւանդութիւններ, սովորոյթներ, կրօնական սովորոյթներու հետ կապուած եզրոյթներ, որոնք կրնան փոխառուիլ արաբերէնէ եւ մտնել հալեպահայու խօսակցական բառապաշարին մէջ.

- Ռամատան մտակը:
- Թօփը պիտ զարնէ:

Հարսանեկան ասոյթներ
Ալլայի սառա տոս տոս կը շքոր ըստպի
տոս տոս էլահէ՛:

2. Որոշ տեղանուններ, վայրեր.

Պագար պիտ երթամ:
Վիլլաները կը նստինք:
Անպար

Մըսթաուտահ. «Ապրանքը մըսթաու-
տահը դրի»:

**Է. Մակդիրներ, արհեստ, շինարարու-
թիւն...**

Սատճի Յակոբ
Թորնոճի (ճի՛ թըք. մասնիկ)
Տեօքմեճի
Մեքիկիստ
Ճփսիկ
Սօթոր

**Ը. Միջատներ եւ կենդանիներու անուն-
ներ**

Սարսուր (բզեգ)
Տապպուր (իշամեղու)
Չարգուր (թռչունի տեսակ)
Անքապուր (սարդ)
Ճարտօն (առնետ)

**Թ. Վերաբերմունք, բարի կամեցողու-
թիւն**

Աալա ըասի (գլխուս վրայ)
Թըքրամ յէնաք

Ժ. Հնչիւնական ազդեցութիւններ

Բանաւոր խօսքին մէջ ինչպէս որ կարե-
ւոր են խօսողին շարժումները, դիմախա-
ղը, հայեացքը, մարմնիկին դիրքը, կեցուած-
քը, հագուստը, նոյնպէս ալ խօսողին հնչե-
րանգը, ելեւէջները, նուագայնութիւնը, շեշ-
տը, դադարը արտայայտչական կարեւոր
գործօններ կը համարուին: Հալեպահայը,
օրինակ, դամասկահայ խօսողի մը հնչե-
րանգը չունի: Անմիջապէս կը գիտցուի, որ
տուեալ խօսողը Հալեպէն է, Գամիշլիէն է,
կամ Լաթաքիայէն, Դամասկոսէն եւ կամ
Սուրիոյ այլ նահանգներէ իր արտասանական
եղանակային իւրայատկութենէն:

«Եալլա» արաբերէն բառը, օրինակ, որ
լայնօրէն կը գործածուի խօսակցական
արեւմտահայերէնին մէջ եւ բառացի «ո՛ւ/
Աստուած» կը նշանակէ, ձայնային հնչերան-
գի շնորհիւ, կրնայ ունենալ տարբեր հաս-
կացութիւններ:

- Եալլա՛, կ'ուշանանք կոր: (աճապարէ՛)
- Եալլաաաա՛, աս ինչե՛ր պատրաստեր
ես այսօր: (բացագանչութիւն, զմայլանք)
- Եալլա՛ ելայ: (կարճ՝ հատէ իմաստով)

Անհարկի Փոխառութիւններ, որոնք հա-

յերէնի կաղապարին կ'ենթարկուին.

Թանթ -իկ
Շուրթ-եցի

**Յարադրաւոր ձեւեր (հայերէն-արաբե-
րէն բառակապակցութիւններ) եւ նախադա-
սութիւններ.**

Մարշը գարկաւ:
Թաշուրթ ըրաւ:
Վաղը ըթլէ է:

Պետք է ի մտի ունենալ միշտ, որ հա-
մայնքի անհատներ կրնան տարբեր աստի-
ճանի տիրապետել արաբերէնին. բան մը, որ
կը յանգեցնէ լեզուական ազդեցութեան աս-
տիճանի տարբերութիւններու միջավայրէ
միջավայր եւ խաւէ խաւ:

Երբեմն զուտ արաբերէն բառեր ալ չեն,
այլ՝ թրքերէն, ինչպէս վերոյիշեալ բառե-
րէն ոմանք, բայց գերիշխողը այսօր արա-
բերէնի ազդեցութիւնն է բնականաբար: Եւ
դեռ կան ֆրանսերէն բառերու փոխառու-
թիւններ՝ Սուրիոյ վրայ ֆրանսական տիրա-
պետութեան օրերէն մնացած: Հոնկէ եւս բա-
ռեր մտան մեր լեզուական բառապաշարին
մէջ եւ լայնօրէն գործածուեցան մանաւանդ
արհեստի եւ ինքնաշարժի կտորներու առու-
ծախի եւ նմանատիպ այլ ոլորտներու մէջ.
Փիսթոն, տպրիաժ, ֆիթես, անարյել, քուա-
ֆեր...

**ԺԱ. Լեզուներու փոխազդեցութիւնը
միայն բառերու փոխառութիւններով չի դըր-
սելորուիր շատ անգամ. կայ աւելի վտան-
գաւորը՝ լեզուամտածողութիւնը:**

- Ահաւասիկ քանի մը օրինակ՝
- Եւ ես կու գամ կոր, տեսայ....
- Հի պառկելէս առաջ:
- Ո՞ւր մնացիր. վրադ կը փնտռէի:
- Վրայեդ գնաց:
- Առաջ որ գաս

Եզրակացնելով յիշենք, որ առօրեայ
խօսքի ընթացքին ի յայտ կու գան երկու
կողմերու յարաբերութիւններու աստիճանը
եւ տուեալ միջավայրն ու ընկերային վիճա-
կը, ինչպէս նաեւ հաղորդակցողներու տրա-
մադրութիւնը, քննարկուող նիւթի բնոյթը,
խօսողի անհատական յատկանիշները,
տրամադրութիւնը, լեզուամտածողութիւնը
եւ այլ բազմաթիւ գործօններ, որոնք կ'ազ-
դեն խօսքի որակին վրայ: Պետք է նկատել
տալ նաեւ, որ խօսակցական տուեալ շրջա-
նի լեզուն կարելի է գտնել գրականութեան
մէջ իբրեւ հարազատութիւնը պահպանող
տարր, բայց գրական լեզուին մաս չեն կազ-
մեր, որովհետեւ մերժուած են:





ՃԻՏԷՏԻԷՆ ԵՒ ՍԱԼԻՊԷՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ ԱՒԱՆԴԱՏՈՒՄ

Ժան Դալլանդեան

**...Դո՛ւն, Արեւե՛լք, իբրեւ վրեժ կը կանգնիս
Դժբախտութեանը մարդուն,
Չօր Արեւմուտքը դարբնեց:
Դո՛ւն հարազատ, ե՛ւ ինքնաստեղծ, ե՛ւ հսկայ,
Որուն աներակները տակաւին կը բուրեն
Խունկ ու ստաշխ եւ ծարի՛ր...**

Վահան Թորոպէնց

Ծննդավայրի կանչը հայրենաբաղձի ուժգնութեամբ վտարանդի հոգւոյս պլպլացող կանթեղները բոցավառեց: Կարօտախտի հիւանդագին ջերմաստիճանը միմռացող անբուժելի վերքի մը վերածուած էր: Խռովայոյզ հոգւոյս միակ պատկերը, որ նահապետի նման փարթամօրէն բազմած էր յիշողութեանս հիւրանոցին մէջ՝ Զալէպն էր: Կոտտացող խոցը, համեմատաբար պիտի սպիանար, եթէ անսայի կարօտի անդիմադրելի խթանիչ կոչին որպէս բալասան: Այսպէս, տասը տարուան բացակայութենէ ետք, մօր ստիկքին ձգողութեան տաքութեան կարօտ մանկան նման, տարիներու անյազ սպասումէն ետք, խոցուած հոգւոյս բալասանը հոն անթեղուած պիտի գտնէի: Մորմուքած հեգ հոգիս զիս առաջնորդեց հոն, ուր արարուած էի, հոն ուր անթեղուած էին յիշատակարանիս անառիկ պատկերները: Արդ, 2010-ի Նոր Տարին դիմաւորեցի Զալէպի երկնակամարին ներքեւ՝ մեներգելով.

Թռչէի մտքով տուն,
Ուր իմ մայրն է արթուն,
Տեսնէի այն առուն,
Կարօտով ես անհուն,
Որ ամէն մի գարուն
Ջրերով վարարուն
Կարկաչում էր սարերում:
Զալէպ հասած առաջին օրս հարազատ-

ներու հանդիպելէ առաջ, չնաշխարհիկ քաշողութիւն մը զիս հիպնոսացնելով, հոգեբնախօսական զօրաւոր ազդեցութեամբ մղեց Խոնարհին հետ ուղղուելու դէպի Ճի-



տետիէ-Սալիպի պատմական թաղամասեր: Զինաւորոց այս շրջանը, առաւելաբար հայկականութեամբ եռուն եւ քրիստոնէական դրոշմով զարդարուն, նեղ թաղամասերու ծածկոյթով շարուած՝ տուներու եւ եկեղեցիներու համալիր մըն էր, ուր հայեր 16-17-րդ դարերէն սկսեալ, հին Զալէպի պարիսպի սահմանէն դուրս գտնուող այս շրջանին մէջ կայք հաստատած էին: Ան որ կ'այցելէ Ճիտետիէն, անպայման պիտի հիանայ արեւելեան յատուկ բոյրով եւ շինա-

րարական հմայիչ դիմագիծով, որ դարեր շարունակ յաջողած էր պահպանել կրօնական եւ ընկերային գոյակցութիւնը տարբեր դաւանանքներու ու կրօններու:

Արաբական բակով փարթամ տունները, առասպելական հանգուցուածքով դիցերու սրբացած կացարանները յիշեցնող կառույցներ էին: Ամենէն նշանաւորներն էին՝ Պէյթ Ուաքիլ, Պէյթ Տալալ, Պէյթ Չամարիա, Պէյթ Սատոր, Տար ալ-Եասմին, Պէյթ Սիսի, Տար Պասիլ:

Սրտիս ամենէն խօսունը Պէյթ ալ-Ղազալէն էր, նախկին Ազգ. Հայկազեան մանչերու նախակրթարանի բաժինը, ուրկէ շրջանաւարտ եմ: Մեր տունը, ո՛չ շատ հեռու, հրշէջներու պողոտային մէջ կը գտնուէր: Լաւագոյն եւ ապահով թաղամասը, ուր կարելի էր խաղալ. ճիտեստիէի այդ նեղ արահետներն էին, ուր հնարաւորութիւն կ'ունենայինք մեր «փորի որդերը թափելու» ծնողներու թոյլտուութեամբ:

Անշուշտ արկածախնդրութիւնն ա՛լ մէկ բաժինն էր առօրեայ մեր մանկական օրակարգերուն, որոնց ընթացքին երբեմն օտար խմբակներու հետ անհամաձայնութիւն կ'ունենայինք՝ թաղամասի մը մէկ անկիւնը հակակշռի տակ առնելու համար: Յաջորդ օր, մեր կիսատ թողած տարակարծութիւններու լուծման ապաւէնը կ'ըլլային՝ Հայկազեանի աշակերտութեան երեց, թիկնեղ տղաքը, զիրենք առաջ քշելով, այդ խմբակներու ներկայացուցիչներուն հետ «տղամարդիկ» առերեսում ունենալով արդար հաշուեյարդար մը տնօրինելու, որպէսզի ընդմիջտ օտարամուտ եկուորները շարտէիք այդ թաղի անկիւնէն, ի հաշիւ կրտսեր հայկազեանական՝ ապագացու խոստմաւից «գիւսակիցներու»:

Ճիտեստիէ-Սալիպէն ինքնաբաւ եւ փակ շրջան մը եղած է, որ ունեցած է դռներ, որոնք հարկ եղած պարագային կը փակուէին օտարամուտ ոտնձգութիւններուն առաջ: Իր ծաւալուն տարածքին վրայ համախըմբուած կը գտնէիր զանազան արհեստաւորներ՝ ոսկերիչներ, պայուսակավաճառներ, կօշկակարներ, պղնձագործներ, անուշավաճառներ, կաթնավաճառներ, պտղավաճառներ, նպարավաճառներ, ձկնավաճառներ, փռապաններ, կերպասավաճառներ, բուրդի եւ դերձաններու նշանաւոր շուկային կողքին:

Հալէպահայութեան վաղեմի կեանքին մէջ, Սալիպէ-Ճիտեստիէն, Սահէթ ալ-Ֆար-

հաթը, Չուքաք Արախնը, Զասթալ Հարամին, Շապուրան, Պաուապէթ ալ-Զասապը, Պաուապէթ ալ-Խալը, Թաթրիպէն եւ Հոգետունը հայկական մշակութային եւ կրթական նկատառելի փարոսներ էին: Հոն կերտուած էին ատենօք քաղաքի հանրածախօթ հայկական գրքավաճառները, ինչպիսիք են՝ պարոն Ռուբէն, Կիւլասեր Տէմիրճ-



եան, Պողարեան, Սապունճեան՝ Օմար Խայամ, Օշական, Կիլիկիա գրախանութ: Նաեւ աւելցնենք հայկական տպարաններու հոյլ մը, որուն արգասիքը հանդիսացաւ Հալէպի հայկական մամուլը: Տպարաններէն կարելի է յիշել՝ Արեւելքը, Գօգօն եւ Անին: Մշակոյթի պահպանման արհեստներու կարեւորագոյն մէկ ասպարէզը գիրքերու կազմարարական աշխատանքն է: Հնամաշ արժեքաւոր պատմական էջեր կը փրկուէին կորուստէ, արժանանալով Վերամշակման՝ բժախնդիր վարպետներու կողմէ, որոնցմէ կը մտաբերեմ՝ կազմարար Թադէոս Թիւթէեանը եւ Յովհաննէս Պասմաճեանը: Ասոնց վրայ պէտք է գումարել հայկական կրթօճախներու կենսական հոյլ մը՝ Կիլիկեան, Հայկազեան, Կրթասփրաց վարժարան, Աւետարանչական վարժարան՝ (Աուճէթ Զայալէի մուտքին), Հայ կաթողիկէ Ս. Դրի-



ղորիոս դպրոցը, ի շարս հանրայայտ Տիգրիս եւ Քրիստափոր գրադարաններուն: Ասոնց վրայ պէտք է գումարել ներկայութիւնը հայկական կարեւորագոյն կազմակերպութիւններու կեդրոններուն, ինչպիսիք են՝ Թեքէեան Մշակութային Միութիւն, ՅԵՄ եւ ՅՄԸՄ-ը, ՅՄՄ-ը եւ Նոր Սերունդը, որոնք եթէ ուղղակի այդ նեղ թաղերուն մէջ չէին, բայց մերձակայ շրջանին՝ Թիլէլի մաս կը կազմէին, ի շարս բազում քրիստոնեայ ու հայկական եկեղեցիներու եւ հայկական ժողովրդային պատկառելի համախմբումին, որոնք դարձան հայկականութեամբ տրոփող ամրակոռ քուրայ մը ու արհեստավարժ վարպետներու անմրցելի, ծլարձակող օրրան մը:

Այս անգամ գբօսաշրջիկի հետաքրքրութեամբ, կարօտախտի ծանր գամբիւղը փաթթած, պեղեցի թանձր ծածկոյթով աղօտած, ծանօթ, հիւսուրց նեղ արահետները: Ամէն յիշատակելի անկիւնաքարի հանդիպելով, փորձեցի վերակառուցել վաղեմի բարեկամներու մշուշապատ դէմքերը, պատկերացնելով անոնց վրայ դրոշմուած տարիներու թողած հաւանական հետքերու մանրամասնութիւնները, նախքան կենդանի պատեհ հանդիպման առիթի ստեղծուիլը: Անցեալի անձնաւորութիւններն ու ծանօթ դէմքերը կը կարծէի անճանաչելի պիտի թուէին: Ի գարմանս ինձի, շատերու հանդիպեցայ... տարիներու տարերքը՝ Նուագագոյն խորշոմի ակօսներ հիւսած էր իրենց երանելի դէմքերուն վրայ: Հալեալ իր բազմապիսի, բարենպաստ եւ կենարար դրոշմով պաշտպանած էր իրենց ֆիզիքական, գեթ առերեսոյթ տեսքը:

Բախտաւոր էի, կրկին ապրելով անոնց տաքուկ, հիւրընկալ բարեկամութեան պերճանքը: Այսպէս, հոյլ մը հայ ոսկերիչներու փառահեղ խանութներն ու աշխատանոցները եւ արհեստաւորներու հիւրընկալ ժպիտները փաստեցին, որ ժամանակի թաւալումը ժանգ չէ կապած հարագատութեան վրայ: Համակուած Նոյն յարգանքի չափով ու լիացուած սիրոյ ու կարօտի տոգորումով՝ համտեսեցի իրենց նշանաւոր սուրճը, որ կը պատրաստուէր ոսկերիչի հալոցի կրակով ու փուքով:

Քիչ մը անդին, ածխավաճառներու խանի կուպրագոյն թաւ փոշին, կարգ մը ոսկերիչներու ցուցափեղկերուն յատակը պարսկապած էր: Տարիներու բացակայութեան տուրքը մատուցելու, մեղաւորի համագ-

գեստս օճանելու յատուկ ներգործութիւն մը անյագ հետաքրքրութեամբ զիս մղեց խանի ընդերքը հետագօտելու: Ոչինչ փոխուած էր: Միայն հսկայ դարպասը Նորոգուած ու ձեւաւորուած տեսայ: Ածխափոշին ամէնուրեք հանգչած էր սալայատակին վրայ: Վարպետները սեւցած դէմքերով պատերազմի գացող յատուկ ջոկատայիներու մարտիկներուն կերպը կը միմոսէին:

Միջերկրական ծովու բոյրին շաւիղներով եւ Եփրատի խամրած ալիքներու շառաչիւնի փսփսուքը յիշեցնող խրպոտ աղաղակները իմ յաջորդ կանգառս դարձուցին ձկնավաճառներու խանութները: «Շապութիւն», «Ճեճ»-ը եւ «Լըքօսը»՝ սառերու կոյտին ներքեւ, գլուխնին ներս քաշած, յուսահատ ճիգով մը կը փորձէին յաճախորդներու զընկիչ աչքերէն հեռու պահել իրենց համրացած պատեանը, փրփրադեզ ալիքներուն վերադառնալու անկատար տեսչանքով: Ձկնավաճառը հպարտութեամբ, իր հռետորական բացագանչութիւններով, շեշտակի կը փորձէր լսելի դարձնել անոնց թարմ ըլլալը՝ մատնանշելով գորտերը, որոնց կռկռոցը վաղուց խեղդուած էր իրենց կոկորդին մէջ: Բարկութիւն ժայթքող հայեացքը յառած էր ճանճերու պարսերուն, որոնք յուսահատ ճիգով կը փորձէին յամառօրէն թառիլ խեղճացած ձուկերուն վրայ: Արգելակելու համար անոնց սուր ախորժակը, ձեռքի հովիչովը՝ անհանգստացնող տոգոցները լռեցնելու խուճապային ճիգով մը, կրկեսի հտախտին շարժումները յիշեցնող, երերուն հարուածներով փոխանակ վանելու անկոչ գազրոտ հիւրերը, անոնց թելերուն աւելի համաչափութիւն կարծես առթելով, զանոնք կը վերածէր ըմբօստ ԶԱՄԻԶԱՉ-ներու: Ճանճերն ալ, իրենց կարգին, երաժշտական խմբավարի մը վարպետութեան անսացողի հաւատարմութեամբ աւելի պնդագլուխ դարձած՝ հանգիստ կը թառէին «բուրումնաւետ» ձուկերուն վրայ, ի հեճուկս խանութպանի վանողական ճիգերուն:

Քիչ մը անդին, Պարհամ բաղնիքին տաւնող ճամբուն անկիւնը, կանգ առի բացօդեայ ազարակին դիմաց, մանկութեանս ամէնէն սիրած վայրերէս մին: Փնտռեցի հաւնոցի մաղերու ետին, անկիւնը սլկտացող խրոխտ հնդկահաւերը: Անոնք, գրեթէ Նոյն անկիւնը գրաւելով՝ շաղփաղփը միախառնելով շուրջի հաւերու կշկչոցներուն հետ, միաձոյլ սիրաբանական մեղեդի մը հիւսելով, անմեղունակ աղաւնիներու երամին ան-



գամ, ճարպիկ փորձով մը, իրենց ակումբին միանալու տաքուկ հրաւեր մը կ'ուղղէին: Աղանիները իրենց կարգին, հրաժեշտի գազելի մեղեդիի նման՝ իրենց դուղունցով, կը փորձէին անցորդներուն կարեկցութիւնը հայցել, գուցէ մէկը՝ կրնար փրկել զիրենք սպասող եղերական անտարակոյս վախճանէն:

Ուշադրութենէս չէր կրնալ վրիպիլ մեծ վանդակի մէջ բոլորուած, վայրի գորշ նապաստակներու խումբը: Նապաստակները բազմած թարմ խոտի մը կոյտին վրայ, անյագօրէն կը լափէին կանաչութիւնը, փորձելով հասնիլ յատակին հազիւ երեւցող ստեպղիներուն, առանց ուշադրութիւն դարձնելու դրացի հաւերուն խանգարիչ կտտոցներուն, որոնք կուտի կերի իրենց բայը գտնելու ճիգին մէջ էին: Բոլորն ալ, արհամարհելով մահուան ուրուականը, որ Դամոկլէան սուրի նման կախուած էր իրենց վերեւ, գարշ կու տային որովայնի կանչին, մինչեւ վերջ կուշտերնին լեցնելով, արհամարհելով սպասելի եղերական աներկբայ ճակատագիրը:

Ամենէն արգահատելի պատկերը բացուեցաւ մսավաճառներու մէկ խանութի առջեւ, ուր մսավաճառ մը՝ արինախանձ տենդով, գառ մը փողոտելու կը պատրաստուէր: Ոչխարը՝ խեղճութեան, տկարութեան եւ ամեղութեան մարմնացումն է հասարակութեան մեծ շերտի մը մօտ: Չայն գնելը նաեւ կը պարփակէ իր մէջ աստուածային փառաբանութեան միստիկ խորհուրդ, որուն հետ, սակայն, դժուար թէ հաշտուիս, մանաւանդ երբ ճաշակած ես արեւմտեան ընկալուած օրէնսդրական կարգ, ուր կենդանական աշխարհին շնորհուած է նոյնքան իրաւունք որքան մարդոց, որոնց կարգ մը նրբութիւնները եւ առաւելութիւնները նոյնիսկ գլացուած են մարդ անհատին: Արեւմտեան երկիրներու մէջ, բացարձակապէս կարելի չէ պատկերացնել կենդանիի գնումը հանրային ձեւով:

Թախանձագին մայիւնը ողջակիզուելիք անպաշտման ոչխարին, երբե՛ք չէր շարժեր կարեկցութիւնը «հերոս» մսավաճառին, որ բացազանչութիւններու տարափով մը՝ գառին պաղատագին հեծեծանքներու ձայնը չէզոքացնելու դիտաւորութեամբ, կը շարունակէր իր պատրաստութիւնները: Ի՛նչ հեգնանք, մսավաճառը՝ իր ապրուստը ճարելու հեւքին էր, որոնելով միսի կտորը, իսկ ոչխարը իր հոգիի փրկութեան լաստը կը փընտ-

ներ... ինչպէս կ'ըսէ խօսոյթը: Ան, արագօրէն կրկին ու կրկին սրելով դանակը կաշիէ կտորի մը վրայ, արաբերէն աղօթք մըմնջալով Աստուծմէ կը խնդրէր ընդունելի դարձնել ներկայացուած մատաղը: Մինչ թաղի պատեհապաշտ կատուները բարձրաձայն մլաւիւնի նախերգանքով մը կը տօնախմբէին պատառիկ մը միսի մնացորդացին տիրանալու խնդութիւնը:

Թեւեւ արեան ճահիճի արգահատելի տեսքը դժուարութիւն չունէի տեսնելու, սակայն այդ պահուն թելադրիչ պատգամը իմ մէջ արթնցուց Յայոց Յեղասպանութեան նմանօրինակ մարդակիզումի պատկերներ: Ի՛նչ հեգնանք, չարաբաստիկ սպանդէ մագապուրծ տարագիր հայորդիները, տասնեակ տարիներ առաջ, նոյնի՛նքն գառի զոհասեղանի թատերաբեմ դարձած այդ թաղերուն մէջ, ապահով ապաստան գտան,



Վայելելով տեղացի հարեւաններու ջերմ հիւրընկալութիւնը:

Մսավաճառի ամենօրեայ սովորական վարքը, պժգանքով պարուրեց զիս՝ պատճառելով որ ընդհուպ հեռանամ այդ միջավայրէն, ուղղուելով մօտակայ Թեաթրիպէ թաղամասը, մեծ հօրս՝ Սանտալճի Ուզուն Յաճիին խանութին վայրը: Հոն հասնելու համար, պետք էր անցնէի կամարին ներքեւ մեռելաթաղ Արծիւեանին խանութին առջեւէն: Այդ մէկն ալ խոստովանիմ, թէ մանկական յիշողութեանս էջերուն վրայ մեխուած են ճիտետիէի շրջանին մէջ երկու վայրեր, որոնք զիս կը փշաքաղէին, մեռելաթաղեր՝ Հաննուշին եւ Արծիւեանին խանութներն էին: Այսպէս, երեխայական աշխարհս խռովայոյզ կը դարձնէին ցուցադրուած դատարկ, սահմոկեցուցիչ մեռելաստուկները եւ զո՛վ պիտի հիւրընկալէ անորոշութիւնը: Ահագոյ տեսարանը պատճառ կ'ըլլար, որ օրեր շարունակ խուսափէի անոնց մօտա-

կայ թաղեն ի՛սկ անցնելու: Այս անգամ, հաստատաքայլ, առանց վարանումի քալեցի Արծիւեանի խանութին կողքէն, անցնելով նշանաւոր կամարին տակէն, «Ֆուլճի Ապտոյին» բարեւ մը տալով, «Սալամու ալեյքում» մը ըսելով: Փաստօրէն, այլեւս մահուան վախի բարդոյթով չէի ապրեր, հասկնալով եւ հաշտուելով «կեանքը ինչպէս որ է»-ի տարերային ճշմարտութեան հետ: Բայլերս արագացնելով կանգ առի նշանաւոր «Հալվաճի Օսման»-ին խանութին առաջ, որ մեծ հօրս խանութին կողքի դրացին էր: Մեծ հօրս արհեստանոցին սեփականատէրերը չէին սրբած ապակեփեղկին վրայէն արաբերէն մեծատառ գրուած «ՅԱԾԻ» բառը:

Մեծաւ մասամբ այդ արահետները փոքր, սեւ քարերով սալայատակուած էին, դիրացնելու ընտանի չորքոտանիներուն երթեւեկը: Ծանապարհին, երբեմն պետք է խուսափէիր թրիքի թաքուն «ականներուն» վրայ կոխկրռտելէ: Հակառակ այս անհամ պատկերին, կը յիշեմ թէ ինչպէ՛ս կ'ընկերակցեի մօրս ոտաքոպիկ, սրտապարար ուխտագնացութիւններուն, ուղղուելով Շապուրայի Մար ճըրճոս եկեղեցին, որ շատ հեռու չէր մեծ հօրս «Սանտալ»-ի (տրեխի) աշխատանոցէն: Նոյն այդ արահետներով, հաւատացեալ հոծ բազմութիւն մը Աւագ Ուրբաթօրերը, Փրկչի արեամբ հեղուած խաչելութեան ճանապարհները յիշեցնող, հոգեպարար թափօրներով կ'այցելէր եօթը եկեղեցի: Իւրաքանչիւր հաւաքականութիւն կը հետեւի հաւատքի տուրքը մատուցելու տարբեր սովորութիւններու, որոնք ժամանակի ընթացքին կը վերածուին անանդութեան: Այս մէկն ալ հալեպեան քրիստոնեայ մասսային հարագատ եւ դիւթիջ խճանկարներէն էր:

Երեկոյեան, ընտանեկան պարագաներով մեր ժամադրավայրը եղաւ նոր ճաշարաններէն մէկը՝ Սիսը: Ծիտետիէի մութին մէջ ընկղմած, հագիւ երեւելի շառաւիղները՝ միջնադարեան ամեհի վիուկներու սարդոստայնով բնակուած տնակներուն ու ահարկու թաքուն նկուղներու խճանկարը կը յիշեցնէին: Արաբական տուններու առաւօտեան գողտրիկ տեսանելի շաւիղներն ու փարթամ բակով բնակարանները ծածկուած էին թանձր մարախուղով, որոնց մէջ միախառնուած էր ծխնելոյզներէն գուլայգուլայ բարձրացող մագութի վառարաններու անախորժ ծուխին հոտը, որ թափանցելով պատերու շախաղին ընդմէջէն կը ծեփեր հնամենի կառոյցները՝ իր ուրոյն բուրմուն-

քով մատնահետք թողլով «պատմութեան էջերուն» վրայ: Մինչ Արեւելքի աստուածները վաղեմի իրենց մեհեաններու շքեղութիւնը յիշեցնող, գաղտագողի տեղաւորուած արաբական բակերու *Լիուաններուն* վրայ, նիրհած վիճակով, մերձակայ ճաշարաններէն յուշիկ սագող՝ արաբական Հալեպեան *Զտուտ*-ի խագերով կ'օրօրուին Ապու Նաուասեան արծաթեայ ոգելից գաւաթներու շաչիւնով, Հարուն ալ-Ռաշիտի գինարբուքի «Հագար Ու Մեկ Գիշեր»-ները յիշեցնող ցնծութեամբ:

Սիս ճաշարանի հիւրընկալ բազմոցներուն վրայ հանգչելով մտքես կը կրկնէի Վ. Թորթվենցի դառնութիւն արտայայտող այս տողերը.

...Ես Ատլանտեան ափունքէն,

Մեծափարթամ Ոստանի մը խորերէն

Կը բերեմ այս բաժակն թափուր ու օտար
Եւ թերեւս քու գինիիդ սուրբ հպումին

անարժան:

Ափսո՛ս... յիշատակներս այս ձեւով միալով, այդ պերճանքը կրկին վայելելու եւ վերապրելու հնարաւորութիւնը պիտի չպարգեւեն: Զաղաքացիական պատերազմը այդ ծաղկուն թաղամասերը վերածեց Հիրոշիմայի: Պատերազմի առթած աղետին ահաւորութիւնը փոշիի վերածեց պատմական օճախները եւ յօդս ցնդեցուց հինաւուրց, նախանձելի փարթամ կառոյցները:

Շալիկօ Չօրեանի հետեւեալ չափածոն լաւագոյնս կ'արտայայտէ տենչանքս, որ գուցէ օր մը կրկին ապրելու բախտը կ'ունենանք.

Ափ մը մոխիր մեր թոնիրի կրակէն՝

Կ'ուզեմ նորից կրակներս ճարակէն,

Ափ մը յուշեր ապրած կեանքի օրերէն,

Ափ մը կարօտ՝ պապենական սերերէն:

Ափ մը շիկնանք՝ մեր թոնիրի շուրթերէն,
Գերող կանչ մը՝ մեր լաւաշի բոյրերէն,
Գերդաստանի նիստ ու կացի պատկերէն,
Պապ ու տատի խորհուրդներէն տարտերէն...

Վերջապէս Նորգիւղը դարձաւ հալեպահայութեան հայակերտման միջնաբերդը, իսկ Ծիտետիէն ու Սալիպէն դարձան անոր կենսունակ, բուրումնաւետ, ամրակուռ, լրացուցիչ օղակը, սատարելով հայ մշակոյթի ծաղկումին, արհեստներու զարգացումին, ոսկեղնիկի հարստացումին, որպէս հայկական դպրութեան պահպանման ապահով անանդատուն:





ԴԱՄԱՍԿԱՀԱՅ ԿԵԱՆՔ

Դամասկոսի հայ գաղութը վերջին տասնամեակին չունեցաւ այն նախկին ծաղկուն ու փայլուն հմայքը, ինչ որ ուներ նախքան Սուրիոյ պատերազմը:

Իրատես ըլլալու համար տեղին է ետդարձ ակնարկով լուսարձակի տակ առնել բոլոր այն գործօնները, որոնք գլխիվայր շրջեցին մարդկային ըմբռնումներն ու նախանձախնդրութիւնը ազգային արժեքներու նկատմամբ, բացասական ազդեցութիւն թողլով բարեկեցիկ ժողովուրդին վրայ բոլոր մարգերէն ներս՝ տնտեսական, ընկերային, կրթական եւ միութենական:

Ա) Տնտեսական իրավիճակ

Սուրիոյ անողոք պատերազմը, անոր առընթեր կիրարկուած «Կայսեր» պատժամիջոցներն ու շրջափակումը եւ ահռելի երկրաշարժը, որոնց հետեւանքով յառաջացած տնտեսական տագնապը, մանաւանդ սուրիական թղթոսկիի արժեզրկումն ու անկումը եւ օրըստօրէ ահագնացող սղաճը կենցաղային ծանր ճգնաժամի մէջ խրեցին ժողովուրդը:

Սուրիոյ տնտեսութիւնը վերջին տասնամեակին մեծ անկում արձանագրեց պատերազմին, տնտեսական շրջափակումին եւ արեւմուտքի կիրարկած պատժամիջոցներուն հետեւանքով: Այս կացութեան լոյսին տակ Սուրիոյ ժողովուրդին համարեա՛ մեծամասնութիւնը կը գտնուի աղքատութեան սեմին: Նշեալ պատճառներուն հետեւանքով սպառեցան եկամտաբեր բոլոր աղբիւրները եւ անկում կրեց տեղական արդիւնաբերութիւնը, որ կարելոր տեղ կը գրաւեր համաշխարհային տնտեսութեան մէջ:

Միեւնոյն ժամանակ, երբ պաշտօնետներու ամսական միջին աշխատավարձը

2010-էն առաջ կը տարուբերեր 200-500 ամ. տոլարի միջեւ, ներկայիս կը տարուբերի 20-50 ամ. տոլարի միջեւ: Համաձայն ՄԱԿ-ի համաշխարհային պարենային անվտանգութեան տուեալներուն, Սուրիոյ ժողովուրդի 67 առ հարիւրը ենթակայ է սովի վտանգին եւ կարիքը ունի նիւթական օժանդակութեան:

Դժուար է ըմբռնել այս ցաւալի իրողութիւնը բոլոր անոնց համար, որոնք լաւատեղեակ են Սուրիոյ տնտեսութեան բարգա-



ւաճման նախապատերազմական շրջանին, երբ Սուրիոյ տնտեսութիւնը տեղական մակարդակով կ'արտադրեր եւ կը բաւարարեր ժողովուրդի պէտքերուն 75-80 առ հարիւրը՝ սննդամթերք, դեղորայք ու կենցաղային այլ պարագաներ, տնտեսական ու ընկերային գարգացման հիմնադրամի եւ վիճակագրական կեդրոնական գրասենեակի տուեալներուն համաձայն:

Քարիւղի արտադրութիւնը օրական կը կազմէր մօտաւորապէս 450 հազար տակառ, որ բաւարարելէ ետք տեղական պէտքերը, օրական դրութեամբ 150 հազար տա-



կառնի քանակով կ'արտաճուեր այլ երկիրներ:

Սուրիան կը համարուեր հինգ առաջնակարգ երկիրներէն մէկը՝ իր բամպակի արտադրութեամբ եւ անասնապահութեամբ: Իսկ ցորենի արտադրութիւնը կը տարուեր 3,5 - 6 միլիոն թոնի միջեւ տարեկան դրութեամբ, ինչ որ տեղական կարիքները կը գերազանցեր:

Շատ մը շրջաններու մէջ, հակառակ տեղի ունեցած երաշտի հետեւանքներուն, կարգ մը արտադրութիւններ եւ ծառայութիւններ՝ հաց, շաքար, բրինձ, դեղորայք, բժշկութիւն եւ կրթութիւն, նախքան պատերազմը հասանելի էին բոլորին՝ մատչելի գիւտերով եւ գրեթէ ձրիօրէն: Սուրիան իր արտադրութիւններու աժանութեան եւ մատուցած բարձրորակ ծառայութեան ըլլալուն համար դարձած էր զբօսաշրջիկներու ուշադրութեան կիզակետը: Փաստօրէն 2010-ին Սուրիա այցելած է աւելի քան 8 միլիոն զբօսաշրջիկ:

Սակայն այսօրուան դրութեամբ, կենսական արտադրութիւնները հազուագիւտ են գործարաններու քանդումով եւ արեւմուտքի կիրարկած առեւտրական պատժամիջոցներու ազդեցութեան տակ: Ասոնց առընթեր, քանդուեցան նաեւ կամուրջներ, ճամբաներ եւ երկաթուղիներ, ինչպէս նաեւ աւերուեցան ելեկտրական կայաններու, քարիւղի եւ կազի խողովակներուն 70 առ հարիւրը:

Պատերազմի պատճառով աւելի քան 400.000 մարդ գոհուեցաւ եւ նոյնքան ու աւելի հաշմանդամներ ունեցաւ երկիրը, ինչպէս նաեւ աւելի քան 5,6 միլիոն արտագաղթողներ եղան, որոնց հետեւանքով Սուրիոյ տընտեսութիւնը կորսնցուց իր արհեստավարժ աշխատողներն ու գործարարները:

Տնտեսական այս տագնապը իր բացասական ազդեցութիւնը ունեցաւ ընդհանրապէս Սուրիոյ հայութեան եւ մասնաւորապէս Դամասկոսի հայ գաղութին վրայ, ուր մեծ թիւով երիտասարդ ուժեր գաղթեցին եւ հետզհետէ նօսրացաւ հայութեան թիւը վերջին տարիներու տնտեսական ծանր պայմաններուն հետեւանքով: Դամասկոս մնացող ժողովուրդը կը տառապի՝ զրկուելով ապրուստի նուազագոյն կարելիութիւններէն, իսկ ժողովուրդին մեծ մասը կենցաղային, ընկերային եւ առողջապահական դժուարութիւններու դժմանքի մէջ կը գտնուի:

Յոյսով ենք, որ ազգային կառոյցներու

եւ բարեսիրական միութիւններու ջանքերով պիտի կարենանք շրջանցել տնտեսական այս անձուկ պայմանները:

Բ) Ընկերային իրավիճակ

Միջին Արեւելքի երկիրներուն մէջ ընկերութեան մը բաղադրիչները կազմող հաւաքականութիւններուն յարաբերութիւնները եղած են ակնառու՝ շփման սերտ կապերով ազգականներու, հարազատներու, դուռ-դռնկիցի հետ: Միշտ մէկը միւսին ցաւին, տխրութեան հետ՝ տառապած, մէկը միւսին ուրախութեան՝ մասնակից դարձած, իրարու առօրեային մասին՝ հետաքրքրութիւն ցուցաբերած, յաճախ օգնութեան ձեռք երկարած՝ ի պահանջել հարկին, մէկ խօսքով՝ ներդաշնակ ու բարօր կեանք մը ստեղծած:

Սակայն ի՞նչ փոյթ, բնութիւնը միշտ ալ եկած է խանգարելու մարդկային խաղաղ կեանքի անդորրութիւնը:

Վերջին քանի մը տարիներուն, երբ Սուրիոյ ժողովուրդը տակաւին իր վրայէն նոր թօթափած էր պատերազմի ազդեցութիւնը, պակասեց ժաիրի համաճարակը իր թաթը տարածեց ողջ մարդկութեան վրայ եւ ան-



շուշտ՝ Սուրիոյ ժողովուրդին: Դամասկոսի հայ գաղութն ալ անմասն չմնաց այս վախազու համաճարակէն: Ահա՛ ճիշդ այդ պատճառով մարդիկ իրենք զիրենք պաշտպանելու համար սկսան մեկուսանալ եւ ինքնամփոփ կեանք մը ապրիլ՝ անդամալուծելով հաւաքական ապրելաճը: Մարդուն կենցաղը փոխուեցաւ, ան հարկադրաբար լքեց եւ հեռացաւ ընկերային կեանքէն:

Ասոր առընթեր համաշխարհայնացման ընձեռած «բարիքները»՝ ստեղծել աշխարհաքաղաքական նոր մարդը, հոգեզուրկ եւ արժեզուրկ մարդը մեքենայացած աշխարհին մէջ, նաեւ բջիջայինը, համացանցն ու նորօրեայ արդիական բանականութիւնը մտան մարդոց տուններէն ու հոգիներէն

ներս՝ նոր հորիզոններ բանալով անոնց առջեւ, միաժամանակ շլացուցիչ միջոցներով ուժգնօրէն հարուածեցին ամէն տեսակի մարդկային ազնիւ զգացում, բարոյական ըմբռնում ու ազգային մշակոյթի արժէքներ:

Համաշխարհայնացման յորձանուտին մէջ կլանուած հայ մարդը, ի մասնաւորի հայ պատանին ու երիտասարդը այլեւս կարողութիւն ունին ստեղծելու իր երեւակայական աշխարհը, ուր կրնան գտնել իրենց ամբողջական երջանկութիւնը:

Այս բոլորէն բացի, Դամասկոսի հայութեան իրարմէ հեռու աշխարհագրական տարածքներու մէջ ցրուած ըլլալը մեծապէս կը դժուարացնէ ընկերային կեանքի աշխուժացումը: Երթեւեկութեան եւ վառելանիւթի ապահովման դժուարութիւնները նաեւ տըն-

կերպեց՝ Ղայաստանի Առաջին Հանրապետութեան կերտման 104-ամեակին եւ խաչվերաց տօնին առիթներով, համագործակցութեամբ բարեսիրական, մշակութային, մարզական եւ երիտասարդական միութիւններուն, որոնք մեծ ընդունելութիւն գտան ժողովուրդին կողմէ:

Կ'ակնկալուի, որ նման նախաձեռնութիւններ յաճախակիօրէն կրկնուին՝ ժողովուրդի լայն շրջանակները միատեղ համախմբելու եւ ներառելու զանոնք ազգային միութենական կեանքին մէջ, ապահովելով գաղութի կենսունակութիւնը եւ հայապահպանումը Սփիւռքի մէջ:

Գ)- Կրթական կեանք

Դամասկոսի հայ գաղութի կրթական համակարգը վերջին տասնամեակին ան-



տեսական ճգնաժամն ու սղաճը պատճառներ են ընկերային յարաբերութիւններուն թուլացման:

Այս երեւոյթներուն առաջըր առնելու եւ ժողովուրդին ընկերային կեանքը աշխուժացնելու նպատակով ազգային կառոյցներն ու միութիւնները մեծ ճիգ ի գործ կը դնեն՝ կազմակերպելով զանազան միջոցառումներ, երբեմն անվճար ձեւով կը փորձեն ի մի բերել գաղութի զաւակները:

Այս միտումով «Ահարոնեան» կեդրոնի վարչութիւնը գեղեցիկ մէկ օրինակը տուաւ, երբ յաջորդական երկու տարիներուն հանրային եւ ժողովրդային հաւաքներ կազմա-

մասն չմնաց պատերազմի, համաճարակի, երկրաշարժի ու տնտեսական տագնապի անմիջական եւ բացասական ազդեցութիւններէն:

Բոլոր կրթօճախները հայկական ոգիով տոգորուած, հաւատարիմ մնալով իրենց առաքելութեան կը շարունակեն մնալ նոյն հաւատքով եւ ջատագով կը հանդիսանան նոր սերունդի հայեցի կրթութիւն ջամբելու եւ հայապահպանման աշխատանքներուն սատարելու:

Գաղութին մէջ կը գործեն հինգ հայկական վարժարաններ՝ Ազգ.Միացեալ ճեմարան, Ազգ. Թարգմանչաց ճեմարան, ՀԲԸՄ-ի

Սահակեան վարժարան, Հայ Կաթողիկէ Փարոս ճեմարան եւ Հայ Աւետարանական Կենաց վարժարան:

Ակնյայտ է այսօր, որ բոլոր դպրոցները լուրջ մարտահրաւերներ կը դիմագրաւեն՝ որոնցմէ լրջագոյնն ու մտահոգիչը հայերէն լեզուի նահանջն է ամէնուրեք: Կարելի է թուել բազմաթիւ պատճառներ:

Առաջին հերթին պատերազմի պատճառով բազմաթիւ ընտանիքներ քաղաքէն դուրս գաղթեցին, որուն հետեւանքով նուազեցաւ հայկական վարժարաններ յաճախող աշակերտութեան թիւը, ճամբայ բանալով տեղացի աշակերտութեան հոսքին: Տեղացիները թուային տոկոսային համեմատութեամբ դարձան հայ աշակերտներու թիւին կրկնապատիկը եթէ ոչ անելին: Խառն ամուսնութիւններու պատճառով բազմացաւ վարժարաններէն ներս խառնածին աշակերտներու թիւը, որ անուղղակիօրէն իր դերը կ'ունենայ հայ լեզուի նահանջին մէջ:

Ցաւալի իրականութեան դէմ յանդիման կը գտնուինք: Հայ աշակերտը այլեւս պարտադրուած է դպրոցէն ներս շփման մէջ մըտնել տեղացի դասընկերներու հետ եւ բնականաբար կամայ-ակամայ օտար լեզուով հաղորդակցիլ անոնց հետ՝ նահանջելով բանի եւ գործով: Թերեւս ասոր մէջ որոշ չափով դեր ունի նաեւ հայ ընտանիքներու եւ անոնց զաւակներու անտարբերութիւնը հայերէն լեզուին նկատմամբ, Նորարարական այս աշխարհին մէջ քայլ պահելու պատճառաբանութեամբ:

Համաշխարհայնացման ընձեռած «բարիքները» իրենց ակերը կը գործեն անկասկած, ձեւաւորելով հոգեզուրկ եւ ազգային արժէքներէ զուրկ արդի աշխարհաքաղաքական մարդը:

Նման երեւոյթի մը դիմաց հարկ է որ պատասխանատու մարմինները լուրջ քայլերու դիմեն՝ կասեցնելու համար հայ լեզուին նահանջը: Հետեւաբար իւրաքանչիւրս պէտք է գիտակցի, որ պարտաւոր է միշտ հայերէն խօսիլ, հայերէն մտածել եւ հայերէն գրել՝ դէմ դնելով այլասերման վտանգին, մանաւանդ մայրենի լեզուին ճամբով պահպանելու մեր ազգային մշակոյթը, ազգային ինքնութիւնն ու նկարագիրը:

Սփիւռքի մէջ յարատեւ պայքար ունինք մղելիք հայօրէն ապրելու եւ գոյատեւելու համար: Այս համոզումով ու հաւատքով պէտք է գործենք գիտակցութեամբ եւ ամբողջական յանձնառութեամբ: Փաստօրէն

ունինք թիւով քիչ, սակայն ուսումնատենչ ու յառաջադէմ երիտասարդներ, որոնք մեր կիզակետին մէջ մնալով կրնան Նոր ձեռքբերումներու առաջնորդել մեզ:

Դ) Միութենական կէտեր

Սփիւռքահայ սերունդներու ազգային գաղափարական կազմաւորման ու ինքնաճանաչման մէջ անփոխարինելի են միութիւններու դերն ու ներդրումը:

Որպէս սփիւռքահայեր՝ հայկական ակումբը, հայ դպրոցի կողքին, հիմնական դեր ունեցած է հայպահպանման եւ հայեցի դաստիարակութիւն մատուցելու Նոր սերունդներուն, հայ մշակոյթի ծանօթացման եւ պահպանման ճամբով:

Հայ անհատի մը համար միութենական կէտնքը իր առօրեային հիմնական մէկ մասն է: Դամասկահայը մանուկ հասակէն կը յաճախէ ակումբ եւ կը սկսի միւրճուիլ միութենական կէտնքին մէջ. հոն կը կերտէ իր ինքնութիւնը, կը սորվի կամաւոր աշխատանքը եւ ծառայութեան բարիքները, խմբային աշխատանքը, դեկավարութեան հմտութիւնը, աշխատասիրութիւն եւ ինքնավստահութիւն եւայլն:

Սուրիահայ համայնքի բոլոր ակումբներուն մէջ կը գործեն երիտասարդական եւ ազգային միութիւններ, Նոյնն է պարագան Դամասկոսի, ուր «Ա.Ահարոնեան» կեդրոնէն ներս կը գործեն հետեւեալ միութիւնները.

- Սուրիահայ Օգնութեան Խաչի «Էրեբունի» մասնաճիւղը, որ միշտ օժանդակ կը դառնայ գաղութի ընկերային, կրթական, առողջապահական եւ բարեսիրական ճիգերուն, նիւթական պետքերը կը հոգայ գաղութի կարօտեալներուն: Անոր կողքին կը կազմակերպէ տարեկան աւանդական տօնավաճառներ, դասախօսական ձեռնարկներ, պտոյտներ, նախընթիքներ, դասընթացքներ եւ հայ աւանդական առիթներու զանազան ձեռնարկներ:

- Համազգայինի «Լեւոն Շանթ» մասնաճիւղը, որ մասնագիտացած է հայկական մշակոյթի ծանօթացման եւ պահպանման աշխատանքով: Ան կը կազմակերպէ գեղարուեստական եւ դասախօսական ձեռնարկներ, դասընթացքներ եւ ընթրիքներ:

- ՀՄԸՄ-ի «Դամասկոս» մասնաճիւղը, որ կը համախմբէ գաղութի բոլոր մանուկներն ու երիտասարդները, որոնք շաբաթական հերթականութեամբ գայլիկական եւ սկաուտական ժողովներ կը գումարեն, ինչպէս նա-



Եւ կը կազմակերպեն միօրեայ գործունեութիւններ եւ դաստիարակչական սեմինարներ: Անոր կողքին կը գործէ մասնաճիւղի շէփորախումբը, որ տարուան ընթացքին գաւազան ելոյթներ կ'ունենայ: Իսկ միութեան տարուան գլխաւոր աշխատանքը կ'ըլլայ տարեկան բանակումը: Վերջին երկու տարիներուն բախտաւորուած էինք կրկին «Քեսապի» մէջ բանակելու: Վարչութեան հիմնական աշխատանքներէն է նաեւ կազմակերպել մարզական մրցաշարքեր, մանուկներու Ամանորի խրախճանք, Ս. Ծնունդի Աւետում, Ս. Չատիկի առթիւ ճաշկերոյթ, տարեկան Քերմէս եւ այլ տողանցքներ ու ձեռնարկներ:

Սուրիոյ Երիտասարդական Միութեան «Դրօշակ» մասնաճիւղը, որ կը բաղկանայ խումբ մը երիտասարդներէ, կը հաւաքուի շաբաթական հերթականութեամբ, կ'ունենայ յատուկ դասախօսական շարքեր, գրոյցներ, ընկերային գործունեութիւններ եւ ընթրիքներ: Մասնաճիւղի ընկերները ամէն տարի կը մասնակցին Կեդրոնական Վարչութեան կազմակերպած միջմասնաճիւղային բանակումներու եւ այլ սեմինարներու:

Սուրիոյ Պատանեկան Միութեան «Ռոստոմ» մասնաճիւղը, ուր կը համախմբուին հայ պատանիներ, իսկ վարիչ-դաստիարակ կազմը անոնց կը փոխանցէ յատուկ դաստիարակչական ծրագիր: Պատանիները կը սորվին ազգային եւ յեղափոխական երգեր, կ'ունենան միօրեայ գործունեութիւններ եւ գանազան առիթներու խրախճանքներ:

Պատանիները եւս մեծ ուրախութեամբ կը մասնակցին Ընդհանուր Վարիչ Մարմինի կազմակերպած միջ-մասնաճիւղային բանակումներուն եւ սեմինարներուն:

Սակայն այսօր դժուարութիւնները շատ են, գաղութի միութեանական կեանքը Սուրիոյ պատերազմէն առաջ կը տարբերէր այսօրուան կեանքէն:

Երիտասարդներու մեծամասնութեան քաղաքէն դուրս ճամբորդութիւնը հսկայ ազդեցութիւն ունեցաւ մարդու իմաստով, թէ երիտասարդական, թէ մշակութային, բարեսիրական միութիւններու մէջ: Այսօր երիտասարդները սակաւաթիւ ներկայութիւն ունին ՍՕՒ-ի եւ Համազգայինի մէջ: Երկրին դիմագրաւած տնտեսական դժուար իրավիճակին հետեւանքով շատ մը անդամներ հեռացած են իրենց միութեանական աշխատանքէն:

Բայց այս բացը գոցելու եւ գործերը հե-

զասահօրէն կազմակերպելու նպատակով «Ա.Ահարոնեան» կեդրոնը յառաջացուցած է միջմիութեանական յանձնախումբ մը, որ կը հաւաքուի ամսական հերթականութեամբ, կը գրուցէ գաղութի եւ միութիւններու իրավիճակներուն, ակումբի բարեգարդման աշխատանքներուն շուրջ եւ կը ծրագրէ հանրային ձեռնարկներ:

Ի վերջոյ, միութեանական կեանքը դիւրին չէ, ան կ'ենթադրէ յարատեւ եւ կամաւոր աշխատանք, ժամանակի տրամադրում եւ անկասկած պատրաստակամութիւն՝ ընդհանուր մէկ նպատակի համար՝ ծառայել ազգին ու հայրենիքին, հասնիլ համայնքի հայորդիներու կարիքներուն:

Կը հաւատանք, որ երկրի պայմաններու աստիճանական բարելաւումով ու մեր բոլորին հաւաքական ճիգերու լարումով կարելիութիւն կ'ունենանք դժուարութիւնները յաղթահարելու եւ վերակազմակերպման աշխատանքի մղուելու: Մինչ այդ հարկ է մեր ուժերը կեդրոնացնել եղածը ամուր պահելու եւ տարբեր լուծումներ առաջադրելով սատար կանգնելու մեր միութեանական նուիրեալ մարդու թիւ:

**Տեղեկագիրը
գործակցաբար պատրաստեցին՝
Սոնա Անտրեան
Արամ Աճէմեան
Մարի Գարակեօզեան**





ԼԱԹԱՔԻՈՅ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ ՄԱՍԻՆ

Կրթական ոլորտ
1922-ին հիմնուած Լաթաքիոյ Ազգ. Սրբ. Նահատակաց վարժարանը 2022-ին բոլորեց իր հարիւրամեակը եւ վերանորոգ կամքով ու հաւատքով թեւակոխեց նոր դարեշրջան:

Ըլլալով գաղութի ուսումնակրթական միակ ազգային հաստատութիւնը, Ազգ.



Սրբ. Նահատակաց վարժարանը դար մը ամբողջ դիմագրաւած է տնտեսական, ընկերային եւ կրթական գնահատման մարտահրաւերներ, սակայն կառչած մնալով իր առաքելութեան՝ ուսման եւ գիտութեան կողքին հայեցի դաստիարակութիւն ջամբած է սերունդներուն, դառնալով հայակերտման եւ մարդակերտման ամրակուռ օճախ:

2023-2024 տարեշրջանին, վարժարանին աշակերտութեան ընդհանուր թիւն է 292 աշակերտ՝ (185-ը՝ հայ) 48 մանկապարտեզի, 162 նախակրթարանի եւ 82 միջնակարգի աշակերտներ: Ուսուցչական կազմը կը հաշուէ 38 ուսուցիչ-ուսուցչուհիներ (31-ը՝ հայ) եւ 6 ծառայողական պաշտօնեաներ: Վարժարանի տնօրէնուհին է՝ Հուրի Տէրիմէնճ-

Երկրչփ. Մեղրիկ Ապահունի-Մանճեան

եան-Գարամարտեան:
Վարժարանի աշակերտութեան թուական պատկերը փոփոխական եղած է եւ երբեմն նոյնիսկ աճ արձանագրած՝ յատկապէս վերջին շրջանին Սուրիոյ մէջ տիրող պատերազմական վիճակին բերումով մեծաթիւ հայ ընտանիքներու Լաթաքիա հաստատուելուն բերումով:

Վարժարանը օժտուած է համալսարանաւարտ ուսուցիչ-ուսուցչուհիներով: Հոգաբարձական իրարայաջորդ կազմերու ջանքերով միջնակարգի դասարաններուն համար կ'ապահովուին Լաթաքիոյ լաւագոյն ուսուցիչները, որոնք կը դասաւանդեն այցելու ուսուցիչի դրութեամբ: Պետք է մատնանշել, որ միջնակարգի աշակերտները պատուաբեր արդիւնքներ կ'արձանագրեն պետական քննութիւններուն, ինչ որ լաւագոյն ապացոյցն է դպրոցի կրթական գնահատելի մակարդակին:

Հոգաբարձութեան եւ տնօրէնութեան կողմէ յատուկ հոգատարութիւն կը վայելէ Հայերէն լեզուի ուսուցման պարագան: Նախակրթարանի եւ միջնակարգի մէջ կը կիրարկուի Բերիոյ Հայոց Թեմի Ուսումնական Խորհուրդի ուղեգիծը, կ'օգտագործուի պրն. Յակոբ Չոլաքեանի պատրաստած «Հայերէնի Դասագիրք» եւ «Անդաստան» հայերէն դասագիրքերու շարքը: Իսկ արաբախօս հայ աշակերտներուն համար հայերէնի դասապահերուն զուգընթաց հայերէն լեզուի դասեր կը տրուին յատուկ ուսուցչուհիի միջոցաւ: Վիճակացոյցներու բաշխման ընթացքին, գնահատագիր կը տրուի նախակրթարանի եւ միջնակարգի հայերէն լեզուի գերագանց արդիւնք արձանագրող աշակերտներուն: Անոնք յատկանշական նուեր-

ներով կը պարզեատրուին նաեւ Վարդանանց տօնին առիթով:

2022-2023 տարեշրջանին, վարժարանը մեծ շուքով ոգեկոչեց իր հիմնադրութեան 100-ամեակը: Այս տարեշրջանը բնորոշուեցաւ մեծ իրագործումներով: Վարժարանի շրջափակին եւ բոլոր դասարաններուն մէջ գետեղուեցան կեդրոնական համակարգով աշխատող լուսանկարչական սարքաւորումներ, ինչպէս նաեւ վարժարանը օժտուեցաւ դասաւանդման արդիական միջոցներով (բարձրախօս եւ ցուցադրութեան յատուկ սարք): Իսկ վարժարանի ելեկտրականութեան տազնապը լուծելու համար, գետեղուեցաւ արեւային ելեկտրածին համակարգ: Հոգաբարձութեան եւ տնօրէնութեան ջանքերուն շնորհիւ իրատարակուեցաւ Յուշամատեան մը, վարժարանի 100-ամեայ արխիւները պահպանելու եւ յաջորդ սերունդներուն փոխանցելու հեռանկարով: Յուշամատեանի խմբագրութեան աշխատանքը յանձնուեցաւ դոկտ. Շողիկ Աշըգեանին, իսկ արխիւները մեկտեղելու աշխատանքը՝ շրջանաւարտ սերունդներէ կազմուած արխիւային յանձնախումբին:

Հաւաքական երկարատեւ եւ տքնաջան աշխատանքէ ետք, լոյս տեսաւ հարուստ բովանդակութեամբ Յուշամատեանը, որ վաճառուեցաւ Յոբելէնական հանդիսութեան աւարտին: Մեծ խանդավառութեամբ եւ յաջողութեամբ ընթացան 100-ամեակին նուիրուած ձեռնարկները՝ ամավերջի հանդէսներ, 100-ամեակի յատուկ նշանակի (logo)-ի պատրաստութիւն, քերմէս եւ պարահանդէս: Ինչպէս նաեւ պատրաստուեցաւ կարճ վաւերագրական տեսերիզ մը, համագործակցութեամբ Լաթաքիոյ մէջ «Հորիզոն» կայքի թղթակիցին: Յիշեալ ձեռնարկները եզրափակուեցան 100-ամեակի Յոբելէնական հանդիսութեամբ եւ արխիւային ցուցահանդէսով, որոնք տեղի ունեցան 12 Մայիս 2023-ին, բարձր հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Բերիոյ Թեմի Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մակար Ս. Եպս. Աշգարեանի, մեծարգոյ հիւրերու եւ հոծ բազմութեան: Շքեղ հանդիսութեան աւարտին, ընթերցուեցաւ ՆՍՕՏՏ Արամ Ա. կաթողիկոսին այս առիթով վարժարանին յղած հայրապետական սրբատառ կոնդակը, պարզեատրուեցաւ վարժարանիս տնօրէնուհին եւ կատարուեցաւ Յուշամատեանի գինեձօն:

Տարիներու հետապնդուած ծրագիր է

վարժարանէն ներս գրադարանի մը հաստատումը: Այս տարեշրջանին, հոգաբարձութիւնը հետամուտ է սոյն ծրագրի գործադրութեան: Ընթացքի մէջ է նաեւ վարժարանին անձնական փոխադրամիջոց (օթօքար) ապահովելու աշխատանքը:

Ազգային դիմագիծի պահպանման ծիրէն ներս, մտահոգիչ երեւոյթ է վարժարանի շրջափակէն ներս աշակերտներու կողմէ մայրենի լեզուի գործածութեան նուազումի պարագան, որուն յաղթահարման համար կը տարուի բծախնդիր աշխատանք: Մտահոգիչ է նաեւ, 2011-էն սկսեալ երկրին մէջ տիրող տնտեսական տազնապին հետեւանքով վարժարանի հայ աշակերտներու նկա-



տելի թիւով զանգուածի մը կրթաթոշակները չվճարելու հարցը: Արդ, հոգաբարձութիւնը յաւելեալ ջանքերով կը ձգտի հաւասարակշռել վարժարանի տարեկան պիտոճէն, միաժամանակ հոգալով լայնածաւալ ծախսերը եւ լաւագոյնս պահելով ուսումնական մակարդակը:

Ի վերջոյ, վարժարանի գլխաւոր մտահոգութիւնը եղած է ու կը մնայ երկրորդական կարգերու չգոյութեան պարագան, որուն հետեւանքով միջնակարգէն շրջանաւարտ աշակերտները իրենց երկրորդական ուսումը կը շարունակեն տեղական դպրոցներուն մէջ, շատ կանուխէն սերտ կապեր հաստատելով օտար շրջանակներու հետ, որուն ժխտական ազդեցութիւնը կը դրսևորուի կարգ մը հայ երիտասարդներու օտար համայնքներէն ներս ունեցած գործուն ներկայութեամբ եւ շատ յաճախ անոնց կնքած օտար ամուսնութեամբ:

Հայապահպանման եւ ազգային դաստիարակութեան վսեմ նպատակներու ջատագով Ազգ. Սրբ. Նահատակաց վարժարանը իր կրթական մշակներով, կայ եւ պիտի մնայ սրբազան իր առաքելութեան նուիրեալ շահակիրը:



ԼԱԹԱՔԻՈՅ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՀԱՅԵՑԻ ՄԹՆՈՒՈՐՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՕԶԱԽՆԵՐ

Նայիրի Կարապետյան

Լաթաքիոյ միութիւնները իրենց կազմաւորուած օրերէն հետամուտ եղած են երկու հիմնական նպատակներու իրականացման՝ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման, մեր իրաւունքներուն գիտակ սերունդներու պատրաստութեան, ապա նաեւ հայապահպանման, հայեցի մթնոլորտի ստեղծման, որպէսզի հայ երիտասարդը իր ինքնութեան

խօսութեան, հայեցի դաստիարակութեան ու հայապահպանման մէջ:

Լաթաքիոյ մէջ Սուրիահայ Օգնութեան Խաչի «Շուշի» մասնաճիւղի կողքին կը գործեն Դաստիարակչական, Խնամատարական, Ձեռարուեստի եւ Ընկերային յանձնախումբեր, իւրաքանչիւրը իր մասնագիտութեան ոլորտին մէջ աշխատանքներ իրականացնելով ու հանրութիւնը հրաւիրելով իր ձեռնարկներուն: Մասնաճիւղը բարեսիրական իր աշխատանքներու ոլորտին մէջ թե՛ պատերազմի եւ թե՛ երկրաշարժի օրերուն նպաստեց նաեւ հայ ընտանիքներուն:



Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան վարչութեան միահիւսուած է իր երիտասարդական թելը՝ Հայ Երիտասարդական Ընկերակցութիւնը, որ մըշտապէս իր մշակութային, մարզական եւ ընկերա-

կառչելով աղերսուի հայ մշակոյթին ու հայկական ավանդոյթներուն հետ, ընկերային, հաւաքական ջերմ մթնոլորտի ներքոյ: Համայնքի յարատեւութեան հիմնական ազդակը ազգային մեր արժեքները սերունդներու փոխանցելն ու անոնց առօրեային մէկ կարելոր մասը դարձնելն է:

յին գործունեութեամբ ոչ միայն սատար կը կանգնի միութեան ընդհ. աշխատանքներուն, այլեւ միութիւնը կ'օժտէ նոր ու կենսունակ անիշով:

Լաթաքիոյ մէջ կը գործեն մշակութային, մարզական, բարեսիրական միութիւններ, որոնք մեծ դեր ունին սերունդներու հայա-

յին գործունեութեամբ ոչ միայն սատար կը կանգնի միութեան ընդհ. աշխատանքներուն, այլեւ միութիւնը կ'օժտէ նոր ու կենսունակ անիշով:

ՅԱԸ Միութեան Տիկնանց Յանձնախումբը ի մի կը բերէ միութեան ընտանիքները՝ մտերմիկ ձեռնարկներու ընդմէջէն: Անցնող տարիներուն մասնաժողովը ջանք չի նայեց գեղարուեստական, թատերական, երաժշտական տարբեր խումբեր

ընդունելով ելոյթներ կազմակերպելու, օգնութիւն հայթայթելու կարիքաւոր ընտանիքներու եւ նիւթապէս նպաստելու վարժարանի կրթաթոշակներու ամբողջացման:

«Արցախ» Պատանեկան Միութիւնը իր կարգին իր շարքերուն համար կը կազմակերպէ դաստիարակչական բազմապիսի աշխատանքներ, քերվեսներ, հանդիսութիւններ, կը մասնակցի բանակումներու, սեմինարներու եւ այլն:

Սուրիահայ երիտասարդական միութեան «Կայծակ» մասնաճիւղը եւս, երիտասարդներ համախմբած իր շարքերուն մէջ, կ'իրականացնէ դաստիարակչական եւ ընկերային ձեռնարկներ, տարբեր առիթներով կ'այցելէ ընտանիքներու, հանրային ձեռնարկներ կը կազմակերպէ եւ կը մասնակցի ՍԵՄ-ի բանակումներուն:

Համազգայինի «Վահան Նաւասարդեան» մասնաճիւղը Հայ լեզուն եւ մշակոյթը հայու առօրեային անբաժան մէկ մասը պահելու գիտակցութեամբ կը գործէ, ջանալով երգարուեստը, պարարուեստը, գիրն ու գրականութիւնը համազգայնականներու առօրեայի անբաժան մասը դարձնել ու հետաքրքրութիւն ստեղծել անոնց շուրջ: «Գեղարդ» պարախումբը կ'ունենայ իր տարեկան ելոյթներն ու մասնակցութիւն կը բերէ ազգային եւ պետական տարբեր առիթներու: «Նարեկ» երգչախումբը նոյնպէս կը կազմակերպէ համերգներ եւ կ'ունենայ մասնակցութիւններ: Համազգայինի Հալէպի Հայագիտական առցանց դասընթացքին մասնակցած են Լաթաքիայէն երկու ուսանողներ: Համազգայինը կարեւորութիւն կու տայ նաեւ կերպարուեստին եւ յաճախ առիթներ կ'ընծայէ պատանիներուն եւ պարմանուհիներուն գծելու եւ իրենց գծագրութիւնները ցուցադրելու:

ՀՄԸՄ-ի շարքերը նոյն աշխուժութեամբ կը գործեն, ունին իրենց փողերախումբը եւ ՀՄԸՄ-ի վարչութիւնը: Անոնց գործունեութեան դաշտին մէջ կ'իյնան հանրային պտոյտներ, խրախճանքներ, ազգային եւ պետական տօներու առիթով տողանցքներ՝ շեփորախումբի ընկերակցութեամբ, սեմինարներ, տարեկան բանակումի մասնակցութիւն, մարզական խումբերու աշխոյժ գործունեութիւն եւ այլն:

Մեր միութիւնները այս օրերուն ընդհանրապէս դժուար պայմաններու մէջ կը գործեն: Տնտեսական տագնապ, վառելիքի պակաս եւ ելեկտրականութեան տագնապ, սղաճ...

այս բոլորը իրենց անդրադարձը կ'ունենան մարդոց տրամադրութեան, հետեւաբար ալ գործունեութեան որակին եւ հերթականութեան վրայ:

Արտագաղթը, յատկապէս երիտասարդութեան, աշխատող ուժի տագնապ կը յառաջացնէ եւ միութենականներ երբեմն կը ծանրաբեռնուին մէկէ աւելի աշխատանքներ ստանձնելով:

Արցախի դէպքերը բացասականօրէն ազդեցին մեր միութիւններու աշխատանքի թափին վրայ, յուսալքումի ալիք մը բարձրացնելով:

Այս պայմաններու յաղթահարման համար հարկ է մեր միութենականներու ոգին բարձր պահել, անոնց թել ու թիկունք կանգ-



նիլ, նպաստել որ յաջողութեամբ կազմակերպեն իրենց ծրագրած աշխատանքները, երիտասարդութեան դիմաց զարգացման առիթները լայն բանալով, դասընթացքներու եւ այլ միջոցներու կիրարկումով ժամանակակից աշխատելաճերու հմտութեամբ օժտելով զայն:

Բարեբախտաբար սուրիահայ մեր իրականութեան մէջ հայ երիտասարդութիւնը կամաւոր ծառայութեան պատրաստակամութիւնը միշտ ալ ունի, որովհետեւ քաջ գիտէ որ հայկական ինքնութեան պահպանման համար միութիւններու դերակատարութիւնը անփոխարինելի է, ուստի այսպիսի երիտասարդութեան վերադարձաւորման ու զարգացման նպաստելով, անոր նիւթապէս նեցուկ կանգնելով, աշխատանքին մէջ նորութիւններ մուծելով, կրնանք գիրեկք ներգրաւուած պահել մեր միութիւններուն մէջ: Մեր միութենական կեդրոնները եւս պետք է դարձնել հրապուրիչ եւ հայկականութիւն բուրող ժամանակակից կեդրոններ:



ԼԱԹԱՔԻՈՅ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԵԱՆՔԻՆ ՇՈՒՐՋ

Երկրչփ. Թովմաս Վ. Մանճեան

Հայութեան ներկայութիւնը Լաթաքիոյ մէջ կուգայ պատմութեան խորքէն, հաւանաբար Տիգրան մեծի օրերէն:

Գտնուելով Երուսաղէմի ճամբուն վրայ եւ ունենալով եկեղեցի եւ հոգետուն՝ Լաթաքիան երկար տարիներ հանգստավայր հանդիսացած է հայ ուխտաւորներուն համար:

Քաղաքական եւ պատմական պայմաններու բերումով, Լաթաքիոյ մէջ հայութեան թուական պատկերը մշտական փոփոխութեան ենթարկուած է:

Հայոց Տեղասպանութենէն եւ Կիլիկիոյ պարպումէն ետք, մեծ աճ արձանագրած է այս թիւը, երբ տեղահանուած հայերը կայք հաստատած են ծովափնեայ այս շրջանը, որ հետզհետէ սկսած է ստանալ գաղութի կարգավիճակ: Այսպէս, 1922-ին ազգաւուեր հայորդիներու ջանքերով, հիմնուած է Ս. Յակոբեանց Ազգ. Երկսեռ վարժարանը, որ հետագային կոչուած է Ազգ. Սրբ. Նահատակաց վարժարան. կը գտնուի Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջափակին մէջ:

Յաջորդաբար, Լաթաքիոյ մէջ հիմնուած են քաղաքական, մշակութային, մարզական եւ բարեսիրական միութիւններ: Ուշագրաւ երեւոյթ է սակայն, որ Կիլիկիայէն կամ Արեւմտահայաստանի շրջաններէն գաղ-

թած եւ Լաթաքիա հաստատուած հայերը չեն հիմնած հայրենակցական միութիւններ, իւրաքանչիւր շրջանէ հայրենակիցներու թիւին սահմանափակ ըլլալուն բերումով:

Տեղասպանութենէն առաջ Լաթաքիա հաստատուած հայերուն մեծամասնութիւնը եղած է արաբախօս: Անոնց նկատելի մասը, ձուլուելով քրիստոնէական այլ համայնքներու մէջ, հետագային կորսնցուցած է իր ազգային ինքնութիւնը:

Ըստ Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկե-



ղեցւոյ թաղական խորհուրդի տուեալներուն, 2012-ին, Սուրիոյ տագնապի սկզբնաւորութեան, Լաթաքիոյ հայ համայնքը կը հաշուէր մօտաւորապէս 435 ընտանիք: Պատերազմի օրերուն, պարզելով յարաբերական կայուն եւ ապահով իրավիճակ, Հալէպէն, Ռաքքայէն, Հոմսէն, Եագուպիէն եւ Ճեզիրէն մեծ թիւով հայ ընտանիքներ ապաս-

տան գտան Լաթաքիա, նկատելի աճ արձանագրելով հայ ընտանիքներու թիվին, որ ըստ թաղական խորհուրդի տուեալներուն, հասած է մինչեւ 800 հայ ընտանիքի, ինչ որ առաւելագոյնը կը համարուի Լաթաքիոյ պատմութեան մէջ: Շատ չանցած, կարգ մը ընտանիքներ, որոնցով աւելի ապահով եւ նիրապէս աւելի նպաստաւոր պայմաններ, գաղթեցին դէպի Քանաւա, Երուպա, Լիբանան եւ Հայաստան: Երկրաշարժէն ետք, Լաթաքիոյ մէջ տեղի ունեցած մարդահամարին տուեալներով, ներկայիս գաղութը կը հաշուէ 650 հայ ընտանիք, որոնցմէ 150-ը՝ նորագրեալ հայ ընտանիքներ: Վերջիններս ընդհանրապէս հեռու եղած են եկեղեցիէն եւ ընկերային կեանքէն, մեծամասնութեամբ՝

րելի երեւոյթ է նոր սերունդին մօտ հայերէն լեզուի օգտագործումը, որուն մէջ հիմնական դեր ունեցած են տեղւոյն եկեղեցին, դպրոցը եւ գործող միութիւններն ու ակումբները:

Գաղութի Ս. Աստուածածին եկեղեցին եղած է եւ կը շարունակէ մնալ հայկական ասանդութիւններու գոյատեւման գլխաւոր պահապանը, որուն օրինաբեր կամարներուն ներքեւ կը հաւաքուին գաղութի հայ զաւակները՝ միասնաբար տօնախմբելու ազգային եւ կրօնական ասանդական տօները:

Սուրիոյ հայկական փոքրաթիւ գաղութներէն մէկը ըլլալուն հետեւանքով, Լաթաքիոյ հայերը ընդհանրապէս լայնատարած շփում ունեցած են օտար շրջանակներու

հետ, տեղի տալով օտար ամուսնութիւններու, որուն հիմնական պատճառներէն կը համարուի նաեւ գաղութի միակ հայկական վարժարանի մինչեւ 2003 թուական միջակարգ եւ մինչ օրս երկրորդական կարգեր չունենալու պարագան, ինչ որ առիթ կ'ընծայէ հայ պատանիին դեռատի հասակէն ընկերային սերտ կապեր հաստատելու օտար հա-



արաբախօս: Հարկ է յիշել, որ հայաստանեան հպատակութիւն ստացած մաս մը հայեր այդ հպատակութենէն օգտուելով արեւմտեան երկիրներ գաղթեցին:

Լաթաքիոյ հայ ընտանիքները ընդհանրապէս բազմազաւակ չեն: Ընտանիքներուն մեծ մասը կը բաղկանայ երեք կամ չորս անդամներէ, որոնց երիտասարդները, երբեմն նոյնիսկ համալսարանական զաւակները, ներկայիս լծուած են աշխատանքի, երկրին մէջ տիրող տնտեսական ծանր տագնապը դիմակայելու համար: Յիշատակութեան արժանի է, թէ Լաթաքիոյ բնիկ հայերու կողքին, գաղութին մաս կը կազմեն շրջակայ գիւղերու՝ Արամոյի, Ղնեմիէի եւ Եագուպիէի հայերը, որոնց տարեց անդամները մինչ օրս արաբերէն կը խօսին: Սակայն քաջալե-

մայնքներու իր տարեկիցներուն հետ եւ շատ անգամ զանոնք իբրեւ կողակից ընտրելու:

Գաղթի պատճառով, նշմարելի է գաղութէն ներս գործուն երիտասարդներու թիւի նուազումը, որուն զուգահեռ երկրին մէջ տիրող տնտեսական ծանր տագնապը անհնարին կը դարձնեն ընկերային կեանքի բարւոքման գործընթացը: Համատարած մտահոգութիւն մը, որմով կը տագնապին սփիւռքեան գրեթէ բոլոր գաղութները:

Ճգնաժամային այս պահուն, Սփիւռքի գաղութներու պահպանումը եւ ուժեղացումը անկասկած կը պահանջեն ազգային ուժերու կեդրոնացած աշխատանք եւ համահայկական առումով ազգային ռազմավարութիւն, իրագործելու համար «Հօր Սփիւռք-հօր հայրենիք» կարգախօսը:



ՈՐՈՇ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ ԼԱԹԱՔԻՈՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Երկրչփ. Վարուժ Պետիրեան

Սուրիական պատերազմի ծանր տարիներուն, Լաթաքիան դարձաւ ապաստան Զալէպէն, Ռաքքայէն ու Եագուպիէէն փախուստ տուած հայերու: Զայ ընտանիքներու թիւը հասաւ մօտաւորապէս 800-ի: Իսկ այսօր չ'անցնիր 600-ը: Վերջին 15 տարիներուն ընտանիքի աշխատող անդամներուն թիւը հետզհետէ աւելցաւ: Այսօր ընտանիքի մը բոլոր անդամները, նոյնիսկ ուսանողները, ստիպուած են աշխատիլ՝ իրենց ապրուստը հոգալու համար:



Վերջին տարիներու տնտեսական ահաւոր վատ վիճակը պատճառ դարձաւ գաղթի, մանաւանդ կենցաղային վատ պայմանները մղեցին երիտասարդութիւնը լքելու շրջանը: Տնտեսական եւ կենցաղային վատ պայմանները իրենց բացասական անդրադարձը ունեցան նաեւ ազգային ու միութենական բնագաւառէն ներս, ուր մարդուժի ահաւոր բաց մը գոյացաւ:

Մինչ օրս շարունակուող կենցաղային ծանր պայմաններուն՝ ջուրի, էլեկտրականութեան, սղաճի բերումով, երիտասարդութեան նկատառելի մէկ մասը՝ արհեստաւոր թէ ուսեալ, կը նախընտրէ մեկնիլ Զայաս-

տան կամ գաղթել արեւմտեան երկիրներ:

Օր ըստ օրէ գաղութի բնակչութեան պատկերը կը փոխուի, ընկերութեան մէջ յառաջացած տարիքի անդամներուն թիւը երեւելի կը դառնայ:

Լաթաքիահայութեան աշխատանքի ոլորտը կ'ընդգրկէ մեծ թիւով պետական կամ ազգային պաշտօնեաներ, ինչպէս նաեւ մեծաթիւ արհեստաւորներ, փոքր վաճառատուներու սեփականատէրեր, որոնք նախքան պատերազմը բարեկեցիկ կեանք ունէին, սակայն այսօր տնտեսական ծանր պայմաններու մէջ կ'ապրին, ունեւոր ընտանիքներուն թիւը գաղութի բնակչութեան 5%-ը չ'անցնիր:

Տնտեսական տագնապի մէջ ապրող երիտասարդութիւնը ազգային կալուածներէն ներս կամաւոր ծառայութեան ոլորտ հրաւիրելը օրըստօրէ կը դժուարանայ, ազգային պաշտօնեաներուն թիւը կը նօսրանայ, որովհետեւ ամսականները չեն բաւարարէր գիրենք:

Օրուան հրամայականն է վերստին կազմակերպել Սփիւռքը, որպէսզի մեր երիտասարդութիւնը կառչի իր մշակոյթին ու անանդութիւններուն, եկեղեցւոյ, միութիւններուն... սակայն այս բոլորը գերճիգերու կը կարօտին, մանաւանդ այս օրերուն, երբ կեանքի դառն առօրեան ընկճած է բոլորս, յատկապէս միջինարեւելեան գաղութները:

Այս տուեալներուն լոյսին տակ կարելոր կը համարուին գաղութի տնտեսական վիճակի բարելաւման ուղղուած ծրագիրները, իբրեւ վերկազմակերպման հիմնական քայլ, որպէսզի կարելի ըլլայ գործ հայթայթել երիտասարդութեան եւ անոր տնտեսական վիճակը մասամբ բարելաւել:



ՃԵՂԻՐԷԻ ՆԱՅՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿ ԵՒ ՄԱՐՏԱՆՐԱԲԷՐՆԵՐ

ԳԱՄԻՇԼԻ

Սուրիոյ մէջ աւելի քան տասնամեակէ մը ի վեր տեւող պատերազմը, գերպետութիւններու քաղաքականութիւնը եւ երկրի մասնատման ծրագրաւորումը ի գործ դրուեցաւ ապակայունացնելով տարածաշրջանը: Բնականաբար սուրիահայերն ալ իրենց կարգին անմասն չմնացին պատերազմին հետեւանքներէն ապրելով ճգնաժամային տարիներ:



Ճեզիրէի շրջանի պատկերը այլ էր, գերտերութիւններ՝ Ամերիկա, Ռուսիա մրցակցութեան մէջ էին՝ ունենալու համար իրենց ռազմավարական դաշնակիցները շրջանին մէջ: Ամերիկան իր հովանիին տակ առած էր հիւսիսային շրջանի քրտական Աշխատաւորական կուսակցութեան քաղաքական եւ զինուորական մասսան, իսկ Ռուսիա բնականաբար Սուրիոյ տարածքին ներկայ էր պետութեան հաւանութեամբ:

Պատերազմի առաջին տարիներուն, պետութիւնը տարբեր ճակատներու վրայ էր եւ չէր կրնար հասնիլ հիւսիսարեւելեան շրջանի մէջ իր վերահսկողութեան վերահաս-

տատման: Քրտական գործօնը իր կազմաւորման ընթացքին մէջ էր հիմնուելով տարբեր ստորաբաժանումներու եւ զինեալ ինքնապաշտպանական ջոկատներու վրայ: Սկզբնական շրջանին անոնց զինամթերքի մատակարարումը կը կատարէր պետութիւնը, ՏԱՅԵՇ-Էն պաշտպանուելու համար: Հետագային քիւրտերը անկախանալու նկրտումներ ի գործ դրին ու սկսան պետական համակարգի ստեղծման: Անոնք այժմ կը վայելեն բացարձակ հովանաւորութիւնը ԱՄՆ-ին որպէս արտաքին ապօրինաբար միջամտող կողմ, որուն դիմաց քիւրտերը իրենց վերահսկողութեան տակ առած քարիւղի հորերու ծորակները շռայլութեամբ կը բանան ԱՄՆ-ի նաւթատար մեքենաներուն դիմաց, որոնք Սուրիոյ հանքերը թալանելով երկրէն դուրս կը հանեն:

Ճեզիրէի հայութիւնը առաջին իսկ օրէն Հաւասարակշռուած քաղաքականութիւն կը վարէ շրջանի բոլոր ուժերուն հետ, մշտապէս յարգելով Սուրիոյ պետութեան օրէնքները:

Բնականաբար Սուրիոյ մէջ տեղի ունեցող անհաւասար պատերազմը ունեցաւ իր ժխտական անդրադարձը Ճեզիրէի հայ համայնքի կենցաղային եւ տնտեսական կեանքին վրայ:

Շրջանի լարուած վիճակը կը սպառնար նաեւ հայութեան: Ապահովական նկատառումներով ոմանք գաղթեցին, սակայն հայութեան վաթսունհինգ առ հարիւրը մնաց ու գոյատեւեց հակառակ բազում դժուարութիւններուն: Այստեղ ակներեւ էր Սուրիահայութեան Շտապ Օգնութեան եւ Վերականգնումի աշխատանքը, ինչպէս նաեւ քրիստոնեական բարեսիրական միութիւններուն



ներդրումը:

Գամիշլիի հայ տղաքը կը շարունակեն մինչև օրս հսկել հայկական թաղամասերուն՝ երաշխավորելու հայութեան ապահովութիւնը:

Տնտեսական Վիճակ

Ճեզիրէի Զայութեան տնտեսական կեանքը կայուն է համեմատաբար Սուրիոյ այլ քաղաքներու: Գամիշլիի գործարանները կը շարունակեն բանիլ լայն մասշտապով: Զայ Զամայքի վարպետներուն նկատառելի մէկ մասը կը շարունակէ գործել: Զայութեան տնտեսական վիճակը բարուք կը համարուի համեմատաբար Սուրիոյ այլ շրջաններու հայ բնակչութեան, թէև կան չքաւոր ընտանիքներ, որոնց մէջ մեծ է տարեցներու կամ անգործներու համեմատութիւնը: Անոնք սակայն կը գոյատևեն իրենց գաղթած զաւակներուն առաքած գումարներուն վստահելով:

Զայ վարպետները չեն մտածած այս տարիներուն լքել քաղաքը, որովհետև իրենց աշխատանքը կայուն է: Գիւղատնտեսութեամբ զբաղողներ ալ կան, որոնք հողամշակութեամբ կը զբաղին, իրենց կարելիութեան սահմաններուն մէջ, սակայն հոն ալ Նօսրացում կայ, որովհետև կլիմայական փոփոխութիւններն ու վառելանիւթի ապահովման դժուարութիւնը վտանգի կրնան ենթարկել բերքի ապահովման համար տարուած աշխատանքը: Գաղութի ազգային իշխանութիւնը ամէն ջանք կը թափէ որ համայնքը գոյատևէ, այս նպատակով ալ ազգային ծրագիրներ առաջ կը տարուին, ինչպէս եկեղեցաշինութիւնը, ազգային հաստատութիւններու գործունեութեան աշխուժացումը եւ այլն:

Միութենական Կեանք

Գամիշլիի մէջ գործող միութիւնները կը շարունակեն իրենց աշխատանքը, թէև այստեղ ալ նկատելի է մարդուժի բաց մը, նկատի ունենալով ուսման կամ այլ պատճառներով երկրէն հեռացողները:

Ընդգծելի են յատկապէս ՍԵՄ-ի, Պատանեկան Միութեան, ԶՄԸՄ-ի, ՍՕԽ-ի եւ Զամազգայինի «Ա.Ահարոնեան» մասնաճիւղի աշխատանքները, ուր մեր երիտասարդութիւնը բաւական աշխուժ ներկայութիւն է, տիրող դժուարութիւններով հանդերձ: Զամազգայինը վերջին շրջանին օժտուեցաւ նոր կեդրոնով, երաժշտանոցով, գրադարան-լսարանով, պարարուեստի եւ գծագրութեան բաժիններով, ձեռնարկեց նաեւ հայերէն լեզուի տարրական գիտելիքներու ու-

սուցման՝ գործակցելով Զայագիտական Զիմարկի առցանց լսարանին հետ:

Յառաջիկայ շրջանին համար անհրաժեշտ է մասնագիտական ոլորտի յատուկ մարդուժի պատրաստութիւնը՝ պարախումբի, երգչախումբի, ուսուցչական ասպարեզի մէջ մարդկային պաշար ունենալու համար: Առաջնայինը սակայն մայրենի լեզուի պահպանումն է, որուն համար հարկ է հարստացնել հայ աշակերտին լեզուն՝ դասաւանդման նորարար ձեւերու օգտագործումով եւ յաւելեալ դասընթացներու կազմակերպումով:

Կրթական Կեանք

Պայքարը դարձաւ մեր առօրեայ կեանքի անբաժան մասնիկը Սփիւռքի տարածքին: Իւրաքանչիւր գաղութ գինք շրջապատող մարտահրաւերներու կողքին կը դիմագրաւէ ձուլումի վտանգը՝ հայօրէն ապրելու, հայ ակնհայտութիւնները պահելու եւ զանոնք սերունդէ սերունդ փոխանցելու:

Գամիշլիի ազգային երեք վարժարանները՝ Եփրատ մանկապարտէզ եւ Նախակրթարան, միացեալ միջնակարգ եւ երկրորդական կը շարունակեն գործել ու հայեցի դաստիարակութիւն ջամբել՝ հարիւրաւոր հայ աշակերտներ ընդունելով:

Պատերազմի տարիներուն եւ ներկայ տնտեսական դժուարութիւններուն մէջ ճեզիրէի դպրոցները շարունակեցին բաց պահել իրենց դռները, եւ որքան Նօսրացան մեր շարքերը այնքան ամրացաւ մեր կամքը: Անոնք հռետորական խօսքեր չեն, այլ՝ իրականութիւն մը, որ ապրեցանք եւ կը շարունակենք ապրիլ այն համոզումով, որ հայ մնալու համար պայքարել է բացի այլ ելք չունինք: Այդուհանդերձ պետք է միասնաբար մտածենք, թէ ինչպէ՛ս կրնանք ամուր մնալ, նորահաս սերունդին սիրոցնել մայրենին, վերատեսութեան ենթարկել դասագիրքերը, արդիականացնել դասաւանդութեան ոճը, գիրքերու մէջ ներկայացուած նիւթերը տեսերիզով մեկնաբանել, հայ երգն ու պարը արտադասարանային անբաժան օրակարգ դարձնել հայկական դպրոցներէն ներս, գնահատել հայերէնաւանդ ուսուցիչները, քաջալերել նոր միտքերն ու ծրագիրները:

Այս բոլորը կը կարօտին համախմբուած ու լարուած աշխատանքի, որուն ենթահող ունինք:

Ընկերային Կեանք

Նախքան պատերազմը՝ 2011-ին, գամիշլիահայութեան թուապատկերը կը հա-



շուեր, շուրջ 835-840 ընտանիք: Պատերազմի առաջին տարիներուն, հակառակ անոր, որ Գամիշլիի շրջանը համեմատաբար Սուրիոյ այլ քաղաքներու ակելի ապահով էր, ժողովուրդը ինքզինք անապահով զգալով դիմեց արտագաղթի եւ նկատառելի թիւով հայ ընտանիքներ կամ գինուորական ծառայութեան տարիքը հասնող երիտասարդներ հեռացան Գամիշլիէն, ուղղութիւն առնելով յատկապէս դէպի Երոպա եւ Յայաստան:

Ներկայիս Գամիշլիի հայ ընտանիքներուն թիւը կը հասնի շուրջ 550 ընտանիքի:

Գամիշլիի հայ գաղութը ճեղհրէի այլ շրջաններէն կը գատորոշուի իր Առաջնորդական փոխանորդարանով, որ վարչականօրէն կապուած է Բերիոյ Յայոց Թեմին ու կը գործէ վարչական, կրօնական, ազգային եւ յարաբերական այլ ոլորտներու մէջ, ընդգրկելով իր մէջ Տերիքի, Ռաս ուլ-Այնի, Յասիչէի շրջանները: Առաջնորդական փոխանորդն է հոգ2. Տ. Լեւոն Վրդ. Եղիայեան:

Առաջնորդական փոխանորդարանի կողքին կը գործէ Ս.Յակոբ Մծբնայ Յայրապետի եկեղեցին: Գամիշլիի Յայ համայնքը կը յատկանշուի իր եկեղեցասիրութեամբ ու բարեպաշտութեամբ, նամանաւանդ եկեղեցւոյ հանդէպ մեծ սերն ու կապուածութիւնը կը նշմարենք հին սերունդի մամիկներուն ու պապիկներուն մօտ, որոնք մեծ երկիրաճութեամբ եկեղեցի կը յաճախեն ոտաբոպիկ եւ գլուխին քողով մը ծածկուած: Երկար տարիներ շարունակ հաւատացեալներուն փափաքն էր ունենալ մեծ ու գեղեցիկ, ներկայանալի եկեղեցի մը, որպէսզի տօնական օրերուն բոլորը միասին մասնակցին Ս. Պատարագին, առանց որեւէ մէկը դուրսը՝ եկեղեցւոյ գաւիթը մնալով ձեւով մը ինքզինք գրկուած զգալու Ս. Պատարագի ներկայութենէն: Այդ իսկ պատճառով հաւատացեալները խնդրեցին օրուան Ազգային իշխանութենէն, որ իրենց համար նոր եկեղեցի մը կառուցէ:

Եկեղեցաշինութիւնը սկիզբ առաւ 2007-ին, սակայն զանազան պատճառներով կիսաւարտ մնաց. մինչեւ որ շուրջ տարի մը առաջ նախաձեռնութեամբ ճեղհրէի Առաջնորդական փոխանորդարանին եւ Ազգային իշխանութեան կարգ մը պատասխանատու դէմքերու, որոշում առնուեցաւ յանձնախումբեր կազմել ու գործի լծուիլ եկեղեցին իր անարտին հասցնելու համար:

Եկեղեցւոյ կողքին կը գործէ Գամիշլիի Ս.Յակոբ կիրակնօրեայ վարժարանը: Վար-

ժարանը ունի շուրջ 150 աշակերտ - աշակերտուհի, մանկապարտեզէն մինչեւ միջնակարգ:

Գամիշլիի մէջ քրիստոնեայ համայնքները տարիներ շարունակ իրարու հետ ապրած են որպէս մէկ ընտանիք, իրարմէ աղջիկ առած ու տուած են հաստատելով ինսամիական կապեր. այս խառն ամուսնութիւններն ալ իրենց կարգին երեւան հանած են ժխտական երեւոյթներ, որոնցմէ բոլորիս ծանօթ է հայախօսութեան նահանջը:

Արտագաղթը շատ ծանր ազդեցութիւն ձգեց նաեւ ընկերային կեանքին վրայ: Մարդուծի պակասը զգալի է ամենուրեք. սղաճը դարձեալ իր ճնշիչ ազդեցութիւնը կը ձգէ մարդոց կենցաղային իրավիճակին վրայ: Դժբախտաբար մարդոց մտածելակերպը, արժեքային համակարգը մասամբ տեղի տուած են: Սա որոշ չափով անմեղադրելի կը համարեմ այս դժուարին պայմաններուն մէջ, սակայն իսկապէս որ մտահոգիչ է իրավիճակը: Որոշ մարդիկ միշտ ակնկալութիւն մը ունին «ազգ»-էն, փոխարէնը իրենք ոչ մէկ պարտաւորութիւն կը զգան: Այս ալ օժանդակութիւններուն բացասական կողմն է:

Այս պայմաններուն մէջ առաջնահերթ կը նկատենք երիտասարդ մարդուծի պատրաստութիւնը, մարդոց գործ հայթայթելու միջոցներու որոնումը, որոնց կարգին փոխանորդարանին որոշ լիազօրութիւններու տրամադրումը, ըստ կարգ ու պատշաճին:

ՅԱՍԻՉԷ

Յասիչէի Յայկական գաղութը, որ կը գտնուի Սուրիոյ արեւելեան կողմը, դարձեալ իր գործուն դերակատարութիւնը ունի ճեղհրէի շրջանէն ներս:

Յոն կը գործէ Ազգ. Մեսրոպեան Նախակրթարանը, հայկական եկեղեցին՝ Ս. Յովհաննու Կարապետը, ՍՕԽ-ի «Լոռի» մասնաճիւղը, նորակազմ Ս. Յովհաննու Կիրակնօրեայ վարժարանը, նորակազմ «Գարուն» երգչախումբը, ինչպէս նաեւ ՅՄԸՄ-ի ակումբը:

Եկեղեցւոյ ու վարժարանի ինսամակալութիւնը ստանձնած է Յասիչէի թաղական խորհուրդը: Եկեղեցւոյ շրջափակի կողքին կը գտնուի Յայոց Յեղասպանութեան նուիրուած յուշարձան մը, իսկ բակին աջակողմը եկեղեցւոյ դահլիճը, ձախակողմը՝ Կիրակնօրեայ վարժարանի վերանորոգուած սրահը, իսկ եկեղեցւոյ կողքին կը գտնուի նորակառոյց երիցատունը:



Պատերազմն առաջ հայ ընտանիքներուն թիւը կը հասնէր շուրջ 85 ընտանիքի. Բնակիչները ընդհանրապէս եղած են պետութեան մօտ պաշտօնեաներ կամ ալ արհեստաւորներ: Եկեղեցւոյ Յոգեւոր Յովիւն Էր Տէր Մեսրոպ Ա. Բիւյ. Պետրոսեան, որ անխոնջ ծառայութեամբ եւ մեծ նուիրումով եւ մեծ անհրաժեշտութեամբ աւելի քան երեք տասնամեակ ծառայեց, որպէս հոգեւոր մշակ եւ Ազգային վարժարանի տնօրէն: Ան նաեւ օրուան Բերիոյ Թեմի Առաջնորդին կողմէ նշանակուած էր Ռաս ուլ Այնի շրջանի այցելու հովիւ: Ան գաղութիս հոգեւորականաց դասուն եւ մանաւանդ պետական պաշտօնեութեան կողմէ յարգուած ու սիրուած անձնաւորութիւն մըն էր, իր հաւասարակշռուած ու մտերմիկ յարաբերութիւններուն շնորհիւ:

2015-ին խումբ մը ծայրայեղ իսլամական ահաբեկիչներ կը յարձակին Յասիջէ քաղաքին վրայ եւ ժողովուրդը խուճապի մատնուած ահ ու դողի մէջ, հագիւ իր հագուստները հագած խոյս կու տայ Գամիշլի, եւ ճեգիրէի այլ շրջաններ: Տէր հայրը եւ քանի մը կամաւոր հայ ու քրիստոնեայ երիտասարդներ կը մնան Յասիջէ՝ պահպանելու համար եկեղեցին եւ անոր շրջակայ տունները կողոպուտէ: Շուրջ ամիս մը ետք, երբ քաղաքը դարձեալ իր ապահով վիճակը կը ստանայ, ժողովուրդը կրկին կը վերադառնայ իր բնակավայրը:

Սուրիական պատերազմի առաջին տարիներուն ժողովուրդի մեծ մասը մտահոգ էր: Բաղաքին մէջ առեւանգումներ տեղի կ'ունենային՝ կաշառք ստանալու նպատակով. քաղաքը խառնիճաղանճ էր, առեւանգուողներուն մէջ հայեր ալ կ'ըլլային յաճախ: Այդ իսկ պատճառով կարգ մը ընտանիքներ գաղթեցին, ոմանք՝ շրջանէն, ոմանք՝ երկրէն դուրս: Նոյն տարին տէր հայրը կը հիւանդանայ ու կարճ ժամանակաշրջանի մը մէջ կը վախճանի 17 Փետրուար 2016-ին, ու քահանայական թաղման կարգէն ետք հոժ ժողովրդային բազմութեամբ կը թաղուի եկեղեցւոյ շրջափակին մէջ:

Յասիջէի հայ գաղութին հոգեւոր կարիքները հոգալու համար թեմի առաջնորդը կը նշանակէ Գամիշլիի հոգեւոր հովիւ Տ. Պսակ Բիւյ. Պերպերեանը որպէս այցելու քահանայ:

Ըստ հասկացումի տէր հոր վախճանումէն ետք կը ծառայէ Յասիջէի Յայ գաղութի հաւատացեալներուն, յաճախ այցելութիւններ կատարելով՝ ամսական դրութեամբ

եամբ Պատարագ մատուցելով Տաղաւար տօներուն, ինչպէս նաեւ քառասնօրեայ պահեցողութեան եւ Աւագ Շաբթուան ու Ս. Զատկուան առիթներով:

Յասիջէի ապահովական պայմանները համեմատաբար պատերազմի առաջին տարիներուն շատ աւելի նպաստաւոր են ներկայիս, սակայն Թուրքիոյ հովանաւորութիւնը եւ աջակցութիւնը վայելող Ռաս ուլ Այնի ահաբեկչական ուժերը գրաւելով Յասի-



ջէի ջրամատակարարման կայանը, կ'արգիլեն ջուրի մատակարարումը երկու միլիոն հաշուող ժողովուրդին: Կառավարութիւնը ստիպուած քաղաքի կարգ մը գլխաւոր փողոցներուն վրայ ջրամբարներ գետեղած է, որպէսզի ժողովուրդը իր պետքերը հոգայ:

Յասիջէի թաղականութեան համար մեծ մտահոգութիւն էր ջուրի մատակարարման հարցը, մանաւանդ որ մեծ թիւով աշակերտութիւն ունէր դպրոցէն ներս, հետեւաբար շրջանի բարեսիրական հաստատութիւններուն հետ կապ պահելով կրցաւ ապահովել հինգ հազար լիթր պարունակող մեծ ջրամբար մը՝ աշակերտութեան ծարաւը յագեցնելու համար:

Այդ ուղղութեամբ թաղականութիւնը որոշում առաւ ջրի որ մը փորել դպրոցի բակին մէջ, մաքրութեան գործածութեան համար: Ծրագիրը իրագործուեցաւ եւ 15 մէթր խորութենէն աղի ջուր ելաւ, որ ի վերջոյ իր նպատակին պիտի ծառայէր:

Յակառակ կենցաղային ու տնտեսական մարտահրաւերներուն, Յասիջէի հայ գաղութը հաւաքական աննկուն կամքով, ընտելանալով օրուան պայմաններուն, կը ջանայ իր կեանքը բնականոն հունի մէջ պահել: Թաղականութիւնը, ազգայիններն ու միութենական մարմինները, նամանաւանդ անց-

Նող այս վերջին տարիներուն, միաձեռն կ'աշխատին զանազան ձեռնարկներ կազմակերպելով՝ համախմբելու երիտասարդութիւնը եկեղեցւոյ ու ակումբի հովանիին տակ:

Ազգային փոխանորդարանը վերահաստատեց Ս. Յովհաննու եկեղեցւոյ անուանակոչութեան տօնը, պահելով անհնդական մատաղի պատրաստութիւնը ու ճեզիրէի շրջանի ժողովուրդը հրաւիրելով հռչակեց ուխտի օր: Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդ Յոգձ. Յայր Լեւոն Վ. Եղիայեանի ջանքերով հիմնուեցաւ Յասիչէի Ս. Յովհաննու Կիրակնօրեայ վարժարանը, ուր ներկայիս կը յաճախեն շուրջ քառասուն մանուկ: Վերջերս հիմնուեցաւ «Գարուն» երիտասարդական երգչախումբը, որ իր անդրանիկ ելոյթը ունեցաւ ՀՀ Անկախութեան 105-ամեակին առիթով: Վերանորոգուեցաւ Ս. Յովհաննու եկեղեցին եւ օժտուեցաւ նոր եկեղեցական սպասներով. դարձեալ վերանորոգութեան ենթարկուեցաւ եկեղեցւոյ կից գտնուող սենեակը ու տրամադրուեցաւ Կիրակնօրեայ վարժարանին: Յոգձ. հայր սուրբին ջանքերով եւ օժանդակութեամբ բարեսիրական «ՍԱՆ ՄԱՐԻՂԱՍ» հաստատութեան ու թաղականութեան կազմին հիմնովին վերանորոգուեցաւ եկեղեցւոյ երիցատունը, որուն բացումը կատարեց Բերիոյ Յայրոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Ս. Եպս. Ազգարեան:

Յասիչէի ՍՕԽ-ի «Լոռի» մասնաճիւղը եւս ունի իր դրական ներկայութիւնը: ՍՕԽ-ի Տիկնանցը բազմաթիւ նախաձեռնութիւններով կը թարմացնէ Յասիչէի տիկնաններուն ընկերային կեանքը:

Ի վերջոյ եկեղեցւոյ եւ Ազգային վարժարանին կողքին կը գտնուի ՀՄԸՄ-ի հայկական ակումբը, որ հայ ընտանիքներուն ու մանաւանդ մեր երիտասարդութեան համար հպարտութեան եւ պատկանելիութեան խորհրդանիշ է: Ինչպէս Ս. Եկեղեցին նոյնպէս ալ մեր հայկական ակումբը իր թելերուն տակ առած ու հաւաքած է հայութիւնը: Յասիչէի ամրան ահռելի տօթին, հայրոց ակումբը լաւագոյն ապաստան է բոլորին համար, բակին մէջտեղ գտնուող անապատին շուրջ նստիլը ու գաւաթ մը զովացուցիչ ըմպելով ոտնազնդակի մրցախաղերուն հետեւիլը, իսկապէս մեծ հաճոյք է: Ձմեռն ալ ունի իր խորհրդաւորութիւնը. վառարանին շուրջ նստելով տաք թէյ մը ամնելը, տարբեր գոհունակութիւն մը կը ձգէ մար-

դու սրտին մէջ: Ազգային եւ այլ տօնական առիթներուն, ինչպէս նաեւ անհատական խրախճանքներուն համար որպէս նախընտրելի վայր նկատի առնուած է միշտ:

ՌԱՍ ՈՒԼ-ԱՅՆ

Ռաս ուլ-Այնը Յասիչէի նահանգին հիւսիսային շրջանը գտնուող, Թուրքիոյ սահմանակից գիւղաքաղաք մըն է: 1915-ի Ցեղասպանութենէն ետք դարձած է հայ ժողովուրդի ապաստաններէն մէկը, ինչպէս՝ Տեր Չօրը: Յոն կը գործէր Ազգ. Նահատակաց նախակրթարանը, նաեւ հայկական եկեղեցին՝ Ս. Յակոբը, որուն խնամատարութիւնը ստանձնած էր եկեղեցւոյ թաղականութիւնը, գլխաւորութեամբ տոքթ. Յովհաննէս Սաաթճեանի: Եկեղեցւոյ շրջափակին մէջ կը գտնուէր նաեւ երիցատունը, ինչպէս նաեւ՝ Յայրոց Ցեղասպանութեան նուիրուած յուշարձանը:

Նախքան սուրիական պատերազմը, 2011-ին հայ ընտանիքներուն թիւը կը հասնէր շուրջ 14 ընտանիքի, որոնք յետ-ցեղաս-



պանութեան այնտեղ հաստատուած էին ու խաղաղ կեանք մը կ'ապրէին՝ իւրաքանչիւրը իր օրապահիկը ապահովելով, ոմանք որպէս արհեստաւորներ, ոմանք հողագործութեան գործին նուիրուած, ոմանք ելեկտրական գործիքներու նորոգութեամբ զբաղուած: Ունէինք նշանաւոր ճաշարանատըր մը ՍԵՐՈԲ անունով, որուն ճաշարանը կը կրէր իր անունը, եւ ճեզիրէի բոլոր շրջաններէն յաճախորդներ կ'ընդունէր: Կանայք տանտիկին էին՝ իրենց զաւակներու հայեցի դաստիարակութեամբ զբաղուած, իսկ ոմանք Ազգային վարժարանէն ներս ուսուցչութեան ասպարէզին նուիրուած. ունէինք ամենահին ու փորձառու դեղագործուհին՝ ՍՐԲՈՒՆ անունով, որ զանազան բոյսեր օգտագործելով դեղերու պատրաստութիւն



կը կատարեր:

Ռաս ուլ-Այնի Ս.Յակոբ եկեղեցին անցեալին ունեցած է իր ծխատեր քահանան, սակայն տեղւոյն շրջանի բնակչութեան թիւին նուազելուն առընթեր, այլազան պատճառներով եկեղեցին այս անգամ ունեցաւ իր այցելու քահանան, Յասիչի Ս. Յովհաննու եկեղեցւոյ Յոգեւոր Յովիւր՝ Տէր Մեսրոպ Ա. Քհնյ. Պետրոսեանը, որ հերթական կերպով շրջանը կ'այցելէր՝ հոգալով բնակիչներուն հոգեւոր կարիքները: Ապագային տեր հօր անկայուն առողջապահական իրավիճակին պատճառով զինք յաջորդեց Գամիշլիի Յոգեւոր Յովիւ Տէր Պսակ Քհնյ. Պերպերեանը՝ դարձեալ որպէս այցելու քահանայ: Քահանայ հայրը յաճախ այցելութիւններ կը կատարէր այնտեղ, մերթ Պատարագ մատուցանելու, մերթ ալ Տաղաւար տօներուն եւ Ս. Յարութեան տօնին ներկայանալու:

Սուրիական պատերազմի ընթացքին զինեալ ահաբեկչական խումբերը երկու անգամ յարձակեցան ու գրաւեցին քաղաքը, եւ առաջին գրաւումէն իսկ բոլոր հայ ընտանիքները ճարահատ խոյս տալով հեռացան Ռաս ուլ-Այնէն հաստատուելով Ճեզիրէի զանազան շրջաններ. ոմանք ալ հետագային՝ արտասահման: Բարեբախտաբար քաղաքին առաջին գրաւումէն եւ ազատագրումէն ետք, առիթը ունեցանք այնտեղ երթալու եւ քննելու իրավիճակը. այցելեցինք Ազգային վարժարան, որուն պատերը փամփուշտներու հետքեր կը կրէին եւ տեսանք աշակերտներու նստարաններուն կոտորուած վիճակը, փոշիոտ եւ կեղտոտ: Փառք Տիրոջ, որ վնասները ձեւով մը տանելի էին: Յոնկէ անցանք եկեղեցւոյ շրջափակը, որուն մուտքին տեսանք փոս մը, որ խճաքարերով լեցուած էր, ըստ երեւոյթի ական մը կամ ռումբ մը պայթած էր: Այնտեղ ալ շօշափեցինք աստուածային նախախնամութիւնը, եկեղեցւոյ պատերը դուրսէն փամփուշտով քիչ մը վնասուած էին, սակայն ներսէն՝ տարօրինակ կերպով պահպանուած:

Դժբախտաբար կարճ ժամանակ մը ետք, Ռաս ուլ-Այնը դարձեալ գրաւուեցաւ Թուրքիոյ զօրակցութիւնը եւ օժանդակութիւնը վայելող ահաբեկիչներու կողմէ՝ 2019 Յոկտեմբերին ու մինչեւ այսօր գրաւուած կը մնայ: Ներկայիս ոչ մէկ հայ բնակիչ մնացած է այնտեղ, բացի պրն. Վրէժ Զէշիշեանէն, որ անձնուէր ու յօժարակամ կերպով կը բնակի այնտեղ, հակառակ անոր որ իր

կինն ու զաւակները փոխադրուած են հոնկէ ու հաստատուած՝ Յասիչէ, սակայն ան պընդած է ըսելով որ կարելի չէ իրեն համար ապրիլ իր ծննդավայրէն դուրս: Ան կարելի եղածին չափ, իր պայմաններուն համեմատ, հսկողութիւն կը կատարէ եկեղեցւոյ եւ Ազգ. վարժարանին, յարատեւ կապի մէջ է Ճեզիրէի Առաջնորդական փոխանորդ Յոգշ. Տ. Լեւոն Եղիայեանի եւ Ազգային պատասխանատուներուն հետ:

Տէրիք

Մալիքիէ կամ Տէրիք Յասիչիի նահանգին Յիւսիսարեւելեան շրջանը, Թուրքիոյ եւ Իրաքի սահմանին մօտ գտնուող զիւղաքաղաք մըն է: 1915-ի Յեղասպանութենէն ետք դարձեալ դարձած է հայ ժողովուրդի գաղթածախներէն մէկը, ինչպէս՝ Թուրքիոյ մերձակայ բոլոր շրջանները:



Յոն կը գործէ Ազգ. Ազատութիւն նախակրթարանը, հայկական եկեղեցին՝ Ս. Աստուածածինը, ինչպէս նաեւ ՍՕԽ-ի «Սարդարապատ» մասնաճիւղը: Եկեղեցւոյ ու վարժարանի խնամակալութիւնը ստանձնած է Տէրիքի թաղական խորհուրդը: Եկեղեցւոյ շրջափակին կողքին կը գտնուի Յայոց Յեղասպանութեան նուիրուած յուշարձան մը, իսկ բակին միւս ծայրը՝ Երիցատունը: Վարժարանը ունի շատ գեղեցիկ սրահ մը, որ կ'օգտագործուի տօնական զանազան առիթներուն:

Պատերազմէն առաջ հայ ընտանիքներուն թիւը կը հասնէր շուրջ 80 ընտանիքի: Բնակիչները ընդհանրապէս հողագործութեամբ զբաղող կամ ալ արհեստաւոր են: Յամալսարանի չգոյութեան պատճառով երիտասարդները կը ստիպուէին տեղափոխուիլ այլ շրջաններ՝ իրենց ուսումը շարունակելու համար, իսկ փոքրերը կը յաճախէին Ազգային վարժարան:

Տերիքի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւն էր Տէր Տաճատ Ա. Բնկ. Յակոբեանը, որ աւելի քան երեսուն հինգ տարի ծառայեց անսակարկ կերպով ու մեծ նուիրումով ծառայեց՝ որպէս հոգեւոր մշակ եւ հայերէնաւանդ ուսուցիչ Ազգային Ազատութիւն վարժարանէն ներս: Ան իր շուրջ հաւաքած էր խումբ մը հաւատացեալներ ու ձայնաւոր տիկիներ, անոնց սորվեցուցած էր Ս.Պարարագի երգեցողութիւնը եւ այլ շարականներ ու կազմած՝ եկեղեցւոյ դպրաց դասը:

Բահանայ հայրը 2018-ին տարիքին յառաջացման, մարմնական ու ֆիզիքական տկարութեան ու անկարողութեան պատճառով հանգստեան կը կոչուի, ի պատասխան օրուան թեմի առաջնորդին կատարած առաջարկին: Ապա կը փոխադրուի Գամիշլի, որմէ երկու տարի ետք՝ Յալէպ ու հոն կը վախճանի Օգոստոս 2021-ին:

Տերիքի հայ գաղութին հոգեւոր կարիքները հոգալու համար թեմիս առաջնորդին կողմէ կը նշանակուի Գամիշլիի Տ. Պսակ Բնկ. Պերպերեան որպէս այցելու քահանայ:

Բահանայ հայրը 2018-էն ի վեր կը ծառայէ Տերիքի հայ գաղութի հաւատացեալներուն, մշտապէս այցելութիւններ կը կատարէ այնտեղ, ամսական դրութեամբ Պատարագ կը մատուցանէ, Տաղաւար տօներուն եւ խորհրդակատարութիւններուն, Աւագ Շաբթուան ընթացքին եւ Ս. Չատկին:

Պատերազմի տարիներուն, բարեբախտաբար, Ճեզիրէի այս շրջանը համեմատաբար Սուրիոյ տարածքին գտնուող գանազան շրջաններու, շատ աւելի կայուն էր ու հանդարտ. Տերիքի շրջանի գրեթէ մարդկային, կենսական բոլոր կարիքները ապահովուած են, սկսեալ վառելանիւթէն հասնելով մինչեւ երթելու գանազան շրջաններ, նոյնիսկ՝ արտասահման: Հակառակ այս ապահով իրավիճակին, տեղւոյն բնակիչներէն շատեր երկրէն գաղթեցին: Գաղթողներուն մեծամասնութիւնը այլ համայնքներէ են:

Տերիքի շրջանի որոշ չափով կայուն եւ ապահով ըլլալը, ինչպէս նաեւ նիւթական կարողութիւնները առիթ հանդիսացան քաղաքի զարգացման ու յառաջացման: Գաղութի մակարդակով անցնող քանի մը տարիներու ընթացքին Ազգային վարժարանը օժտուեցաւ նոր յարկաբաժինով մը, որուն բացումը կատարեց Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մակար Եպս. Ազգարեանը: Եկեղեցին օժտուեցաւ երկու նոր կալուածներով,

որոնցմէ մին երիցատուն դարձաւ, որուն բացումը դարձեալ կատարեց Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մակար Եպս. Ազգարեանը, իսկ միւսը դպրոցին միացուեցաւ: Ս. Եկեղեցին, ներառեալ դահլիճը, Ազգային վարժարանը վերանորոգութեան ենթարկուեցան, նոր ելեկտրածին գնուեցաւ, ինչպէս նաեւ դպրոցին համար հանրակառք գնելու ծրագիր դրուեցաւ:

Տերիքի պատմութեան մէջ, եկեղեցական ու ազգային կեանքը այնքան եռուն չէր եղած, որքան անցնող այս քանի մը տարիներուն:



Ս. Աստուածածնայ տօնը՝ ՅԱՆՆԱՅԷ, օրուան թեմիս առաջնորդին կողմէ հռչակուեցաւ Տերիքի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ուխտի օր: Հետեւաբար այս առիթով Ճեզիրէի գանազան շրջաններէն ուխտաւորներ կ'այցելէն եկեղեցի, ուր այդ առիթով տեղի կ'ունենան հանդիսաւոր Պատարագ եւ մատաղի օրհնութիւն:

Երկա՛ր տարիներէ ի վեր դադրած Կիրակնօրեայ վարժարանը դարձեալ կը վերակազմաւորուի՝ դառնալով գաղութիս ամենէն աշխուժ եւ եռանդուն կազմակերպութիւնը: Վարժարանը շաբաթական հերթական հանդիպումներով ամբողջ տարուան ընթացքին երեսունէ աւելի աշակերտներուն կը ջամբէ հայեցի դաստիարակութիւն եւ հոգեւոր սնունդ:

ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը 27 Փետրուար 2022-ին նոր կորիզ կը յառաջացնէ Տերիքի մէջ:

ՍՕԽ-ի «Սարդարապատ» մասնաճիւղը գանազան առիթներով ձեռնարկներ կը կազմակերպէ եւ իր ներդրումը կ'ունենայ ընկերային կեանքէն ներս:

Տերիքի հայութիւնը, փաստօրէն, իր «ոսկեդար»-ը կ'ապրի:

**Այս բաժինը պատրաստեցին՝
Պսակ Բնկ. Պերպերեան
Բժշկ. Մարի Մելքոն
Յակոբ Սրկ. Պարսումեան
Խաչիկ Մելքոնեան**

«ԳԱՆՁԱՍԱՐ»-Ի 30-ԱՄԵԱԿ



ՄԵ՛Ր «ԳԱՆՁԱՍԱՐ»

Պերճուհի Ալետեան

Օդանաւը աստիճանաբար վայրէջք կատարեց: Անիւները փափուկ հպեցան ասֆալտին, ճամբորդները խանդավառ ծափահարեցին:

Երկինք բարձրանալը անկասկած հաճելի զգացում է, բայց երեք ժամեր հոն սաւառնելով հասնիլ հող, յատկապէս ծննդավայր՝ սպասուած ու ցանկալի պահն է:



Կայուն հողը՝ ապահովութիւն է:

Ութ տարի առաջ, երբ հեռացանք այս քաղաքէն, այսինքն՝ ծննդավայրէս կորսնցնելով շա՛տ բաներ, ամէն ինչ անապահով էր. Իսկ այս մոլորակի վրայ ապահովութիւն բառը պայմանական է, երկինքին մէջ ծփացող փուչիկի նման, որուն աներեւոյթ թելը երկրագունդի ճակատագիրը որոշող մեծերու ձեռքն է:

Ծննդավայրը՝ յուշերու հսկայ պատկերագրի մը անհատնում էջերն են. Կը թերթեմ զգուշօրէն, սիրելի պատկերներու դիմաց կանգ առնելով.

«Գանձասար» շաբաթաթերթ...

Կը զանգեմ «Գանձասար»-ի խմբագրուհի Ժրաջան ու հիւրընկալ Չարմիկ Պօղիկեանին, փափաք կը յայտնեմ շաբաթ առաւօտ տեսնուիլ գրասենեակին մէջ:

– Զինգ յարկ բարձրանալը մութ աստիճաններէն դժուար չէ՞... հասկցայ... սիրով, սիրով. – ան խմբագրի հմտութեամբ արդէն կը վերլուծէ ցանկութիւնս ու կը ժամադրուի:

Կանգնած եմ շէնքին դիմաց ու...

Փա՛ռք, հազա՛ր փառք, որ շէնքը կանգուն է, որ «Գանձասար»-ի խմբագրութիւնը վերադարձած է իր «տունը», որ ինչպէս հերոսաբար գործեց պատերազմական խառնօրերուն, կը շարունակէ իր երթը:

Կը միացնեմ ձեռքի հեռաձայնիս լուսարձակը, օգտուելով «թեքնոլոճի»-ի բարեմասնութիւնը ներկայացնող բարիքէն: Պատերազմի շրջանին, երբ ստիպուած էինք լքել մեր տունը եւ փոխադրուիլ «մասամբ» աւելի ապահով վայր, համացանցն ու էլեկտրական հոսանքը անհասանելի էին ու ես փոխադրելի համակարգիչիս գործիքը շալկած կը բարձրանայի նոյն այս աստիճաններէն: «Գանձասար»-ի գրասենեակը տակաւին յամառօրէն կը գործէր, էլեկտրական հոսանք արտադրող սարք կար եւ նուիրեալ աշխատողներ... պայթումներ, ցնցումներ իսկ գրասենեակէն ներս մեղուափեթակ...

Յետոյ, ինչպէս արդէն սովորական երեւոյթ էր քաղաքին մէջ «Գանձասար»-ի խմբագրութիւնը եւս, հաւաքած անհրաժեշտ սարքերը փոխադրուեցաւ իբր աւելի ապահով շրջան (կարծես քաղաքին մէջ ապահով շրջան կար), յետոյ ուրիշ ու ամենակարեւորը գործեց հերոսաբար երկրի ներքին վիճակի պատկերը ու գաղութի լուրերը սփռելով

աշխարհին:

Կը բարձրանամ մեկ շունչով, շէքը ամայի է, բայց հարազատ շունչ կայ:

Հինգերորդ յարկի գրասենեակի դրան առջեւ կ'ողջագուրուինք, կոկորդս կը սեղմուի:



Դուռը դանդաղ ետ կ'երթայ, անցքը կիսամուր է, ձախ կողմը գտնուող աշխատանքային սենեակը դատարկ է:

Յիշողութեան լոյսը կը կայծկլտայ, սենեակը կը լուսաւորուի:

Ներսը, գրասեղանին ետեւ լուսահոգի օրիորդ Ալիս Գաթրճեանը, գլուխը կախ, կարմիր գրիչը ձեռքին սրբագրութեան իր աշխատանքին մէջ խորասուզուած:

Ան կը բարձրացնէ գլուխը:

- Գիտե՞ս քանի մը տող կարդալով անմիջապէս կը հասկնամ որ գրութիւնդ է, - ներողամիտ կը ժպտի ան:

Աշխոյժ, աշխատասեր, կոկիկ ու բժախընդիր հայերէնաւանդ ուսուցչուհին ու «Գանձասար»-ի սրբագրիչը ջանասիրաբար աշխատեցաւ տալով իր լաւագոյնը, ինչպէս շատ ու շատ հայ ուսուցչուհիներ գոհացաւ վտիտ ամսականով եւ ուրախացաւ իր աշակերտներուն նուաճումներով...

Կողքին տղաքն են, անդադար բլբլացող Ալեքսանն ու հանդարտ, հաւասարակշռուած Տէր Պարգելը, դիմացը՝ Անին, անդին՝ ձեւաւորող երիտասարդը:

Պարոն Խաչիկ Շահինեանը երկարաշունչ իր խմբագրականը կը դնէ գրասեղանին. լրջախոհ ու հետամուտ ան ալ երկար տարիներ անխոնջ աշխատեցաւ, նախ Մարի Մերտիսանեան խմբագիրին կողքին՝ որպէս փոխխմբագիր, ապա՝ խմբագիր: Յետոյ տեղի ունեցաւ սերնդափոխութիւն եւ Չարմիկ Պօղիկեանը՝ խանդավառ, ջանասեր նոր խմբագիրը ստանձնեց աշխատանքը:

Ու շաբաթաթերթը գործեց անխափան:

Կը վայելէմ Չարմիկին սիրառատ հիւրընկալութիւնը, թերթի ու մելանի բոյրը:

Սուրճի գաւաթին իւրաքանչիւր ումպին հետ առօրեայ մտահոգութիւններ, ներքին հարցեր, հայրենիք, Արցախ... ինչքան հարցեր ունինք երբ մարդ ըլլալու կողքին որպէս հայ կը մտածենք:

- Ինչպէ՞ս տեսար քաղաքը:

Այս հարցումը կը հնչէ ամենուրեք, իսկ ես կը դժուարանամ պատասխանել:

Ծննդավայրը աղջամուղջի մէջ ծփացող յիշողութիւնն է, հայրենի տունը, կիսաքանդ, ամայի... Քառասուն Մանկանց վերանորոգ եկեղեցին, «Գանձասար» շաբաթաթերթը, մէկ խօսքով՝ փոքրիկ այն Հայաստանը, որ այս գաղութը ստեղծած էր:

Քաղա՛քը.. կը նախընտրեմ անցնիլ առաջ եւ յուսալ, որ օր մը ամեն ինչ կը բարենորոգուի, կը վերակառուցուի:

Հաւատալ եւ յուսալ...

Առանց յոյսի կարելի չէ գոյատեւել:

Եւ...

«Գանձասար»-ը արդէն երեսունամեակը կը բոլորէ յաղթական, առոյգ, նորութիւններու հետ քայլ պահելու իր տեսլականով:

Հաստաբուն ծառի նման մնաս կանգուն, դիմացկուն, պտղառատ ու ծաղկուն,

Մեր «Գանձասար»:



ՉՈՐՍ ՏԱՐԻ «ԳԱՆՁԱՍԱՐ»-ԻՆ ՀԵՏ

Առաքել Աբղ. Գառեհճեան

2020 տարուան Յունուար ամսուան օրերէն մէկն էր: Նստած էի Դպրեվանքին մէջ ինծի յատկացուած գրասեղանին ետեւ: Կը խորհրդածէի Դպրեվանքին մասին: Յանկարծ մտածումն թուղթին յանձնելու գաղա-

բոլոր մանրամասնութիւնները՝ Ս. Նահատակաց Խորանը, Սարդարապատի կրկնօրինակը, Յեղասպանութեան յուշարձանը, պատին վրայ հանգչած հայկական ազգային-մշակութային քանդակները, վե-



փարը յղացայ: Հայերէն լեզուի տետրակէ եջ մը պատռեցի եւ սկսայ գրել: Մտածանապարհս սկիզբ առաւ Կիլիկիոյ պարպումին սրտաճմլիկ պատահարէն, հասայ Անթիլիաս, ներկայ գտնուեցայ Դպրեվանքի բացման հանդիսութեան (1930), Դպրեվանքի մեծ ընտանիքին հետ բարձրացայ Պիքֆայա (1977-1978), դիտեցի անոր համալիրին

հարանը, Լուսաւորիչին աղբիւրը, Ս. Աստուածածին մատուռ-եկեղեցին, տուն-շէնքն ու անոր վրայ արձանագրուած «Խորի՛՛ր» գրութիւնը, տուն-շէնքին մուտքին գտնուող խորանիկը, ընդունարանը, սերտարանը, դպրոցը եւ ննջասենեակները: Սօտեցած էի գրութեանս ավարտին, երբ յանկարծ տեսուչ հայր սուրբը ներս մտաւ ու ժղպ-

տաղէմ հարցուց. *«Ի՞նչ կ'ընես»*: Պահ մը պապանձեցայ. եթէ *«դաս կ'ընես»* պատասխանէի, ստած պիտի ըլլայի, իսկ եթէ *«շարդորութիւն մը կը գրես»* պատասխանէի, պիտի ըսեր. *«Ինչո՞ւ դաս չես ընէր»*: Ուստի, արագօրէն թուղթը հայր սուրբին յանձնեցի: Տեսուչ հայր սուրբը սկսաւ լրջաղէմ կարդալ, յանկարծ ժպիտ մը գծագրուեցաւ անոր երեսին եւ ըսաւ. *«Չէի գիտեր, թէ այսքան լաւ կերպով շարահիւսելու եւ գրելու կարողութիւնը ունիս»*: Այդ պահուն *«շունչ մը քաշեցի»*՝ ուրախանալով, որ յանդիմանութենէ պրծած եմ: Հայր սուրբը շարունակեց կարդալ: Գրութեանս ընթերցումը աւարտելէ ետք, Տեսուչը առաջարկեց, որ գրութիւնս «Գանձասար» թերթին ուղարկեմ: Պատասխանեցի. *«Հայր սուրբ, իմ գրութիւնը սխալներով լեցուն է, ո՞ր թերթը պիտի ընդունի զայն տպել»*: Տեսուչը ըսաւ. *«Գրութիւնը «մաքուրի՛ անցուր» եւ ինձի՛ բեր: Ես կը սրբազրեմ եւ կ'ուղարկեմ «Գանձասար» թերթին: Խմբագրուիին կը ճանչնամ, շատ ազնիւ տիկին մըն է: Վստահ եմ, որ ուրախութեամբ պիտի ընդառնաչէ մեր փափաքին: Երկրորդ. այս գրութեան հրապարակումը թէ՛ քեզի եւ թէ՛ Դպրեվանքին համար մեծ ուրախութիւն է»*: Այս մէկը արտասանելէ ետք, Հայր սուրբը դուրս եկաւ դասարանէն, իսկ ես Հայերէն լեզուի տեսորակէս ևոր թուղթ մը խլեցի եւ սկսայ *«մաքուրի անցընել»*: Տասը վայրկեան ետք, արդէն կը թակէի տեսուչ հայր սուրբին դուռը: Հայր սուրբը թուղթը առնելով ըսաւ. *«Վաղը առաւօտ կը խօսիմք»*: Առաւօտուն Հայր սուրբը կարմիր քարտեզի վերածուած թուղթը տալով, յանձնարարեց, որ *«մաքուրի անցընես»* եւ դարձեալ յանձնեմ: Թուղթս չորս անգամ սրբագրուելէ ետք, 29 Յունուար 2020-ին ուղարկեցի կը «Գանձասար»-ի խմբագրատուն: Ես Թովմասեան հոգեբանութեամբ տակաւին չէի հաւատար, որ խմբագրուիին պիտի ընդունէր գրութիւնս տպել: 31 Յունուարի առաւօտեան, դասընկերներէս մէկը մօտենալով իմացուց, թէ տեսուչ հայր սուրբը զիս կը փնտռէ: Յովազի արագութեամբ փութացի տեսչարան: Տակաւին չմտած, Հայր սուրբը ըսաւ. *«Քեզի չըսի՞, որ գրութիւնդ պիտի տպուի: Եկուր եւ նայէ՛»*:

Տեսուչ հայր սուրբն ու «Գանձասար» թերթին խմբագրուիին Հայերէն լեզուին հանդէպ ունեցած մասնակի սերս վերածեցին անսահման սիրոյ: Անձնական դասացուցակիս մէջ Հայերէն լեզուի դասապահե-

րը արդէն ցայտուն (highlight) էին: Անհամբեր կը սպասէի Հայոց լեզուի դասապահերուն: Դասընկերներս կը նեղանային Հայերէն լեզուի պահերուն հարցուցած տեղի թէ անտեղի հարցումներէս եւ մանաւանդ գրաւորի առաջարկներուն արտասանած մեքենայական (automatically) «այո»-ներէս: Ուղղագրական սխալներս տակաւ առ տակաւ նուազեցան: Գրական գիրքերու ընթերցման սերս առաւել աճեցաւ, ինչպէս նաեւ շարդորական պարտականութիւններու առաջարկներս աւելցան: Չարմանալիօրէն սկսայ սիրել հայ լեզուն, հայ երգը, հայ ազգը եւ մեր գոյգ հայրենիքները՝ Հայաստանն ու Արցախը: Երբեմնի մարզանքը սիրող տղան, վերածուեցաւ նստակեաց գործերը սիրող անձի: 2021-ին սկսայ աշխատակցիլ նաեւ Լիբանանի մէջ ի լոյս բերուող «Ազգակ» թերթին: Ահաւասիկ կը տեսնէք, թէ աստուածապարգէւ շնորհքներուն նկատմամբ տածուած քաջալերանքն ու գնահատանքը ինչպիսի՞ հրաշքներ կը գործեն ու փոփոխութիւններ կը բերեն մարդուս կեանքին մէջ:

«Գանձասար» թերթը միշտ յատուկ տեղ ունեցած է սիրտիս ամենէն նուիրական սենեակին մէջ: Մանկութեանս օրերուն, խանդավառութեամբ եւ անհամբերութեամբ կը սպասէի «Գանձասար» թերթին շաբաթական լուսաբերումին, որպէսզի անոր մէջէն «Կլու»-ն առնելով մօրս յանձնէի, որպէսզի վերջինս անոր բովանդակութիւնը կարդար: Երբ պատանի եղայ, սկսայ «Կլու»-ին բովանդակութենէն տարբեր պարունակութիւն ունեցող նիւթեր փնտռել: Կը սիրէի խմբագրականները կարդալ եւ մանաւանդ մօրաքրոջս՝ Պերճուհի Աւետեանին, գրութիւնպատմուածքները: Սակայն չէի կարծեր, թէ օր մը իմ գրութիւններն ալ հոն պիտի տեղադրուէին:

Գրութիւններուս տեղադրման պատճառը եթէ սկզբնական շրջանին տեսուչ հայր սուրբն էր, սակայն անկէ ետք «Գանձասար» թերթին այժմու խմբագրուիին ի՞նչ էր: Երբ յիշեալ տեսուչը ուրիշ պատասխանատուութիւն մը ստանձնելով հեռացաւ վանքէն, խմբագրուիին ի՞նչ եղաւ զիս մղող ուժը. երբ քիչ մը կ'ուշանայի յօդուած ուղարկելու, յաջորդ օրը դիմատետրիս նամակներու բաժինին (messenger) մէջ կը կարդայի. *«Այս շաբաթուան համար գրութիւն մը չունի՞ս»*: Սակայն ամենէն շատ ուշադրութիւնս գրաւող բանը այն էր, որ խմբագրուիին զիս «Գանձասար» թերթին աշխատակից նկատելով, խմբագ-



րութեան կողմէ աշխատակիցներուն ուղղուած պաշտօնական նամակներէն կ'ուղարկէր: Իսկապէս զարմանալի բան է: Ես ո՛չ մտաւորականներու կարգին դասուող, ո՛չ հայերէն լեզուին տիրապետած, ոչ ալ պայծառ գրիչի տեր անձ մը, թերթի աշխատակի՞ց նկատուիմ: Այս ազնիւ վերաբերմունքը զիս առաւել մղեց խորանալու գրական աշխարհին մէջ՝ սորվելով արտայայտութեան նոր ձեւեր, գրական դարձուածքներ եւ գրութիւնը համեմող բառեր, տառախաղեր եւ նորանոր մեթոտ-ձեւեր:

«Գանձասար» թերթը այս տարի կը նշէ իր 30-րդ տարեդարձ-ամեակը: Անշուշտ այս մեկը մեծ ուրախութիւն է թերթին խմբագրութեան, պաշտօնէութեան, աշխատակիցներուն եւ մեր ընթերցասէր ժողովուրդին

անամոքելի հետք-սպիներուն եւ համաշխարհայնացման (globalization) գործած աւերներուն, հալէպահայութիւնը «Գանձասար» թերթին շարունակական լուսաբերումով, համայն աշխարհին եւ մանաւանդ՝ ցեղասպան թուրքին ցոյց կու տայ, թէ ինք դեռ կարելիութիւնը ունի հայոց լեզուին դրօշը բարձր պահելու, անոր շունչին ու ոգին հաւատարիմ մնալու եւ զայն իր կարողութեան սահմաններուն մէջ յաջորդող նոր սերունդներուն կտակելու:

Գրութեանս ափեզրին հասնելով, կը մաղթեմ, որ «Գանձասար» թերթը շարունակէ իրեն տրուած մաշտոցեան գիրին մատակարարման առաքելութիւնը, մնայ միշտ նո՛յն բարձրունքին վրայ եւ ինչու չէ՛ ատկէ աւելի վեր ալ բարձրանայ: Տայ Աստուած,



«Գանձասար»-ի Երիտասարդ Լրագրողներու Սեմինար, Քեսապ, Հոկտեմբեր 2022

համար, սակայն անոր կողքին անիկա մեծ ուրախութիւն է սփիւռքահայութեան եւ մանաւանդ՝ հալէպահայութեան համար: Սփիւռքահայութեան համար ուրախութիւն է, որովհետեւ կը փաստէ, թէ ցեղասպան թուրքին ծրագիրը՝ մեր մարմինները սպանելու կողքին մեր մշակոյթն ու գրականութիւնը սպանելու, ջաջողեցաւ եւ մենք տակաւին նոյնիսկ օտար հողերու վրայ կը շարունակենք մեր լեզուն, մշակոյթն ու գրականութիւնը վե՛հ ու վեր պահել: Իսկ հալէպահայութեան համար ուրախութիւն է, որովհետեւ հակառակ երկրին մէջ տիրող ծանր պայմաններուն, պատերազմին թողած

որ «Գանձասար» թերթին յաջորդող ամեակներուն էջերը լեցուին հայ ազգին իրարայաջորդ յաջողութիւններով եւ հայու դրականութեան (positivity) ոգիով: Աստուածաշունչ Մատեանին մէջ 30 թիւը խորհրդանիշ է նուիրման եւ կոչման գիտակցութեան: Աղօթող եմ, որ աստուածաշնչեան 30 թիւին իմաստը ներթափանցէ «Գանձասար» թերթին խմբագրութեան, պաշտօնէութեան եւ աշխատակիցներուն միտքերուն մէջ, որպէսզի նորոգուած ոգիով ու շունչով շարունակեն իրենց վստահուած հայապահպանման իւրայատուկ առաքելութիւնը:

Բարի երթ եւ անսահման յաջողութիւն:



ՀԱՅ ԳԻՐԻ ՌԵԿՎԻԻՐՄԵՆՏ «ԳԱՆՁԱՍԱՐ»-Ը ԿԸ ՇԱՐՈՒՄԵՆԱԿԵ ԻՐ ՅԱՐԹԱԿԱՆ ԵՐԹԸ...

Ալեքս Սրկ. Գալայճեան

Պատմութիւնը միայն չի՛ կերտուիր սըխրագործութիւններով, յաղթանակներով եւ ձեռքբերումներով, ո՛չ ալ պատմագիրներու նկարագրականով ու բնութագիրներով կ'անմահանայ: Այդ պատմութեան շունչ տուող անժանգ արժէքներ կան, որոնք շընչատու գործօններ են եւ դարերու վրայ դրասանգուած տրոփիւններ: Տրոփիւն, որ մնայլ

դաշտերուն մէջ, ինչպէս նաեւ կեանք, ոգի, շարժում եւ աւիւն ներարկելով եկեղեցական, ազգայնական ու մշակութային բնագաւառներէն ներս: Անցեալի եւ այժմու խմբագրական կազմեր, հին ու երիտասարդ գրողներ եւ աշխատակիցներ գիտակցեցան իրենց ազգային կոչումին եւ դերակատարութեան, դարձան ներշնչող եւ ճառագայթող փարոս՝ սուրիահայութեան տալով վերապրելու կամքին տառապալից բայց լուսավառ ճանապարհը:



Յերոսի մը խիզախումներուն տուն տուող ապրումը, բանաստեղծի մը ստեղծագործ երկունքը, ժողովուրդի մը յոյզերն ու ապրումներու դարմանը ոգին ինք է: Սակայն ոգին իր ամբողջական իմաստը կը զգենու՝ երբ զայն լեզուով կ'ապրեցնենք ու կը մարմնաւորենք: «Գանձասար» շաբաթաթերթի անմահանուն աշխատակիցները հայ լեզուն իբրեւ գրագիտութեան կամ ապրուստի աղբիւր չդիտարկեցին, այլ «Գանձասար»-ի միջոցաւ ցոյց տուին, որ հայ լեզուն հայ ժողովուրդի ներքին «դաշտանկարին» արտաքնացած համապատկերն է, արիւնը պլեկոծող շարժումն է, հոգին զուարթացնող ձայնն է եւ սիրտը աշխուժացնող գոյնն է: «Գանձասար» թերթը այս բժախնդրութեամբ, նախանձախնդրութեամբ ու ոգիով առաջնորդուեցաւ եւ իր ուղղութիւնը երբեք չփոխեց: Յայտնէն եւ մեսրոպաբա՛ր գործեց: Նորարարութեանց հետ քայլ պահեց եւ գաւնոնք ներմուծեց իր մէջ, սակայն երբեք չօտարացաւ եւ չաղաւաղեց իր դիմագիծն ու ետիւնը՝ ներհայկական ուժականութեան տալով իւրովի ըմբռնում եւ գիտակցութիւն:

Եւ դժխեմ օրերուն իսկ կը շարունակուի՝ իր գոյութեանական արժեհամակարգը պահպանելու եւ յարատեւելու համար: «Գանձասար» շաբաթաթերթը շարունակ տրոփեց հայ կեանքէն ներս եւ դարձաւ հայ մշակոյթի մասնիկներէն մին: Իր ստեղծագործութեան թափը երբեք չդադրեցուց, շարունակեց փարիլ իր ազգանուէր առաքելութեան եւ նոյնանալ սուրիահայերու մաքառումներուն, դժուարութեանց եւ վերիվայրումներուն հետ:

30 տարի առաջ էր, երբ «Գանձասար» թերթի սկիզբը դրուեցաւ: Յիմնադիրները բժախնդրութեամբ լոյս ընծայեցին իրենց ձեռնասունը՝ «Գանձասար» շաբաթաթերթը՝ նոր ակօսներ բանալով հայ մտքի ու հոգիի

Սփիւռքի անհող ու անլաստ հայութեան համար «Գանձասար»-ը դարձաւ ու է՝ մեծ

դպրոց: Դպրոց, ուր մեծ բանաստեղծներու եւ գրողներու մտքերը մարմին գգեցան եւ տողանցեցին «Գանձասար»-ի պատմադրոշմ էջերուն մէջ: Նոր սերունդի ձայնը տարիներ շարունակ այս էջերուն մէջ ոգի առաւ եւ դարձաւ մշտաբարբառ յուշարար: Այո՛, թէկուզ պատերազմի պատճառով գաղութը Նօսրացաւ, շատեր արտագաղթեցին դէպի հեռաւոր ափեր, բայց այս բոլորը չզաղդեցին «Գանձասար»-ի աշխատանքին վրայ՝ շնորհիւ վարչութեան եւ խմբագրակազմի մեղուաջան գործունեութեան: Ահա թէ ինչո՛ւ «Գանձասար»-ը իր պայծառ լոյսով կը պատռէ դարերուն թանձր խաւարը, կը բերէ հին կեանքին չհինցող գեղեցկութիւնները՝ մեզ հաղորդակցութեան մէջ պահելով մեր հալեպահայ քոյրերուն եւ եղբայրներուն ապրումներուն, երազներուն եւ ձգտումներուն հետ: Զոգիէ հոգի, սրտէ սիրտ, ժամանակէ ժամանակ կամուրջն է ան եւ այդ անժամանցելի կամուրջին վրայ իր բերած ոգեղէն դրութիւններով կը կատարէ իր միւս պաշտօնը՝ հոգիներու կառուցումը:

2008-ին էր, երբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը ակարտեցի եւ վերադարձայ ծննդավայրս՝ Զալեպ: Իմ առաջին տեսուչը եւ այդ օրերու Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան, այցի մը ընթացքին, երկու պաշտօն առաջարկեց ինծի. Ազգ. Զարէն Եփփէ Ծեմարանին մէջ կրօնի ուսուցիչ դառնալ եւ կամ «Գանձասար»-ի խմբագրակազմին



մէջ որպէս սրբագրիչ աշխատիլ: Գրականութիւնն ու թերթի մէջ աշխատիլը անելի հարազատ էր ինծի: Առ այդ, ընտրեցի «Գանձասար» շաբաթաթերթի խմբագրական կազմին մաս կազմել, որ ինծի համար դարձաւ ներշնչանքի աղբիւր եւ հարազատ տուն: Տուն, ուր մեր սիրելի աշխատակիցներու գրոյցները, ընկերային մթնոլորտը եւ կատակները անբա-

ժան աղն ու համեմն էին մեր առօրեայ հեւքոտ գործունեութեան:

Երախտագիտութեամբ կը յիշեմ օրդ. Ալիս Գաթրճեանը, որուն հետ 5 տարի շարունակ աշխատակցեցայ եւ իրմ բազմաթիւ լեզուական նրբութիւններ սորվեցայ: Ինծի համար մեծ մայր ու մեծ ուսուցիչ էր ան, որ կը փորձէր իր քնքշանքով, ուսուցիչի հոգեբանութեամբ լեզուամտածողութիւնս եւ հայրենագիտութիւնս անելի եւս յղել: Շատ բան պարտական եմ իրեն: Լոյս իր հոգւոյն:



«Գանձասար»-ի մեծ ընտանիքը 30 տարի շարունակ ցոյց տուաւ իմացական կարողութեանց եւ իրագործումներու պատուաբեր բարձունք մը: Այսօր այդ ծանր, բայց քաղցր լուծը կը շալկեն թերթի խմբագիր Չարմիկ Պօղիկեանը եւ երիտասարդ խմբագրակազմը, որոնք մեղուի նման անխոնջ ու անդուլ կ'աշխատին, կը համախըմբեն եւ կ'արարեն՝ հայ գիրի փեթակը մշտաժոր պահելով: Մեղուն ծաղիկներէն փոշի հաւաքելով՝ մեղր կը շինէ, որպէսզի մարդիկ այդ քաղցրահամ բալասան-մեղրը մշտապէս ճաշակեն: «Գանձասար» շաբաթաթերթը հայ գրողներու մտքի ստեղծագործութիւնները իր փեթակին մէջ ի մի խմբելով՝ ամեն շաբաթ հայ լեզուի ու գիրի մեղրը կը հրամցնէ իր հաւատարիմ ընթերցողներուն:

Յայ իրականութեան մէջ բազմաթիւ քամիներ փչած են ու պիտի փչեն՝ երբեմն փորձելով խորտակել սփիւռքեան մեր մեծ նաւը: «Գանձասար»-ը նաւակ մըն է, որ բազմաթիւ ալեբախութեանց եւ դժուարութեանց հանդիպելով մեկտեղ, կը շարունակէ թիավարել՝ հայ լեզուի, հայ գիրի եւ հայ մշակոյթի շեփորահարը եւ «անլռելի գանգակատունը» դառնալով:

Յաջող երթ, կանաչաւուն նոր ամեակներ մեր սիրելի «Գանձասար»-ին:

ՀՐԱՊԱՐԱԿԱԳՐԱԿԱՆ



ՂԵՊԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼՈՒՍԱԻՈՐ ՃԱՆԱՊԱՐՀ

Առաքել Աբդ. Գառեհճեան

ՆՍՕՏՏ Արամ Ա. Շնորհագարդ Վեհափառը 1 Յունուար 2023-ին, 2023 տարին հրռչակեց «Սփիւռքի Տարի (Բ.) Ինքնաքննութենէ Վերակազմակերպում»: Վերակազմակերպում եւ ինքնութիւն: Հայրապետը այս երկու կարծ, սակայն բազմիմաստ բառերով «մեր ոտքերը դրաւ գետինին վրայ»: 2022-ին



րեր շարունակ դարձած է հայ կեանքի եւ իրականութեան ողնաշարն ու յենարանը՝ արտադրման կեդրոն ունենալով պատմական Բերիա (Հալէպ) քաղաքը: Մտածուած է արդէօք, թէ ի՞նչ կրնար ըլլալ հայ ու մանաւանդ սփիւռքահայ կեանքը առանց սուրիահայութեան եւ անոր մայրաքաղաք Հալէպին: Քանի՛-քանի՛ հոգեւոր թէ աշխարհական առաջնորդներ, տնօրէններ, ուսուցիչներ, խմբագիրներ, գրագետներ, արուեստագետներ, ազգային գործիչներ, հասարակական կեանքի նուիրեալներ ծնան ու տակաւին կը ծնին անոր հայածին արգանդէն: Կ'արժէ թիւերն ու գնահատականները ունենալ մեր դիմաց՝ անդրադառնալու համար, որ անցնող դարերուն սուրիահայութիւնը ի՞նչ տուաւ հայ ազգին: Այսօր եւս, երբ թռուցիկ ակնարկ մը նետենք ամբողջ Սփիւռքին վրայ, պիտի տեսնենք թէ ղեկավարներուն մեծ մասը ծնունդն է այդ մշտահոս ու մշտապարզէ արգանդին:

Կաթողիկոսը պատուիրած էր Սփիւռքի գոյութեան համար տագնապիլ, մտածել, քննել եւ խորհրդակցիլ, իսկ 2023-ով ան մեզ կը հրաւիրէ գործի, իրական գետնի վրայ:

Այսօրուան Սփիւռքին քայլերը կը նմանին կոյրին քայլերուն, որոնք անորոշ, անվրստահ, անապահով եւ աննպատակ են: Այո՛, Սփիւռքը կը քալէ, բայց դէպի ո՞ր: Դժուար է ճշգրիտ պատասխան մը տալ: Այդ իսկ պատճառով, Ազգընտիր Հայրապետը մեզ կը հրաւիրէ «*աջ ու ձախ չխոտորիլ*», այլ վերադառնալ իրապաշտ կեանքին եւ լծուիլ վերակազմակերպման լուրջ աշխատանքի:

Երբ մեր մտքերուն շողը արեւենք Սփիւռքի վերակազմակերպման նուիրական գործին վրայ, առաջին անունը, որ մեր դիմաց պիտի ելլէ, սուրիահայ գաղութն է: Կասկածէ վեր է, թէ սուրիահայութիւնը դա-


Սակայն այս օրերուն, ցաւ ի սիրտ, սուրիահայութիւնը վիրաւոր է: Այս վիրաւորման պատճառները շատ են ու բազմազան, ինչպէս՝ սարսափաբեր պատերազմը, վախազդու Քորոնա ժահրը, տնտեսական ծո՛վ դժուարութիւնները, եւ ինչե՛ր ու ինչե՛ր... «*զո՞րն ասեմ, զո՞րն խոստովանիմ*»: Այս վիրաւորումը իր շօշափելի ազդեցութիւնը կը թողու ամբողջ Սփիւռքահայութեան վրայ: Երբ այս մասին կը մտածեմ, ականջներուս մէջ կը հնչէ Պօղոս առաքեալին հետեւեալ խօսքը. «*Եթէ մարմինին մէկ անդամը ցաւի՛ քոլոր անդամներն այ միասին կը ցաւին*» (Առաջին Կորնթացիներուն 12.26): Եթէ մարմինին մէկ անդամը այսքա՛ն ցաւ կը պատճառէ, ուր մնաց երբ մարմինին կեդրոնը՝



ԵՐԵՒԱՆԱԲՆԱԿ ՀԱԼԷՊԱՀԱՅՈՒ ՄՐ ԳԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Յակոբ Միքայելյան

Արդեն տասը տարի կ'ընէ որ ես Երեւան կը բնակիմ: Չեմ համարձակիր «հաստատուած եմ» ըսել, որովհետեւ Յալէպ տուն տեղ ձգած, ապաստանած եմ այստեղ, առանց գիտնալու թէ կրնա՞մ վերջնականապէս հաստատուիլ, այսինքն ֆիզիքական կապս կտրել Յալէպի հետ ու դառնալ լիիրաւ երե-



ւանցի, քանի որ այդպիսի բան մը ընելու համար պէտք է կարենայի սեփական բնակարան մը ունենալ, հասութեամբ գործ մը ինքնաբաւ ըլլալու չափ, անշուշտ առանց զգացական կապս կտրելու ծննդավայրիս հետ, ուր անցուցած եմ կեսնքիս եօթանասուն տարիները:

Այս տասը տարիները բաւարար չեղան մերուելու հայաստանցիներուն մէջ, դառնա-

լու անոնցմէ մէկը, իր բոլոր ստորոգելիներով՝ տեղական խօսակցական լեզուով, սովորոյթներով, կենցաղային տարատեսակ մանրամասնութիւններով, հակառակ միեւնոյն ազգային պատմութիւնը ունենալուս, միեւնոյն մշակոյթը, դաւանանքն ու ձգտումները ունենալուս:

Տասը տարին բաւարար չէ փոխուելու եւ տեղացի դառնալու համար, ոչ միայն տասը, նոյնիսկ տասնամեակներ պէտք են, որ մարդ տեղացի դառնայ, բան մը որ ինծի չէ տրուած, բայց մանուկներուն եւ պատանիներուն յարիր է, երբ անոնք մատուցած տարիքէն կը հանեն հինը իրենց վրայէն ու կը հագնին նորը, ինքնաբերաբար, առանց յատուկ ճիգի:

Հայաստանցին ընդհանրապէս, եւ քաղաքներու մէջ ապրողները մասնաւորապէս, ինքնամփոփ են, իրենք-իրենց մէջ քաշուած, դիւրին հաղորդակցող չեն: Յալէպցի կիներուն նման իրարու այցելել, դուռ-դրացիով նստիլ, խօսիլ, խնդալ, նաեւ բամբասել չունին, նախ որ մեծամասնութիւնը կ'աշխատի եւ ժամանակ չունի այդպիսի հաւաքոյթներու, իսկ երկրորդ՝ շատ ալ հետաքրքրուած չեն ուրիշով, իրենք իրենց մէջ, իրենց հարցերով հազիւ կը զբաղին: Որեւէ հարցով դրացիին դուռը թակողին «հրամէ՛» չեն ըսեր, դրան առջեւ կը խօսին եւ վերջ: Ես այս իմ երրորդ բնակարանիս մէջ արդէն 7 տարիէ ի վեր կ'ապրիմ, շէնքիս մէջ 30 դրացի ունիմ, տակաւին ոչ մէկուն տունը ոտք դրած եմ, ոչ մէկը ինծի «դրացի՛, հրամէ՛» ըսած է, թէեւ շատ փափաքած եմ: Կարծես չեն ուզեր որ տեսնես թէ ինչե՛ր ունին իրենց տան մէջ, ինչպէ՞ս կ'ապրին... Կարծեմ խորհրդային շրջանի ազդեցութիւնն է, որ

կը շարունակուի:

Արեւմտահայերէնը երկու մաս ունի՝ գրական եւ խօսակցական: Արեւելահայերէնը երեք մաս ունի, գրական, մաքուր խօսակցական եւ անհասկնալի «ժառկոն» փողոցային լեզու մը, որմէ բան չես հասկնար, ոչ միայն օգտագործուող բառապաշարէն, այլեւ հնչիւնէն ու տարբեր առոգանութենէն: Բոլոր երեքին ալ պարագային օտարամուտ բառերը կ'աղաւաղեն լեզուն, թրքերէն եւ արաբերէն ներմուծուած բառերը իրենց համար «բարբառ» են, որոնցմէ չեն փորձեր ձերբազատիլ. ամենացայտունն ու խորշելին «շալվարն» է տաբատի փոխարէն, «սիլլան» է ապտակի փոխարէն, կամ «փոշմանիլն» է գոջալու փոխարէն: Մեր անդադար գրաւոր թէ բերանացի մատնանշումներն ու ՅՅ լեզուի կոմիտէի հրատարակած հայերէն բառացանկերը ոչինչ կը փոխեն: Եթէ ըսես որ այդինչ բառը հայերէն չէ, կը զարմանան ու կը պնդեն որ բարբառ է, հայերէն է: Իսկ ուղղագրութեան հարցը, անիմաստ է այլեւս այդ մասին խօսիլ, քանի ջուր ծեծելու նման պիտի ըլլայ, իրենք իրենց չ-ուղղագրութիւնը չեն փոխեր: Այստեղ անհրաժեշտ կը նկատեմ խօսիլ այն նորակազմ բառերուն մասին, որոնք արդէն մտած են երկրի բառապաշարին մէջ եւ կ'օգտագործուին եւ որոնք մեր մօտ չունին իրենց հայերէն համագօրը: Օրինակ դաշնամուրի, կամ ինքնաշարժի Pedal-ին «ոտնակ» կ'ըսեն, frain-ին «արգելակ», պենզինճի-ին «լցակայան կամ պենզալցակայան», մեքենիստին «ընթացագործ», արքեսուարին- «մեքենայի մասեր», որեւէ բան թափանցիկ նայլընի կազմի մէջ առնելը-«Թաղանթապատում», չիթի- «լցակար» եւ այլն, որոնք կրնանք նաեւ Սփիւռքի մէջ ալ օգտագործել: Անտեղի կը նկատեմ «Մայքրօուէլ»-ին հայացումը որպէս «մայքրօալիքային վառարան», կամ «Եւրօպիժընը» թարգմանել որպէս «Եւրօտեսիլ»:

Մշակոյթ ըսուածը առատօրէն կը դրսեւորուի որպէս օփերա ու պալէ, որպէս սիմֆօնիք նուագախումբ ու երգչախումբ, որպէս թանգարանային ու նկարչական ցուցահանդես, որպէս թատրոն ու բազմատեսակ բեմական արուեստ: Մակարդակը բաւական լաւ է, հանդիսասրահները ընդհանրապէս լեցուն, ինչ որ անմակարդակ է, ան ալ հեռատեսիլի յայտագիրներն են, ուր գովազդներն ու հարցազրոյցները մեծ բաժինը խլած են: Հանրայինը քիչ մը անելի տանելի է, մինչ միւսներուն մօտ շահի սիրոյն

ամէն աժան բանի ետեւէն վազելին ակընյայտ է:

Շուկան շատ ճոխ է, սակայն գիները բաւական դժուարամատչելի են, այս տարի դուրսէն եկող այցելուներուն նկատողութեամբ, - արդէն եւրոպայէն ետ չի մնար սղութեամբ, - կ'ըսեն: Չխօսինք տուներու վարձքերուն մասին, որոնցմէ կը տառապին գլխաւորաբար վարձով ապրող սուրիահայերը: Տանտերերուն ու ընդհանրապէս հայաստանցիին համար դրամը առաջնային է, դրամասէր են, հայաստանցին խտրութիւն չի դնէր միջոցներու մէջ դրամ շահելու համար:

Զաղաքականութիւնը իր «յաճախորդները» ունի, անով կը զբաղին որոշ մարդիկ ու կազմակերպութիւններ, մնացեալը իրենց օրապահիկին ետեւէն են:

Տոյցերն ու հաւաքները առաջ բազմամարդ էին, հիմա շատ նուազ, մասնակիցներուն փոքր տոկոսը իսկական բողոքող, մնացեալը՝ անգործ մարդիկ ու հետաքրքրութենէ մղուածներ: Զաղաքին մաքրութիւնը բաւական լաւ է, որուն համար շնորհակալ ըլլալու է քաղաքապետարանին, միակ տգեղ երեւոյթը երիտասարդներուն փողոցը թքնելն է, որ իսկապէս գէշ տպաւորութիւն կը գործէ յատկապէս օտարներուն դիմաց:

Տղայ-աղջիկ իրար փաթթուած, սիրային տեսարանները բացայայտ են այստեղ, ամընալ չկայ, բան մը, որ թապու էր մեր մօտ, քանի որ միջավայրը պահպանողական էր եւ ընտանեկան սրբութիւնն ու շրջահայեացութիւնը չէին արտօներ նման բացօթեայ վարմունք: Սկիզբները բոլորս ալ կը ցնցուէինք այդ տեսարաններէն, յետոյ կամաց-կամաց վարժուեցանք:

Հալեպահայերէն շատեր, յատկապէս գործարարներ ու շուկայի վրայ վաճառատուն, կամ ճաշարան ունեցողներ արդէն իւրացուցած են արեւելահայերէնը, յատկապէս դպրոցականները, սակայն մեծերը կամչած կը մնան արեւմտահայերէնին: Խանութներուն մէջ օգտագործուող օտար անուններուն ճիշդ հայերէնը կը փորձենք ըսել եւ ակնկալել որ կը յաջողինք, սակայն հազիւ քանի մը անուն, մնացածը իրենց գիտցածը չեն փոխեր: Բամիտորին լուիկ ըսել սորվեցան, բաթրիճանին սմբուկ ըսելն ալ, բայց գետնախնձորին «կարտօֆիլ»-ը չփոխեցին, ոչ ալ ազատքեղին՝ «մաղտա-նոս»-ը, կամ ստեպղինին՝ «գազար»-ը:



Հալեպահայերը ԳԱՆՁ մը ունին, որուն իսկական արժեքին կ'անդրադառնան երեւանաբնակ հալեպահայերը շատ անելի, սիրով, կարօտով ու յուզումով, քան Հալեպ ապրողները: Հաւանաբար շատեր կռահեցին, իսկ չանդրադարձողներուն ըսեմ, այդ մեծ գանձը մեր հայկական ԱԿՈՒՄԲՆԵՐՆ են: Չեմ չափազանցեր, այդ ակումբները ինչ հսկայ օգուտներ տուած են սերունդներուն, եղած են մեր իսկական երկրորդ տունը, ուր

մեն ինծի:

Երեւանի ամենատոգեղ երեւոյթը մուրացկաններն են, որոնցմէ շատեր արդէն գործի վերածած են եւ տարիներէ ի վեր նոյն վայրին մէջ կը մնան ու անցնող-դարձողին ձեռք կը բանան: Ըտողներ կան, որ անոնցմէ շատեր «գործատեր»-ի մը հաշույն կ'աշխատին: Քանիցս գրած եմ այս մասին, բայց բան չի փոխուիր:

Իբր թէ թշնամի ենք ու մեր եւ Թուրքիոյ



պահպանած ենք մեր հայու նկարագիրը, լեզուն, պատմութիւնը, բարքերն ու անանդոյթները բազմատեսակ մարզական, սկաուտական, մշակութային եւ այլ ձեռնարկներու միջոցով: Հոն իրարու հանդիպած ու ընկերութիւններ ստեղծուած են, նաեւ հոն տղայ ու աղջիկ իրարու հանդիպած, համակրանքը սիրոյ առաջնորդած ու սերը գիրենք միացուցած եւ նոր հայ ընտանիքի մը հիմը դրած են: Քիչ բան չէ, հայապահպանման միջնաբերդերը եղած են մեր ակումբները: Երեւանի մէջ գրկուած ենք այդ բարիքէն, անոր համար այնքան դժուարութիւն կը գտնենք հաւաքուելու եւ ձեռնարկ մը յաջողցնելու: Ափսո՛ս:

Կը սիրեմ երեւանցիներուն յարգալից վերաբերմունքը մասնաւորապէս տարեց մարդոց նկատմամբ: Ամեն հանրակառք բարձրանալուս, ինչքան ալ խճողուած ըլլայ, անպայման մէկն ու մէկը ոտքի կ'ելլէ ու տեղը ինծի կը տրամադրէ: Կը սիրեմ նաեւ իրենց կոչականները տարեցներուն, որոնցմէ մին ալ ես եմ, շոյուած կը զգամ, երբ «*Հոբբա՛ր, պապի՛, կամ հայրի՛կ*» ըսելով կը դի-

միջեւ սահմանը բաց չէ, ոչ ալ արտօսուած ներածում-արտածում ունիք, սակայն Հայաստանի շուկաները կը յորդին թրջական բազմատեսակ ապրանքներով: Կը գրենք, կը խօսինք, նոյնիսկ պետական որոշում առնուած էր թրջական ապրանքներու ներածումը արգիլող, սակայն «պիզնետմաններն» ու անոնց հովանաւորները որջ ըլլան...

Հայաստանի մէջ հարուստը՝ շա՛տ հարուստ է, աղքատն ալ՝ շա՛տ աղքատ: Մէկ կը նայիս քաղաքին մէջ վիտագող ամենաարդիական, ամենաշքեղ ու սուղ մեքենաներուն, կամ հարսանեկան խրախճանքներուն մսիսուած անհաշիւ տոլարներուն, մէկ ալ կը նայիս աղքամանները գրգռողներուն ու կը զարմանաս, քիչ մըն ալ կը զայրանաս:

Դեռ շատ բաներ կան, որոնց մասին կարելի է անդրադառնալ, բայց այսքանն ալ որոշ պատկեր մը կը ներկայացնէ ու նիւթ կը հայթայթէ դիտարկումներուս:

Հայաստանը իր ճերմակով ու սեւով մե՛րն է, փոխել, փոխանակել չըլլար. աշխատիք պահել զայն մեր աչքին լոյսին պէս:



ՍՓԻՒՔԸ ՆԱԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ ԿԸ ԴԱՌՆԱՅ

Արամ Աւագեան

Մարդկային հաւաքականութիւնները կը ձեւակերպուին նախ բնական ծնունդով, ապա տարածաշրջանէ մը այլ տարածաշրջան՝ հաւաքական գաղթի միջոցով:

Հայկական գոյացած Սփիւռքը իրականութիւն էր նոյնիսկ Հայոց Յեղասպանութենէն առաջ ու ծաւալած էր անկէ ետք:

ընկերային, մշակութային, տնտեսական, քաղաքական եւ պահանջատիրական իր իրաւունքները կիրարկած է, շնորհիւ Սփիւռքի ղեկավարութեան հետապնդումներուն:

Համեմատական կշռոյթով Սփիւռքը եւ իր ղեկավարութիւնը աշխատած են բարձր պահել հայրենիքի գաղափարին վեհութիւնը



Հայրենամերձ գաղութներէն սկսեալ մինչեւ հեռու ցամաքամասեր հայ մարդը միշտ ալ հայրենիքի վեհ գաղափարը վառ պահած է իր սրտին մէջ, փորձած է մարմնաւորել հայրենիքը իր մտային պատկերին համեմատ. Սփիւռքի մէջ հայը իր քաղաքացիական պարտականութիւններուն կողքին

հայ գանգուածներուն մօտ՝ իբրեւ բացարձակ արժէք, նաեւ հաւատացած են հայրենիքի ֆիզիքական եւ բարոյական գոյգ արժէքներու կարեւորութեան:

Գիտակցած են հայ ազգագրական եւ հայրենակցական բարքերուն ու սովորութիւններուն դերին ազգապահպանման գոր-

ծին մէջ:

Չարկ տուած են ազգային երաժշտութեան զարգացումին, հայ մշակոյթին ուսուցման եւ պահպանումին, արեւմտահայ գրականութեան եւ հայագիտութեան տարածումին, կրթական մշակներու պատրաստութեան եւ հայթայթումին:

Դաստիարակած են սերունդներ ազգային գաղափարախօսութեան հիմքերով, օգտագործելով նաեւ արդի միջոցներ:

Հայ եկեղեցւոյ երեք յարանուանութիւններու գործունէութիւնը ծառայեցուցած են ազգին եւ հայրենիքին:

Թափանցած են հայ իրողութեան այլազանութեան մէջ, որմէ ձեւակերպած են ազգային ուժ՝ ի սպաս հայրենիքին, ոչ թէ՛ հակառակը:

Պահած պահպանած են հայրենասեր եւ ազգասեր տարրը, նաեւ պաշտպանած են հայրենանպաստ միտքերն ու գաղափարները:

Զուէարկած են ազգին նպատակներուն իրականացման օգտին՝ հայրենիքը միշտ բարձր դասելով:

Բացատրած են հայրենիք հասկացութիւնը՝ որպէս ազգին ծառայող կեդրոնական մարմին, միասնական մտածողութիւն ձեւաւորող, միացեալ կեցուածք դրսեւորող կողմ:

Հայկական Սփիւռքը իր ընթացքով դարձաւ հայ մարդուն քաղաքական պատուանդանը, որուն միջոցաւ կարողութիւն ունեցաւ արտաքին դրական յարաբերութիւնները ծառայեցնելու հայրենիքին, միաժամանակ դարձաւ պարարտ միջավայր՝ ուր հայ անհատը առանց խտրականութեան կարելիու-

թիւն պիտի ունենար զարգացնելու իր սեփական տնտեսութեան կարելիութիւնները, որոնք երբեմն դժուար իրագործելի կը մնային հայրենիքի մէջ:

Հայոց Յեղասպանութեան պահանջատիրութեան ծիրէն ներս Սփիւռքը իր լաւագոյններու որոշումով եւ ներգործութեամբ, կարողութիւն ունեցաւ պատժելու դահիճները, նաեւ միջազգային հանրութեան ուշադրութիւնը ուղղելու դէպի մեր արդար դատը:

Սփիւռքը իր պատկառելի մասնակցութիւնը բերած է նաեւ Արցախի ազատագրական պայքարին մէջ:

Հայրենի իրարայաջորդ իշխանութիւնները օգտուելու փոխարէն Սփիւռքի ոչ նուազ քաղաքական փորձէն ու տնտեսական կարելիութենէն, փորձած են զանազան միջոցներով Սփիւռքը կառավարելի դարձնել: Համագործակցելու փոխարէն պառակտումի սերմեր ցանելով մէկ ազգի զաւակներուն սրտերուն ու հոգիներուն մէջ, որոնց բացասական հետեւանքները կ'արտացոլան հայ քաղաքական երկնակամարին վրայ:

Երբ հայրենիքի պետականութեան եւ իշխանութեան ներկայացուցիչները գիտակցին իրենց պարտականութիւններուն, նաեւ լաւագոյնս կատարեն զանոնք, ծանր բեռ մը կը թեթեւցնեն Սփիւռքի տառապած թիկունքէն:

Հայրենիքի նիւթական եւ բարոյական պարտականութիւններու բացակայութեան ներքոյ՝ Սփիւռքը նաեւ կը դառնայ հայրենիք, լիովին գոհացում կու տայ իր քաղաքացիներուն հոգեմտաւոր ակնկալութիւններուն:





ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՌՔ ԿՈՐՍՈՒԱԾ ՕՂԱԿԸ

Երկրչփ. Պարզե Աւագեան

Վերնագիրը՝ լայն, հորիզոնը՝ նեղ:
Անցեալը կը բնութագրէ ներկան: Ներկան կը պայմանաւորէ ապագան:
Կեանքը ամբողջութիւն մըն է առաւելապէս իր անցեալով: Ցաւը՝ բոլոր ազնիւ գարգացումներու յաւիտենական յուշարարը:

կան ունենալու համար նախ պէտք է ունենանք տագնապելու նոյն ենթահողը՝ մեզի պարտադրուած դժուարութիւններուն: Պէտք է ըլլանք նոյն խրամատին մէջ եւ իրացնենք նոյն անցեալը ու նոյն ճակատագիրը դիմագրաւելու գիտակցութիւնը:



Եթէ ազգակորուստի եւ հայրենակորուստի դէմ չբարձրացնենք աղաղակ, եթէ ես, դուն, ան միասնաբար չկազմենք փառանգ ու բանակ, ուշ անդրադարձած պիտի ըլլանք մեր կորուստներուն ու անոնց աղէտալի ժառանգութեան:
Ահա թէ ո՛ր պէտք է փնտռել պատճառն ու պատճառականութիւնը այս ոչ-նախանձելի մեր իրավիճակին: Միատեսակ տեսլա-

Տեսնապէս տարբեր մտահոգութիւններով ծանրաբեռնուած ըլլալը, սակայն, մեզի պէտք չէ մոռցնել տայ, թէ ազգային արժէքներ, ազգ ու հայրենիք պահելու դժուարութիւնները կը նոյնանան ու հետզհետէ մեզ կ'առաջնորդեն այն աւագախորումին, ուր մեր բոլորին լինելութեան խնդիրը կը դառնայ առաջնահերթութիւն:
Իշխանութիւն թէ ընդդիմութիւն, սեւ ու

սպիտակ, հայրենիք ու սփիւռք պէտք է գանազանենք թշնամին հակառակորդէն, քաղաքականութիւնը բարի դրացնութենէն, ներկան ապագայէն՝ միշտ դասեր քաղելով անցեալէն:

Կեանքի մէջ բոլոր երեւոյթները ըստ ամենայնի պէտք է գերոյի եւ իտեալի մէջ տեղադրել:

Այսօր մենք իտեալէն շատ հեռու ենք, բայց եւ այնպէս հաստատ համոզումը ունինք, որ դժուարութիւնները յաղթահարելու համար անհրաժեշտ է տագնապիլ:



Երբ կը տագնապինք, անոր արգասիքը անպայման պիտի ըլլայ լուծումի մը յանգիլը:

Կեանքը նաեւ մեզ կ'առաջնորդէ երկու ծայրամասերու՝ առաւելագոյն շահի եւ նուազագոյն վնասի:

Անկեղծ ըլլալու համար պէտք է մատնանշենք, որ մենք արդէն կորսնցուցած ենք առաջինը, հետեւաբար մեր աշխատանքը պէտք է ըլլայ նուազագոյն վնասին առաջնորդող տուեալները ձեռք ձգել:

Միակ հարցը եւ հարցականը, որ զիս կը մղէ այս բողոքով դիմելու ձեզի հետեւեալն է՝ ես պիտի գրեմ ժամանակի մը մասին, ուր առկայ են ե՛ւ մեր արիւնոտ անցեալը, ե՛ւ տաժանակիր ներկան: Երբեմն՝ համեմուած յաջողութիւններով ու սխրանքներով:

Եթէ անցեալը խօսուն թանգարան է, ներկան՝ հզօր յենարան, ուրեմն խորհրդաւոր վեհարան է ապագան:

Յոռեւտեւութիւն սփռելու համար չէ, որ այս կը գրեմ, այլ՝ ինքնախաբեութենէն յոգնածութիւնը կը պարտադրէ այս մէկը:

Չայ կեանքի հոլովոյթին եւ մեր ազգային շուկային մէջ դիւրին չէ այս բոլորը սպառել:

Այս բազմաչարչար ազգը ի՛նչ խանդավառ խոյանքներ ունեցաւ ու ինչպիսի՛ անասելի յուսախաբութիւն դիմակայելու հարկադրանքին տակ գտնուեցաւ:

Վերջապէս պատմութիւն կայ:

Պատասխանատուութեան բեռը կրելու անխուսափելի հարկադրանք կայ:

Ուրեմն ազգային մեր յիշողութիւնը վերականգնելու նուիրական գործին մեզմէ իւրաքանչիւրը իր լուման ձգելու նախանձախնդրութիւնը պէտք է ցուցաբերէ:

Յանուն հայութեան ազգացման ու քաղաքականացման եւ բնականաբար հայ ազգի մշակոյթի ստեղծման ու զարգացման՝ դիմագիծ կերտել, նկարագիր դարձնել ու ազգայնանալ:

Ահա՛ հայակերտման հիմնական յատկանիշը, ոգին ու արժէքը:

Չետեւաբար այս հաւաքականութիւնը իրաւունք չունի իր իսկ ժառանգութիւնը մսխելու:

Չայրենիք-սփիւռք օղակումի հարցը չի սահմանափակուիր միայն գաղափարական միասնութիւն եւ կարելիութեանց համակարգեալ արդիւնաւորում յառաջացնելու եզրերով:

Չանգրուանը կը պարտադրէ այդ միասնութեան տալ թէ՛ քաղաքական-ռազմավարական, եւ թէ՛ պետական-կազմակերպական համապարփակ զօրաշարժի տարողութիւն:

Չայ քաղաքական մտքի ուսերուն կը ծանրանայ այդ զօրաշարժի առաջնորդող ունեւիները գտնելու պատմական պատասխանատուութիւնը: Չամազգային զօրաշարժի այդ հրամայականը բնականաբար իր տրամաբանութիւնը կը պարտադրէ նաեւ ու մանաւանդ արտերկրի հայութեան:

Եւ վերջապէս պէտք է զարգացնել այն մէկ ու միակ ճշմարտութիւնը թէ՛ հայրենիք եւ սփիւռք անբաժանելի մէկ ամբողջութիւն են եւ ըստ ամենայնի կոչուած են միասնաբար կերտելու ապագան:

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ



ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ ԵՒ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՐՃՈՒԻ ԱԼԵՆԵԱՆ

- Տեսէ՞ք ձու եմ ճարել, այսօր ձուածեղ եմ սարքելու,- Մարինէն տուն խուժեց խանդավառ ու ինքնագոհ:

Երեւակայելի գումարով ճարեր էր հակիթները, հատը՝ 700 դրամ, ափսոսալու ժամանակը չէր, մանաւանդ որ հերթի կանգնելով հաց ալ կրցած էր ապահովել:

Իններորդ ամիսն էր շրջափակուած էին, խանութները՝ դատարկ, վառելանիւթ չկար, ելեկտրական հոսանքը՝ հազուադէպ: Նման իրավիճակներուն մարդիկ կամ շատ բարեհամբոյր կ'ըլլան կամ առիթէն օգտուելով կը շահագործեն ու կը կողոպտեն:

Քառասունօրեայ պատերազմէն ետք կը փորձէին ամոքել ցաւերը: Գաղթականներ գրաւուած շրջաններէն, իւրաքանչիւր տուն զոհուած զաւակ ուներ, ամուսին, եղբայր, հաշմանդամներ... իսկ պարտութեան խարանդ ահաւոր էր, անսպասելի, տարիներ յաղթանակի բերկրանքը ապրելէ ետք:

Թշնամին ախորժակը սրած նստած էր բարձունքին: Խաղաղապահ զօրքերու առաքելութիւնն ալ յստակ չէր:

Բայց... կեանքը պիտի շարունակուեր, իր փոքրիկները նախասիրութիւններ ունէին, առջինեկին շարադրութիւնները բարձր կը գնահատուէին, փոքրիկին պատկերածները մանկական ցուցահանդեսներուն մըր-

ցանակի կ'արժանանային, իսկ տղան հիւսալի կը նուագեր: Ջանք չէին ինայեր գիրենք քաջալերելու, իսկ այս պայմաններով ամէն ինչ խանգարուած էր:

Աշխարհը փոքրիկներու իրաւունքներու մասին բազմաթիւ ուղերձներ ուներ, բայց այս բուռ մը ճնշուած, նոյնիսկ ցեղասպանութեան վտանգի դիմաց կանգնած ժողո-



վուրդին, մանուկներուն հանդէպ անտարբեր էր:

- Մա՛մ, քաղցրաւենիք եմ ուզում, շոքոլադ, պաղպաղակ:

- Տղա՛ն, մեղր ունենք, աւելի օգտակար է,- վագեց պահարանէն դուրս բերաւ մեղրի ամանը:

Պայթիւնները որոտացին, հեռաձայնը հնչեց:

- Շո՛ւտ... նկուղ ապաստանէ՛ք:

Ընտրեցին սկուղի կաթկթումները գերծանկիւնը, խոնաւ էր, գարշահոտ բայց մասամբ՝ ապահով, գիշերը հոն անցուցին:

- Յո՞ն ենք ապրելու, մա՛մ, իմ անկողինն եմ ուզում,- աղջնակն էր:

- Ժամանակաւոր է, սիրելի՛ս, մի քիչ համբերենք,- իր խօսքին չհաւատալով քաշալերեց:

Կեց դէպի Շուշի Նայող պատուհանը ու վարագոյրին թելը քաշեց, յետոյ ծածկեց դուռը, կղպեց, սովորութեան համաձայն բաւալիով խաչ մը գծելով վրան:

Փոքրիկները ամուսնոյն հետ հասած էին փողոց. ամուսինը կը տատամսէր:

- Մի գուցէ ցուցակում եմ, մաամ, ձեզ արգելք չլինեմ,- շշջաց ականջին:



Թշնամին յարձակած էր, բանակը դիմադրելու անհրաժեշտ ուժը չունէր, թէեւ կը փորձէր պաշտպանուիլ... կը խօսուէր, որ յաջորդ օրը իշխանութիւնները զիջումներու պիտի երթային, ինչպիսի՞ գիշումներ...:

Ոչ մէկ յենակէտ, իր ճակատագիրին լքուած էր հայուն այս հողը, դաժան թշնամին արդիական զէնքերով զինուած էր: Ու ամենայնուհանդերձ զիջումներ չէր պահանջուած որպէս Լեռնային Ղարաբաղ, այլեւս ճանչցուած էր Ատրպէյճանի կազմին մէջ:

Աշխարհը անտարբեր, քարիւղի հոտէն հարբած, միայն յորդորներ կը շռայլէր:

Երկու օր ետք անակնկալներուն ամենավատն էր... դատարկել Արցախը, ինը երկար ամիսներ սեղմած ակռաները դիմացած էին..

Ի՞նչ վերցնել, ի՞նչ փոխադրել...

Ազգականի ինքնաշարժով դուրս պիտի գային: Տաք հագուստները հապճեպ հաւաքեց ճամբրուկին մէջ, ափսոսանքով Նայեցաւ գրադարանին, հոն էր իրենց հարստութիւնը եւ կարելի չէր փոխադրել:

Դիտեց շուրջը, շատ հաւանաբար վերջին անգամ: Այր ու կին աշխատած էին ու ստեղծած այս փոքրիկ բոյնը. խնամքով փա-

- Առանց քեզ ես քայլ չեմ առնի,- ըսաւ վճռական:

Աղետներու շղթան կը քակուէր.

Լսուեցաւ ահաւոր պայթիւն, հսկայական հրդեհի բոցը կը բարձրանար երկինք, վայնասունն ու աղաղակը տարածուեցան:

Խուճապ, իրարացում: Սուրացող շտապ օգնութեան ինքնաշարժներու շչակներ:

- Աստուած իմ, բաւ է որքա՛ն...

Լիցքակայանն էր պայթած, իրենց ինքնաշարժներուն համար վառելանիւթ ապահովելու համար հոն հաւաքուած էին հարիւրաւոր արցախցիներ:

Գոյժը տարածուեցաւ, ամբողջովին հալած մարմիններ կային, անհետ կորածներ, ծանր աստիճանի այրուածքներ:

Տեղաւորուեցան ազգականի ինքնաշարժին մէջ:

Կրիայի նման դանդաղ յառաջացող հազարաւոր ինքնաշարժներ, հսկայ բեռնատարներու տանիքներուն վրայ խռնուած ընտանիքներ:

Քաոս...

Կը մօտենային անցակէտին, ինքնաշարժները կարգի կեցած էին, Մարինէ աջ ձեռքով ամուր բռնած էր վզին խաչը, ձա-



խով ամուսինին ձեռքը, շրթները կը շարժեին, կ'աղօթեր...

Ստուգող ատրպեյճանցի պաշտօնեան պահանջեց փաստաթուղթերը, իրենց ազգականը ռուսական հպատակութիւն ուներ ու...անցակետի պաշտօնեան ելքի արտօնութիւնը տուաւ, ռուսական հպատակութիւնն էր, թէ իր աղօթքները...: Մտան Յայկական սահման, ետին թողած ամեն ինչ...

- Մա՛մ, հիմի ո՛ւր ենք գնում,- հարցուց քունէն արթնցած տղան:

- Յայրենիք, որդի՛ս, հայրենիք:
- Յապա մեր տունը,- պնդեց աղջնակը:
- Կգանք, աղջի՛կս, կգանք,- հանգստացուց հայրը խռպոտ ձայնով:

Յարիւր հազար արցախցիներ պարտադրաբար լքեցին հայրենի հողը, այն հողը, որ հազարաւոր տարիներ եղած էր հայկական, հայաբնակ, հայաբոյր ու չէր լքուած:

Յանձնուեցաւ զինամթերքը, մշակութային հսկայական հարստութիւնը, ՅՈՂԸ, ՅՈՂԸ, ՅՈՂԸ...

Նախկին նախագահները, զինուորական պատասխանատուներ ձերբակալուեցան, դաւաճանի պիտակին տակ անարգաբար փոխադրուեցան Պաքուի բանտերը, պատերազմի գերիներու կողքին... դատուելու, անտեր-անտիրական:

Ո՛ղբամ զքեզ, հա՛յ ժողովուրդ:

Երեւանեան արեւոտ առաւօտ մը հանդիպեցայ Մարինէին, անշուշտ նախապէս ժամադրուած էինք: Ֆրանսայէն ազգակա՛նուհիս, որ Արցախով տարուած էր տարիներ, յաճախ այցելած սերտելով հոն ներդրումներ ու թուրիզմ (զբօսաշրջական ընկերութիւն) հաստատելու կարելիութիւնը, ծանօթ էր իրենց ընտանիքին, թելադրեց, քանի որ հոգեկան ծանր ապրումներ ես ալ ունեցած էի սուրիական պատերազմէն ետք հայրենիք ներգաղթելով, հանդիպէի ու միութարբի զինք:

Մեր պայմաններուն միջեւ զուգահեռներ կային, սակայն նաեւ մեծ տարբերութիւններ:

Մարինէ բռնի տեղահանութեան ենթարկուած էր արցախի բնակչութեան հսկայ զանգուածին հետ ու... հայրենի հող կորսընցուցած, հսկայական, աներեւակայելի կորուստ:

Ես կիսափլատակ կալուած մը ձգած էի ետիս եւ անշուշտ հարազատ-բարեկամներ: Դուրս գալու որոշումը եւ վերադառնալու նախընտրութիւնը կը մնար իմս... մինչ որ-

պես երկրի քաղաքացի՝ մէկ ու կէս տարի, ներքին պատերազմի ընթացքին, պետական զօրքի հսկողութեան սահմանագիծէն ներս ըլլալով ականատես եղած եւ ապրած էի պատերազմի դաժան առօրեան ու պայթումներու ահուդողը:

Ողջագուրուեցանք հարազատներու պէս:

Նոր հասած էին Երեւան, թէւ անծանօթ վայր չէր, որպէս մանկավարժական համալսարանի նախկին ուսանող եւ լրագրող քանիցս եղած էր հոս, բայց իր տունը հոն էր՝ Ստեփանակերտի մէջ, պատուհանները դէպի Շուշի բացուող ու Շուշի տանող ճամբուն ամենամօտիկ շէնքին մէջ...

Փորձեցի հակիրճ քաջալերական նախաբան ձեւակերպել, աչքերուն մէջ արցունքը խաղաց, սիրտը լեփ-լեցուն էր ահագոյն պատմութիւններով, ափսոսանքով: Յարազատները՝ տարտղնուած, քրոջը գաւակը՝ լիցքակայանի հրդեհէն այրած, բայց հրաշքով փրկուած կը բուժուէր, իրենք ժամանակաւոր մէկ սենեականոց բարեկամի մը գրասենեակին մէջ տեղաւորուած էին:

Մխիթարական բառեր կը փնտռէի ու կը սրբէի արցունքներս...

«Ամուր մնա՛, պիտի ապրիս գաւակներուդ ապագան կերտելու, անոնց ուսումը, կեցութիւնը ապահովելու... դժուար օրերը կու գան ու կ'երթան»:

Յայը միշտ նման արհաւիրքներու մէջէն անցած է, մեծ մայրս կ'ըսէր «Եթէ սեֆերպէլիքը անցաւ, ուրեմն ամեն ինչ կ'անցնի»:

Ձեռքերը կը դողային, հազիւ կու տար թէյը:

Ու... լացիք միասին զուգահեռներ ու տարբերութիւններ ուրուագծելով:

Յայրենի հողը անփոխարինելի է, ես կը զգայի որ անհնար է ամոքել ցաւը. Մեր բոլորին ՅԱԼԸ:

Անի, Վան, Արեւմտեան Յայաստան, Կարս, Նախիջեւան... Արցախ.

Երբեմնի Յայաստանը ներկայիս աշխարհի քարտէզին վրայ հազիւ նշմարելի տարածք է, ներկայ սահմանումով 29.800 քիլոմէթր քառակուսի ու տայ Աստուած, որ խաղաղութեան լալագին կոչերով, մեծ պետութիւններու հովանաւոր գթութեան դիմելով մնայ ԱՆՍԱՍԱՆ:

Ժամանակն ու բա՞խտը հայերուս համար եղած են անողոք, թէ մենք եղած ենք անհեռատես, անքաղաքագետ, ապիկար: Երբեմն՝ մէկը ու շատ անգամ ալ՝ միւսը:





ՅՐԵՇՏԱԿՆԵՐՈՒ ՅԱԿԱՔ

Մարիանա Պերթիզլեան-Ղազարեան

Բոլոր մանուկները քնացեր են հիմա. քաղաքը կը ննչէ, քաղաքը իր նիրհին մէջ կը խոկայ անցեալի եւ գալիքի բոլոր երանելի եւ ցաւալի դրուագները: Անցեալի հերոսական, դաժան եւ վշտաբեր պատկերներ, ապագային տեղի ունենալիք դժուարին վիճակներ, որոնցմէ պարտաւոր է դարձեալ յաղթական դուրս գալ:

Քաղաքը, երկրի բոլոր քաղաքները գծագրուած են հիմա բիբերուն մէջ զանոնք արարողին, ափերուն մէջ նախնիներուն, որոնք անընդհատ մաղթանք, աղօթք եւ օրհնանք յղեցին զինուորին, որ երկիրը մնայ կանգուն, ապահով...:



Բոլորը կ'արթնան ապաժառ հայեացքով, որովհետեւ մշտադաւան հրեշտակներ կը հըսկեն սիրոյ մրմունջներով, օրհներգելով, որպէսզի բարին շարունակուի պիպլիական երկրին վրայ, կտակուած երկիրը մնայ կանգուն անյողդողդ: Զոն՝ ուր ընդարձակին սահմանները կը վերադառնան նախկին փառապանծ օրերուն, ոսկեղէն տառերով ծաղկուն, հայօրէն շնչող թուփ ու ծառով, ամբողջական լիճերով, ձիւնաթափ լեռներով:

Կրկին կը ժպտին հողեղէն արարածներ, քաղաքները կը վերականգնին, կը լուսաւորուին արեւու զօրութեամբ, արդարութեամբ, նոյնիսկ մարդոց նայուածքներն ու դէմքերը կը լուսարձակեն, կը ճառագայթեն արեւալոյսով:

Մանուկներուն ճիչը կը տարածուի ամենուրեք: Անվախօրէն, ուրախութեամբ եւ սիրով կը վագվզեն նորածիլ Յովհնարներ ու Ծովինարներ:

Բոլոր ծննդատուներէն կ'արձակուին ուրախութեան ճիչեր, որոնք կը լսուին նոյնիսկ հեռաւոր տիեզերքէն: Մոլորակները զարմացած հետաքրքրութեամբ եւ սիրով կը լեցուն երկիր մոլորակին նկատմամբ:

Յրեշտակներու փաղանգներ, մոլորակներէն կը դիտեն արթուն հսկելով, որ երկիրը կանգուն եւ անսայթաք մնայ իր ծիրին վրայ, ինչպէս պատուիրուած էր իրենց:

* * *

Ծառերու ճիւղերուն միջեւ հաճելի աղմուկ է, աղօթքի պէս բան մը, երաժշտութեան անհայելի երկինքներէն մեզի հասնող գեղգեղանք մը կը հնչէ: Զսկայ դաշտին մէջ բնութեան խրախճանքներէն մին է: Ծաղկաւետ կանաչին մէջ ծառերու կոճղն ի վեր քրքիջ մը կը բարձրանայ, կը վերածուի համանուագի: Մօտակայ ծովուն յատակը քնացող նոյնիսկ խիւնջներուն ունկին մէջ կ'ամփոփուին գեղածիծաղ ծառերուն քրքիջն ու ցնծութեան երգը: Նոյի օրերէն մնացած ջրհեղեղի հնչիւններուն հետ տարածքը կը լիանայ բարձրադակ հաճելի վեհութեամբ մը, որ չունի անուանում: Ծատ հեռուներէն եկող խորհրդաւոր այս համերգը կը մօտենայ եւ քեզի կը թուի, թէ հրեշտակներու հաւաք կայ կողքիդ, աչքերէ անտես, անշօշափելի: Կը դառնաս հսկայ երկրին մէկ մասնիկը, այն երկրին որ մեր ժամանակաւոր բնակավայրն է: Վերջական տունը հոս չէ...

Ծառը անյագօրէն կ'ըմպէ լոյսին եւ երաժշտութեան զօրութիւնը՝ զայն փոխանցելու հողին, լոյսով ծփուն հողին, ծաղկաւոր խոտերուն, արմատներուն եւ ընդերքի բնակիչներուն:

Ծառը իր ձեռքերը երկինք պարզած կ'աղօթէ:

Զինուորներու վաշտերն են, որոնք հրեշտակներու գունդերու հովանաւորութեամբ կը տեղաւորուին կամաց-կամաց, երկրի երեսին, հորիզոնի հզօրութեան հաղորդելով ինչ որ տարտամ անհանգստութիւն:

Աղօթքի աներեւոյթ կապով մը անտեսանելի, ամէն բան կը միանայ իրարու: Լոյսի ելեւեջներով, ձայնի թրթռացումներով, վերերկրային գեղեցիկը փոխադրելու դէպի ընդերք: Բոցերու մէջ գալարուող երկրագունդի կորիզին հպելու, անոր ալ փոխանցելու լոյսի բերկութենէն:

Զուրիդացող բոցեր կ'երեւան հեռուէն հորիզոնին վրայ, անխթարթ մը վերածուելով լոյսի ճաճանչներու, ետքը հորիզոնական գիծի մը պէս հանդարտելու խաղաղութեան մէջ:





ՄԵՆՈՒԹԵԱՆ ՏԱՄՆԱՄԵԱԿ

Նորա թիրպլետան-Գաբրյեան

Տասնամեակ մը՝ սրընթաց եւ գողեգող անցաւ, Հալէպը լքելու մեր ճակատագրական պահէն ի վեր: Դժուարին ժամանահատուած՝ ուր անհաստատ եւ երերուն սպասումներու շղթայ մը խեղդեց մեզ: Անխաթար խաղաղութեան վերադարձի եւ բնականոն ապրելու յոյսը նուազագոյնի հասաւ եւ բազմերանգ անցեալը վերականգնելու մեր համեմատական ակնկալիքները ի չիք դարձան:

Մեծ համեմատութեամբ արտագաղթած այդ գանգուածը, օտարուած իր ծննդավայրի կենսակերպէն, ունեցուածքէն, աւանդութիւններէն եւ շատ ու շատ այլազան գործօններէն, մտաւ հոգեկան մենութեան փուլի մը մէջ:

Որքան ալ կեանքի նորընտիր այդ տարբերակները երբեմն բարւօք շրջանի մը օվասիսը կը ներկայացնէին, «Հալէպ»-ը կը մնար այն չքնաղ երազը, զոր ապրեցան իրարայաջորդ սերունդներ, վերացական եւ հոգեպաշտ իր բնոյթին բոլոր առանձնայատկութիւններով:

Տարեվերջի նմանատիպ խորհրդածութիւններու այս պահուն, փորձեցի որոնել այն հաշտարար դաշինքը, զոր հոգիս կ'ուզէր կնքել անցեալի երկար դիպաշարին եւ տասնամեայ նորաստեղծ կեանքիս միջեւ: Այսօր, հնամեայ երազ մը իրականացուցած հայրորդիի կարգավիճակով՝ Արարատի դէմ յանդիման, Էութիւնս ուզեց վանել իրմէ մենութեան ապրումի այդ ժահրը, զոր կը հաւածէր գիս: Չէ՞ որ տասնամեակներ իրարայաջորդ սերունդներով երազած էինք հանգրուանիլ հայրենի հողին վրայ...: Մեր իտեալին վերջնական մարմնաւորումը իր լրումին հասած պէտք էր ըլլար...:

Սակայն «Հալէպ»-ը մնացած էր ետին...: Սուրիան առհասարակ եւ Հալէպը ի մասնաւորի, արտասովոր իրականութեանց փակագիծեր կը բանան: Չայն լքելու դառնութիւնը պատմաքաղաքական խոր պատճառներով կը սնանի, տալով անոր բացառութեան իրաւունք: Այդ հողը մեր հայրենագուրկ եւ ծնողագուրկ սերունդին համար եղաւ ծնողք եւ անժամկետ հայրենիք:

Յեղասպանութեան կործանիչ ցոնամիին



Արտագաղթելու առաջին առիթը օգտագործելու ստիպողութեան տակ՝ պատահական որոշումներով, առողջ ու կենսունակ գաղութ մը մասնատուեցաւ: Բազմաճիւղ աւանդական ընտանիքներ, ցաք ու ցրի եղան աշխարհի քարտեզին վրայ: Եւ հարիւրամեակ մը բոլորած հայկական հրաշք գոյութեան այդ *միջր*, մեղմ արտայայտութեամբ՝ խամրեցաւ...:

առջեւ զայն դիմակալող բարձրագագաթ լեռ: Թերեւս բնագոյօրէն կամ աշխարհագրական դիրքին ընձեռնած պարագայէն մղուած, սուրիական հողը եղաւ ամբողջօրեայ վերապրումին: Եւ ստոյգ անկամութեամբ, եղաւ նաեւ մեր հարիւր-հազարաւոր անթաղ հայ կեանքերու հաւաքական գերեզմանօցը: Մահուան ու կեանքի այդ ամենի մաքառումին առաջ, եղաւ մեր վերապրումի անյաղթահարելի կամքին պարարտ հողը եւ խթանիչը:

Յառնումը հրաշք երեւոյթ է մարդկային անցողիկ կեանքին մէջ. հետեւաբար յառնումին վայրն ալ՝ սրբացած վայր: Ահա այդ արժանահաւատօրէն սրբացած ուխտավայրն է սուրիական հողը: Եւ վստահաբար մենութեան ցաւիս տուն տուող պատճառներէն մին են ետին թողած մեր նահատակներու անտէր եւ անթաղ մնացած աճիւնները: Հայրենիքները ծնունդի եւ մահուան խորհուրդներով ալ կը սեփականացուին: Ու տեղ մը «Հալէպ»-ը այդ խորհուրդներով օրինականացուցած էր մեր պատկանելիութիւնը:


Կարելի չէր մոռացութեան ենթարկել վերապրումի այդ հրաշքածին ժամանակահատուածը, երբ ի մասնաւորի «Հալէպ»-ը եղաւ թատերաբեմը անոր գործնական արարներուն: Այնտեղ քանդակուեցաւ մօտիկ նախահայրերու մաքառումի հերոսապատումը, կերտուեցան ազգապահպանման քարտէս մարտիկները, յանձինս դըպրոցներու, ակումբներու, եկեղեցիներու, հայրենակցական եւ բարեսիրական կազմակերպութիւններու եւ այլն եւ այլն:

Այնտեղ էին ազգային արժէքներու պահպանման լաւագոյն ոգեղէն թանգարանները, այսպիսի որակեալ տուեալներով Հալէպը արդարօրէն հռչակուեցաւ սփիւռքեան իրականութեան ձեւաւորման առաջին սերմնացանը:

Եւ այսպէս, հոգիի մենութեան արգելաւորի մէջ, տենչացիկը զգացական այն զէի եւ յորդառատ ջերմութեան, զոր կը տածէր անոր միջոցին մէջ: Կարօտը հալածեց մեզ, մարդասիրական այն հպումին, որ կ'ուղեկցէր առօրեայ կեանքի սահանքին: Եւ պատահական չէ երբ հայրենի հողին վրայ, անոր դժուարին եւ օրհասական պահերուն՝ (ռազմական պարտութեան եւ Արցախի հայաթափման ու կորուստի օրերուն) բռուն ցանկութիւնը ունեցանք ճշալու, արտասուելու, Հալէպի նեղիկ հնամեայ փողոցներուն սեւ պատերուն վրայ: Հալէպը միշտ առա-

ջատարն էր սփոփանքի եւ ցաւերը կիսելու մարդկային դերին:

Եւ ի վերջոյ բոլոր յիշուածներուն կողքին, դարձեալ մենութեան ճգնարանիս պատին, մերթ ընդ մերթ կը տողանցէ հասարակ պատմութիւնը փոքրիկ աղջնակի մը, որ իր աչքերը բացաւ այդ հին բայց գողտրիկ քաղաքին մէջ, ձեւաւորուեցաւ անոր անպաճոյճ կեանքին շաղախով, ժառանգեց գացողներուն ցաւը եւ ուզեց վերարտադրել անոնց երազը: Մեծցաւ հալէպեան ջերմոցի զգացումներով, ընտանիք կազմեց եւ իր տան պատերուն վրայ գրեց հալէպեան համատարած հեքիաթի մը տարբերակը: Եւ օր մըն ալ յառաջացած տարիքին, ստիպուեցաւ լքել այդ քաղաքը:



Նոր Տարուան սեմին...

Կանգնած Երեւանի տանս պատուհանին առաջ, կը դիտեմ Արարատը՝ մեր ուժականութեան եւ յարատեւութեան խորհրդանիշը: Կ'աղօթեմ առ Աստուած, որ անսասան պահէ ոտքերուս տակի հայրենի հողը եւ խաղաղութիւն ցօղէ անոր հազարամեայ լիներութեան վրայ:

Եւ յանկարծ հաստատակամօրէն կը քանդեմ մենութեանս կապանքները: Կը տրուիմ ընդգրկուն համայնական զգացողութեան: «Ես այստեղ եմ այլեւս, իմ հողին վրայ ու երկինքին տակ, այլընտրանքի անսակարկելի ուխտով»:

Սակայն այնտեղ հեռուն՝ տակաւին տունը կը յամենայ իր բոլոր մակրամասնութեամբ, անցած կեանքի մը երգի հնչիւններով, անմոռաց վայրի մը մէջ, զոր կը կոչէին «Երագային Հալէպը»...



ՄԱՍՈՑՔ ՄՄՄՆՈՐԻ

*Հրանդ Մարգարեան
9 Դեկտեմբեր 1996
Քանկրոս, Նիւ Եորք*

Կ'աղօթեմ, Տէ՛ր, որ ծառերը չմահանան...

Կ'աղօթեմ, Տէ՛ր, որ սէրերը չմահանան...

*Կաթիլներու ջուրին նման
վեր բարձրանան եւ ամպանան
ծածկեն գունտն այս ապականած
ու վար ցօղեն դանդաղօրէն եւ համօրէն
իջնեն գլխուն մէն մի մարդու եւ սրտերո՛ւն,
մաքրեն մաղձը ու նախանձը
մաքրեն կիրքը եսին հիւանդ:*

Կ'աղօթեմ, Տէ՛ր, որ ծառերը չմահանան...

*Կ'աղօթեմ, Տէ՛ր...
Սերմերու պէս դաշտին նետուած
ԽՈՂՁը ցնցուղ ցանե՛մ մտքին մէն մի մարդու
եւ տա՛մ անոր գիտակցութիւն՝
վեհին անեղծ
եւ վսեմին սրբամաքուր:*

*Կ'աղօթեմ, Տէ՛ր
Որ մարդուն մէջ
- կաւովն ափի՛ր մարդկայնացած-
Որ մարդուն մէջ,
- Քու պատկերով ճիշդ քանդակուած-
Որ մարդուն մէջ,
- ՄԱՐԴԸ... ՄԱՐԴԸ չմահանայ...*

Կ'աղօթեմ, Տէ՛ր...

Ծանօթ- Սոյն բանաստեղծութեան երաժշտութիւնը յօրինեց երջանկայիշատակ Սեդրիկ Բարիկեան, եպիսկոպոս Սեծի Տանն Կիլիկիոյ Սիաբանութեան, յԱնթիլիաս, Դեկտեմբեր 1998-ին եւ որը վերանայած է 1 Օգոստոս 2018-ին յԱնթիլիաս:



ՀՐԱՆԴԻ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ՝ «ԱՂՕՌՔ ԱՄԱՆՈՐԻ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

*Փրոֆեսոր Ճեյմս Բասըրթ Բասսըլ**

Լաւ բանաստեղծութիւնները կը ձեւաւորուին խոր մակարդակներու վրայ, որոնք



անծանօթ են զիրենք ստեղծող գրողներու գիտակցական աշխարհին: Բանաստեղծու-

թիւններ կան, որոնք պատկերներ կը բովանդակեն, յարաբերութիւններ կը մշակեն եւ հնչիւնային համակարգեր կը ստեղծեն: Ասոնք դժուար կը հասկցուին առաջին ընթերցումով, կամ՝ խտացած հիւսուածքով ուղղագիծ տրամաբանութեամբ:

Մարգարեանի բանաստեղծութիւնը կը սկսի աղօթքով, որ՝ ... ծառերը չմահանան:

«Ծառերը» բառը երեք բաղաձայն կը բովանդակէ: Առաջինը պայթուցիկ «ծա»ն է, երկրորդը, զօրաւոր թրթիռով «ռա» տառն է, որ կը խարսխէ «ծառերը» բառին պատկերը:

Երկրորդ տողը կրկնութիւնն է առաջինին, սակայն բանաստեղծը այս անգամ կ'աղօթէ, որ՝ սերերը չմահանան: «Ծառեր» բառին համանման այս բառը, «սէ» եւ «րէ» տառերով կը մեղմացնէ նախկինին մէջ նշուած բաղաձայնային կարծրութիւնները՝ զանոնք վերածելով մեղմ հնչոյթներու, ե՛ւ ետեւեամբ, ե՛ւ ստորադասութեամբ:

Ծառերը ջուրով կը սնանկին, եւ սերը, բանաստեղծութեան առաջին տան մէջ,

***Փրոֆեսոր Ճեյմս Բասսըլ շրջանաւարտ է ՆԵԻ Զոլոմպիա Համալսարանէն: Դոկտորայի թեզը պաշտպանած է Լոնտոնի Համալսարանի Արեւելեան եւ Ափրիկեան Բաժանմունքին մէջ: Դասաւանդած է Զոլոմպիա Համալսարան ապա ստանձնած է Փրոֆեսորի պաշտօն Երուսաղէմի Հիպրու Համալսարանին մէջ:**

1993 - 2016 Պաշտօնավարած է Հարվըրտ Համալսարան, որպէս Մետրոպ Մաշտոցի անուան Փրոֆեսոր, Մերձաւոր Արեւելքի Լեզուներու եւ Զաղաքակրթութեան Բաժանմունքին մէջ: Վարչական Անդամ է Տէյվիս Կեդրոնի Ռուս եւ Եւրոասիական Բաժանմունքին մէջ: Փրոֆեսոր է նաեւ Հին Մերձաւոր Արեւելքի, Իրանական եւ Հայկական Կրթական Բաժանմունքին մէջ:

Համաշխարհային համբաւ վայելող գիտնականը, բազմաթիւ գիտական ուսումնասիրութիւններու տեր է եւ հեղինակ՝ վեց համաշխարհայնօրէն ընդունուած անկիւնադարձային գիրքերու:

Ներկայիս կ'ապրի Ֆրեզնօ՝ ԱՄՆ, ուր կը շարունակէ իր ուսումնասիրութիւնները: Ան նաեւ այցելու փրոֆեսոր է կարգ մը համալսարաններու մէջ:

կը դառնայ ջուր, կը դառնայ ամպ, եւ երկրագունդին վրայ ցօղելով կը մաքրէ եւ կը սնուցանէ մարդուն ոգեկան էութիւնը:

Առաջին մասի երաժշտական ակադեմիան, բանաստեղծը կը հրամցնէ իր երկրորդ պատկերը, որը նոյնպէ՛ս, անձրեւի՝ դէպիվար հոսքին նման, կրկին կը կամրջուի «ծառ» բներգին՝ այս անգամ ցանուած սերմին հետ - իմաստութիւն եւ լուսաւորուած խղճմտութիւն մատուցելով մարդ արարածին:



Մենք բանականօրէն մտային հունտ կը ցանենք, որը կ'աճի եւ դէպի վեր կը սլանայ մեր գիտակցութեան մէջ: Եւ այսպէս, Մարգարեան իր գրութեան երկրորդ տունով, անձրեւի դէպի վար հոսքի ուղղութիւնը կը փոխէ դէպի վեր՝ վեհ եւ վսեմ... բառերով: Վերջին երկու բառերը քրիստոնէական սրբութեան խորհրդանշաններ կը մատնանշեն... անեղծ, սրբամաքուր...:

Դէպիվեր սլացքը մեզի դէպի Աստուած կը տանի, կերտողը մարդ արարածին, այն արարածին, որ ծառերու նման կաւով կամ կաւին մէջ կազմուած է: Բանաստեղծութիւնը կ'աւարտի աղօթքով՝ որ մարդ արարածը չմահանայ - բառացիօրէն:

«Մարդուն մէջի մարդուն մահացում» արտայայտութիւնը տրամաբանական մեղմ հակադրութիւն մը կը ստեղծէ: Ինչպէ՞ս կա-

րելի է իքսի մէջի իքսը մահանայ, առանց ամբողջական իքսը մահանալու: Յետագայ տողերը սակայն եւ բանաստեղծութեան հոլովոյթը կը լուսաբանեն այս հարցադրումը եւ կը լուծեն հակադրութիւնը:

Մարդը նուաստացած էակ է առանց կարեկցութեան ջուրին եւ լուսաւորութեան հունտին: Առանց անոնց, ան չի կրնար հասնիլ մարդկային կարողականութեան իսկութեան: Կարեկցութիւնն ու լուսաւորութիւնը վերուստ տրուած պարգեւներ են, եւ որոնց կարելի է հասնիլ միմիայն աստուածային շնորհքով, որը կը տրուի ի պատասխան աղօթքի աղերսին:

Յոմերոսեան իսկութեան տեսութիւնը, մարդը կը ներկայացնէ որպէս ծառ: Ծառին փոփոխուող տերեւները իր սերունդներն են, ճիւղերը՝ իր գաւակները, իսկ պատերազմը սուր կացին է, որ սարերուն վրայ գտնուող կաղնիները կը հատէ:

Երբ մարդ կը ձախողի մարդ ըլլալէ՝ պատերազմելու կը դիմէ:

Մարգարեան իր բանաստեղծութեան մէջ ներմուծած է հին հնդեւրոպական՝ մարդարարած-ծառ յարակցութիւնը, որ կը բացայայտուի նաեւ հայկական ակնհայտութեան՝ ծառն կենաց բառակցութեամբ: Մարգարեան ներմուծած է նաեւ քրիստոնէական խորհուրդը՝ զայն դրսեւորելով մտային, կառուցուածքային եւ լեզուական հնչեղականութիւններով:

Այս փոքրիկ գլուխ գործոցը իր արժանի տեղը կը գրաւէ Հայ բանաստեղծութեան անդաստանին մէջ:

Քսաներորդ դարու շարական մըն է այս բանաստեղծութիւնը եւ աղօթք՝ յաջորդ հազարամեակին համար:

**Հարվըրտ Համալսարան, ԱՄՆ
Հոկտեմբեր 1997**





ՆԵՐԲԱՆԱԳԻՐ

Յարվարդ

Հայոց ճակատագիրը ճակատի վրայ չէ գրուած, ոչ ալ ձեռքի ափի մէջ՝ այն ճիւղաւոր ուղին որ գնչու բախտագուշակը կարդալով կը պարզէ, (փողի փոխարէն):

Թափառական Հայուն «գիր»-ը ոչ թէ ճակատին՝ այլ ներբանին վրայ է գրուած. հանենք կօշիկ գուլպայ ու մեր ներբանի Գիրք Ելիցը՝ կարդանք ու պարզենք...



Քալելով հեռանալ՝ Հողէն՝ արմատախիլ, ափ յափոյ՝ թէ ոտքը հողին խրել՝ արմատ նետած՝ ճիւղ տալ կրկին, մեր թռչող տրոններու կարկինը լայն բացած այս անգամ: Զէնք՝ քան եկեղեցի կառուցել:

Բուռ մը Հող եւ ափ մը մոխիր (ո՞վ պիտի բերէ Սիամանթոյիս համար),

* Ափ մը արցախաբոյր հրաժե՞շտ թէ ցտեսութիւն. պատմութեան ընթացքին տեղաշարժներն անթիւ, տեղերը իրենց տեղը երկար չեն նստիր. մէկ քայլ ետ կ'երթաս՝ հող կու տաս, պայմանաւ որ երկու քայլ առջեւ երթաս՝ Հողը ետ առնես.

* Եւ բուռ մը հող (փոքրիկ շիշի մէջ, բերուած 1984-ի պիոներական շրջապտոյտիս՝ Էջմիածնի Մայր Տաճարի պարտէզէն): Հիմա ինչ. շիշի հողին գոյութի՞նն ալ եղաւ թեական, գերթ Շուշի... Ալիեւը իր ոտքը Սեւանայ լիճի դիմացի ափի՞ն պիտի խրէ... ափս մէջ այս մէկը չէ գրուած...

Մնաց ուշի,
Ախ իմ Շուշի,
Կոկորդ փուշի,
Երբ դու նորից
Մայր Հայաստան
Պիտ' վերա-ԴԱՌՆ-աս:

Զունեցանք՝ չունինք վստահելի Մովսես ու գաւազան՝ դուք հայոց Լաչինի վիզէն՝ միջանցքէն Ելքը՝ Տեր Զօրի անապատին հարցուցէ՛ք, այն օր երբ երկինքէն անձրեւի փոխարէն խաչքար պիտի տեղայ եւ ճամբաները մեր թափառական բոպիկ ներբանները՝՝՝ նորէն պիտի լիզեն:

- 1 Exodus
- 2 հապճեպ, աճապարանքով
- 3 ոտքի տակի մասը

TATTOO

Պարզ մատիտով «սեր» մի՛ գրեր

**Օր մը սրբիչդ կը սողայ
Սեւագիրիդ հետքը կը թողու
Անընթեռնելի
Գրաքննութեան գոհի պէս**

**Լրտեսներու մելան ալ չ'ըլլար
Այն որ եօթը օրէն
Ինքնիրեն կ'անհետի
Եթերի մէջ ~ աննշմար**

**Զեռագիրդ սրբատեսիլ ~
Դուն «մեր սերը» ասեղնագրէ
մորթիս վրայ
Խոստումդ ամենուրեք
հետս գայ**

**Պարզ մատիտով «սեր» մի՛ գրեր
Ոչ ալ լրտեսներու մելանով
Դաշուածքի արիւնը վկայ**



ԵՐԿՈՒ ՔԱՆԱՍՏԵՂՕՈՒԹԻՒՆ

Տիգրան Գաբրյեան

Երկու հին բանաստեղծություններուս առիթով (որոնք հրատարակուած են առաջին գիրքիս՝ «Դէպի Երկինք Արձակուած Նետ»-ին մէջ եւ որոնց համար փափաքեցայ նորէն հրատարակութիւն մը, յետին ու շրջուած կարգով մը- այս անգամ մամուլին մէջ- ուստի դրկեցի «Գանձասար»-ին):

Այս երկու բանաստեղծութիւններս գրած եմ պատանեկան տարիքիս, այո՛ անոնք սիրային բովանդակութեամբ չեն, բայց կը յիշեմ որ այդ ժամանակուան սիրա-

իրերը, եւ յաճախ ականայ այդ հենքի ինքնամղումով կ'ուզես հասկնալ հարցերը:

Հիմա երբ կը վերապրիմ այդ շրջանի բանաստեղծական ներշնչանքիս պահերն ու



նոյն ժամանակներու զգացումային, իմացական եւ հաղորդագրային գեղումները, թրթռացումները, իւրացումները, ըլլալները, բռնկումներն ու ըմբռնումները, պարզապէս կը փշաքաղուիմ, չըսելու կը լիանամ, ժամացոյցով մը կը ժամանականամ, կը կեանքագերծուիմ եւ նոյն ատեն կը կեանքահոսուիմ ինձմէ դուրս եւ ներս: Այո՛, դժուար է, քաղցր է, բայց դարձը դէպի գրուած բանաստեղծութիւնները եւ անոնց ծնունդով

հարուածութիւնս պարուրանք ու մղում տուած էր ամէն ինչին, եւ անոնց միջոցաւ յատուկ ռոմանթիզմ՝ գրածներուս:

Կարծեմ երբ սիրահարուած ես, անցած ու կատարուող դէպքերը անձնականացած կերպով ու սիրած անձիդ էութեանկանութեամբ կը դիտես ու կը զարդարես անով

տարուիլը պարզապէս հրաշքային կը թուի ամէն չափանիշներով եւ ամէն ինչէ աւելի:

Այս բանաստեղծութիւններս գրած եմ երբ տօնածառին քով նստած էի եւ այդ ծառին տակ պզտիկ մտւորը կար Յիսուս մանուկին, իբրեւ անմասն ոգի եւ հաղորդութիւն:

Սիրահարուած էի օրթոտոքս սուրեանի աղջկայ մը, որ առաջին սիրոյ անձնականացած, ապրելի, երեւակայելի, մաքրածին ու տիեզերք կերտող շունչ տուաւ ինծի: Կարծեմ հիմա ամուսնացած է եւ զաւակներ ալ ունի (Ժողովրդային՝ իմաստ փնտռող ասացուածքով չխուսափիմ ըսելու, որ եթէ ամուսնանայինք, հաւանաբար մենք ալ մեծ զաւակներ կ'ունենայինք հիմա...):

Յալէպ, մանկութիւն, պատանեկութիւն, հայկական, արաբական եւ շատ մը լեզուներով երգեր, իրացուած ու միշտ չհասնող տարածութիւններով: Յայ, քիւրտ, սուրեանի, թուրքման, մեծ ու փոքր փոքրամասութիւններ, որոնք կ'ուզեն կերտուիլ մեծամասնականութեամբ մը, եւ որոնք քաղաքականութիւններ միշտ կ'ուզեն վանել, բայց միշտ հին դերերով անխախտութիւն մը կ'ապրին:

Յալէպ, ուր գերանձնականացած էր ամէն ինչ, ուր իտեալիզմը շատ դիւրին կը հասներ ու կը կերտուէր ամէն մէկ վայրկեանին մէջ օրուան, բայց ան կրնար նոյնպէս դիւրաւ քանդուիլ խաղի մը, սիրոյ մը, հանդիպումի մը մէջ, «այնքան մեծ-փոքր կամ այնքան փոքր-մեծ» կերտումով-կտրուածքով մը:

Ես սիրահարուած էի եւ միացած այդ

ժամանակուան պատանի բոլոր սիրահարուածներուն. կը կարծէի, որ պիտի գտնեմ ճանաչումը մարմինին, հոգիին, տենդին, ձեւին եւ ուր որ է ամէն հպում ու թարթում յայտնագործումէն պիտի տաներ ինծի դէպի մեծ ու բոլորուած կերտումն ու կայացումը: Բնականաբար չեղաւ այդ մէկը եւ տակաւին այդ հեւքի կարօտը կ'ուզէ իշխել ամէն տեղ ժամանակը նուաճելու եւ յաւերժ պատանի, գեղուն, ծաղկած, փնտռելի, անաւարտ ու հոսող անժամանակ ապրուածութիւնը անհրազործաբար տեսնելու, շօշափելու, ըմբռնելու եւ ըլլալու. «Ես եմ ժամանակը, չփախիք ինձմէ, եղէ՛ք միշտ հոս անցեալ ու ապագայ» բնագիրի կատարմամբ:

Կը գրես որ յիշես, վաւերագրես, կը վկայես, կը կերտես նախ նոյն տուեալ վայրկեանի հոգիիդ համար, յետոյ կը հրամցնես եւ կու տաս (անկախ, թէ կը կարդան կամ չեն կարդար) այս ընթացքը ամենամեծ արիեստագիտութենէն, գիտութենէն, ժամանակէն չի նուաճուիր կարծեմ. ու այդ ընթացքը ստեղծագործութեան ինչքան ալ ուժ, տարփանք, խիճի ու երազականացում տայ, որպէսզի ապրիլ սորվիս եւ կերտես ինչ որ ես, կը մնայ յուզական, ռոմանթիք, անհասանելի եւ չիրականացուող:

ՅԻՄՈՒՄԻՆՆ՝ ԾՆՈՒՆՊԻՆ

*Կարելի անյայտ հայեացքդ սպառնաց տողերուս,
որոնք դեռ չընդգրկած ճերմակ ծով ու արեւ,
դարձան ծառայ քու ցանկութեան ու մաղձ տուին ճիգերուս,
որոնք ննջեցին վհատ, լքելով թուիչք ու թեւ:*

*Բայց երբ հիմա ես յուզեմ հոգիներս սիրելի,
պիտի գոռան սրտիս անդունդները անտարբեր
ու նզովեն իմ հէգ տաղին հայհոյանքով նագելի,
որ ըմպեցուց տողերուս Յիսուսի հուրքն լուսաբեր:*

*Այս գիշերուայ անյոյս ճիչին ես ի՞նչ փառքով այցելեմ,
երբ ան յոգնած կ'ունկնդրէ Յիսուսիս երգը նաչխուն,
միթէ՞ պէտք է յաւերժի չոր ուսերը շօշափեմ
կամ յաւերժ մը շալկեմ նետելով այս գիշերուան աստղերուն:*



ԾԱՌ



Նստած եմ տրտում, գուլալ է հոգիս,
քովս կը շնչէ ծառ մը դարաւոր,
միւս կողմէ սիրտս հուր կու տայ մտքիս,
եւ ես կը յորդիմ տանջանքով հօօր:

Գիշերը մեղմիկ ողջունեց ցաւս,
ու փռեց անշէջ յաւերժի ուղին,
գրիչս ժպտաց եւ այրեց ողբս,
բայց ես մնացի գերի վառ սէրին:

Գթաց իմ վրայ նոյնիսկ չար քամին
եւ ցանկաց տանիլ կարօտը իմ հին,
բայց երկչոտ սիրտս չուզեց որ դպչի,
քամիին դէմքը կոյս աղջկայ դէմքին:

Արցունքներ անմեղ թուղթս թրջեցին
ու պատմեցին լուռ ամէն գիշերուայ
ահն ու սարսափը ու սիրուն տենդիս
կարծես յանձնեցին հուրք մը հնամեայ:

Հոգիս պինդ կուլայ բայց կը ճանչնամ գինք,
երբ հարկ է ճչայ կը դառնայ խրոխտ
Օ, իր կամքն ու ձայնն այո կը սիրեմ
բայց չեմ ուզեր իր այս արցունքը կրքոտ:

Նստած եմ տրտում, գուլալ է հոգիս,
քովս կը շնչէ ծառ մը դարաւոր,
վաղը նոր տարի, վաղը նոր տարի
աշխարհ միշտ ուզէ նուէրներ նոր-նոր:

ԴԵՐԵՐԱ

Յակոբ Նալպանտ-Տլտլեան



Կեանքի հարթակիս
Եռուզեռին մէջ
Գունաւոր
Անգոյն
Ինչ բեմադրիչներ
Եկան ու անցան

Եւ ամէն մէկը
Ինծի դեր մը տուաւ
Եւ կաղապար մը
Ինծի համար գտաւ

Ինչքան փորձեցի
Դերի մէջ մտնել
Կաղապարի մէջ
Ինքզինքս գտնել
Նոյն արդիւնքն էր
Ես այդ դերերէն
Կաղապարներէն
Ոչինչ հասկցայ

Դերը սորվեցայ
Անոր տիրացայ
Բայց վարագոյրը
Երբ որ բացուեցաւ
Հարթակի վրայ
Դերս չսկսած
Շուտով վերջացաւ
Ես դերս մոռցայ
Բայց իրար չանցայ
Իմ փոխարէն
Յուշարարները
Իրարու անցան
Որովհետեւ ես
Յուշարարներն ալ
Անտեսած էի

Իսկ հանդիսատե՞ս
Հանդիսատեսը
Զիս այդքան սրտանց
Եւ ջերմ ընդունեց
Եւ սրտին սեղմեց
Որովհետեւ այդ
Հանդիսատեսն ալ
Իրեն վստահուած
Եւ նախատեսուած
Բազմաթիւ դերեր
Սորված
Մարսած էր
Վերջն ալ
Մերժած էր
Հիմա նոր անդեր
Դերասանի մը
Ծնունդի ծէսին
Ներկայացած էր

Եւ ես այդպէս ալ
Բազմաթիւ դերեր
Անխոնջ սորվեցայ
Այդ առօրեայով
Երկար տարուեցայ
Իրմով ապրեցայ
Դերերու միջոցով
Ես ուրախացայ
Խորապէս տխրեցայ
Մէկ-մէկ հիացայ
Խորքէն զգուեցայ
Հիասթափուեցայ
Սակայն դերասան
Երբեք չդարձայ...



ԿՐԿԻՆ ԴՈՒՆ

Մարուշ Երամեան



*Ձե՛մ ընդունիր հոգեվարքը լեզու-իս
ձիչդ այդպէս
Ձե՛մ ընդունիր տեղագրել քանդուժը քաղաքիս
Այնքան ատեն որ կամ
Կանք միասին
Աւերակներուն վրայ
Ոչ թէ թագաւորելու
Ապրելու համար*

*Մնաց անունդ թեւածող մեր կեանքերուն
Անունդ նէնէիս գիրկին չափ տաք
Ու անոր պէս գուրգուրոտ
Որ ահա կը թեւածէ աւերին վրայ
Եւ կեանք կը փչէ անոր կողերուն*

Նուագեցան հիմա ցնցումները հողին
Ատենն է որ սկսինք նոր այբուբենի
Սերտենք օրերը չաւարտած
Մահը չհասած

Կեանքը գունաւոր էր մեր կապոյտ
Երկնքին տակ
ցաւերուն ծամերը փռած
Եւ անոնց վրայ ականակուռ ծամակալները գալիքին
Որ ուշացաւ
Մինչ պատմութիւնը ժանգ կը կապէ
Ծամերուն եւ ծամակալներուն վրայ


Բայց չմոռնալ արքան
Որուն նժոյգին սմբակները կ'արձագանգեն
Դեռ¹
Լեզուիս տառերուն հետ
Մինչեւ օձերու դարպասը
Եւ անկէ
Մինչեւ մեր կապոյտ-կապոյտ երկինքը
Որ օր մը Ալիծը² ծալեց
Չորս տակ ըրաւ
Եւ գրպանը դրած հետը տարաւ
Հեռու- հեռո՛ւ ...

Հիմա կը հաւաքեմ
Բոլոր կարեւոր բառերը
Էականները
 էութիւն-ոգի-ճակատագիր-հոգեվարք
Եւ անոնց ցանցը կը փռեմ
Մեր վրայ
Որ անձրեւը չթրջէ մեզ
Բայց ոռոգէ հունտերը
Որ ծլին ծլին ծլին
Վաղուան հողերուն վրայ

Չուզեցի տեղագրել հոգեվարքը լեզուիս
Կայի դեռ եւ ինձի հետ քանի մը ուրիշներ
Որոնց համար ան վայր էր
էութիւն կենսաձեւ

Ու եթէ պիտի վերջանայ
Թող վերջանայ անմահութեան
Ամուր հաւատքով

¹Ակնարկ Տիգրան Արքային եւ Հալեպի բերդին
²Յեթիաթասաց Ալիծ Աղպապեան



ՎԱՐՊԳԷՍ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ. «ԱՐՈՒԵՍՏԸ՝ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԽՕՍԻՆ Է»

*Հարցազրույցը վարեց
Չարմիկ Պողիկեան*

Քանդակագործ Վարդգես Պարսումեանի հետ ստորեւ ներկայացուած զրոյցով խօսեցանք մշակոյթի, արուեստի եւ հաւաքական ճիգով զանոնք երիտասարդութեան հետաքրքրութեան շրջածիրին մէջ պահելու մասին: Արուեստագետը ունի քանդակագործութեան եզակի նմոյշներ, որոնցմէ քանի մը պատկեր կը կցենք հարցազրույցին: Դասաւանդած է «Արշիլ Կորբի» եւ «Սարեան» կերպարուեստի ուսումնարաններէն, Համազգայինի Հայագիտական Հիմնարկէն եւ Հալէպի պետական համալսարանի գեղարուեստի համալսարանէն ներս:

Խմբ.

«Գանձասար»-Պարոն Վարդգես, քանդակագործութեան հանդէպ ձեր հետաքրքրութիւնը ուրկէ՞ սնանած է:

Վարդգես Պարսումեան- Հայրս քանդակով զբաղած է: Անիկա իր ամէնօրեայ զբաղումը չէ եղած, սակայն տեսած եմ, թէ ինչպէ՛ս մերթ ընդ մերթ քանդակ կը գործեր: Երբ մայրս յաճախ մատիտ կու տար, որ օգտագործեմ դասերուս համար, կը գծէի գրելու փոխարէն: Գծելով նկատեցի, որ հակում ունիմ նկարչութեան ընդհանրապէս: Աւելի ուշ մայրս գիս փողոցէն ներս բերելու համար Ձաւէն Պարտագճեանին մօտ դրկեց՝ գծագրութիւնս բարելաւելու: Այդ ընթացքին Ձաւէն Պարտագճեանը 2-3 անգամ տեսած ըլլալու եմ միայն: Ձաւէնը ազատ կը ձգեր գծողը: Ինծի առանձին սենեակ մը տրամադրեց ու սկսայ շարժապատկերներու հերոսներ գծել: «Տիգրի»-ի գիրքը յանձնեց ինծի, որպէսզի սորվիմ, թէ շարժապատկերի հերոսներ ինչպէ՛ս կը գծեն փուլ առ փուլ: Այդ մէկը ինծի համար յայտնաբերութիւն մը եղաւ: Հետագային՝ 1981-ին, «Սարեան» կերպարուեստի ուսումնարան յաճախեցի: 13 տարեկան էի, երբ սկսայ լրջօրէն գծել: Դասատուս՝ պրն. Սարգիսը, որոշ չափով ուղղեց գիս: Երկրորդական ուսումնաւարտելէ ետք Հայաստան մեկնեցայ մասնագիտանալու

քանդակագործութեան մէջ, ծաւալը, տարածութիւնը ինծի համար արժէք ունէին: Տափակութենէ չէի ախորժիր: Անշուշտ կրթութիւնը քանդակագործ չի դարձներ ուսանող,



որ, հետեւաբար ինքնաշխատութեամբ, պրպտումներով զարգացուցի հետաքրքրութիւններս ու մասնագիտացման ուղի մտայ: Թէ որքանո՞վ արուեստագետ եղայ, Աստուած գիտէ...

«Գ.»- Հալէպի մէջ, որպէս արեւելեան քաղաք, քանդակագործի աշխատանքը դժուար կը համարե՞ք, նկատի ունենալով որ այս արուեստը արաբական միջավայրերու մէջ շատ ընդունելութիւն չի գտներ:

Վ.Պ.- Արուեստ կիրարկելը ամէն տեղ դժուար է, որովհետեւ ժողովուրդին ամէնէն չնչին տոկոսն է, որ արուեստով կը զբաղի: Ան որ ալ կը զբաղի, կը հաւատամ, որ

Աստուածային մղում մը ունի իր մէջ, միայն իր կամքով չէ որ կ'ուղղուի արուեստի մարզ: Միայն իր կամքով առաջնորդուողը կը ձախողի, որովհետեւ արուեստը *ֆանդազիա* մը չէ, ուղեղիդ մէջ կը ծնի ու քեզ կը մղէ:

Ներկայ աշխարհի ողջ քաղաքականութիւնը հակամշակութային է: Եթէ լրջօրէն արուեստով պիտի զբաղիս, լուրջ հարցեր պիտի յարթահարես, որովհետեւ մարդիկ լուրջ արուեստ չեն փնտռեր ընդհանրապէս, այլ՝ սպառողական արտադրանք կ'ուզեն:

«Գ.»- Մշակոյթը, անոր պահպանումը որքան՞վ կարելոր են համայնքի մը ազգային դիմագիծը պահելու համար:

Վ.Պ. Մշակոյթը սահմանելը բարդ բան է: Փոքր տարիքէս հօրս հետ կը վիճաբանէի կրօնք ու մշակոյթ հասկացութիւններու սահմանման շուրջ: Տարիներու ընթացքին պեղելով ըմբռնած եմ, որ եթէ մարդ արա-



րածը անտառի մէջ թողուս, շրջապատը կապկելով վայրենի պիտի դառնայ, ուրեմն մարդ պետք է նկարագիր ունենայ եւ այդ նկարագիրը ընկերութեան մէջ կը ձեւաւորուի: Մարդ իր էութեամբ ստեղծագործ է, սակայն այդ շնորհքը իր մէջ պահուած բան մըն է: Կրնայ ըլլալ արտաքին աշխարհը կապկելով դուրս չելլէ: Մարդկային ընկերութիւնը իր մասնագետները կ'ունենայ: Մասնագիտացած մարդիկ կ'ըլլան տարբեր բնագաւառներու մէջ: Հայրս կ'ըսէր գիւղատնտեսութիւնն ալ մշակոյթ է: Գիւղատնտեսութեան գործիք պատրաստելն ալ մշակոյթ է: Այն ինչ որ մարդու զգայարանները կը զարգացնէ՝ մշակոյթի մաս կը կազմէ, կը զարգացնէ, բայց հետեւողական ճիգով եւ ծրագրուած աշխատանքով միայն: Եթէ գիւղացի ես եւ գործիք մը շինելու համար ջանք չես թափեր, նախնիներուդ բաժիրը կը գործածես, կը նշանակէ լուրջ խնդիր մը ունիս: Կ'արտադրես, բայց մշակոյթը կը կապկես

տակաւին: Մշակոյթ ստեղծող չես: Կապկելը բնականաբար պիտի շարունակուի, նոյնիսկ անգիտակցաբար: Բայց երանի անոնց, որոնք չեն կապկեր, այլ նորութիւն կը բերեն: Արուեստի մէջ երբ կապկող ես, դժուար թէ ստեղծագործ եւ ինքնուրոյն դառնաս: Ինքնուրոյն կ'ըլլաս, երբ սեփական միտք ունիս եւ սեփական սրտիդ ձայնը կը լսես, կը սկսիս անձդ յայտնաբերել: Հետեւաբար անձիդ խնդիրները կը տեսնես ու կը սկսիս այլոց խնդիրներն ալ հասկնալ ու նկատել: Մարդ արարածը եթէ չկրթուի, չի զարգանար, կը մնայ կենդանական մակարդակի վրայ կամ աւելի վար ալ կ'իջնէ: Մշակոյթի գործերը պահպանելը, տեղ մը հաւաքելը ճիգ կը պահանջէ: Պատմութեան մէջ որոշ շրջաններ եղեր են, երբ որոշ մարդիկ մշակոյթ պահպանելով, զարգացնելով զբաղեր են, իսկ ուրիշներ՝ կապկողներ դարձեր են:

Կապկելը հարց չէ, բայց երբ բան մը կապկես, անոր արժէքն ու իմաստը չես հասկնար: Արժէքը հասկնալու համար պետք է մշակոյթի մարդ ըլլաս, ոչ թէ արուեստի: Եթէ կապկողական է, փոխանցում է: Ձեռագիր մատենանը կը պատճենահանես, որպէսզի փոխանցուի եւ չկորսուի: Մարդ կայ ձեռագիրն անգամ չ'ընդօրինակեր, գլուխ չունի: Մշակոյթը իրական է, գիտական է, հեքիաթ չէ: Մարդոց հաւատացնելն է, թէ աչքը կամ ուղեղը զարգացնելը ինչ բանի կը ծառայէ: Մարդ կայ կը շեշտէ, որ դրամն է կարելորդ: Եթէ դրամը կարելորդ է, ուրեմն մշակոյթին խօսք չմնաց: Ուրեմն ամէն ինչ կը ծախուի: Երկիրն ալ կը ծախուի, հայրդ ալ կը ծախուի: Ամէն ինչ ապրանք է, կը գնուի եւ կը ծախուի: «Ուր հաց հոն կաց» տրամաբանութեամբ: Այսինքն դուն մշակութային խնդիր չունիս, դուն ձրիակեր ես, տըզրուկ: Կ'երթաս հոն, ուր հանգիստ պայմաններ կը ստեղծուին: Եթէ անհատը այդ տեսակի է, ուրեմն մշակոյթի մասին կարծիք յայտնելու, հրահանգներ արձակելու իրաւունք չունի: Մշակոյթին հետ երբ կազմակերպուածօրէն գործ չես ունենար, կը նշանակէ իրաւունք չունիս անոր մասին խօսելու: Այնքան ատեն որ մարդիկ, խումբեր իրարու վրայ վստահութիւն չունին, մշակոյթ չի կրնար ծնիլ, այլ պարզապէս կը շարունակուի: Ատկէ գէշն ալ կրնայ ըլլալ, երբ եղածն ալ չշարունակուի: Մենք այսպիսի հոսանքի մէջ կ'ապրինք ներկայիս: Մշակոյթը անհատներն են, ինչպէս օրինակ՝ Պարոյր Սեւակը: Անոնք ժողովուրդը դաստիարակող



դեմքեր են: Բայց երբ նմաններուն թիւը կը նուազի, կամ պետութիւնը բացարձակապէս չի գորակցիր գրողներուն, արուեստագետներուն, երկիրը կը պարպեն, կը թալանեն ու թոյլ կու տան, որ իրարանցում ըլլայ ու որոշ մարդիկ իշխանութեան հասնին, գործ աշխատին եւ զիրենք քննադատող չըլլայ: Մշակոյթը, հետեւաբար, գոհողութիւն կը պահանջէ գոյատեւելու ու զարգանալու համար, իսկ մշակոյթի մարդը այս գործին սիրտ եւ կեանք տուողն է:

«Գ.»-Ձեր կարծիքով նոր սերունդը ինչպէ՞ս կարելի է բերել, մօտեցնել մշակոյթին: Լոկ կառոյցներ ունենալը բաւարար է՞ արուեստը, մշակոյթը պահելու համար:

Վ.Պ.- Կառոյցները շատ յաճախ պա-



րապ կը մնան: Համազգայինը մտաւորական մարդիկ հիմնած են: Երբ անոնք մահացան, իրենց աշակերտները յաջողեցան իրենց վարպետներէն սորվածը փոխանցել, բայց որակի անկում եղաւ: Երրորդ սերունդը ասելի ինկաւ: Սփիւռքը հիմա պարպուած է ստեղծագործ ապրելակերպէ: Մարդոց գերագոյն խնդիրը ուտել-խմել եւ կենցաղը շարունակելն է: Իսկ եթէ մարդ մշակութային գործէն դրամ չչահի, դժուար է զինք բերել մօտեցնելը: Հետեւաբար պատասխանատու կազմը որքան աշխատասեր է եւ նպատակասլաց, այնքան իր չորս կողմը մարդ կը հաւաքէ, որովհետեւ կը հաւատայ որ այդ է աշխատանքի իսկական ձեւը: Գիտելիք փոխանցելը հմտութիւն կ'ուզէ: Զրոյցները կարելոր բաներ են: Երբեմն ճիգեր եղած են համախմբելու մարդիկ: Պետք է մարդոց իրարու մօտեցնել եւ հաւաքել:

Օրինակ, մեր եկեղեցին ոչ միայն մարդու հոգեւոր կրթութեամբ պետք է զբաղի, այլեւ մարդոց մշակումով: Եթէ եկեղեցին չ'ընէ այդ աշխատանքը ու միայն ծի-

սակատարութեան վայր դառնայ, չի յաջողիր իր նպատակի իրագործման մէջ: Ամէն մարդ համակարգի մէջ մտնել չի սիրեր: Շատեր համակարգը կը մերժեն, որովհետեւ անոր մէջ մտնելը համեստութիւն եւ ենթարկուիլ կը պահանջէ: Իսկ ինչ է արուեստին դերը: Արուեստը ճշմարտութիւնը խօսիլն է: Արուեստը Տոստոյեւքիին պէս ինքզինքը մարդոց պատմելն է: Այն ատեն մարդիկ քեզ կը սիրեն, որովհետեւ դուն իրենց խօսիլ չկրցածը համարձակութիւն կ'ունենաս խօսելու, կախարդելու: Ահա թէ ինչո՞ւ կարելոր է մեր սերունդները մօտեցնել արուեստին, մշակոյթին:

«Գ.»-Պատմութեան մէջ ունեցած ենք շրջաններ, որոնց ընթացքին կորսնցուցած ենք հող, տեղ, հարստութիւն, նիւթական եւ այլն, բայց մշակոյթը պահուած է, որովհետեւ հոգեւոր արժէք է: Այդ արժէքը հետագային նպաստած է կրկին կազմաւորուելու, դառնալու պետութիւն, Սփիւռք:

Վ.Պ.- Մշակոյթը պահելու համար կըրթուած մարդիկ, մտաւորականութիւն պիտի ունենաս: Լեւոն Շանթի, Աղբալեանի նման մարդիկ, որոնք թէ՛ իրենք զիրենք զարգացուցած են, թէ՛ կազմակերպուած աշխատանք տարած են, մարդ պատրաստած, մարդոց գիտելիք՝ փոխանցած: Երբ համոզուած են, որ սորվելով իրենց կեանքը կը բարելաւուի, հաւաքուած են այդ նպատակին շուրջ ու հաւաքական աշխատանքի վերածած են զայն:

«Գ.»- Պրն. Վարդգէս, եթէ ձեզի որոշ տարածք մը տրուի, ի՞նչ կ'ընէք մշակոյթը երիտասարդութեան առօրեային անբաժան մասը դարձնելու համար:

Վ.Պ.- Ինչ որ ես գիտեմ՝ քանդակի միջոցաւ: Ես քանդակել կը սորվեցնեմ եւ ինչ որ անոր հետ կապ ունի: Ի՞նչը քանդակին հետ կապ չունի: Գրեթէ ամէն բան կապ ունի: Մազի ձեւը, սանտրուածքը, եղունգի յարդարանքը եւ արդն ու զարդը: Կը բերել կաւ, կ'արտադրել կուժ, սակառ եւ ամէն ինչ որ կերպարուեստի հետ կապ ունի եւ ցուցափեղկի մը մէջ կը ցուցադրելիք մեր գործերը: Հետագային աշխատանքը կ'ընդարձակելիք ու կը մտնելիք արհեստներու մէջ՝ սորվեցնելու որ աթոռ շինելը մեծաւ մասամբ կապ ունի կերպարուեստին հետ: Եթէ դուն լաւ աթոռ շինող պիտի ըլլաս, պետք է չափի, աչքի եւ հանգստութեան ապահովման օրէնքները իմանաս: Ստեղծագործ պետք է ըլլաս:



ՄՏԵՐՄԻԿ ԶՐՈՅՑ՝ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ԶԱԼԷՆ ՊԱՐՏԱՔՃԵԱՆԻ ՀԵՏ

*Չրոյցը վարեց
Չարմիկ Պողիկեան*

Հալեպահայ գեղանկարիչ Չալեն Պարտաքճեանի նկարները իւրայատուկ են իրենց արդիական ոճով ու խորութեամբ:

Պարտաքճեան ոչ միայն ստեղծագործած, այլև արուեստի ուսուցման մէջ իւրայատուկ դեր ու ազդեցութիւն ունեցած է: Իր աշակերտներէն շատեր արուեստի ոլորտին մէջ արդէն յայտնի անուններ դարձած են:

Արուեստագետը իր առաջին քայլերուն մասին խօսելով հետեւեալը պատմեց.

«Զարէն Եփփէ Ազգ. Ճեմարանի տասներորդ կարգի մեր գծագրութեան ուսուցիչը՝ Եգեկէլ Թորոսը, գծագրութիւններս տեսնելով առաջարկեց որ յետմիջօրէին Ճեմարանի կառոյցին ետեւի բաժինին մէջ գծագրութեան տրամադրուած հաւաքատեղին, սրահը յաճախեմ ու գծեմ: Առաջին գծագրութիւններս տեսնելէն ետք, մատիտով գծուած նկար մը տուաւ ու թելադրեց ներկել: Երբ ներկեցի ու իրեն ցոյց տուի, «դուն սորվելու կարիք չունիս», ըսաւ ու ինծի վստահեցաւ այդ կեդրոն յաճախող աշակերտներուն ուղղութիւն տալը: Յետմիջօրէններուն աշակերտներ կու գային հոն գծելու: Ես այլ կը գծէի, միաժամանակ կը հսկէի եւ ուղղութիւն կու տայի անոնց: Այսպէս սկսաւ ուղիս կերպարուեստի ճամբուն վրայ: Նախքան Ճեմարանը ասարտելս, այս խումբը մասնակցեցաւ Սուրիոյ օրուան նախագահին հովանաւորութեամբ Հալեպի մէջ կազմակերպուած ամենամեծ «Ռապիի» անունը կրող ցուցահանդեսին, որ տպաւորիչ ձեռնարկ մըն էր»:

Պարտաքճեան այնուհետեւ, համալսարանական ուսման տարիներուն, համալսարանական միջավայրին մէջ մասնակցած է ցուցահանդեսներու, որուն ի տես զինք նշա-

նակած են Հալեպի պետական ընդհ. համալսարաններու արուեստի պատասխանատու՝ անհատական բոլոր ցուցահանդեսներու վաւերացումն ու հաւաքական ցուցահանդեսներու կազմակերպումը իրեն վստահելով: Շրջան մը արուեստ դասաւանդած է Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանէն եւ Կիլիկեան վարժարանէն ներս:



Այդ օրերուն, Համազգայինի վարչութեան անդամներ Չալեն Սապունճեան, Յարութ Հալլաճեան եւ Կարպիս Դերձակեան առաջարկած են Պարտաքճեանին կերպարուեստի դասընթացք մը կազմակերպել Համազգայինի անունով: Առաջարկը ընդունած է այն պայմանով, որ վարչական պատասխանատուներ չմիջամտեն աշխատանքին, որովհետեւ մասնագիտական աշխատանքը ազատութիւն կը պահանջէ: Սկիզբը՝ տատամսած, ապա շրջան մը վերջ զինք իրաւիրած են կերպարուեստի դասարան մը բանալու՝ Ճեմարանի կառոյցին ետեւի մասը գտնուող կեդրոնին մէջ (հետագային Ազգ. Հայկազեան Մանկապարտեզ): Աշխատանքը ընթացք առած է ու շրջան մը վերջ շուրջ երեսունհինգ աշակերտներով Հալեպի թանգարանին մէջ մեծ ցուցահանդես մը իրական-

Նացուցած են, որ այդ օրերուն եզակի եղած է իր տեսակին մէջ ու շատ լաւ արձագանգ գտած:

«Աշխատանքս շարունակեցի մինչեւ ութսունական թուականներ, երբ գինուորական ծառայութեան համար դադարեցայ: Վերադարձիս կերպարուեստի կեդրոնը արդէն Ազգ. Հայկազեան մանկապարտեզի վերա-



ծուած էր ու գծագրութեան բոլոր սարքերը, սեղանները, վարը՝ Տիգրանեան սրահ, լքուած վիճակի մէջ մնացած էին: Հետագային Համազգայինը նոր կեդրոն ունեցաւ ու 1985-ին վերակազմակերպեց կերպարուեստի ուսումնարանը, զայն անուանելով «Արշիլ Կորքի», յայտնեց Պարտաքճեան, ապա շարունակեց. «Չինուորական ծառայութիւնս աւարտելէն ետք շարունակեցի անձնական ցուցահանդէսներ տալ: Ներկաները իւրայատուկ կը գտնէին իմ ոճն ու որակը, ենթադրելով որ արտասահմանէն եմ՝ արուեստի բարձրագոյն ուսումնարաններ աւարտած: Ստեղծագործական աշխատանքս շարունակեցի, մերթ րնդ մերթ դադրելով անձնական գործերուս պատճառով»:

Պարտաքճեան արդէն մեծ համբաւ կը վայելէ թէ՛ Սուրիոյ, եւ թէ՛ արտասահմանի արուեստի զանազան կեդրոններուն մէջ: Անհատական ցուցահանդէսներուն կողքին կը մասնակցի արտերկրեայ ցուցահանդէսներու:

Երբ պրն. Չաւենին հարցուցինք, թէ ինչպէ՞ս կարելի է սահմանել իր ոճը, ըսաւ.

«Իմ ոճը սուրիայ-երեւակայական է, ծանօթ իրեր չեն օգտագործեր նկարներուս մէջ: Անոր համար ոճս Ապսթրասուրիայիցմ

կը համարեմ: Այսինքն՝ ունիմ երեւակայական մթնոլորտ մը, որուն մէջ ծանօթ իրեր չեն օգտագործեր, որովհետեւ ծանօթ իրերը կը կաշկանդեն դիտողը: Երբ, գործօրինակ մարդ մը տեսնէք նկարին մէջ, կը կարծէք թէ այդ է ամբողջ միտքը, նիւթը եւ վերջ ու դիտողին կը թուի թէ հասկցած է նկարը: Գծագրութիւնը կամ նկարչութեան արուեստը հասկնալը բարդ բան է, որովհետեւ արուեստը բառ չունի, սահման չունի, պիտի կարենաս ճաշակել, խորանալ ու մտնել անոր մէջ զգացումներովդ, երեւակայութեամբդ: Ես այսպէս կը բացատրեմ ոճս»:

«Ո՞վ է արուեստագետը ձեր կարծիքով», հարց տուինք անոր:

«Նկարիչը կամ գծագրիչը միայն գեղեցիկը յօրինողը կամ շինողը չէ, այս երկուքը կիրարական արուեստին կը վերաբերին: Գծագրիչը նախ պետք է սեփական ոճ ունենայ, որպէսզի տեսնողը անմիջապէս կրահէ, թէ որո՞նէ կտաւն է, ո՞վ է հեղինակը: Ոճս բնականաբար կը զարգանայ, կը յառաջանայ, սակայն Չաւենը ներկայութիւն կը մնայ անոր մէջ: Ես կը ներկայացնեմ մարդուն ներքին աշխարհը: Երբ գծել սկսայ, նկարներս նախ սրտի զարկերու կը նմանէին, կը գծէի մարդու մըտքին բարդ վիճակը, որ կը ժայթքի, կը ձեւափոխուի, որովհետեւ մարդուն միտքը չի դադրիր երազելէ: Ես այդ անսահման երազը, մարդուն մտքին անջրպետը կը փորձեմ արտայայտել: Մարդուն միտքը փաստօրէն միջոց մըն է, որ զինք կը փոխադրէ տեղէ տեղ, անսահմանօրէն: Այս է իմ փիլիսոփայութիւնը, որ երբեմն կը յոգնեցնէ: Երբ յոգնիմ, կը սկսիմ մատիտով ծանօթ իրեր գծել, սակայն չեն ցուցադրեր, պարզապէս հանգստանալու համար կը գծեմ այս պարզային»:

Երբ հարց տուինք, թէ մշակութային մեր կեանքին ու դպրոցներուն մէջ ինչո՞ւ նուազած է հետաքրքրութիւնը արուեստին նկատմամբ ընդհանրապէս, նիւթականի ու նիւթեղէնի կարեւորութիւն տուող ներկայ արժեհամակարգն է պատճառը արդեօք, Պարտաքճեան ըսաւ.

«Ցաւօք մեր դպրոցներն ու ծնողները կը մտածեն միայն աշակերտին բարձր նիշ ապահովելուն մասին, որպէսզի անով իսկ հպարտանան: Ի՞նչ օգուտ, սակայն, եթէ բարձր գումարներ ապահովեցին, սակայն հայութենէ, մարդկութենէ պարպուեցան: Արուեստը, մշակոյթը մեր ինքնութիւնը կ'արմատաւորեն աշակերտներուն մէջ,



կը ծաղկեցնեն գիրենք: Աշակերտը ինչո՞ւ կը գնահատուի միայն նիշով, ո՞վ ըսաւ որ բարձր գնահատանիշ չապահովող աշակերտը յաջողակ չի կրնար ըլլալ իր կեանքին մէջ: Իմ նկարչութեան աշակերտներէս շատեր այսօր բարձր դիրքերու հասած են: Ես անձամբ արուեստի ճամբով իմ կեանքը բարելաւած եմ: Կարելորդ մարդ պատրաստելն է, անոր մէջ ստեղծագործելու ակուն ներարկելն է, այլապէս աշակերտը միայն նիշի հեքին մէջ մտնելով չի զարգանար, տեղ չի հասնիր: Այսօր փոքր չէ թիւը ձախող բժիշկներու, կամ երկրաչափներու»:

Պրն. Պարտաքճեան խօսելով արուեստի ուսուցման մասին դիտել տուաւ, որ նկարչութեան համաշխարհային դպրոցներու մէջ երկու ուղղութիւն կայ: Առաջինը միայն գծել, ոչ թէ ստեղծագործել կը սորվեցնէ, որովհետեւ արուեստ յայտնաբերելը չես կրնար սորվեցնել, այնպէս ինչպէս գրականութիւն արտադրելը չես սորվեցնէր: Ծատեր կը համարեն, որ գծողը պէտք է դասականը լաւ գիտնայ, որպէսզի կարենայ ժամանակակից ըլլալ: Իմ կարծիքով գծողը պէտք է ազատօրէն ստեղծագործէ: Ես աշակերտներուն հիմնական գիտելիքները տալէս վերջ ազատ կը ձգեմ, թոյլ չեմ տար որ մէկը միւսին նման գծէ, նոյն ձեւով շուք տայ եւ այլն: Անոր համար ալ շատեր կու գան իմ տրամադրած աշխատանոցը՝ գծելու, որովհետեւ չեմ կաշկանդեր, չեմ սահմանափակեր գծողը: Համաշխարհային երկրորդ ուղղութիւնը արդի արուեստի ուսուցումն է: Ես այդ արուեստը կ'ուսուցանեմ: Իւրաքանչիւր գծող ստեղծագործ պիտի ըլլայ, ոչ թէ միայն ընդօրինակող»:

«Մշակութային քաղաքականութիւն մշակելը կարելորդ կը համարե՞ք միութիւններու պարագային», հարցուցինք:

«Անշուշտ կարելորդ է մշակութային քաղաքականութիւն մշակելը: Կեդրոններ ունենալը բաւարար չէ: Պէտք է պատանիին, երիտասարդին մէջ ստեղծագործելու կրակը վառ պահել, որպէսզի հետաքրքրութիւնը արթննայ ու մտքին սահմանները բացուին: Արուեստի ուսուցումը չափի ու ձեւի մէջ պէտք չէ սահմանափակել: Համաշխարհային գծողներ կան, որոնց գործերուն մէջ չափի- ձեւի հասկացութիւնը սովորականէն դուրս է:

«Դժբախտաբար ներկայիս դպրոցներէն ներս ալ արուեստին պէտք եղած ուշադրութիւնը չի տրուիր: Ութսունական թուական-

ներուն, երբ արուեստ կը դասաւանդէի, դասականին կողքին ստեղծագործել կը սորվեցնէի: Ամիսը անգամ մը գործնական աշխատանքի պահեր կ'ունենայինք, նոյնիսկ կը յիշեմ Ճեմարանին բակը, գետնին վրայ կաւիճով գծել կու տայի աշակերտներուն: Արուեստը սիրել պիտի տաս, որպէսզի հետեւի, յաճախէ ակադեմիա կամ այլուր: Այլապէս հետաքրքրուած պիտի չըլլայ ու մենք պիտի դժգոհինք, որ մեր արուեստի կեդրոնները մեծաթիւ աշակերտներ չեն յաճախէր: Անշուշտ աշակերտն ալ ընդունակ պիտի ըլլայ, որպէսզի ստեղծագործէ ու զարգանայ: Դժբախտաբար փորձառուներու հետ




խորհրդակցութեան պակաս կը նկատենք: Արուեստի մեր կեդրոնները նախքան իրենց ծրագիրները մշակելը չեն խորհրդակցիր ինծի կամ այլ արուեստագետներու հետ, միտքեր փոխանակելու համար, հակառակ անոր որ քանիցս տրամադրութիւն յայտնած եմ կամաւորաբար գործակցելու»:

Եւ վերջապէս հարց տուինք, թէ արուեստը հաւաքականութեան մը մշակութային որակը, ճաշակը կը բարելաւե՞: Պարտաքճեան հաստատեց.

«Անշուշտ: Եթէ արուեստագետը հանդիսատեսին նորութիւն մը ցոյց տայ, բնականաբար կը զարգացնէ ու կը նպաստէ որ անոր շատ մը բարոյութները, հարցերը լուծուին: Կարելորդ սովորականէն դուրս ելլելն է ու հանդիսատեսին հրամցնել նոր ուղի, նոր մտածելակերպ եւ նոր ոճ: Այլապէս եղածը կրկնելով ստեղծագործած չենք ըլլար: Թերեւս հիմնաւի դիմանկար մը գծես, առով սակայն նոր բան մը հրամցուցած չես ըլլար դիտողին»:

ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՃՈՐՃ ԱՄՊԱՐՃԵԱՆԻ ԾԱՂՐԱՆԿԱՐՆԵՐԷՆ



ԿՆՈՋԱԿԱՆ



ՀԱՅԿԱԿԱՆ ԱԻԱՆԴԱԿԱՆ ԽՈՒՀԱՆՈՅԸ ԵՒ ԱՆՈՐ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԱՓԻՒՌԻ ՏԱՐԱԾՔԻՆ

Սեւան Ազարիկեան-Պարմասպեան

Հայկական խոհանոցը սկսած է ձեւաւորուիլ շուրջ 3000 տարի առաջ՝ Վանի թագաւորութեան դարաշրջանին եւ սերունդէ սերունդ փոխանցուելով հասած է մեզի, միշտ պահպանելով հայկական իւրայատկութիւնը:

Ներքո՝ երկրագործական բարձր մշակոյթի գոյութեան ապացոյցներն են:

Արշակունեանց թագաւորութեան շրջանի իշխաններու եւ նախարարներու սնունդին մէջ մեծ տեղ գրաւած է ձուկը: Այդ իսկ պատճառով ձկան պաշար ապահովելու համար ջրամբարներու մէջ բազմացուցած են ձուկերու տեսակներ, ինչպէս՝ կարմրախայտը:



Ե. Դարու պատմիչ Ազարանգեղոսի տուեալներուն համաձայն, հայերը այդ շրջանին որպէս սնունդ օգտագործած են ցորեն, կորեկ, ոսպ, բրինձ, սիսեռ, ձաւար եւ այլ տեսակի սերմեր: Որպէս քաղցր կերակրատեսակ չորացուցած եւ օգտագործած են պտուղներ՝ տանձ, խնձոր, սերկեւիլ, թութ, դեղձ, նուռ, ձմերուկ, խաղող, սեխ, սալոր եւ այլն: Ուշագրաւ էր, որ յաճախ միրգ կ'աւելցնէին միսի կամ ձուկի ճաշատեսակին մէջ: Իսկ որպէս ճարպ կը գործածէին կարագ, իւղ, վուշի եւ ձիթապտուղի ձէթ:

Հայ ժողովուրդը հիւրասեր է, ինչ որ աւելի կը ջերմացնէ հայկական խոհանոցը: Հայկական մշակոյթի մէջ խոհանոցը սերտօրէն կապուած է հիւրընկալութեան եւ հիւրասիրութեան հետ: Միայն հայերն են, որոնք իրենց դիցարանին մէջ ունեցած են հիւրասիրութեան եւ հիւրընկալութեան աստուածը՝ Վանատուրը:

Երկրի կլիման, ջուրը, ժողովուրդին կազմուածքը թոյլ կու տային, որ իւրաքանչիւր ազգագրական տոհմ ունենայ իր յատուկ ճաշատեսակները: Համեմներու առկայութիւնը պայմանաւորուած էր տեղական կլիմայով: Արդ, ցուրտ կլիմայի բնակիչները ծանր, իւղոտ, կծու կերակուրներով կը սնանէին:

Ուրարտական թագաւորութեան դարաշրջանին Հայաստանի մէջ ապրող բնակիչները կը գբաղէին հողագործութեամբ եւ անասնապահութեամբ: Պեղումներու ընթացքին ի յայտ եկած ծաւալուն հացահատիկի շտեմարանները, գարեջուրի ու գինիի կարասները, իւղ, կաթ եւ մածուն պահելու անօթները, ինչպէս նաեւ պանիր պատրաստելու կաւէ յատակով ծակ աման-

ներ՝ տանձ, խնձոր, սերկեւիլ, թութ, դեղձ, նուռ, ձմերուկ, խաղող, սեխ, սալոր եւ այլն: Ուշագրաւ էր, որ յաճախ միրգ կ'աւելցնէին միսի կամ ձուկի ճաշատեսակին մէջ: Իսկ որպէս ճարպ կը գործածէին կարագ, իւղ, վուշի եւ ձիթապտուղի ձէթ:

Հայկական Ազգային ճաշատեսակներ

Հայկական խոհանոցին մէջ լայն տարածում ունին ծեծուած միսով կերակուրները՝

կոլուակը (քիւֆթէն), կոլուիկը: Իսկ ամենակարելոր եւ ամենասիրուած ճաշատեսակը տոլման էր, որ կը պատրաստուէր խաղողի տերեւով:

Տոլմա անուանումը բաղկացած է տոլի՝ խաղող ու մա՝ ծին բառերէն, որ կը նշանակէ խաղողածին: Հետագային երբ Հայաստանի մէջ կաղամբ կը մշակուի, տոլման կը պատրաստեն նաեւ կաղամբի տերեւներով:

Հայաստանէն արտահանուած ճաշատեսակներէն է ողորման կամ դաւորման: Արցախի մէջ այս կերակուրը կը կոչուի նաեւ ողորմա: Ան իւրով պատրաստուած միսն է, որ նախնիներու հոգիներուն ողորմութիւն կամ ծանր հիւանդներու առողջութիւն հայցելու նպատակով Աստուծոյ համար զոհաբերուած մատաղն է:

Հայկական ամենահամեղ ճաշատեսակն է դափաման, որ կը մատուցուի հարսանեկան արարողութեան յաջորդ օրը: Փեսային մայրը դափամա կը պատրաստէր եւ նորապսակներուն, խնամիներուն, կնքահօր եւ կնքամօր, ինչպէս նաեւ այլ հիւրերու կը հրամցներ «իւրով մեղրով» դափաման:

Հարիսան եւս հայկական համեղ ուտեստ է, որ կը պատրաստուի զոհամա-

աւանդութեամբ մինչեւ այսօր ալ որպէս մատաղ կը պատրաստուի ու կը մատուցուի:

Շատ հին ժամանակներէն մեզի հասած է նաեւ խորովածը: Հայկական բարձրավանդակի բնակիչները պղինձ- քարէ դարաշրջանին օճախի վրայ կը խորովէին ոչխարի եւ հորթի միսը: Անոնք միսը կը շարէին փայտէ ճիպոտին, հետագային ճիպոտը փոխարինեցին մետաղեայ ձողով՝ շամփուրով: Թոնիրի մէջ կը կախէին ամբողջ գառնուկը, ուլիկի մտեղիքը կամ համեմունքներով եւ բրինձով լեցուած միսը եւ այդպէս կը խորովէին:

Լաւաշը հայկական ազգային բարակ հացն է, որ յայտնի դարձաւ եւ 2016-ին Ի-



ՆԵՍԵՕ-ի ոչ-նիւթական մշակութային ժառանգութեան ցուցակին մէջ արձանագրուեցաւ, որպէս հայկական մշակութային ժառանգութիւն:



տուցման արարողութեան ընթացքին: Ամբողջ գիշերը թոնիրի մարմանդ կրակին վրայ եփելէն ետք, առաւօտեան կը մատուցուի: Այս օրերուն եւս հարիսան հայերու ամենասիրելի ճաշատեսակներէն մէկն է եւ նոյն

հոգեւոր մշակոյթն ու կենսակերպը, մասնաւորապէս՝ հայկական խոհանոցը:

Հայերը իրենց ներդրումը ունեցան դրացի ազգերու խոհանոցին: Մեր դրացիները օգտուելով հայկական խոհանոցէն, կը փոր-

Հացը հայ ժողովուրդին համար եղած է սրբութիւն: Չայն կը թխէին թոնիրին մէջ: Թոնիրը հայ ը ն տ ա ն ի ք ի ն հիմքն էր:

Պատմական վերիվայրումներու ընթացքին, Հայաստան ենթարկուեցաւ արաբական, մոնկոլեան, թրքական եւ պարսկական յարձակումներու, սակայն անփոփոխ մնացին հայ ժողովուրդին

ձեն միևնույն ախոր ալ իւրացնել մեր ազգային ճաշատեսակներէն շատերը: Բուն հայկական շարք մը ճաշատեսակներ՝ տոլման, պուտուկը, դաւուրման հետագային յայտնի դարձան իբրեւ արեւելեան խոհանոցի կերակրատեսակներ: Իսկ հայկական շատ մը առանձնայատկութիւններ փոխանցուեցան այլ խոհանոցներ՝ շնորհիւ հայկական Սփիւռքին:

Սուրիահայ խոհանոցը

Սուրիական խոհանոցը հին պատմութիւն ունի, մանաւանդ Յալէպ քաղաքը նշանաւոր է իր ճաշատեսակներու բազմազանութեամբ: Մեծ բանաստեղծ փիլիսոփայ Ապու Լալա Մահարին իր գիրքին մէջ գրած է, որ դրախտի խոհարարները հալէպցիներն են: Յալէպեան խոհանոցը դարերու ընթացքին բնորոշուած է ուտեստներու առատութեամբ: Այս բազմազանութիւնը յառաջացած է նաեւ այն ժողովուրդներուն ներդրումով, որոնք Մետաքսի ճանապարհի կարաւաններով անցած են հոնկէ: Այսպէս, չինացիներու «հեթալիան» եւ «քեպպա քարազը» Յալէպ հասած են նաեւ Մետաքսի

հայ կամ լիբանանահայ խոհանոցը: Յայկական գաւառներու ազգային ճաշատեսակներէն հետեւեալները մուտք գործ



ծած են սուրիական խոհանոցի ճաշացուցակին մէջ՝ ուրֆացիներու նշանաւոր խորովածը, հում քիւֆթան (չիւքիւֆթէն), պորանին, լըլըուն քիւֆթան, սեմսէքը, պերեճիքցիներուն պոսթանեան, թթույով շորպան, թահինով քիւֆթան, սուտ միջուկով քիւֆթան, Պերեճիքի քաղցրահամ թերթիկաշերտ փախլաւան, խաղողի հիւթով համեղ եւ անոյշ պաստեղն ու քեսմէն, անոյշ թարխանան, գէթունցիներուն ոսպով քիւֆթան, կորկոտով փիլաւը (քէշկէկ), բալուցիներուն միջուկով քիւֆթէն, թանապուրը, քիլիսցիներուն նշանաւոր իչը եւ այլն:

Տարիներու ընթացքին Սփիւռքի մէջ ապրող հայեր ազդուելով իրենց ճաշացուցակին մէջ ներառեցին տեղւոյն խոհանոցէն բաղադրատոմսեր, արեւելեան ճոխ աղանդեր, քաղցրեղէն, համեմունք, ինչպէս Յալէպի եօթ համեմները եւ այլն:

Յայ ժողովուրդի պատմական կեանքի երկարատեւ ընթացքին մշակուած ճաշատեսակներու մեծ բազմազանութիւնը կը կիրարկուի այսօր եւս՝ աւելի հարստացած բաղադրութեամբ, միշտ պահելով հայկական առանձնայատկութիւնը: Մեր պարտականութիւնն է ամրագրել ազգային խոհանոցը որպէս մշակութային արժէք եւ զայն մատուցել որպէս հայկական ազգային խոհանոց:

Օգտագործուած աղբիւրներ՝
-«Յայկական խոհանոց» Ս.Փիրուզեան
-«Արցախի խոհանոց» Ժամեն Բաբայեան



ճանապարհով:
Յալէպի խոհանոցին վրայ ամենամեծ ազդեցութիւնը ունեցած են պարսկական, թրքական եւ հայկական խոհանոցները:
Յայոց Ցեղասպանութենէն ետք, Սուրիա եւ Լիբանան հաստատուեցան տարբեր գաւառներէ գաղթող հայեր, որոնք իրենց ծննդավայրի իւրայատուկ ճաշատեսակները բերին եւ այսպիսով յառաջացաւ սուրիա-

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամանորեան Պատգամ

- Խօսք Շնորհաւորանքի եւ Գնահատանքի «Գանձասար»-ի 30-Ամեակին Առիթով	Մակար Եպս. Ազգարեան	
	Առաջնորդ Բերիոյ Հայոց Թեմին	1
- Համբերութիւն եւ Յոյս	Պետրոս Արք. Միրիաթեան	
	Առաջնորդ Բերիոյ Թեմի Կաթողիկէ Հայոց	4
- Հայկական Սփիւռքը եւ Անոր Օրհասական Մարտահրաւերները	Վեր. դոկտ. Յարութիւն Սելիմեան	
	Համայնքապետ Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքին	6

Խմբագրական

- Ինչպէ՞ս Անցնիլ Ինքնաքննութենէ Վերակազմակերպում		
	Չարմիկ Պօղիկեան	8

Տեղեկագիրներ

- Միամեայ Տեղեկագիր Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Վարչութեան		11
- Սուրիահայ Օգնութեան Խաչը՝ Ծառայութեան Խորհրդանիշ		28
- ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան Գործունեութեան Տեղեկագիր		34
- Համազգայինի Սուրիոյ Շրջանի 2023 Տարուան Գործունեութիւնը		40
- Սուրիոյ Երիտասարդական Միութիւնը՝ Աշխատանքի Ռահվիրայ		50
- Սուրիոյ Պատանեկան Միութիւնը՝		
Դաստիարակչական Աշխատանքի Առողջ Միջավայր		52

Սփիւռքի Տարի

ՔԵՍԱՊ

- Քեսապի Կրթական Կեանքի Տեսութիւն	«Գանձասար» շաբաթաթերթի թղթակիցներ՝	
	Դալար Թութիկեան-Գերպապեան	
	Մարինա Բենդեգեան-Լևոնեան	
	Հսկողութեամբ՝ դոկտ. Շողիկ Աշրգեանի	55
- Քեսապի Տնտեսական Իրավիճակը 2023 Թուականին	Կարօ Վ. Մանճիկեան	63
- Միութենական Կեանքը Քեսապի Մէջ 2023-ին	Կարօ Վ. Մանճիկեան	65
- Քեսապ Հայաւանի Ընկերային Կեանքը Այսօր	Սեւան Ա. Մանճիկեան	67

ՀԱԼԷՊ

- Դպրոցաշենքը ՉԷ Կրթօջախին Մակարդակը Արժեւորողը
Մարիա Գաբրիելյան 69
- Սուրիոյ Պատերազմը, Տնտեսական Վիճակն Ու Մենք
Յակոբ Քիլեճեան 72
- Հալէպի Ընկերային Կեանքին Պարզած Վիճակը
Սեւան Շահպազեան 75
- Համազգայինի Հալէպի Հայագիտական Հիմնարկը՝
Միջին Արեւելքի Անմար Փարոսը
Անի Դաւիթեան-Ուրիշիկեան 78
- Հայ-Սուրիական Հնագոյն Յարաբերութիւնները
(Պատմական Ակնարկ)
Դոկտ. Հուրի Ազեզեան 82
- Մտորումներ Հալէպահայութեան Վերջին Տասնամեակի Չանգուածային
Արտագաղթին Եւ Տնտեսական Իրավիճակին Մասին
Սալբի Գասպարեան 96
- Հալէպի Ճարտարարուեստի Պալատէն Ներս
Հայ Կանանց Գործունէութեան Անդրադարձ
Սոնիա Գաբրիելյան 100
- Թատրոնը՝ Հալէպահայ Կեանքի Մշակութային Կենսական Երանգը
Երան Չէյթունցեան 103
- Հալէպի Հայ Համայնքի Առօրեայ Կամ Փողոցային Լեզուն
Սօսի Միշոյեան-Տապաղեան 107
- Ճիտտիւն Եւ Սալիպէն՝ Հայկական Դպրութեան Աւանդատուն
Ժան Հալլաճեան 110

ԴԱՄԱՍԿՈՍ

- Դամասկահայ Կեանք
Սոնա Անտրեան
Արամ Աճեմեան
Մարի Գարակեօզեան 115

ԼԱԹԱՔԻԱ

- Լաթաքիոյ Հայութեան Կրթական Կեանքին Մասին
Երկրչփ. Մեղրիկ Ապահունի-Մանճեան 120
- Լաթաքիոյ Միութիւնները՝
Հայեցի Մթնոլորտի Պահպանման Օջախներ
Նայիրի Կարապետեան 122
- Լաթաքիոյ Հայութեան Ընկերային Կեանքին Շուրջ
Երկրչփ. Թովմաս Վ. Մանճեան 124
- Որոշ Հաստատումներ Լաթաքիոյ Տնտեսական Կեանքէն
Երկրչփ. Վարուժ Պետիրեան 126

ՃԵՉԻՐԷ

- Ճեզիրէի Հայութեան Ներկայ Վիճակ Եւ Մարտահրաւերներ
Պսակ Քինյ. Պերպերեան
Բժշկի. Մարի Մելքոն
Յակոբ Սրկ. Պարսումեան
Խաչիկ Մելքոնեան 127

«Գանձասար»-ի 30-Ամեակ

- Մե՛ր «Գանձասար»	Պերճուհի Աւետեան	134
- Չորս Տարի «Գանձասար»-ին Յետ	Առաքել Աբղ. Գատեհճեան	136
- Հայ Գիրի Ռահվիրայ «Գանձասար»-ը Կը Շարունակէ Իր Յաղթական Երթը...	Ալեքս Սրկ. Գալայճեան	139

Յրապարակագրական

- Դէպի Վերակազմակերպման Լուսաւոր Ճանապարհ	Առաքել Աբղ. Գատեհճեան	141
- Երեւանաբնակ Հալէպահայու Մը Դիտարկումները	Յակոբ Միքայէլեան	143
- Սփիւռքը Նաեւ Հայրենիք Կը Դառնայ	Արամ Աւագեան	146
- Հայաստան-Սփիւռք Կորսուած Օղակը	Երկրչփ. Պարգեւ Աւագեան	148

Գեղարուեստական

- Չուգահեռներ Եւ Տարբերութիւններ	Պերճուհի Աւետեան	150
- Հրեշտակներու Հաւաք	Սարիանա Պերթիզլեան-Ղազարեան	153
- Մենութեան Տասնամեակ	Նորա Թիրպէտեան-Գաբոյեան	154
- Աղօթք Ամանորի	Հրանդ Մարգարեան	156
- Ներբանագիր	Յարվարդ	159
- Երկու Բանաստեղծութիւն	Տիգրան Գաբոյեան	160
- Դերերս	Յակոբ Նալպանտ-Տլտլեան	163
- Կրկին Դուս	Մարուշ Երամեան	164
- Վարդգէս Պարսումեան. «Արուեստը՝ Ճշմարտութիւնը Խօսիլն Է»	Հարցազրոյցը վարեց Չարմիկ Պօղիկեան	166
- Ստերմիկ Չրոյց՝ Գեղանկարիչ Չաւեն Պարտաքճեանի Հետ	Չրոյցը վարեց Չարմիկ Պօղիկեան	169
- Ծաղրանկարներ	Ճորճ Ամպարճեան	172

Կնոջական

- Հայկական Աւանդական Խոհանոցը Եւ Անոր Պահպանումը Սփիւռքի Տարածքին	Սեւան Ազարիկեան-Պարմաքսեան	173
--	-----------------------------------	------------

